51. Երևանի հասարակական տրանսպորտի համակարգը բաղկացած է միկրոավտոբուսներից, ավտոբուսներից, տրոլեյբուսներից և մետրոյի երթուղիներից: 2013թ. հանրային տրանսպորտի ցանցի հետազոտությունների միջոցով հավաքագրված ավտոբուսային ցանցի IPSC երթևեկության տվյալների և «Երևանտրանս»-ի տրամադրած տվյալների վերլուծության համաձայն՝ միկրոավտոբուսների ուղևորների թիվը տարեկան կազմում է 63,4 մլն ուղևոր, և 104,7 մլն ուղևոր: 2013 թվականից ի վեր ավտոբուսային ցանցում տեղի է ունեցել մի քանի երթուղիների փակում, և երթևեկության տեղափոխում այլ

**Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ**

ավտոբուսային երթուղիներ: Մա վկայում է այն մասին, որ Երևանի տրանսպորտային շուկայում օրվա գրեթե բոլոր ժամերին նկատվում է տրանսպորտային միջոցների պակաս (դեֆիցիտ), այսինքն՝ պահանջարկը գերազանցում է առաջարկը:

52. Մյուս կողմից՝ հասարակական տրանսպորտի ենթակառուցվածքը վերջին երկու տասնամյակում վատթարացել է ներդրումների թերսնուցման պատճառով, ինչպես նաև տրանսպորտային միջոցների շարժակազմը հին է և սպասարկման որակը բավարար չէ՝ երթևեկության արագությանը կազմում է միջինում 16 կմ/ժ: Ներկայումս ուղևորների 85%-ը փոխադրվում են չտուբսիդավորված մասնավոր միկրոավտոբուսներով՝ չնայած թանկ ուղեվարձերին: Թեև միկրոավտոբուսները 1990-ականներին փրկեցին Երևանը տրանսպորտային ծանր ճգնաժամից, ներկայումս մեծ ու միջին ավտոբուսների դուրս մղման պայմաններում դրանք ստեղծում են քառասյին իրավիճակներ: Տրանսպորտային միջոցների գերծանրաբեռնվածության և երթևեկության խցանումների պատճառով ծառայության որակը չի բավարարում: Այս փոփոխությունը լուրջ վնաս է հասցրել հասարակական տրանսպորտի այլ տեսակների ֆինանսական կայունությանը և հանգեցրել է տրոլեյբուսի և մետրոյի ոլորտներում ներդրումների դժվարությունների, քանի որ ուղեվարձերը չափազանց ցածր են ընթացիկ և կապիտալ ծախսերը ծածկելու համար:
53. Հայաստանի կառավարությունն աշխատում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հետ ավտոբուսների հնացած գործող շարժակազմը նորով փոխարինելու ուղղությամբ:
54. Սակայն ներկայիս իրավիճակը բարենպաստ չէ ոչ միայն քաղաքային ավտոբուսների շարժակազմի շահագործման առումով, այլ նաև ոլորտի աշխատակիցների աշխատանքի համար բարենպաստ պայմանների և սոցիալական հարցերի լուծման համար: Մեյսմիկ անվտանգության առումով առկա հավաքակայանների շենքերից շատերը աշխատավայրում լուրջ վտանգ են ներկայացնում: Հայաստանի կառավարությունը դիմել է ԱԶԲ-ին՝ օգտագործելու ՔԿՆԶԾ-ի վարկային միջոցները Երևանի Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման և պատակով:
55. 2013-2017 թվականների ընթացքում հասարակական տրանսպորտի հիմնական պարամետրերի փոփոխության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013 թվականի համեմատ 2017 թվականին երթուղիներում ցամաքային տրանսպորտի բոլոր երեք տեսակների օրական թիվը փոքր-ինչ նվազել է: Նոր ավտոբուսային ցանցի ծրագրով առաջարկվող ավտոբուսային ցանցը ներառելու է մոտ 50 ավտոբուսային երթուղի (տե՛ս Աղյուսակ Գ-1):

**Աղյուսակ Գ-1. Նոր ավտոբուսային ցանցում նախատեսված տրանսպորտային միջոցների քանակը**

| Փոխադրամիջոցի չափը          | Երթուղիների քանակը | Շարժակազմի քանակը | %     |
|-----------------------------|--------------------|-------------------|-------|
| Հողակապավոր ավտոբուս (18 մ) | 11                 | 216               | 26,3% |
| Մեծ (12 մ)                  | 3                  | 29                | 3,5%  |
| Միջին (8.6 մ)               | 31                 | 488               | 59,5% |
| Տրոլեյբուս                  | 5                  | 87                | 10,6% |
| Ընդհանուր                   | 50                 | 820               | 100%  |

## Գ2. Ծրագրի տեսակը

56. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիրը (ՔԿԶՆԾ) մշակվել է որպես Երևան քաղաքի գլխավոր հատակագծի լրացում՝ կայուն, ինտեգրված և տնտեսապես արդյունավետ քաղաքային տրանսպորտի համակարգի ստեղծմանը նպաստելու նպատակով՝ դրանով իսկ բարելավելու քաղաքային տրանսպորտի համակարգը Երևանում: Սա քաղաքաշինական ռազմավարության մի մասն է, որը ձեռնարկվել է ԵՔ-ի կողմից: Այս Ծրագիրն ընդգրկում է ճանապարհային քարտեզը, քաղաքականության շրջանակը և մինչև 2025 թ. ընկած ժամանակահատվածի համար ներդրումային ծրագիրը, որը բաղկացած է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների պլաններից:
57. ՔԿԶՆԾ-ն ներառում է հետևյալ բաղադրիչները և ակնկալվող արդյունքները.
- I. Բաղադրիչ Ա. տրանսպորտի քաղաքային ենթակառուցվածքի ամբողջականացում, ընդլայնում, վերականգնում և բարելավում Հայաստանի քաղաքային վայրերում (ֆիզիկական ներդրում),
  - II. Բաղադրիչ Բ. ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման պլան, համապատասխան համայնքներում քաղաքային տրանսպորտի ինստիտուցիոնալ և կառավարման կարողությունների հզորացմամբ, ներառյալ՝ կոնցեսիաները (ոչ ֆիզիկական ներդրումները),
  - III. Բաղադրիչ Գ. Ծրագրի կառավարման համակարգ. խորհրդատվական ծառայություններով՝ ՔԿԶՆ Ծրագրի և ԲՖԳ ներքո բոլոր այլ հատուկ ծրագրերի իրականացման և կառավարման նպատակով (ոչ-ֆիզիկական ներդրումները):
58. Առաջարկվող Ծրագիրը մտնում է Ա բաղադրիչի մեջ, որը ներառում է հետևյալը<sup>8</sup>
- I. ճանապարհի և կամրջի կառուցում, քաղաքային ենթակառուցվածքի բարելավում,
  - II. հասարակական տրանսպորտի ցանցի և ենթակառուցվածքի հիմնանորոգում և ընդլայնում:

## Գ3. Ծրագրի տեղադիրքը

59. Երևանի քաղաքապետարանը Շիրակի փողոցի հարևանությամբ նախատեսում է կառուցել ավտոբուսային նոր հավաքակայան՝ Երևան ժամանող բնական սեղմված գազով (ԲՍԳ) լիցքավորվող շարժակազմը տեղավորելու համար: Նախատեսվում է, որ երկարաժամկետ հեռանկարում հավաքակայանում կտեղավորվի մինչև 400 ավտոբուս (տե՛ս Նկար Գ-1):
60. Ավտոբուսային նոր հավաքակայանը կկառուցվի Երևանի հարավ-արևմուտքում՝ Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա - Շիրակի փողոց փոխհատման հարևանությամբ: Ծրագրին հատկացվող տարածքը՝ 12.9 հեկտար է: Հատկացվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներն են.

Շիրակ փ. 2/42 – Վկայական N 01022022-01-0068

Շիրակ փ. 2/43 – Վկայական N 22122021-01-0236

Շիրակ փ. 2/44 – Վկայական N 23122021-01-0193

Արշակունյաց պ. 284/21 - Վկայական N 22122021-01-0433


Արշակունյաց պ. 284/22 - Վկայական N 22122021-01-0452

<sup>8</sup> <https://sudipyerevan.am/en/road-construction/>.

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

61. Հավաքակայանի տեղադիրքի տեղագրագեոդեզիական կոորդինատներն ըստ ARMWGS-84 ազգային համակարգի ներկայացված են Աղյուսակ Ե-8-ում:
62. Ավտոբուսների նոր հավաքակայանի տեղադիրքը Քաղաքապետարանն առաջարկել է Երևան քաղաքում տեղակայման մի շարք այլընտրանքներ դիտարկելուց հետո, ինչպես նաև հաշվի առնելով քաղաքում ավտոբուսների այլ հավաքակայանների տեղակայման ընդհանուր տրամաբանությունը: Ներկա ծրագրին նախորդող տարբերակները մերժվել են Պատվիրատուի և ԱԶԲ-ի կողմից: Այդ այլընտրանքների ամբողջական նկարագրությունը և դրանց մերժման պատճառները մանրամասն ներկայացված են Գլուխ Դ-ում (Ծրագրի այլընտրանքների վերլուծություն):

Նկար Գ -1. Ծրագրի տեղադիրքը՝ Արշակունյաց պողոտա - Շիրակի փողոց փոխհատման հարևանությամբ







63. Շիրակի փողոցի հարևանությամբ ավտոբուսային հավաքակայանը նախագծվել է ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի XVI բաժնի 311-րդ կետով սահմանված պահանջների խիստ պահպանմամբ, ընդ որում ամենամոտ գտնվող արտադրական օբյեկտի և բնակելի տան հեռավորությունը հավաքակայանի պարիսպից համապատասխանաբար կազմում է 16.1 և 22.51 մ: Հարակից հողօգտագործումների և շենք- շինությունների իրավիճակային հատակագիծը տես ՀԱՎԵԼՎԱԾ Ձ. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ Ձ-2 և Ձ-3.

#### Գ 4. Աշխատանքների նկարագրությունը

64. Հայեցակարգային նախագիծը (սկզբնական սխեմատիկ նախագիծը) մշակվել է ԱԶԲ-ի կողմից՝ հավաքակայանի նախագծման առաջատար մասնագետի և ենթակառուցվածքների նախագծման ավագ ինժեների ներգրավմամբ, և ԵՔ ԾԻԳ-ի կողմից տրամադրվել է ՄՆԽ-ին՝ որպես հիմք՝ մանրամասն նախագծման համար: Սակայն, սխեմատիկ նախագիծը ուսումնասիրելուց հետո ՄՆԽ-ի կողմից մշակվել և առաջարկվել է ամբողջությամբ նոր հատակագիծ (մանրամասները տես Գլուխ Դ1. Ծրագրի այլընտրանքները): Խորհրդատուի կողմից պատրաստվել է տեխնիկական հուշագիր, որն ամփոփում է սխեմատիկ նախագծի անհրաժեշտ փոփոխությունները: Վերջիններս քննարկվել և համաձայնեցվել են բոլոր կողմերի հետ:
65. Սույն Ծրագրի համար մանրամասն նախագիծը՝ այդ թվում սույն ՇՄԱԳ/ ԲԿՊ-ն մշակվել է Նախագծման խորհրդատուի կողմից և կներառվի մրցութային փաստաթղթերում: Ներկայումս ընթանում է համալիր փորձաքննության գործընթացը:
66. Շիրակի փողոցի հարևանությամբ նոր հավաքակայանը նախագծվել է ընդհանուր քանակով 400 ԲՄԳ ավտոբուս տեղավորելու համար՝ հետևյալ բաշխվածությամբ՝ 261 հատ 12 մ երկարությամբ և 132 հատ 18 մ երկարությամբ ԲՄԳ ավտոբուսներ:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

67. Ավտոբուսային հավաքակայանը զբաղեցնում է 11,05 հա (110500 ք.մ), որից

կառուցապատման մակերեսը՝ 13782 ք.մ,  
անջրանցիկ տարածքի մակերեսը՝ 86 936 ք.մ,  
կանաչապատ տարածքը՝ 9782 ք.մ;

68. Նախագիծը ներառում է հետևյալ բաղադրիչները.

*i) Կայանատեղի*

69. Նախագծվել է կայանատեղի ավտոբուսների և անձնակազմի անձնական փոխադրամիջոցների համար: Ավտոբուսների կայանատեղին գտնվելու է մեկ հարթության վրա, որտեղ յուրաքանչյուր ավտոբուսի համար նախատեսված է կայանման տարածք:

- 12 մ երկարությամբ 261 ավտոբուսի համար նախատեսվում է 5 մ X 15 մ չափի կայանատեղի, երկու կայանված ավտոբուսների հետնամասերի միջև 2 մ տարածությամբ՝ «հետընթաց կայանման» ռեժիմով ԲՄԳ դանդաղ լիցքավորման սարքի համար:
- 18 մ երկարությամբ 132 ավտոբուսի համար կայանատեղին կլինի 5մ X 21մ չափով թողնելով «միջանցք»՝ նախատեսված «առաջընթաց կայանման» ռեժիմի համար: Ավտոբուսների համար առաջարկվում է 60 աստիճանի անկյունով կայանատեղիներ:
- Կայանատեղիի տարածքը ներառում է նաև 6 ԲՄԳ արագ լիցքավորման դիսպենսերներ,
- դանդաղ լիցքավորման ԲՄԳ դիսպենսերներ կայանատեղիի տարածքում՝ գիշերային վերալիցքավորման համար,
- անձնական փոխադրամիջոցների կայանատեղին նախատեսված է անձնակազմի 85 անդամի և այցելուների համար, յուրաքանչյուր կայանակետի մակերեսը՝ 2,5 մ x 5 մ՝ նախատեսված «հետընթաց կայանման» ռեժիմով 90 աստիճանի անկյունով կայանման համար: Անձնական փոխադրամիջոցների կայանատեղին տեղակայվելու է շահագործման տարածքից դուրս և ներառելու է բավարար կայանատեղիներ՝ անձնակազմի մեքենաների, մոտոցիկլետների և հեծանիվների համար: Շենքի մուտքերի մոտ նախատեսվում է նաև կայանատեղի հաշմանդամների համար:

*ii) Լիցքավորման կայան*

- Փոխադրամիջոցների ավանդական լիցքավորման համար հիմնական երթուղու երկայնքով կտեղադրվի 2 դիսպենսերով դիզելային վառելիքի լիցքավորման կայան: ԲՄԳ-ով լիցքավորվող ավտոբուսների համար՝ դիսպենսերների մոտ նախատեսվելու է առանձին տարածք կոմպրեսորի համար (ԲՄԳ վառելիքի համար) և սպասարկողի համար: Լիցքավորման կայանում նախատեսվում է 6 ԲՄԳ դիսպենսեր աշխատանքային ժամերին արագ լիցքավորման համար՝ (Նկար Գ-2):

**Նկար Գ-2. Արագ լիցքավորման կայան՝ դիսպենսերներով**



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ



Քանի որ արագ լիցքավորման համակարգի արտադրողականությունը հիմնականում կախված է պահեստավորման մեծությունից (տարողությունից), ապա Շիրակի հավաքակալայանի համար (400 ԲՄԳ ավտոբուս) նախատեսվում է նվազագույնը 80 տ գազի պահեստավորում: Այն ապահովում է 250 բար ճնշման պայմաններում 500մ<sup>3</sup> գազի պահեստավորման հզորություն: ԲՄԳ ավտոբուսների հավաքակալայանում սովորաբար անհրաժեշտ են անվտանգության միջոցառումներ, մասնավորապես բավարար տարածք է պահանջվում բարձր ճնշման և մեծ տարողության պահեստի համար, որպիսի հնարավոր լինի իրականացնել բազմաթիվ ավտոբուսներ հաջորդաբար լիվքավորումը:

### Նկար Գ-3. Պահեստային մաս («Ղէրի դարակ»՝ 1 800 լ, 250 բար)



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ



- Երբ պահեստը դատարկ է կամ լիցքավորման ընթացքի մեջ է, այն պետք է վերալիցքավորվի կոմպրեսորների միջոցով: Նշանակում է, որ ավտոբուսային հավաքակալանում արագ լիցքավորման համակարգի արտադրողականությունը հիմնականում կախված է կոմպրեսորների աշխատանքային արտադրողականությունից Պահանջվում է 5 աշխատանքային +1 պահուստային կոմպրեսոր (Նկար Գ-4)

### Նկար Գ -4. Գազի կոմպրեսոր



- Յուրաքանչյուր կոմպրեսորի համար տրամադրվելու է նաև օդը չորացնող սարք (Նկար Գ-5)

### Նկար Գ -5. Օդը չորացնող սարք

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ



- Լիցքավորման կայանի տարածքում կտեղադրվեն նաև օդամղիչներ՝ յուրաքանչյուր դիսպենսերի մոտ երկուական:
- Լիցքավորման կայանը ապահովված է լինելու ծածկով և հագեցած է լինելու հրդեհաշիջման սարքերով:

**Աղյուսակ Գ-2. Շիրակի փողոցի հարևանությամբ ավտոբուսների նոր հավաքակայանի ԲՄԳ կայանի տեխնիկական բնութագրերը**

|   | Պարամետր  | Չափման միավոր  | Արագ և դանդաղ լիցքավորումները համակցված |
|---|---|--|---|
| 1 | Բնական սեղմված գազի օրական սպառումը   | N մ <sup>3</sup> / օր                                  | 66 362                                  |
| 2 | Մեկ լիցքավորման ԲՄԳ ծավալը (9 ժամ տևողությամբ գիշերային դանդաղ լիցքավորման համար) | Nմ <sup>3</sup> / ժամ                                  | 1 688                                   |
| 3 | ԲՄԳ սարքավորումների զբաղեցրած տարածքը   | մ <sup>2</sup>   | 3 783                                   |
| 4 | Կոմպրեսորների քանակը  | 500 Nմ <sup>3</sup> /ժ X 6=<br>9000 Nմ <sup>3</sup> /ժ | 6                                       |
| 5 | Դիսպենսերների քանակը  | հատ  | 6                                       |
| 6 | 250 բար բարձր ճնշման պահեստային ծավալը  | մ <sup>3</sup>   | 4                                       |
| 7 | Լիցքավորման բաշխիչ փողրակ ավտոկայանատեղիում                                       | բաշխիչ փողրակ  | 400                                     |

*iii) Փոխադրամիջոցների լվացման տարածք*

Ավտոբուսների արտաքին լվացումը լինելու է մեխանիզացված և հնարավորություն է տալու լվանալ ավտոբուսի բոլոր մակերեսները՝ ավտոբուսի կողքերը, վերևի և հատակային հատվածը:

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Նախատեսվել է ամբողջությամբ մեխանիզացված լվացման համակարգ՝ պորտալ սարքավորումներով, ինչպես նաև ջրի վերացիկլավորման համակարգեր: Լվացման տարածքը լինելու է փակ: Դժվար հասանելի մասերը, օրինակ մեքենայի հատակային հատվածի մաքրումը կկատարվի ձեռքով՝ ձկուն խողովակների միջոցով:

Նախատեսվել 4 լվացման կետ (մեկ լվացման կետի մակերեսը՝  $7մ \times 13մ = 125 մ^2$ )՝ յուրաքանչյուր ավտոբուսը շաբաթական մեկ անգամ լվանալու համար: Լվացման կետերի անհրաժեշտ քանակը որոշվել է՝ 1 լվացման կետ 40 ավտոբուսի համար հաշվարկով:

Փոխադրամիջոցների լվացման համար օգտագործվելու է երկրորդային ջուր:

### iv) *Տեխսպասարկման տարածքը*

Շարժակազմի կանոնավոր սպասարկումն ապահովելու համար նախագծվել է սպասարկման աշխատանքների 26 կայան՝ 6մ X 15 մ՝ 12 մ -ոց ավտոբուսների համար և 6մ X 21մ չափերով՝ 18 մ-ոց ավտոբուսների համար: Սպասարկման մեկ կետի մակերեսը (ներառյալ հորը) շուրջ 135 մ<sup>2</sup> է, իսկ սպասարկման տարածքն ամբողջությամբ կգրադեցնի շուրջ 1520 մ<sup>2</sup>: Ընդհանուր առմամբ տարածքում անհրաժեշտ է մոտավորապես 8 հոր: Մուտքը դեպի հորեր կապահովվի ստացիոնար աստիճանավանդակի միջոցով, ինչպես նաև բոլոր հորերը փոխկապակցված կլինեն մեկ թեքահարթակով:

Շուրջ 1670 մ<sup>2</sup> մակերեսով տարածք հատկացված է տեխսպասարկման աշխատանքների հսկողության աշխատակազմի գրասենյակի և հարմարությունների համար (մոտ 10 հոգու համար): Վերահսկողություն իրականացնող անձնակազմի համար սպասարկման տարածքի հարևանությամբ տրամադրվում է 2 աշխատասենյակ: Այս աշխատասենյակները պաշտպանված կլինեն աղմուկից, սակայն սպասարկման տարածքը տեսանելի կլինի:

### v) *Վերանորոգման սրահներ*

Նախատեսված են առանձին սրահներ տարատեսակ վերանորոգման աշխատանքների համար՝ շարժիչների, փոխանցման տուփերի, օդափոխման համակարգով և գոծիչով ներկման, պաստառապատման, անվաբացքի ուղղման և էլեկտրական սարքավորումների վերանորոգման համար մեկական սրահներ՝ յուրաքանչյուրը պահեստամասերի պահեստավորման հնրավորություններով:

Տեխսպասարկման և վերանորոգման սրահների մոտակայքում նախատեսված են սանիտարահիգիենիկ պայմաններ (զուգարաններ, լվացարաններ և այլն):

### vi) *Պահեստային խցիկներ*

Նախատեսված է մեկ խցիկ պահեստամասերի համար՝ առանձին հատվածներով հին և նոր անվադողերի, նավթի բաքերի, մնացած բոլոր պահեստամասերի և մանրադետալների համար, ինչպես նաև առնվազն մեկ պահեստային տարածք՝ ԲՄԳ-ով աշխատող մեքենաների և դիզելային տրանսպորտային միջոցների համար:

Նախատեսված է գործիքների պահեստ՝ աշխատանքային գործիքները համակարգված կերպով դասավորելու, անվտանգ պահելու համար: Գործիքների պահեստավորման սենյակի դասավորությունը լինելու է հարմարեցված գործիքների պարբերաբար հաշվառման և աուդիտ իրականացնելու համար:

### vii) *Մուտքի / ելքի հատված և կամուրջ*

Նախատեսվում է 3 հիմնական մուտքեր դեպի ավտոբուսների նոր հավաքակայան. Մեկը՝ Արշակունյաց պողոտայի կողմից, 2-ը՝ Շիրակի փողոցի կողմից, այսպիսով՝ մուտքերն առկա են դեպի հավաքակայան տանող հիմնական մոտեցման ճանապարհի վերջնակետերում: Արշակունյաց պողոտայի կողմից ավտոբուսների անխոչնդոտ երթևեկը ապահովելու համար դեպի 6-րդ փողոց տանող ոռոգման ջրանցքի վրայի կամուրջը նախատեսվում է լայնացնել և հիմնանորոգել:

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Նախագծված է երկու երթևեկելի գոտի՝ յուրաքանչյուր մուտքի և ելքի համար, քանի որ ավտոբուսները կարող են մուտք գործել և դուրս գալ Շիրակի փողոցի երկու ուղղություններով:

Առանձին մուտք է նախատեսված անձնական մեքենաների համար, ինչպես նաև ավտոբուսների համար ելքը և մուտքերը Շիրակի փողոցից լինելու է տարանջատված: Շիրակի փողոցի մուտքերից մեկը նախատեսվում է ծառայեցնել որպես հիմնական մուտք ավտոբուսների համար, իսկ մյուսը՝ որպես ելք ավտոբուսների համար և մուտք աշխատակիցների ծառայողական մեքենաների համար: Բոլոր մուտքերի մոտ նախատեսվում է կառուցել անցակետեր: Ավտոբուսների մուտքի դարպասը լինելու է RFID (ռադիոհաճախականության նույնականացում) սարքավորված անցակետով: Ավտոբուսների երթևեկությունը օպտիմալացնելու համար նախատեսվում է առանձին ելք, որը նույնպես սարքավորված է լինելու ելքի համար նախատեսված RFID կապով:

Անձնակազմի և այցելուների համար նախատեսվում է ավտոբուսներից առանձնացված մուտքի/ելքի մեկ դարպաս՝ դեպի վարչական մասնաշենք և կայանատեղի մուտք ապահովելու համար: Ավտոբուսի մուտքի/ելքի տարածքում առանձնացվելու է անվտանգության անձնակազմի համար նախատեսված հատուկ սենյակ:

### *viii) Վարչական աշխատասենյակներ*

Հավաքակայանի ընդհանուր տարածքից մոտ 500 մ<sup>2</sup> մակերես է հատկացվել վարչական գրասենյակների և շինությունների համար: Վարչական շենքի առաջին հարկում տեղակայվելու են ընդունարանը և անվտանգության ծառայության տարածքը: Այս հարկում են գտնվելու հանդիպումների/հանրային խորհրդակցությունների/կոնֆերանսների դահլիճները: Վարչական աշխատասենյակները կտեղակայվեն առաջին հարկից բարձր: Նախատեսվել է ղեկավար անձնակազմի համար երեք (3) սենյակ, և առնվազն տասնհինգ (15) աշխատասենյակ՝ տեխնիկական անձնակազմի համար: Աշխատանքային բացօդյա տարածքներ ևս տրամադրվելու են վարչական անձնակազմի համար: Փակ աշխատասենյակների և բացօդյա աշխատանքային տարածքների փաստացի քանակը համաձայնեցված է Երևանի ավտոբուսային ընկերության և ԻՄ/ՕԻԳ-ի հետ: Խորհրդակցությունների սենյակի հարմարությունները ներառում են նաև պատին ամրացված LCD տեսակի էկրան:

Գրասենյակային տարածքը ունենալու է նաև պատճենահանման մեքենաների սենյակ, գրասենյակային պարագաների պահեստ, բուֆետ և աշխատանքային ընդմիջման (լանչի) համար նախատեսված տարածք: Վարչական գրասենյակային տարածքը հագեցած է լինելու հակահրդեհային և արտակարգ իրավիճակների սարքավորումներով և դրանց պահուստային մասերի համար նախատեսված հատուկ պահեստներով, առաջին բուժ. օգնության և շենքի սպասարկման պարագաներով: Վարչական շենքի յուրաքանչյուր հարկում պետք է ապահովվեն որակյալ և համապատասխան չափի՝ արական և իգական սեռի համար նախատեսված սանհանգույցներ (գուգարաններ, լվացարաններ և այլն): Յուրաքանչյուր սանհանգույցում առնվազն մեկ գուգարան պետք է հասանելի լինի հաշմանդամների համար: Շենքերի ներքին կահավորումը ներառված չէ ներկա առաջադրանքի մեջ:

### *ix) Հսկողության սենյակ և ուղեվարձի կառավարման սենյակ.*

Վարչական շենքերի համալիրը ներառելու է նաև հատուկ սենյակներ շարժակազմի կառավարման և ուղեվարձի կառավարման համար:

Շարժակազմի կառավարման սենյակը ունենալու է նվազագույնը 6 աշխատանքային կայան: Սենյակի նախագիծը և առաստաղի բարձրությունը նախատեսված են մեծ էկրանով LCD մոնիտորների տեղադրման համար: Հսկողության սենյակը ունենալու է նաև համապատասխան տարածք՝ աշխատանքային կայանների վերահսկողությունն իրականացնող անձնակազմի համար: Առանձին սենյակ կհատկացվի ուղեվարձի էլեկտրոնային վճարման համակարգի մոնիթորինգի իրականացման համար: Այս սենյակը ունենալու է համապատասխան չափի աշխատանքային կայաններ՝ ուղեվարձերի կառավարումն իրականացնող անձնակազմի համար: Ինչպես հսկողության սենյակի այնպես էլ ուղեվարձի կառավարման սենյակի մուտքերը լինելու են

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

անվտանգ հսկվող: Այս սենյակների հատուկ սարքավորումները մանրամասն նկարագրված են նախագծի Թողարկում 2.5-ում: Այս սենյակների համար սահմանված են բոլոր հաղորդողիների միացումները (օրինակ՝ էլեկտրական, հեռահաղորդակցության) և դրանց գտնվելու տեղադիրքերը: ITS (խելացի տրանսպորտային համակարգեր) սարքավորումների տեխնիկական մասնագրերը կտրամադրվեն ԱԶԲ-ի խորհրդատուների կողմից:

### x) *Վարորդի և ուղեկցորդի հարմարանքները*

Տրամադրված և կանանց համար նախատեսված որակյալ կողպվող հանդերձապահարաններ են տրամադրվելու վարորդների, ուղեկցորդների և ավտոբուսային ընկերության այլ աշխատակիցների համար: Տրամադրված պահարանների թիվը պետք է բավարար լինի վարորդների և ուղեկցորդների առնվազն երկու ամբողջական հերթափոխի համար 400 ավտոբուսի հաշվարկով: Նախագծված են արական և իգական սեռի համար նախատեսված որակյալ սանհանգույցներ (գուգարաններ, լվացարաններ և այլն), այդ թվում՝ հաշմանդամների համար նախատեսված գուգարաններ: Նախատեսված են նաև ճաշարանը և խոհանոցը: Ճաշարանը լինելու է հարմար վարորդների, ուղեկցորդների, ինչպես նաև վարչական անձնակազմի համար: Անձնակազմի համար տրամադրվելու են նաև հանգստի և ժամանցի հարմարություններ, ներառյալ հեռուստատեսության, սեղանի խաղերի սենյակ և ֆիզիկական վարժությունների և խաղերի դահլիճներ (օրինակ՝ սեղանի թենիս, բասկետբոլ և այլն): Անձնակազմի հանդերձարանները, հանգստի և ժամանցի տարածքները, սանհանգույցները և ճաշարանը լինելու են վարչական մասնաշենքի մուտքի հարևանությամբ և ունենալու են հավաքակայանից դուրս առանձին մուտք: Նախագծված է նաև անձնակազմի վերապատրաստման դասընթացների համար նախատեսված սենյակ, որը կարող է նաև ծառայել որպես խորհրդակցությունների դահլիճ, ինչպես նաև հաշվի է առնվել վարորդի համար նախատեսված ուսուցողական մոդել-մեքենան և դրա հետ կապված ծախսերը: Լվացաքատունը նախատեսված է հանդերձապահարանների սենյակի հարևանությամբ՝ համազգեստների լվացումը հեշտացնելու համար: Շենքերի ներքին կահավորումը ներառված չէ ներկա առաջադրանքի շրջանակում:

### xi) *Ջրահեռացման և ենթաջրահեռացման ներհրապարակային համակարգեր*

Հավաքակայանի ջրահեռացման համակարգը նախագծված է այնպես, որ հավաքակայանը կարողանա գործել նույնիսկ արտասովոր եղանակային պայմաններում:

Տարածքում նախատեսված են.

- ✓ Միացյալ ջրամատակարարման և հրդեհաշիջման համակարգ
- ✓ Տնտ-կենցաղային կոյուղի
- ✓ Արտադրական կոյուղի
- ✓ Անձրևատար կոյուղի
- ✓ Ավտոբուսների լվացման և հոսքերի մաքրման (ռեցիրկուլյացիա) համակարգ

### xii) *Ջրամատակարարման և հրդեհաշիջման համակարգ*

Ջրամատակարարման ցանցը նախատեսված է օղակաձև միացյալ տնտեսական, խմելու, արտադրական, հակահրդեհային պողպատե  $\phi 108 \times 4$  խողովակներից, բաժանարար հորերով և  $\approx 125-130$ մ մեկ հիդրանտով և ջրամբարներով:

Համաձայն շինությունների պատկանելիության և բնութագրի նախագծով կատարվել են ջրի ծախսի հաշվարկներ:

Ջրի ծախսերը՝

ա, ներքին հրդեհաշիջում

10լ/վրկ

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|                                 |          |
|---------------------------------|----------|
| բ. արտաքին հրդեհաշիջում         | 20լ/վրկ  |
| գ. տնտեսական-խմելու ջուր        | 4,5լ/վրկ |
| դ. տնտեսական-կենցաղային կոյուղի | 4,5լ/վրկ |
| ե. անձրևաջրեր                   | 350լ/վրկ |
| զ. ավտոմատ հրդեհաշիջում         | 30լ/վրկ  |

Աղմինիստրատիվ և տեխ. սպասարկման մասնաշենք

- Ճաշարան 88 տեղի համար- 8,244մ3/օր,  
3,15մ3/ժամ,1,59լ/վրկ (ըստ ճաշատեսակների քանակի)

- Աղմինիստրացիա և ինժեներա-տեխնիկական անձնակազմ  
Ըստ ՇՈՒՄ 2.04.01-85\*- մարդկանց թվի- 16,184մ3/օր, 10,844մ3/ժամ,  
5,18լ/վրկ  
և սան-սարքավորումների (այդ թվում ցնցուղներ  
տակդիրով)

Արտադրական ծախսեր

(համաձայն ջրօգտագործման և ջրահեռացման նորմատիվների 1 ավտոբուսի-193,1լ/օր)-  
3,88մ3/օր, 0,48մ3/ժամ, 0,134լ/վրկ (ընդունվել է օրական 20 ավտոբուս)

Շարժիչների վերանորոգում- 9,4մ3/օր, 1,175մ3/ժամ, 0,38լ/վրկ (1 ավտոբուսի- 0,94 մ3/օր)  
(ընդունվել է օրական 10 ավտոբուս)

Ավտոբուսների լվացում- 15,5մ3/օր, 1,5մ3/ժամ, 0,42լ/վրկ (թարմ ջուր, կորուստների  
լրացում)

Ընդամենը՝ 52,7մ3/օր, 17,15մ3/ժամ, 7,7լ/վրկ  
(այդ թվում՝ տաք ջուր)

Հատակների լվացում- 1,2լ-1մ2 օրում

Ըստ տեխ. սպասարկման մասնաշենքի մակերեսի այն կազմում է 5150լ/օր (5,15մ3/օր)

Լվացման տևողությունը ընդունվել է մոտ 1 ժամ-5,15մ3/ժամ, 1,43լ/վրկ

Հատակների լվացումը կկատարվի աղմինիստրատիվ և ինժեներա-տեխնիկական կազմի  
աշխատանքի ավարտից հետո (7 օրը մեկ):

**Հրդեհաշիջում**

Բաց ավտոկայանատեղի հրդեհաշիջում- 10լ/վրկ. (200 մեքենայից ավել- ՀՀՇՆ IV-11.03.03-02)  
Ավտոբուսների տեխ. սպասարկման և աղմինիստրատիվ մասնաշենք

Ներքին հրդեհաշիջում- 2x5լ/վրկ- 10լ/վրկ

(դիտարկվել է որպես մեկ ընդհանուր կառույց, պայմանավորված հակահրդեհային դռների և  
պատերի բացակայությամբ, ըստ ծավալի) ՇՈՒՄ 2.04.01-85\* աղ.2- 50հազ.-200 հազ. մ3 և կետ 6.6)

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Արտաքին հրդեհաշիջում- 30լ/վրկ (СНП 2.04.02-84\* աղ. 7 կառույցի ջերմակայությունը-I,II հրդեհի վտանգավորության կատեգորիա- А,Б,В, ծավալը 50հազ.-200հազ. մ3)

Կոմպետրային- 10լ/վրկ

Ավտոմատ հրդեհաշիջում- 30լ/վրկ (СП 5.13130.2009, տեղամասի խումբ- 2 ներկման խուց, պահեստ և քիմ մաքրման կետ)

Արտաքին հրդեհաշիջման ծավալը- 30լ/վրկ կապահովվի քաղաքային ցանցի հիդրանտից մոտ 150մ հեռավորության վրա:

Տարածքում ընդունվել է 1 հրդեհաշիջման ծախս- 10լ/վրկ. (կամ ներքին, կամ ավտոկայանատեղի)- 3 ժամվա ընթացքում և ավտոմատ հրդեհաշիջման ծախսը 30լ/վրկ. 1 ժամվա ընթացքում):

Ցանցը նախատեսված է օղակաձև միացյալ տնտ. Խմելու, արտադրական, հակահրդեհային պողպատե  $\phi 108 \times 4$  խողովակներից, բաժանարար հորերով և  $\approx 125-130$ մ մեկ հիդրանտներով: Տրամագիծը ընտրվել է առավելագույն  $13,2$ լ/վրկ. ծախսից ելած  $10$ լ/վրկ.- հրդեհաշիջում  $3,2$  ր/վրկ-max. տնտ. խմելու (բացառվել են ցնցուղների և ոչ կարևոր արտադրական ծախսերը)

Հորերը հավաքվի ե/բ-ից  $D=1500$  և  $D=1000$  հակի նիշը ընդունված է  $250$ մմ ցածր խողովակների հատակի նիշերից, խիճ ավազային նախապատրաստական շերտի վրա, խողովակների տակ  $0,1$ մ և վրան  $0,2-0,3$  մ ավազե շերտ:

Ավտոմատ հրդեհաշիջումը անկախ համակարգ է, ջուրը տրվում է պոմպակայանից վերը նշված կետեր, պողպատե  $\phi 159 \times 4,5$ մմ խողովակով:

Մուտքագծի վրա տեղադրված է սպրինկլերա-ջրային կափույր (клапан) ABD 16, որի աշխատանքը կապված է նշված կետերի առաստաղի տակ տեղադրված սպրինկլերների հետ:

Ջրամբարի ջուրը տրվելու է է Շիրակի փողոցով անցնող  $de 250$ մմ ջրագծից  $\phi 108 \times 4$  խողովակովով: Ջրագիծը գտնվում է ջրամբարներից  $\approx 400$ մ հեռավորության վրա: Քաղաքային ցանցից միացումը կատարվելու է մեկ տեղից  $\phi 108 \times 4$  պողպատե խողովակներով:

Պահանջվող կենցաղային, արտադրական և հրդեհաշիջման ծախսերը ապահովելու համար տարածքում նախատեսված է  $10,6 \times 10,6 \times 4,26$ մ չափերով 2 ջրամբար  $350$  մ3 յուրաքանչյուրը: Գերլցումից ապահովելու և անձեռնմխելի մակարդակները պահելու համար նախատեսված են էլեկտրոնային կափույրներ:

Ձեռնարկության ջրի ծախսը և ճնշումը ապահովվում են պոմպերով ջրամբարներից: Հավաքակայանը ապահովված է լինելու թվով  $6,7 \times 6,7$  մ մակերես ունեցող պոմպակայանով: Պոմպակայանի հատակի նիշը համապատասխանում է ջրամբարի հատակինիշին, ինչը ապահովում է պոմպերի ջրալցումը:

Նախատեսված է պոմպերի II խումբ: I խումբ՝ ավտոմատ հրդեհաշիջման –պատրաստի սարքավորում 2 պոմպից ընդանուր հենցի վրա HYDRO MX-A 1/1 NB 80-200/188Q=117,4 մ3/ժամ  $H=47$ մ  $N=30$ կվտ, որից մեկը աշխատող միյուրը ռեզերվ և ժոկեյ պոմպ բաքով CMBE 1-U-C-C-D-A Q=3.5 մ3/ժամ  $H=50$ մ  $N=1.1$ կվտ, որն ապահովում է մշտական ճնշումը:



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

II խումբ՝ ապահովում է max տնտ-խմելու –արտադրական ծախսերը 7,754լ/վրկ կամ ներքին հրդեհաշիջման (մյուս դեպքում ավտոկայանատեղի) 10լ/վրկ և max տնտ-խմելու ծախսերը (առանց ցնցողների և առտադրական ծախսերի)-3.2 լ/վրկ: Պատրաստի սարքավորում 3 պոմպից ընդանուր հենոցի վրա՝ Multi ER3CRE 20-3Q=25 մ3/ժամ H=46մ N=4կվտ յուրաքանչյուրը: Սովորական ռեժիմով՝ մեկ աշխատող երկու ռեզեով, հրդեհի ժամանակ երկու աշխատող մեկ ռեզեով: Ավտոմատ հրդեհաշիջման դեպքում ըստ հաշվարկի պահանջվող ճնշումը 50մ:

Տեղադրվելու է 9 հրշեջ հիդրանտներ:

### *Արտադրական և տնտեսական- կենցաղային կոյուղու համակարգ*

Կոյուղին և սանիտարական համակարգը նախագծված է տեղանքին համապատասխան: Տեխսպասարկման մասնաշենքի հատակների լվացման և արտադրական լվացարանների հոսքերը ինքնքիռու եղանակով ուղղվելու են մաքրման տեխնոլոգիական սարքավորում, որտեղ կատարվելու է յուղի և նավթամթերքի անջատում: Մասնաշենքից հոսքերը հեռացվելու են հոսակներով  $\phi 150$ , պատյաններ ունեցող  $\phi 150$ պոլիվինիլքլորիդե խողովակներով: Մաքրումից հետո հոսքերը ուղղվելու են անձրևատար ցանց:

Սանիտարական կոյուղու համակարգը նախատեսված է աղմինիստրատիվ և ավտոբուսների տեխսպասարկման մասնաշենքի աշխատասենյակների հոսքերի հեռացման համար: Հոսքերի քանակը-15,65 մ3/ժամ ; 6,77լ/վրկ: Խողովակները՝ ծալքավոր de 160մմ: Հորերը՝ հավաքովի ե/բ էլեմենտներից D=1000մմ, խիճավազային 0,1 մ շերտի վրա: Խողովակների տակ 0,1 մ և վրա 0,3 մ շերտով ավազային լիցք: Նախագծված կոյուղատար համակարգը կմիացվի քաղաքային կոյուղատար համակարգին, որն անցնում է Շիրակի փողոցով (տե՛ս Հավելված Ե, Ենթահավելված Ե-7):

### *Անձրևաջրերի հեռացում*

Անձրևաջրերը 0.3x0.5մ B22.5 բետոնե առուներով, որոնք թափվելու են ջրի կոլեկտորի մեջ, որտեղից հեռացվելու են 2 խողովակաշարերով, որոնք լցվելու են Շիրակի փողոցով անցնող անձրևատարի մեջ:

### *Ավտոբուսների լվացման և հոսքերի մաքրման ռեցիրկուլյացիոն համակարգ*

Ավտոբուսների լվացման հոսքերը 10 ակն կետերից ուղղվելու են մաքրման սեկցիաներ, որոնք նախատեսված են սարքավորումների սենյակների տակ: Սեկցիաները երեքն են՝

I սեկցիա-նստվածքային (խոշոր մասնիկների՝ ավազի և ցեխի նստում)

II սեկցիա - նավթի և յուղի անջատում

III սեկցիա - պարզարան

3-րդ սեկցիայից սուզված պոմպով պարզեցված ջրերը մղվելու են  $\pm 0,0$  մաքրման սարք վերջնական մաքրման և հետագա օգտագործման (ռեցիրկուլյացիա) :Նախատեսված է 1 սարք 10մ3/ժամ յուրաքանչյուրը կատարում է  $\approx 88\%$  հոսքերի մաքրում, որի շնորհիվ տեղի է ունենում ջրի խնայողություն և շրջակա միջավայրի պահպանություն: Կորուստները 13%-15% չափով լրացվում են ջրամատակարարման ցանցից:

### *xiii) Կաթսայատուն*

Հավաքակայանն ապահովված է լինելու կաթսայատնով: Նախատեսված է իրականացնել կաթսայատուն՝ 8.80x10.80մ չափերով:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

*xiv) Էլեկտրամատակարարման սարքավորումներ*

Խորհրդատուն նախագծել է նաև տեղամասի համար պահանջվող էլեկտրականության պայմանները՝ էլեկտրական միացումները, տրանսֆորմատորները և լուսավորության, սարքավորումների և այլնի համար ենթակառուցվածքները: Նախատեսված է ընդհանուր էլեկտրամատակարարման ենթակայան հավաքակայանի տարածքում, որը զբաղեցնելու է 72 մ<sup>2</sup> տարածք և մատակարարելու է առնվազն հսկողության սենյակը և ուղեվարձի կառավարման սենյակը:

*xv) Հեռահաղորդակցության գծեր*

Հավաքակայանը կապահովվի հեռախոսային մալուխներով և ինտերնետային կապուղիներով:

*xvi) Գոյություն ունեցող հաղորդուղիները*

Նախատեսվում է հավաքակայանի համար հատկացված տարացքով անցնող հաղորդուղիների տեղափոխություն՝ գազատարի տեղափոխություն և ոռոգման ջրանցքի պաշտպանություն:

*xvii) Կանաչապատում* Հավաքակայանը և հարակից ավտոբուսային կանգառը կանաչապատման տեսանկյունից գրավիչ տեսք կունենան: Կանաչապատման նախագիծը գուգակցվելու է կանաչապատման տարածքի խնամքը նկարագրող պլանի հետ:

*xviii) Ոռոգման համակարգ և պոմպակայան*

Կանաչապատ հատվածի խնամքի համար նախատեսվում է ոռոգման համակարգ: Ոռոգումն ապահովվելու է մոտավորապես 27 մ հեռավորության վրա անցնող ոռոգման ջրանցքից: Ջուրը ջրանցքից  $\phi$  89 x 4 խողովակներով տրվելու է նախատեսված հոր՝ ե/բ օղակներից, D=1500մմ, H=1500մմ որտեղից պոմպի միջոցով տրվելու է կանաչապատ տարածքներ 2 ճյուղով՝  $\phi$  89x4 խողովակներով : Տարածքների երկարությունը 536մ և 455մ է: Ոռոգումը կկատարվի առանձին հատվածներով: Պահանջվող ջրի քանակը՝ 15 մ<sup>3</sup>/ժամ 4.2լ/վրկ:

Նախատեսված է իրականացնել ոռոգման համակարգի համար օժանդակ շենք՝ 3.20x3.20մ չափերով: Պոմպը <<GRUNDFOS>> արտադրության է CME 15-1A-R-A-E-AVBE N=2.2 կՎտ, Q=15 մ<sup>3</sup>/ժամ H=25մ :

*xix) Նշանների համակարգը*

Հավաքակայանի մուտքի հատվածում կտեղադրվի մեծ լուսավորված վահանակ: Հաստատության տարածքում անհրաժեշտ կլինի նաև տեղադրել մի շարք նշաններ՝ տարբեր տարածքներ սահմանազատելու, հատուկ վտանգներ նշելու և այլնի համար: Խորհրդատուն մշակել է նշանների համակարգի լիարժեք պլան հավաքակայանի տարածքի համար:

*xx) Շուրջկողմյա ցանկապատում*

Հավաքակայանի տարածքը ամբողջ պարագծով ապահովված է լինելու 2,6մ բարձր ցանկապատով, որի ընդհանուր երկարությունը լինելու է 1453մ: Բնակելի տներին մոտ գտնվող պատերի մոտ կիրականացվի կանաչ պատնեշ՝ 2-3 սարքով տնկված ծառերից բաղկացած:

70. Իրականացվելու են ընդհանուր առմամբ հետևյալ շինարարական աշխատանքները.
- i. գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժում,
  - ii. հողային աշխատանքներ/ հանույթ (հողային աշխատանքների ընդհանուր ծավալը 193700 մ<sup>3</sup> է, որից 93199 մ<sup>3</sup> հանույթ, ներառյալ՝ 24875 մ<sup>3</sup> բուսահողի շերտի հեռացումը),
  - iii. լիցքի աշխատանքներ, որոնց ծավալը կազմում է 276375.7մ<sup>3</sup>, 23930.76 մ<sup>3</sup> խճային խառնուրդ C-6 և շուրջ 100501 մ<sup>3</sup> կոպճային խառնուրդ C-4;

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- iv. ոռոգման ջրանցքի վրայով 9 մ երկարությամբ և 20 մ լայնությամբ Արշակունյաց պողոտայի հետ կապող մոտեցման կամրջի վերակառուցում:
- v. Շենքեր և կառույցներ.
  - վարչական շենքի կառուցում՝ 3 հարկ + 1 ստորգետնյա 1670 մ<sup>2</sup> տարածքով,
  - տեխնիկական սպասարկման սրահի կառուցում՝ 6200 մ<sup>2</sup> տարածքով,
  - լիցքավորման կայան՝ 9670 մ<sup>2</sup>,
  - լվացման կայան՝ 1920մ<sup>2</sup>,
  - 4 անցակետ,
  - պոմպակայան, էլեկտրական ենթակայան, կաթսայատուն,
  - դիզելային վառելիքի ստորգետնյա պահեստ, ԲՄԳ պահեստ,
  - 2 ջրամբար՝ ընդհանուր 200 մ<sup>3</sup> ծավալով,
  - 2 հանգստի սենյակ՝ անձնակազմի համար:
- vi. Հաղորդուղիների, այդ թվում՝ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի տեղափոխություն Ջրագծերի տեղափոխումը ներառում է՝
  - 1567.8 մ երկարությամբ ջրագծի վերակառուցում,
  - ջրագծերի դիտահորեր՝ 11 հատ,Կոյուղագծի տեղափոխում և կառուցում, այդ թվում՝
  - 1039.5 մ ընդհանուր երկարությամբ կոյուղատարի վերակառուցում,
  - կոյուղատարի դիտահորեր՝ 10 հատ,
  - 1230մ ընդհանուր երկարությամբ հեռանկարային կոյուղատարի կառուցում,110 կՎ ՄԲ փոխանցման գծի տեղափոխում, այդ թվում՝
  - ա. ապամոնտաժում
  - բ. տեղադրում
- vii. Ասֆալտի տեղադրում՝ հետևյալ հիմնական աշխատանքներով.
  - ❖ վերին (մաշման) շերտ, տաք մանրահատիկ ասֆալտ. Տեսակ A, կարգ I՝ ԵԽԸ 60/90 բիտումով. h= 6 մ, 100501 մ<sup>2</sup> բարձր ծակոտկենությանբ տաք ասֆալտ, կարգ I՝ ԵԽԸ 60/90 բիտումով. h=10 սմ, 61 415 մ<sup>2</sup>
  - ❖ խճաքարի, ավազի, կոպճավազի խառնուրդ C-6 40մմ, h=10 սմ - 13958.7 մ<sup>3</sup>
  - ❖ կոպճավազային խառնուրդ C-4 80մմ, h=100 սմ, E=180ՄՊա - 100501մ<sup>3</sup>
- viii. 2060.0 մ ընդհանուր երկարությամբ ջրահեռացման համակարգի կառուցումը ներառում է՝
  - ❖ կենցաղային կոյուղու խողովակաշար  $\phi$ -160 - 280 մ,
  - ❖ աշխատանքային թափոնաջրերի կոյուղու խողովակաշար  $\phi$ -160, որը միացվում է համակարգին մաքրվելուց հետո - 260 մ,
  - ❖ անձրևաջրերի ջրահեռացման համակարգ:  $\phi$ -200 - 1035 մ
    - $\phi$ -250 - 90 մ
    - $\phi$ -300 - 117 մ
    - $\phi$ -400 - 118 մ
    - $\phi$ -500 - 160 մ
- ix. Լուսավորության 167 ցինկապատ սյուն՝ LED լուսատուներով (215Վտ).
- x. Ճանապարհի կառուցում և կահավորում
  - 160 մ երկարությամբ մոտեցման ճանապարհ Արշակունյաց պողոտայից, երկու մոտեցման ճանապարհներ՝ 23 մ և 35 մ երկարությամբ Շիրակի փողոցի կողմից
  - մայրեր
  - ճանապարհային նշանների տեղադրում. երթևեկության կազմակերպման և անվտանգության նկատառումներով նախատեսվում է 22240 մ ընդհանուր երկարությամբ գծանշում և 28 ճանապարհային նշան

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- ռոռգման ջրանցքի վրայով անցնող կամրջի վերակառուցում
- կանաչապատում՝ ներառյալ ռոռգման համակարգը

71. Շինարարական աշխատանքների համար կիրառվող նյութերը հետևյալն են.
- լիցքի նյութ՝ կոպիճ և ավազ, հողային և ժայռային հանույթ
  - բետոն
  - ասֆալտ
  - բազմաշերտ (սենդվիչ) պանել
  - մետաղական ամրաններ՝ կառուցվածքների համար
  - մետաղական կառուցվածքներ և կցամասեր
  - ջուր՝ տեխնոլոգիական (տոփանում) և բնապահպանական (փոշու առաջացումը կանխարգելելու համար)
  - այլ (խողովակներ, լուսավորություն, պաստառներ և պողպատե արգելափակոցներ, ներկեր, քսանյութեր և այլն)

## Դ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

72. ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հիմնադրույթները (2009)<sup>9</sup>, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը<sup>10</sup> պահանջում են հաշվի առնել ծրագրի իրագործելի այլընտրանքներն ինչպես տեղադիրքի, այնպես էլ նախագծային լուծումների առումով որպիսի հնարավորինս խուսափել կամ կանխարգելել հավանական բնապահպանական ազդեցությունները:
73. Նոր հավաքակայանի և սեղմված բնական գազի լիցքավորման կայանի կառուցման համար դիտարկվել են հետևյալ այլընտրանքային տարբերակները.

### ***Կոնցեպտուալ (հայեցակարգային)***

- «Զրոյական» կամ «ոչինչ չանել» այլընտրանք
- Զրվեժի ավտոբուսային հավաքակայանի վերակառուցում
- Արշակունյաց պողոտա-Շիրակի փողոց փոխհատման հարևանությամբ ավտոբուսային նոր հավաքակայանի կառուցում

### ***Ավտոբուսային նոր հավաքակայանի տեղադիրքի այլընտրանք***

- «Նորագավիթի» ավտոբուսային նոր հավաքակայան
- «Էրեբունու» ավտոբուսային նոր հավաքակայան
- «Շիրակի» ավտոբուսային նոր հավաքակայան

### ***Նախագծային***

- ԱԶԲ-ի կողմից տրամադրված նախնական սխեմայի վրա

<sup>9</sup> ԱԶԲ ԱԲՀ (2009) Բնապահպանական երաշխիքների քաղաքականության սկզբունքները, Սկզբունք No 3, էջ 16, . <https://www.adb.org/sites/default/files/institutional-document/32056/safeguard-policy-statement-june2009.pdf>

<sup>10</sup> «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, Հոդված 18, պարբերություն 2, ենթապարբերություն 5). <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- «ԷԳԻՍ»-ի այլընտրանքային սխեմայի վրա

## Դ1. Կոնցեպտուալ

### «Զրոյական» այլընտրանք

74. Կոնցեպտուալ տարբերակներից մեկը՝ «զրոյական» կամ «ոչինչ չանել» այլընտրանքն է, այն է՝ թողնել ներկա իրավիճակն այնպես, ինչպես կա: Այս տարբերակը մերժվել է սույն հաշվետվության Ա1 (Օրագրի նախաբանը) և Գ. (Օրագրի նկարագրությունը) պարբերություններում նշված մի շարք պատճառներով, որոնք հիմնավորում են նոր հավաքակալանի կառուցման անհրաժեշտությունը, այն է՝

- ❖ Երևան քաղաքի տրանսպորտային համակարգում տրանսպորտային միջոցների պակասը (դեֆիցիտը):

- Միջին չափի ավտոբուսների (միդիավտոբուսներ) շարժակազմը կազմված է բացառապես ավելի փոքր դիզելային տիպի փոխադրամիջոցներից՝ 18-ից մինչև 22 նստատեղով և կանգնած ուղևորներ տեղափոխելու սահմանափակ հնարավորությամբ: Այս փոխադրամիջոցներով սպասարկվում է 39 երթուղի՝ որպես անհատական կոնցեսիաներ:

- Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի հիմնական մասն են կազմում մասնավոր օպերատորների կողմից շահագործվող «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուսները: Ցանցի այս հատվածը ապահովում է ուղևորափոխադրումների մոտ 53%-ը: Գրանցված են մոտավորապես 1400-ից ավելի միկրոավտոբուսներ, սակայն մեծ հավանականությամբ օրական շահագործման մեջ գտնվող մեքենաների թիվը ավելի փոքր է:

- Բոլոր միկրոավտոբուսները փոխարկվել են սեղմված բնական գազով շահագործման համար: Այս տրանսպորտային միջոցների շուրջ 75%-ը 10 տարուց ավելի տարիք ունի: Նման ինտենսիվ շահագործման պարագայում այս տրանսպորտային միջոցների օգտակար ծառայության ժամկետը 5 տարուց քիչ է: Ուսումնասիրությունները վկայում են, որ շարժակազմի մեծ մասը գտնվում է անմխիթար վիճակում, հոլի են թերություններով, որոնք կարող են հանգեցնել անվտանգության խնդիրների:

75. Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ շահագործման համար պիտանի տրանսպորտային միջոցների քանակը սահմանափակ է: Օրվա գրեթե բոլոր ժամերին Երևանի տրանսպորտային համակարգում առկա է տրանսպորտային միջոցների պակաս, այսինքն պահանջարկը գերազանցում է առաջարկը, ինչը հանգեցնում է գերձանրաբեռնվածության:

- ❖ Վատթար վիճակում գտնվող տրանսպորտային ենթակառուցվածքներ, տրանսպորտային միջոցների շարժակազմը հին է և դրանց պատշաճ պահպանում/սպասարկում չի իրականացվում:

- Գոյություն ունեցող տրոլեյբուսի շարժակազմը (79 տրանսպորտային միջոց) շատ հին է (9-10-ից մինչև 27-30 տարվա արտադրության), և դրանց շուրջ 20%-ը հնարավոր չէ օգտագործել անմխիթար վիճակի պատճառով:

- Միջին չափի ավտոբուսների հիմնական մասի օգտակար ծառայության ժամկետը սպառվել է: Բացառություն են կազմում միայն «Higer» մակնիշի ավտոբուսները (249

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

միավոր՝ միջինում 4-6 տարվա արտադրության): «Hyundai» և «Jijiang» ավտոբուսները նպատակահարմար չեն քաղաքային ավտոբուսային ցանցում ինտենսիվ շահագործման համար:

- Միկրոավտոբուսների մոտ 75% -ը 10 տարեկանից բարձր տարիք ունեն: Նման ինտենսիվ շահագործման դեպքում այս տիպի մեքենաների անվտանգ շահագործման ժամկետը 5 տարուց պակաս է: Նրանք շարժվում են միջինում 16 կմ/ժ արագությամբ և մեծապես նպաստում են քաղաքային ճանապարհների երթևեկության խցանումներին:

76. Այսպիսով, շարժակազմի մեծ մասը, հատկապես միկրոավտոբուսները, գտնվում են չափազանց վատ վիճակում, որը կարող է հանգեցնել անվտանգության խնդիրների:

- ❖ Ծառայության որակը. սպասարկման որակը անբավարար է տրանսպորտային միջոցների գերձանրաբեռնվածության պատճառով:
- ❖ Ավտոբուսային ոլորտի աշխատակիցների բարեկեցությունը. Պայմանները բարենպաստ չեն ինչպես քաղաքային ավտոբուսների շարժակազմի շահագործման առումով, այնպես էլ ոլորտի աշխատակիցների բարեկեցության համար: Գործող հավաքակազմի շենքերից շատերը սեյսմիկ անվտանգության առումով հուսալի չեն և աշխատավայրում լուրջ վտանգ են ներկայացնում:

77. «Ոչ մի գործողություն» տարբերակը կենսունակ չի համարվում, քանի որ եղած պայմանները ժամանակի ընթացքում էլ ավելի կվատթարանան: Վերոնշյալ բոլոր հանգամանքները կարևորում են փոխադրամիջոցների շարժակազմի արդիականացման և ավտոբուսների նոր շարժակազմի անհրաժեշտությունը, ինչն իր հերթին հանգեցնում է նոր և/կամ վերակառուցված և արդիականացված հարմարությունների անհրաժեշտության: Այսպիսով, Երևան քաղաքի տրանսպորտային համակարգի վերակառուցումն ու արդիականացումը դարձել է կենսական անհրաժեշտություն:

### «Ջրվեժի ավտոբուսների հավաքակազմի վերակառուցում»

78. Առաջարկվել է նաև մեկ այլ այլընտրանք՝ վերակառուցել Ջրվեժի ավտոբուսների գոյություն ունեցող հավաքակազմը: Այս առաջարկը գրավիչ է համարվել, քանի որ ենթադրվում էր վերակառուցել արդեն իսկ գործող ձեռնարկությունը և նոր տարածքի հատկացման կարիք չկար: Մյուս կողմից, պարզ դարձավ, որ մի շարք սահմանափակումներ չեն նպաստում այս տարբերակի ընտրության օգտին.

- ✓ շինարարության ընթացքում գոյություն ունեցող շարժակազմի ժամանակավոր տեղավորման համար տարածքի բացակայություն,
- ✓ հին հավաքակազմի բազմաթիվ շենքերի և շինությունների ապամոնտաժման և քանդման աշխատանքների ընթացքում շինարարական տարածքը մեկուսացնելու և գործող շարժակազմի անվտանգությունն ապահովելու անհնարիություն,
- ✓ ինչպես գործող, այնպես էլ նոր ժամանած շարժակազմի վերջնական տեղավորման համար տարածքի բացակայություն:

### «Նոր ավտոբուսային հավաքակազմի կառուցում»

79. Վերը նշված պատճառներով «Ջրվեժի ավտոբուսների հավաքակազմի վերակառուցում» այլընտրանքը մերժվեց և դիտարկվեց մեկ այլ այլընտրանք, այն է՝ «Նոր ավտոբուսային

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

հավաքակայանի կառուցում» այլընտրանքը: Այս տարբերակը գերծ է նախորդ երկու այլընտրանքների թերություններից:

80. Ավտոբուսային նոր հավաքակայանի գտնվելու վայրի առումով դիտարկվել է այս այլընտրանքի երեք տարբերակ՝

- «Նորագավիթի» նոր հավաքակայան
- «Էրեբունու» նոր հավաքակայան
- «Շիրակի» նոր հավաքակայան

## Դ2. Ավտոբուսների նոր հավաքակայանի տեղադիրքի այլընտրանքները

### «Նորագավիթի» այլընտրանք

81. Ավտոբուսային նոր հավաքակայանի կառուցման համար նախ դիտարկվեց հողատարածք, որը գտնվում էր Արտաշատի խճուղու ձախ կողմում՝ Երևանի շրջանցիկ ճանապարհի Նորագավիթի հատվածի Նոր Շիրակ-Արտաշատի խճուղի հանգույցի փոքր օղակաձև փոխհատման հարևանությամբ: Սակայն այս այլընտրանքը մերժվեց, քանի որ

- ✓ Նախատեսվող կառույցների/ հարմարությունների համար տարածքը բավականաչափ մեծ չէր,
- ✓ առաջարկվող հողատարածքը գրեթե ամբողջությամբ զբաղեցված է (հանդիսանում է մասնավոր սեփականություն կամ վարձակալված է) և օգտագործվում է հարևանությամբ բնակվող բնակիչների կողմից:

### «Էրեբունու» այլընտրանք

82. Դիտարկվող մեկ այլ տարբերակ էր ավտոբուսային նոր հավաքակայանի կառուցումը Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոցի վրա գտնվող նախկին «Երևանի մսի կոմբինատի» հետևում գտնվող հողատարածքում: Այս տարբերակը որոշակի առավելություն ուներ, այն է՝ հողակտորի նկատմամբ պետական սեփականության ձևը, սակայն այն նույնպես մերժվեց հետևյալ պատճառներով.

- ✓ առաջարկվող հողակտորը անտառապատ էր՝ ավելի քան 450 ծառով,
- ✓ մոտեցման ճանապարհները շատ վատ վիճակում էին, և դրանց վերանորոգման համար անհրաժեշտ էին լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

### «Շիրակի» այլընտրանք

83. Ի վերջո, որոշվեց, որ նոր հավաքակայանը կտեղակայվի Երևանի հարավ-արևմուտքում՝ Արշակունյաց պողոտայի և Շիրակի փողոցի փոխհատման հարևանությամբ, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում: Ընդհանուր տարածքը 18 հեկտար է, որից 11,7 հեկտարը Երևանի քաղաքապետարանը հատկացրել է ապագա նոր հավաքակայանի կառուցման համար <sup>11</sup>:

84. Նախորդ տարբերակների համեմատությամբ վերջինն ունի մի շարք առավելություններ.

- ✓ հատկացված հողատարածքը բավականաչափ մեծ է՝ ավտոբուսային հավաքակայանի հարմարությունների և կառույցների ամբողջ համակարգը տեղավորելու համար,

<sup>11</sup> Սկզբում ԵՔ-ը հատկացրել էր 12,9 հա ավտոբուսների նոր հավաքակայանի կառուցման համար: Այս տարածքը նվազեցվել է մինչև 11,7 հա՝ առաջին հանրային քննարկման ժամանակ ԱԵԱ-ների ներկայացրած պահանջը բավարարելու համար: Մանրամասները ներկայացված են Գլուխ Է-ում և Հավելված Թ-ում:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- ✓ պլանավորումը և հատակագիծը կարող են ապահովել հավաքակայանի շահագործման անվտանգության բոլոր պահանջները,
- ✓ առավելագույնս արդյունավետորեն է պահպանվում ավտոբուսների «գրոյական վազքը» նվազեցնելու սկզբունքը:

### Դ3. Նախագծային այլընտրանքներ

#### Սկզբնական սխեմատիկ նախագիծը

85. Սկզբնական սխեմատիկ նախագիծը մշակվել և առաջարկվել է ԱԶԲ-ի կողմից՝ հավաքակայանի նախագծման առաջատար մասնագետի և ենթակառուցվածքների նախագծման ավագ ինժեների ներգրավմամբ, որը պետք է բավարար հիմք հանդիսանար մանրամասն նախագծի համար (տե՛ս Նկար Դ-1):
86. Նախագծման խորհրդատուն դիտարկել է այս սխեմատիկ հատակագիծը և եզրակացրել է, որ ԱԶԲ-ի կողմից մշակված հատակագիծը պետք է վերանայվի, քանի որ առկա են էական անհամապատասխանություններ Պատվիրատուի կողմից ՊՇ-ում նշված պահանջների և Նախագծման խորհրդատուի կողմից հավաքագրված ելակետային տվյալների հետ: Այս սեխմատիկ հատակագիծը պետք է վերանայվի գրեթե բոլոր առումներով: Մասնավորապես,
- ✓ կայանատեղին գտնվում է հողատարածքի հյուսիսում՝ 12 մ երկարությամբ ավտոբուսների կայանման համար նախատեսված 432 տեղով: Ավտոբուսների համար նախատեսված տեղերը գտնվում են կողք կողքի՝ երեք ավտոբուսից կազմված շարքերով: Ավտոկայանատեղիի այսպիսի դասավորությունը օպտիմալ է տարածք խնայելու առումով, սակայն, մյուս կողմից, մեջտեղում կայանված ավտոբուսն այս դիրքում (առջևից, հետևից) արգելափակված է երկու այլ ավտոբուսներով: Երեք ավտոբուսների՝ մեկ շարքում կայանման լուծումը հարմար չէ նաև շահագործման տեսանկյունից. շահագործման ընթացքում ի հայտ կգան զգալի բարդություններ, կառաջանա կայանված շարժակազմի բազմաթիվ մանեվրներ գործելու անհրաժեշտություն: Հետևաբար, կայանման այս լուծումը չի համապատասխանում շահագործման պահանջներին:
  - ✓ Առաջարկվող 7 մ լայնությամբ երթևեկության գոտին բավարար չէ երթևեկության և մանևրելու համար: 12 մետր լայնությունը բավարար է կայանման և շրջադարձի համար, սակայն բավարար չէ երկկողմանի երթևեկություն ապահովելու համար:
  - ✓ Սխեմատիկ նախագծով նախատեսվում է կայանատեղի 82 մասնավոր փոխադրամիջոցի համար և 130 տեղ՝ երկանիվ փոխադրամիջոցների համար: Այնուամենայնիվ, եթե համարվի, որ անձնակազմի 50%-ը հավաքակայան է գալիս սեփական մեքենայով, դա նշանակում է, որ մասնավոր մեքենաների կայանատեղիի համար անհրաժեշտ է ավելի քան 200 տեղ, ուստի պահանջվող քանակը զգալիորեն մեծ է, քան սխեմատի նախագծով նախատեսված կայանատեղիների թիվը: Մյուս կողմից, 130 հեծանիվի համար նախատեսված կայանատեղին համարվում են չափազանցված և ոչ օգտակար, քանի որ հեծանվավարությունն այնքան էլ զարգացած չէ Երևանում:

**Նկար Դ-1. Շիրակի ավտոբուսների հավաքակայանի հատակագիծը՝ ըստ ԱԶԲ-ի սխեմատիկ նախագծի**



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ



- ✓ Հավաքակայանն ունի երկու մուտքի դարպաս, որոնք տեղակայված են Շիրակի փողոցում: Նախագծով այլ փողոցներից մուտք չի նախատեսվում: Այս դարպասներով ավտոբուսների երթուղիները ուսումնասիրելուց հետո եզրակացվել է, որ երկուսն էլ նախատեսված են միայն ելքի համար, ինչը նշանակում է, որ մուտքը դեպի հավաքակայան բացակայում է:
- ✓ Նախագծով առաջարկվում է ինչպես ԲՄԳ, այնպես էլ դիզելային վառելիքով լիցքավորում ավտոբուսների համար հետևյալ դիսպենսերներով՝ 12 ԲՄԳ դիսպենսեր (6-ը՝ երկկողմանի) և 4 դիզելային վառելիքի դիսպենսեր (2-ը՝ երկկողմանի): Այս դիսպենսերները տեղակայված են երկու տարբեր վայրերում և ունեն «խառը» բաշխվածություն: Դրանց միջև կա դիզելային վառելանյութի և ԲՄԳ պահեստի համար նախատեսված տարածք: ԲՄԳ պահեստի և կոմպրեսորի տեղակայման վայրի ընտրության գործում հաշվի չի առնվել անվտանգության նկատառումներով շենքերից նվազագույն 50 մ հեռավորության պահպանման անհրաժեշտությունը:
- ✓ Արշակունյաց պողոտայի հավաքակայանի նախագծով 3725 մ<sup>2</sup> տարածք օգտագործվում է սպասարկման աշխատանքների համար, ներառյալ տեխսպասարկման հորերը, ավտոմասերի պահեստավորումը, տեխնիկական գոտիները և անձնակազմի համար նախատեսված հարմարությունները: Հաշվի առնելով, որ 400 ԲՄԳ ավտոբուսների սպասարկման համար պահանջվում է մոտ 5910 մ<sup>2</sup> տարածք, կարելի է եզրակացնել, որ այդ նպատակի համար նախատեսված տարածքը չափազանց փոքր է և բավարար չէ:
- ✓ Բոլոր գործառնությունների համար նախատեսված վարչական գրասենյակները նույն տեղում են (2 հարկանի շինության նախագիծ): Նախատեսվում էր ընդամենը շուրջ 16 աշխատասենյակ: Այս թիվն, ինչպես հաշվարկված է, բավարար չի լինի 110 աշխատակցից կազմված անձնակազմի համար: Աշխատանքային լավ պայմաններ ունենալու համար վարչական անձնակազմի համար ավելի շատ տարածք է անհրաժեշտ:
- ✓ Հանգստի համար նախատեսված լուծումները չեն բավարարում. հիմնական շենքի ներսում նախատեսված է միայն հանգստի սենյակ վարորդների համար:
- ✓ Հաշմանդամություն ունեցող կամ այլ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար մատչելիության/հասանելիության վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չի տրամադրվել և որևէ հատուկ լուծում չի նախատեսվել:
- ✓ Բնապահպանական երաշխիքների վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չի տրամադրվել, և որևէ հատուկ լուծում չի նախատեսվել:


## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

87. Ամփոփելով՝ կարելի է համարել, որ ԱԶԲ-ի առաջարկած սխեմատիկ նախագիծը բավարար չէ և զգալի բարելավման կամ վերամշակման կարիք ունի:

### «ԷԳԻՍ»-ի սխեմատիկ նախագիծը

88. Նախագծման խորհրդատուն հավաքակայանի համար նոր հատակագիծ է մշակել՝ նախագծային ընդունված կոնցեպտուալ կանոնների հիման վրա: Վերջնական հաստատված հատակագիծը ներկայացված է ստորև (ներկայացված է Նկար Դ-2-ում):
89. Այս հատակագիծը զերծ է վերը նշված թերություններից, և կան մի շարք առավելություններ՝ նախորդ այլընտրանքների համեմատ, այն է՝
- ✓ Երթևեկության անվտանգություն. բոլոր տրանսպորտային միջոցները՝ ինչպես ավտոբուսները, այնպես էլ անձնական տրասպորտը, կշարժվեն միակողմանի երթևեկության սկզբունքով, իսկ հետիոտներն՝ հատուկ ուղիներով սահմանված կանոններով (կանգառներ, առաջնահերթություն խաչմերուկ և այլն),
  - ✓ անձնական փոխադրամիջոցների համար նախատեսվել է ավտոկայանման 240 տեղ,
  - ✓ երթևեկության կառավարման նոր պլանում հաշվի է առնվել մեկ մուտքի և մեկ ելքի դարբաս: Յուրաքանչյուր մուտքի և ելքի համար նախատեսվել է երկուական երթևեկության գոտի, որպիսի ավտոբուսները կարողանան մուտք գործել և դուրս գալ Շիրակի փողոցի երկու ուղղություններով,
  - ✓ հավաքակայանի համար նախատեսվել է համակցված ԲՄԳ լիցքավորման լուծում (արագ և դանդաղ լիցքավորում),
  - ✓ ԲՄԳ լիցքավորման կայանի և շինությունների միջև նախատեսված է 60 մ-ոց անվտանգության գոտի,
  - ✓ նախատեսվել է սպասարկման աշխատանքների նվազագույնը 26 կետ՝ պարբերական սպասարկման համար, ինչպես նաև որոշ կետեր՝ օպերատորի կողմից ամենօրյա գնման համար: Տեխնիկական տարածքը ներառում է անվտանգության հսկողություն՝ վարչական շենքին կից հատկացված տարածքով:
  - ✓ Բավարար տարածք է հատկացված՝ սպասարկման աշխատասենյակների և վարչական շենքերի համար:

### Նկար Դ-2. ՄՆԽ-ի կողմից մշակված սխեմատիկ հատակագիծը



**Ե. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**Ե1. Ընդհանուր շրջանակը**

90. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և ՇՄԱԳ հաշվետվության, այդ թվում՝ Բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) պատրաստումը, սկսվել է նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկական, կենսաբանական, հնագիտական-մշակութային և սոցիալ-տնտեսական միջավայրի վերաբերյալ տվյալների և տեղեկությունների հավաքագրմամբ և վերլուծությամբ: Ռեսուրսները (ժամանակ և բյուջե) չվատնելու համար հավաքագրվում են միայն այն տվյալները, որոնք անհրաժեշտ են և օգտակար են ԱԳ հուսալի գործընթացի համար:

91. Նախ ուսումնասիրվել են առկա ելակետային տվյալները և տեղեկությունը: Կլիմային, տեղագրությանը, երկրաբանությանն ու հողերին, բնական պաշարներին, բուսական և կենդանական աշխարհին և սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերվող ելակետային տվյալները ձեռք են բերվել պաշտոնական, հրապարակված և չհրապարակված աղբյուրներից: Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը (Հատոր 5, 2006 թ.) ելակետային տվյալների հիմնական աղբյուրն է, որը հետագայում համալրվել է այլ տեղեկատվական աղբյուրներով, ինչպիսիք են՝ Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը (2017)<sup>12</sup>, մասնագիտական ուսումնասիրություններն ու դաշտային հետազոտությունները, այդ թվում՝ ծրագրի շահառուներից ստացված տեղեկատվությունը: Վերջինս կարևոր է տեղի բնակիչների

<sup>12</sup><https://www.yerevan.am/uploads/media/default/0001/72/e7224f93ad7096478f9aadb96ba61ea0ca693c9.pdf>

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

և այլ շահագրգիռ խմբերի կողմից շրջակա միջավայրի պահպանության համար կարևորվող տարրերը և հանգամանքներն հաշվի առնելու տեսանկյունից:

92. Հավաքագրվել են այն տվյալներն, որոնք վերաբերվում են շրջակա միջավայրի այն կողմերին, որոնք ծրագրի գործողությունների հետևանքով կարող են ազդեցության ենթարկվել: Այս նպատակով մշակվել է տվյալների հավաքագրման պլան.

**Աղյուսակ Ե-1. Տվյալների հավաքագրման պլան**

| ԱԲԸ                   | Բնապահպանական պարամետրերը                                | Տվյալների աղբյուրը  | Արտաքին փորձագետ   | Մոդելավորում   |
|-----------------------|--|---|--|--|
| Մթնոլորտային օդի որակ | Կլիմա  | ՀՀՇՆ (СНнП) II-7.01-2011 Շինարարական կլիմատոլոգիա             | Կիրառելի չէ<br><br>Տվյալների ուսումնասիրություն  | Կիրառելի չէ  |
|                       | Փոշի<br>Ծծմբի երկօքսիդ (SO2)<br><br>Ազոտի երկօքսիդ (NO2) | ՀՀ ՇՄՆ-ի «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ | Տվյալների ուսումնասիրություն<br><br>Օդի որակի հետազոտության միջազգային մասնագետ                    | Շինարարության ընթացքում փոշու և գազի արտանետումների ցրման հաշվարկ և շահագործման փուլի համար կանխատեսումներ   |
|                       | Աղմուկ   | Չափագրումներ  | Տեղական մասնագետ ելակետային չափումների համար<br><br>Մոդելավորման մասնագիտացված միջազգային փորձագետ | 3D ձայնային մոդել՝ ծրագրի աղմուկի ազդեցությունը գնահատելու համար<br><br>Երկարաժամկետ կտրվածքում առանց աղմկապաշտպան պատնեշների՝ երթևեկության պայմաններում<br><br>Երկարաժամկետ կտրվածքում աղմկապաշտպան պատնեշների առկայությամբ երթևեկություն<br><br>Աղմկապաշտպան միջոցառումների գնահատումը |
|                       | Թրթռումներ   | Չափագրումներ  | Տեղական փորձագետ ելակետային  | Ազդեցության մոդելը, որը հիմնված է շենքի վրա թրթռման  |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|                        |                              |  |  |  |
|------------------------|------------------------------|--|--|--|
|                        |                              |  | չափումների համար<br><br>Մոդելավորման մասնագիտացված միջազգային փորձագետ | ազդեցության փոխանցման ֆունկցիայի եզրակացության վրա |
| Էկոլոգիական ռեսուրսներ | Բուսական աշխարհ              | Տարածման վայրերը և Կարմիր գրքում գրանցված լինելը, վտանգված և/կամ էնդեմիկ տեսակների մասին գրականության ուսումնասիրություն<br><br>Տեղանքի դաշտային այցելություններ   | մասնագիտացված փորձագետ   | Կիրառելի չէ  |
|                        | Կենդանական աշխարհը           | Կենսատեսակների ապրելավայրերի և Կարմիր գրքում գրանցված, վտանգված և/կամ էնդեմիկ տեսակների մասին գրականության ուսումնասիրություն<br><br>Հրազդան գետի և մերձափնյա միջակայքի տեղանքի դաշտային այցելություններ | մասնագիտացված փորձագետ   | Կիրառելի չէ  |
|                        | Օտարման գոտում գտնվող ծառերը | Դաշտային այցելության եղանակով հաշվել օտարման գոտում գտնվող և շինարարական աշխատանքների ընթացքը խոչընդոտող համայնքային ծառերը  | մասնագիտացված փորձագետ   | Կիրառելի չէ  |
| Հողերը                 | Բուսահող                     | Երկրաբանական հետազոտության հաշվետվություն  | մասնագիտացված փորձագետ   | Կիրառելի չէ  |
|                        | Աղտոտված հողեր               | Կիրառելի չէ  | Կիրառելի չէ  | Կիրառելի չէ  |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|  |   |  |                                    |   |
|--|---|--|------------------------------------|---|
| <p>Սոցիալական համակարգեր<br/>Բնակելի տներ<br/>Ձեռնարկատիրական գործունեություններ</p> | <p>Սոցիալ-տնտեսական տվյալներ</p>  | <p>Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը (Հատոր 5, 2006թ.)<br/>Էլակետային տվյալների հիմնական աղբյուրն է, որը հետագայում համալրվեց այլ հրապարակված և չհրապարակված տեղեկատվական աղբյուրներով<br/>Տեղանքի ուսումնասիրություն՝ դաշտային այցելության եղանակով</p> | <p>Կիրառելի չէ</p>                 | <p>Կիրառելի չէ</p>  |
|  | <p>ՀՕՏ գործընթացում ընդգրկված գույքը</p>  | <p>Կադաստրային փաստաթղթեր<br/><br/>Մանրամասն չափագրման հետազոտություն</p>  | <p>Նախագծման խորհրդատվական թիմ</p> | <p>Կիրառելի չէ</p>  |
|  | <p>Հեռահաղորդակցության մալուխների, ջրի, կոյուղու և գազի խողովակների, էլեկտրասյունների և էլեկտրալարերի ջրահեռացման համակարգերի առկայությունը</p> | <p>Հաղորդողիների ուսումնասիրություն,<br/><br/>Խորհրդակցություններ սեփականատերերի/ մատակարարների հետ, հանդիպումներ տեղի բնակչության հետ</p>   | <p>Նախագծման խորհրդատվական թիմ</p> | <p>Կիրառելի չէ</p>  |
| <p>Նյութական ռեսուրսներ</p>  | <p>Լիցքի նյութը ձեռք կրերվի գրանցված քարհանքերից</p>  | <p>Նոր քարհանքեր, բացահանքեր չեն բացվի</p>   | <p>Կիրառելի չէ</p>                 | <p>Հաշվարկվել է շուրջ 23930.76 մ3 խճային խառնուրդ C-6 և շուրջ 100501 մ3 կոպճային խառնուրդ C-4</p> |
| <p>Հնագիտական և մշակութային ժառանգություն</p>  | <p>Հնագիտական վայրեր<br/><br/>Մշակութային ռեսուրսներ</p>  | <p>Տվյալների ուսումնասիրություն<br/>Մշակույթի նախարարության տվյալները<br/>Տեղամասային դաշտային այցելություններ</p>   | <p>Հնագետ</p>                      | <p>Կիրառելի չէ</p>  |

## Ե2. Մթնոլորտային օդի որակը

### Կլիմա

93. Այս հատվածը ներկայացվում է Էրեբունի մոնիթորինգի կայանի օդերևութաբանական տվյալների հիման վրա, որը տեղակայված է Արշակունյաց պողոտայից մոտ 4 կմ հեռավորության վրա<sup>13</sup>: Հիմնվելով այս տվյալների վրա՝ տարածքը բնութագրվում է չորացամաքային կլիմայով և գտնվում է ՀՀ չափավոր տաք կլիմայական գոտում: Կլիման հիմնականում բնութագրվում է երկար, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով: Կլիմայական հիմնական տարրերի տվյալները ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆՓԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1-ում: Միջին պարամետրերն ամփոփված են Աղյուսակ Ե-2-ում<sup>12</sup>.

**Աղյուսակ Ե-2. Կլիմայական պարամետրերը**

| Կայան                       | Օդի ջերմաստիճանը °C             |   |  | Օդի հարաբերական խոնավությունը %  |                                   |                                       |                                       |
|-----------------------------|---------------------------------|---|--|----------------------------------|-----------------------------------|---------------------------------------|---------------------------------------|
|                             | Միջին տարեկան                   | Տարեկան նվազագույն  | Տարեկան առավելագույն                               | Միջին տարեկան                    | Ամենացուրտ ամսվա միջինը (հունվար) | Ամենաշոգ ամսվա միջինը (օգոստոս)       |                                       |
| Երևան «Էրեբունի»            | 11.9                            | Հունվարին՝ -28  | Օգոստոսին՝ +42                                     | 61                               | 67                                | 28                                    |                                       |
| Տեղումները և ձյան ծածկույթը |                                 |   |  |                                  |                                   |                                       |                                       |
| Կայան                       | Տեղումների քանակը               |   |  |                                  | Չյան ծածկույթը                    |                                       |                                       |
|                             | Մայիս ամսվա միջինը              | Օրական առավելագույնը մայիսին                              | Տարեկան, մմ<br>միջին ամսական / օրական առավելագույն |                                  | 10 օրվա առավելագույնը, սմ         | Տարվա ընթացքում ձյունածածկ օրերի թիվը | Մառեցման առավելագույն խորությունը, սմ |
| Երևան «Էրեբունի»            | 45                              | 42  | 291  | 51                               | 58                                | 47                                    | 70                                    |
| Քամի                        |                                 |   |  |                                  |                                   |                                       |                                       |
| Կայան                       | Օդի միջին տարեկան ճնշումը (hPa) | Ցերեկվա ժամերին պարբերականությունը՝ ըստ ուղղությունների % | Միջին արագությունը՝ ըստ ուղղությունների, մ/րկ      | Ամսական միջին արագությունը, մ/րկ | Տարեկան միջին արագությունը        | Ուժեղ քամիների օրերի թիվը             |                                       |
| Երևան «Էրեբունի»            | 912,1                           | 25<br>Հունվար հարավ-արևմուտք                              | 2,9<br>Հունվար հարավ-արևմուտք                      | 0,7                              | 1.5                               | 29                                    |                                       |

<sup>12</sup> ՀՀՇՆ (СННП) П-7.01-2011 Շինարարական կլիմատոլոգիա, [http://www.mud.am/lows/files/26\\_10\\_11\\_h.pdf](http://www.mud.am/lows/files/26_10_11_h.pdf)

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|  |  |                                 |                                 |     |  |
|--|--|---------------------------------|---------------------------------|-----|--|
|  |  |                                 |                                 |     |  |
|  |  | 8                               | 4,0                             | 1,9 |  |
|  |  | Ապրիլ<br>Հարավ                  | Ապրիլ<br>հարավ – արևելք         |     |  |
|  |  | 28                              | 5,7                             | 2,8 |  |
|  |  | Հուլիս<br>Հյուսիս-<br>արևմուտք  | Հուլիս<br>Հյուսիս – արևելք      |     |  |
|  |  | 21                              | 2,9                             | 1,0 |  |
|  |  | Հոկտեմբեր<br>Հարավ-<br>արևմուտք | Հոկտեմբեր<br>Հյուսիս և արևմուտք |     |  |

94. Ինչպես ՀՀՇՆ (СНП) II-7.01-2011-ում ներկայացված, այնպես էլ չափագրումների արդյունքում ստացված (տե՛ս ստորև), օդերևութաբանական տվյալների ուսումնասիրությունը օգտագործվել է՝ չափված մեծությունների վրա դրանց ազդեցությունն ավելի ստույգ գնահատելու համար:

**Փոշի, ծծմբի երկօքսիդ (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդ (NO<sub>2</sub>)**

95. Երևանը երեք կողմից շրջապատված է սարերով, ինչը խոչընդոտում է մթնոլորտում աղտոտիչների բնական ձևով ցրվելուն և, հետևաբար, հանգեցնում է օդում դրանց բարձր խտացումների: Օդի աղտոտիչների գոյացման հիմնական աղբյուրն ավտոմեքենաների արտանետումներն են, որոնք կուտակվում են ճանապարհացանցի ինտենսիվ շահագործման հետևանքով: Երևան քաղաքի գլխավոր հատակագծում գնահատված է, որ օդի աղտոտիչների շուրջ 95%-ն առաջանում է հասարակական տրանսպորտի շահագործումից:

96. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Արշակունյաց պողոտա – Շիրակի փողոց փոխհատման հարևանությամբ գտնվող ծրագրային տարածքը գտնվում է օդի «չափավոր» աղտոտվածության գոտում: Ստորև բերված Աղյուսակ Ե-3-ում ներկայացված են օդի աղտոտիչների խտությունները (փոշի, ծծմբի երկօքսիդ, ազոտի օքսիդ) որոնք չափվել են 2018 թ. առաջին եռամսյակից սկսած՝ Շենգավիթի No 2 ստատիկ կայանում, որը տեղակայված է առաջարկվող Ծրագրի տարածքից 500 մ հեռավորության վրա, որտեղ իրականացվում են շուրջօրյա ակտիվ չափագրումներ:

97. Աղյուսակը ներկայացնում է նաև օդի աղտոտիչների առավելագույն թույլատրելի մեծությունները՝ հիմնվելով բնակավայրերի մթնոլորտում սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՄԹԿ) վերաբերյալ ՀՀ ստանդարտների վրա: Այս կայանում օդի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության թիվ 160-Ն «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՄԹԿ) նորմերի մասին» որոշման հիման վրա:

**Աղյուսակ Ե-3. Փոշու, ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>) խտությունները**




Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

| Պարամետր                          | Կայան | 2018  | 2019  | 2020  | 2021    |         |       | Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (մգ/մ <sup>3</sup> ) |              |
|-----------------------------------|-------|-------|-------|-------|---------|---------|-------|--|--------------|
|                                   |       |       |       |       | Հունվար | Փետրվար | Մարտ  | Սահմանային միանգամյա                                     | Միջին օրական |
| Փոշի                              |       |       |       |       |         |         |       | 0.5  | 0.15         |
|                                   | N2    | 0.12  | 0.163 | 0.11  | 0.08    | 0.10    | 0.10  |  |              |
| Ծծմբի երկօքսիդ (SO <sub>2</sub> ) |       |       |       |       |         |         |       | 0.05   | 0.05         |
|                                   | N2    | 0.031 | 0.022 | 0.011 | 0.018   | 0.013   | 0.013 |  |              |
| Ծծմբի երկօքսիդ (SO <sub>2</sub> ) |       |       |       |       |         |         | 0.032 | 0.085  | 0.04         |
|                                   | N2    | 0.019 | 0.016 | 0.009 | 0.026   | 0.021   | 0.011 |  |              |

Տվյալները տրամադրվել է ՇՄՆ-ի «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Համաձայն ՀՀ կառավարության 02.02.2006 թ. թիվ 160-Ն «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմերի մասին» որոշման:

98. Ենթադրված վարչական շրջանում՝ Արշակունյաց պողոտայում տեղակայված No 2 ՇՄՆ-ի օդի որակի մոնիթորինգի կայանների տվյալները հաստատում են, որ օդի միջին որակը մոտ է թույլատրելի կոնցենտրացիաներին և որոշ դեպքերում գերազանցում է դրանք:
- (i) Փոշի. համաձայն չափված ընդհանուր միջին տարեկան ցուցանիշների՝ փոշու աղտոտիչները (0.163) գերազանցել են միջին օրական (0.15) ՍԹԿ-ն: Գերազանցումներ գրանցվել են No 2 կայանում 2019 թ.-ին:
  - (ii) Ծծմբի երկօքսիդ (SO<sub>2</sub>). 2018 թ.-ից մինչև 2021 թ. ծծմբի երկօքսիդի ցուցանիշները չեն գերազանցել առավելագույն և միջին օրական ՍԹԿ-ն. չնայած գերազանցումներ գրանցվել են No 2 կայանում՝ 2017 թ.:
  - (iii) Ազոտի երկօքսիդ (NO<sub>2</sub>). 2018 թ.-ից մինչև 2021 թ. ընկած ժամանակահատվածում ազոտի երկօքսիդի չափված ընդհանուր տարեկան միջինը չի գերազանցել ՍԹԿ-ն:
99. Բացի տրանսպորտային արտանետումների առաջացրած աղտոտումից, խոշոր անտառահատումները, որոնք տեղի են ունեցել քաղաքի այս հատվածում, քաղաքի սահմաններին հարակից վայրերում, ամառային չոր ամիսների ընթացքում առաջացնում են փոշու զգալի քանակություն: Տրանսպորտային արտանետումների և անտառահատումների համատեղ ազդեցությունները բացատրում են Ադյուսակ Ե-2-ի արդյունքները:
100. Ծրագրային տարածքի շրջակայքում Շիրակի ավտոբուսների հավաքակայանի համար օդի ելակետային որակը գնահատելու նպատակով Նախագծման խորհրդատուի կողմից 2021 թվականի հունվարին իրականացվել է մոնիթորինգ՝ արտաքին միջազգային մասնագետի ներգրավմամբ: Մոնիթորինգն իրականացվել է 5 օրվա ընթացքում՝ 2021 թվականի հունվարի 14 -ից (հինգշաբթի) մինչև 2021 թվականի հունվարի 19 -ը՝ երեքշաբթի: ՇՄՆ-ի «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի պաշտոնական տվյալները օգտագործվել են որպես օդի որակի, մասնավորապես փոշու, ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>) տվյալների աղբյուր:


Նկար Ե-1. Փոշու կոնցենտրացիան Երևանում 2021 թվականի հունվարի 13 -ից 19-ն ընկած ժամանակահատվածում<sup>14</sup>



101. Ելակետային տվյալները հավաքագրվել են նաև տեղամասային այցելության ընթացքում: Տեղադրվել են օդի որակը բնութագրող հետևյալ սենսորները (տվիչները).
  - 5 պասիվ նմուշառողներ NO<sub>2</sub>-ի համար,
  - 5 պասիվ նմուշառողներ SO<sub>2</sub> –ի համար,
  - 1 տեղամաս ղինամիկ տվիչով (NEMO), մանր մասնիկների համար (PM<sub>10</sub>, PM<sub>2.5</sub>)
102. Հիմնադրվել է PM (պինդ մասնիկներ) մոնիթորինգի կայան: Պինդ մասնիկները (փոշի) պարունակում են միկրոսկոպիկ պինդ կամ հեղուկ կաթիլներ, որոնք այնքան փոքր են, որ կարող են թափանցել մարդու շնչուղիների մեջ և առողջական լուրջ խնդիրներ առաջացնել: Որոշ մասնիկներ, որոնց տրամագիծը 10 միկրոմետրից պակաս է, կարող են խորը ներթափանցել թոքերի մեջ, իսկ որոշները նույնիսկ կարող են անցնել արյան մեջ: Մարդու առողջության համար ամենամեծ ռիսկը ենթադրում են 2,5 միկրոմետրից պակաս տրամագծով մասնիկները (PM<sub>2.5</sub>):
103. PM- ի չափման էտալոնային մեթոդի համար կիրառվում է մասնիկների ֆիլտր, որը հավաքում է աղտոտիչները, այնուհետև կշռում դրանք: Մենստրային ցանցը կիրառում է այլ մեթոդ, քանի որ նման ընթացակարգը բարդ է ավտոմատացնելու և ստանդարտացնելու համար: PM սենսորները աշխատում են լազերի հիման վրա, որը չափում է PM-ը, այնուհետև գործակցում է զանգվածի հետ՝ PM-ի ծավալը որոշելու համար: PM-ի մոնիթորինգի կայանը իրենից ներկայացնում է 29x10 սմ չափերի տուփ: Այն նախատեսված է լիարժեք ինքնուրույն աշխատելու համար՝ արևային վահանակի կամ էներգիայի մատակարարման հիման վրա: Այս կայանը կապված է մի քանի անլար հաղորդակցության միջոցների հետ՝ Sigfox, LoRa կամ LTE-M: Մարքը տեղադրվել է անվտանգ վայրում՝ կողոպուտից խուսափելու համար (տեղանքում փակ բակ ունեցող տեղական հողատերեր):

<sup>14</sup><http://armmonitoring.am/posts/33>


Նկար Ե-2. SO<sub>2</sub> կոնցենտրացիան Երևանում 2021 թվականի հունվարի 13 -ից 19-ն ընկած ժամանակահատվածում<sup>15</sup>



104. Ծծմբի երկօքսիդը՝ մթնոլորտում կարևոր բաղադրիչ է, ինչպես նաև օդի հիմնական աղտոտիչ: Գերազանցելով որոշակի կոնցենտրացիան՝ այն էական ազդեցություն է թողնում մարդու առողջության վրա, բույսերի, ինչպես նաև կենդանիների կենսամիջավայրի կենսունակության վրա: SO<sub>2</sub>-ի արտանետումները մթնոլորտում դառնում են թթվային անձրևների նախադրյալներ:
105. Պասիվ նմուշառիչը հիմնված է կալիումի կարբոնատից և գլիցերինից պատրաստված կլանիչով SO<sub>2</sub> մոլեկուլների կլանման սկզբունքի վրա: Քանակի որոշումը կատարվում է իոն-քրոմատագրությամբ: Նմուշառիչները պատված են պոլիպրոպիլենային պատյաով, որի բացվածքը 20 մմ է: Քամուց և եղանակային երևույթներից պաշտպանվելու համար ապակե մանրաթելային թաղանթը ամրացվում է մետաղալարով և տեղադրվում է հատուկ նախագծված պաշտպանիչ կախովի սարքում:
106. Ազոտի երկօքսիդը՝ նույնպես օդի ազդեցիկ աղտոտիչ է: Այն նպաստում է մթնոլորտում ծխի առաջացմանը և որոշակի կոնցենտրացիան գերազանցելու դեպքում կարող է լրջորեն ազդել մարդու առողջության վրա: Ազոտի երկօքսիդի առաջացման հիմնական ոլորտներն են՝ հանածո վառելիքի այրումը, ավտոմեքենաների արտանետումները, բենզինի և մետաղի վերամշակումը, էլեկտրաէներգիայի արտադրությունը և այլ արտադրական պրոցեսներ:
107. Ազոտի երկօքսիդի չափման պասիվ նմուշառիչները հիմնված են տրիետանոլամինից պատրաստված կլանիչով NO<sub>2</sub> մոլեկուլների կուտակման սկզբունքի վրա: Այնուհետև հավաքված NO<sub>2</sub>-ը սպեկտրոֆոտոմետրիկորեն որոշվում է Սալցմանի մեթոդով:

<sup>15</sup> <http://armmonitoring.am/posts/33>

Նկար Ե-3. NO<sub>2</sub>-ի կոնցենտրացիան Երևանում 2021 թվականի հունվարի 13 -ից 19-ն ընկած ժամանակահատվածում<sup>16</sup>



108. Եղանակային բոլոր պայմաններից պաշտպանված փոքր պատյաններում տեղադրված 20 սմ X 15 սմ չափսերով պասիվ նմուշառիչները կախվել են ձողից՝ մոտ 2,5 մետր բարձրության վրա՝ նմուշառման պլանով (Աղյուսակ Ե-4) որոշված 5 կետերում (նշված է Նկար Ե-6-ում)։

Աղյուսակ Ե-4. Փոշու, SO<sub>2</sub> և NO<sub>2</sub> ելակետային տվյալների նմուշառման պլան

| Տեղամաս    | Աղտոտիչներ                            | Միջավայր         |
|------------|---------------------------------------|------------------|
| Տեղամաս 01 | NO <sub>2</sub> /SO <sub>2</sub>      | Ճանապարհ-փողոց   |
| Տեղամաս 02 | NO <sub>2</sub> /SO <sub>2</sub> + PM | Քաղաքային        |
| Տեղամաս 03 | NO <sub>2</sub> /SO <sub>2</sub>      | Կանաչապատ տարածք |
| Տեղամաս 04 | NO <sub>2</sub> /SO <sub>2</sub>      | Քաղաքային        |
| Տեղամաս 05 | NO <sub>2</sub> /SO <sub>2</sub>      | Ճանապարհ         |

109. Մոնիթորինգի արդյունքները ստացվել են՝ հաշվի առնելով ինչպես տարբեր գործոններ, որոնք ազդում են աղտոտիչների տարածման և փոխակերպման վրա. տարբեր աղբյուրներից արտանետումները (արդյունաբերություն, տրանսպորտ, սպասարկման ոլորտ), օդերևութաբանական պայմանները (քամու արագությունը և ուղղությունը), ինչպես նաև տեղագրությունը: Օդի որակի չափագրումների արդյունքները ներկայացված են ըստ աղտոտիչների: Օդի որակի գնահատումը իրականացվում է ըստ գոյություն ունեցող ուղեցույցների՝ օդի որակի վերաբերյալ ՄՖԿ և ԱՀԿ ուղեցույցների և ՀՀ ստանդարտների:

<sup>16</sup> <http://armmonitoring.am/posts/33>

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Սկար Ե-6. Օդի որակի չափման կետերի գտնվելու վայրը



- ինտենսիվ երթևեկության փողոցներին մոտ (տեղամաս 01, 05),
- բնակելի տարածքներին մոտ (տեղամաս 02, 04),
- կանաչ տարածքներում, աղտոտման աղբյուրներից հեռու՝ աղտոտման միջին մակարդակը ներկայացնելու համար (տեղամաս 03):

110. Մոնիթորինգի հավաքագրված ելակետային տվյալները ամփոփված են Աղյուսակ Ե-5-ում:

Աղյուսակ Ե-5. SO<sub>2</sub>, NO<sub>2</sub> և փոշու միջին օրական ելակետային տվյալները՝ հավաքագրված հունվարի 14 -ից 19-ն ընկած ժամանակահատվածում<sup>17</sup>

| Աղտոտիչ<br>(մգ/մ <sup>3</sup> )   | Տեղամաս<br>u 01 | Տեղամաս<br>u 02 | Տեղամաս<br>u 03 | Տեղամաս<br>u 04 | Տեղամաս<br>05             | ՀՀ<br>ստանդարտ | ՄՖԿ/ԱՀԿ<br>ստանդարտ |
|-----------------------------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|---------------------------|----------------|---------------------|
| Ծծմբի երկօքսիդ (SO <sub>2</sub> ) | 0.015           | 0.014           | 0.025           | 0.012           | Կիրառելի չէ <sup>18</sup> | 0.05           | 0.05/0.02           |

<sup>17</sup> Գերազանցումները նշված են կարմիրով:

<sup>18</sup> Սարքը մգեցված/ներկված է:




Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|                                   |            |            |            |            |            |             |                  |
|-----------------------------------|------------|------------|------------|------------|------------|-------------|------------------|
| Ազոտի երկօքսիդ (NO <sub>2</sub> ) | 0.064      | 0.058      | 0.061      | 0.059      | 0.065      | 0.04        | 0.04             |
| Փոշի                              | Հունվար 15 | Հունվար 16 | Հունվար 17 | Հունվար 18 | Հունվար 19 | ՀՀ ստանդարտ | ՄՖԿ/ԱՀԿ ստանդարտ |
| PM 10                             | 0.131      | 0.103      | 0.123      | 0.053      | 0.016      | 0.06        | 0.05             |
| PM 2.5                            | 0.111      | 0.085      | 0.105      | 0.046      | 0.014      | 0.035       | 0.025            |

111. PM10 և PM2.5 չափված մեծությունները չեն տեղավորվում ոչ հայկական, ոչ էլ ՄՖԿ/ԱՀԿ ուղեցույցների ստանդարտներին: Մասնիկների բարձր կոնցենտրացիան (PM10 և PM2.5) վերագրվում է տրանսպորտային միջոցների արտանետումներից առաջացած աղտոտվածությանը և փոշին կլանող բուսականության բացակայությանը: Տրանսպորտային միջոցների և անտառահատումների համադրությունը բացատրում է վերը բերված աղյուսակում ներկայացված արդյունքները, ինչպես նաև Երևանի տեղագրությունը նույնպես նպաստում է պինդ մասնիկներով խիստ աղտոտվածությանը:
112. Ինչպես ցույց է տրված Նկար Ե-4-ում, SO<sub>2</sub>- ի կոնցենտրացիաների մոնիթորինգի արդյունքները ցույց են տվել, որ բոլոր տեղամասերում այն ցածր է ՀՀ ստանդարտներից, ՄՖԿ-ից (0.05 մգ/մ<sup>3</sup> օրական միջինը) և ԱՀԿ-ի կոնցենտրացիայի սահմանային արժեքից (0.02 մգ/մ<sup>3</sup> միջին օրականը), բացի Տեղամաս 03-ից, որտեղ ավելի բարձր է ԱՀԿ ուղեցույցով սահմանված արժեքից: Մանիտարական առումով SO<sub>2</sub> կոնցենտրացիաների գծով օդի որակը կարող է որակվել որպես չափավոր:

Նկար Ե-4. SO<sub>2</sub>-ի չափագրումների արդյունքները՝ միջին օրական չափանիշների համեմատ




113. Ինչպես ցույց է տրված Նկար Ե-5-ում, 5 օրվա կտրվածքով չափված NO<sub>2</sub>-ի կոնցենտրացիաները կազմում են մոտ 0.06 մգ/մ<sup>3</sup>: Կոնցենտրացիաները տատանվում են 0.058 մգ/մ<sup>3</sup> -ից մինչև 0.065 մգ/մ<sup>3</sup>: Տարեկան սահմանային արժեքը գերազանցված է բոլոր տեղամասերի համար (0.040 մգ/մ<sup>3</sup>)<sup>19</sup>: NO<sub>2</sub> -ի 5 օրվա կտրվածքով կոնցենտրացիան կարող է գերազանցված համարվել, եթե համեմատենք օդի որակի տարեկան շեմի հետ<sup>20</sup>:

Նկար Ե-5. NO<sub>2</sub>-ի չափագրումների արդյունքները՝ միջին օրական չափանիշների համեմատ

<sup>19</sup> 0.04 մգ/մ<sup>3</sup> համաձայն հայաստանյան և միջազգային ստանդարտների

<sup>20</sup> Այնուամենայնիվ, սանիտարական նորմերի՝ ՄՆ 245-71 (85 μg/մ<sup>3</sup>) միջին օրական չափանիշի համեմատ, գերազանցում չի արձանագրվել:

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ



114. Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ  $\text{NO}_2$  մոնիթորինգային կայանից հավաքագրված տվյալները և Նախագծման խորհրդատուի կողմից Արշակունյաց պողոտայի տեղանքում իրականացվող մոնիթորինգը ցույց են տալիս հետևյալը.
- $\text{NO}_2$  և փոշի ( $\text{PM}_{10}$  և  $\text{PM}_{2.5}$ ). ՀՀ ստանդարտների և միջազգային ուղեցույցներով սահմանված արժեքների գերազանցումներ ամենայն հավանականությամբ տեղի կունենան տարվա ընթացքում,
  - $\text{SO}_2$ . կոնցենտրացիաների արժեքները ցածր են, քան սահմանված է ՀՀ ստանդարտով, սակայն տարվա ընթացքում կարող են գերազանցել ՄՖԿ և ԱՀԿ օրենսդրությամբ սահմանված արժեքները,
  - տարբեր չափումների հիման վրա օդի որակը, կարելի է բնութագրել որպես վատթարացում տարվա որոշակի ժամանակահատվածում, մինչդեռ ժամանակի մեծ մասի համար այն մնում է ուղեցույցի արժեքներից ցածր:
115. Վերոնշյալ չափումների նպատակն է ներկայացնել Ծրագրային տարածքում օդի որակի ընդհանուր պատկերը և այն համեմատել ՀՀ ստանդարտի հետ: Իրավիճակը հաշվետվությունում նկարագրված է որակական և քանակական առումներով: Օդի որակի և աղտոտման կանխատեսումները հիմնված են աղտոտիչների արտանետումների գնահատման և մթնոլորտում ցրման մոդելի վրա (տես Գլուխ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ):

### Ե3. Աղմուկ

116. Ներկայումս Երևանում աղմուկի հիմնական աղբյուրը համարվում է գործող քաղաքային տրանսպորտը (մոտավորապես 90%): Աղմուկի ելակետային միջավայրը հիմնականում բնութագրվում է ճանապարհային երթևեկության աղմուկով, որն առաջանում է Արշակունյաց պողոտայի և Շիրակի փողոցի մերձակայքում:
117. Նախագծման խորհրդատուն ներգրավել է ակուստիկ ինժեներ, որի կողմից իրականացվել է ակուստիկ հետազոտություն՝ նախատեսվող գործունեության տարածքի աղմուկի մակարդակի ֆոնային (ելակետային) տվյալները հավաքագրելու և ծրագրի ակուստիկ ազդեցությունը մոդելավորելու նպատակով: Արդյունքներն ամփոփվել են հաշվետվության մեջ, որը կներկայացվի ՇՄԱԳ-ի հիմնական փուլում:
118. Չափագրումները կատարվել են 3 կետերում 18.01.2021 թ. և 19.01. 2021 թ.-ին, որոնց արդյունքները ընդունված են որպես ելակետային: Չափագրումների կետերի գտնվելու վայրը ներկայացված է Նկար Ե-7- ում:  
NM1 – բնակելի տուն, որը գտնվում է Արշակունյաց պող. 314/ 11 հասցեում,

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

NM2- ռեստորան «Ռենեսանս», որը գտնվում է Շիրակի փ. 2 հասցեում,

NM3- բնակելի տուն, որը գտնվում է Ներքին Շենգավիթ 6-րդ փողոց, 1-ին հողակտոր

Նկար Ե-7. Աղմուկի չափման կետերի գտնվելու վայրը



119. Ելակետային արժեքները համեմատվել են ՀՀ ստանդարտների և ՄՖԿ-ի ուղեցույցների հետ, որոնք ներկայացված են Աղյուսակ Ե-6-ում:

Աղյուսակ Ե-6. Աղմուկի սահմանային թույլատրելի արժեքները

| № | Մենքերի և տարածքների նշանակությունը  | ՀՀ ստանդարտները  |  | ՄՖԿ ստանդարտները (ցերեկ/ գիշեր) |
|---|--|--|--|---------------------------------|
|   |  | Չայնի մակարդակները Լա և ձայնի համարժեք մակարդակները Լաեկվ դԲԱ La eq (ցերեկ/ գիշեր) | ՇՄԱ (ձայնի առավելագույն մակարդակը), դԲԱ (ցերեկ/ գիշեր) |                                 |
| 1 | Աշխատատեղ  | 60   | -  | -                               |
| 2 | Բնակելի շենքերի, կլինիկաների, ամբուլատորիաների, հանգստյան տների, ծերերի և հաշմանդամների խնամքի տների, գրադարանների, մանկապարտեզների, դպրոցների և այլ կրթական հաստատությունների հարակից տարածքներ | 55/ 45   | 70/ 60   | 55/ 45                          |
| 3 | Հյուրանոցներին և ցանկացած տեսակի   | 60/ 50   | 75/ 65   | 55/ 45                          |



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|                                 |  |  |  |
|---------------------------------|--|--|--|
| հանրակացարաններին կից տարածքներ |  |  |  |
|---------------------------------|--|--|--|


120. Աղմուկի հետազոտության հաշվետվության համաձայն՝ չափված բոլոր կետերում աղմուկի մակարդակն արդեն իսկ գերազանցում է ստանդարտներին (տե՛ս Աղյուսակ Ե-7).

**Աղյուսակ Ե-7. Աղմուկի ֆոնային մակարդակը բոլոր չափված կետերում՝ ստանդարտների համեմատ**

|     | Չափագրված ձայնի մակարդակը LAeq |       | ՀՀ ստանդարտներ ցերեկ/ գիշեր |        | ՄՏԿ ստանդարտներ |
|-----|--------------------------------|-------|-----------------------------|--------|-----------------|
|     | ցերեկ                          | Գիշեր | LAeq                        | LAMax  | LAeq            |
| NM1 | 62.9                           | 55.3  | -                           | 70/ 60 | 65.9/ 58.3      |
| NM2 | 52.1                           | 49.7  | 55/ -                       | 70/ 60 | 55 / 52.7       |
| NM3 | 49.5                           | 46.2  | 55 /-                       | 70/ 60 | 55 / 49.2       |


121. 3D մոդելի կիրառմամբ ստացվել է ուսումնասիրված տարածքի ֆոնային աղմուկի մակարդակը 35 ընկալիչների համար (ցույց է տրված Նկար Ե- 8 և Նկար Ե-9)

**Նկար Ե- 8. Աղմուկի քարտեզը՝ հաշվարկված ընկալիչների համար ցերեկային ժամերին**



122. Աղմուկի ուսումնասիրության շրջանակում կատարված չափագրումները տվյալներ են տրամադրում՝ գնահատելու ավտոբուսային հավաքակայանի շահագործման պոտենցիալ ակուստիկ ազդեցությունը տեղի բնակելի հատվածի, հյուրանոցների և այլ ձեռնարկատիրական հիմնարկների վրա: Արդյունքները համեմատվել են սահմանային շեմերի հետ (տե՛ս Գլուխ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ):

Նկար Ե-9 Աղմուկի քարտեզը՝ հաշվարկված ընկալիչների համար գիշերային ժամերին



#### Ե4. Թրթռումներ

123. Ներկա վիճակի թրթռումների ուսումնասիրությունն իրականացվել է ակուստիկ և թրթռումների ինժեների կողմից, որը ներգրավվել է Նախագծման խորհրդատուի կողմից՝ ծրագրային տարածքի թրթռումների վերաբերյալ ֆոնային (եղակետային) տվյալները հավաքագրելու և Ծրագրի՝ թրթռումներից առաջացած ազդեցության մոդելավորման նպատակով:
124. Ֆոնային մակարդակը գնահատվել է 0,05 մ/վ: Ծրագրի տարածքում իրականացվել են թրթռումների երեք թեստային չափագրումներ՝ ստորև ներկայացված Նկարներ 10-ի վրա նշված 3 վայրերում: Յուրաքանչյուր չափագրման կետում տեղադրվել է 3-ական սենսոր (տվիչ): Սենսոր 1-ը տեղադրվել է թրթռումների աղբյուրի մոտակայքում: Սենսոր 2-ը տեղադրվել է շենքի նկուղում ֆունդամենտի վրա: Սենսոր 3 -ը տեղադրվել է շենքի ներսում՝ սենյակի հատակին: Չափագրման տևողությունը եղել է ոչ պակաս, քան կես ժամ:
125. Ճանապարհային երթևեկության հետևանքով գետնի ցնցումներն առաջանում են հիմնականում դինամիկ ուժերի պատճառով, որոնք կապված են ճանապարհի անհարթությունների հետ, ինչպիսիք են փոստրակները, բարձրությունները և այլն, որոնցով անցնում են մեքենաները: Ազդեցությունը գնահատվել է շինարարական աշխատանքների փուլի համար՝ հիմնվելով հետևյալի վրա՝
- աղբյուրի և ընկալիչի միջև հեռավորությունը,
  - շինարարության տեսակը,
  - գրունտի վիճակը:
126. Թրթռումների մակարդակի և առաջացող աղմուկի ուժգնությունը որոշվել է ծրագրի մոտակայքում գտնվող բնակելի տան ներսում: Կատարված չափագրումների տվյալների հիման վրա գնահատվել են հնարավոր վնասները, որոնք կարող են ծրագրի ընթացքում

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

հասցվել տներին և շինություններին: Արդյունքները համեմատվել են սահմանային շեմերի հետ (տե՛ս Գլուխ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Նկար Ե-10. Թրթռումների թեստային չափագրումների կետերը



## Ե5. Մակերևութային և ստորգետնյա ջրեր

127. Լանդշաֆտ- ջրաբանական տեսակետից տարածքը գտնվում է Ախուրյան-Հրազդան ջրավազանային շրջանում, որտեղ հիմնական ջրային երակը՝ Հրազդան գետն է՝ բազմաթիվ աջակողմյան և ձախակողմյան վտակներով: Մակայն, ծրագրի տարածքում մակերևութային բնական ջրային մարմիններ չկան, քանի որ Հրազդան գետի ամենամոտ կետը գտնվում է նախատեսվող գործունեության տարածքի հյուսիսային մասից մոտավորապես 2,5 կմ դեպի հյուսիս, որտեղից այն հոսում է դեպի Երևանյան լիճ՝ մոտավորապես 400 մ դեպի հյուսիս: Գլխավոր հատակագիծը ցույց է տալիս, որ ծրագրի տարածքի մերձակայքում ջրհեղեղի ռիսկը ցածր է, քանի որ Հրազդան գետը խստագույնս կառավարվում է՝ ջրհեղեղի վտանգը վերահսկելու համար:

128. Տարածքի արևմտյան և արևելյան եզրամասերով անցնում են բաց տիպի երկու ջրանցքներ: Բետոնե ոռոգման ջրանցքը գտնվում է Ծրագրի տարածքից մոտ 12 մ հեռավորության վրա, ինչպես նաև մի շարք ջրատարներ են անցնում առաջարկվող տարածքով, որոնք նաև ծառայում են որպես հեղեղատարներ՝ հարակից փողոցների և ճանապարհների համար: Մասնավորապես, տարածքի արևմտյան մասով անցնող ջրանցքը գրունտային է:

129. Տարածքի արևելյան մասով անցնող ջրատարի հունը մասամբ կարգավորված է բետոնե սալիկների կամ հոծ բետոնե պատերի, մասամբ նաև մետաղական կիսախողովակների միջոցով, որոնք հիմնականում քայքայված են, ջարդոտված և վնասված: Տարածքի շինարարական իրացման համար տեղամասի հեղեղումներից և երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների ջրակալման երևույթներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նախաձեռնել և իրականացնել ջրանցքները աղբից և բուսականությունից մաքրելու աշխատանքներ, դրանց խորացմանը և հոսքի կարգավորմանն ուղղված

**Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ**

աշխատանքներ, ինչպես նաև միջոցներ կիրառել ջրանցքներից գրունտային զանգվածների մեջ ջրերի արտահոսքը բացառելու նպատակով: Հետևաբար, պետք է իրականացվեն ջրանցքների ամրացման աշխատանքներ բետոնե կամ մետաղական կոնստրուկցիաներով և այլն:

130. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Չորրորդականի հասակի բերվածքային (նստվածքային) առաջացումների չստորաբաժանված համախմբերին, պատկանում են ծակոտկենա-դատարկությունների ոչ ճնշումային ջրերի տարատեսակներին: Երկրաբանական հետազոտության աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր առմամբ հորատվել է 12 հորատանցք (4 հորատանցք՝ յուրաքանչյուրը 10.0 գծամետր, 2 հորատանցք՝ յուրաքանչյուրը 7.0 և 6 հորատանցք՝ յուրաքանչյուրը 5.0 գծամետր խորությամբ): Հորատման աշխատանքների ընթացքում ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել: Այս արդյունքները համապատասխանում էին հարակից տարածքում կատարված նախորդ հետազոտությունների տեղեկատվությանը և տվյալներին, որոնք ուսումնասիրվել, ամփոփվել և կիրառվել են՝ գործող կանոնակարգի պահանջներին համաձայն:

**Ե6. Տեղագրություն, գրունտներ, երկրաբանություն, սեյսմոլոգիա**

131. Մանրամասն նախագծի մշակման ընթացքում ՄՆԽ-ի կողմից իրականացվել է ինժեներաերկրաբանական հետազոտություն տեղանքի ռելիեֆի առանձնահատկությունների տեսողական գնահատման, երկրաբանական և ինժեներաերկրաբանական վտանգավոր պրոցեսների և երևույթների բացահայտման նպատակով: Կատարվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներաերկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, գրունտներից խախտված և չխախտված կառուցվածքի նմուշների ընտրում, գրունտների ֆիզիկամեխանիկական հատկանիշների որոշում լաբորատոր պայմաններում, նախկինում տարբեր գիտաարտադրական և նախագծային հետազոտական կազմակերպությունների կողմից տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետվությունների հավաքում, ամփոփում և արխիվային նյութերի ընդհանրացում:

**Տեղագրություն**

132. Տեղագրական հանույթը կատարվել է լիցենզավորված մասնագիտացված «Ինֆորմուլա» ՍՊԸ-ի կողմից (կադաստրային լիցենզիա՝ N0391): Հանույթն իրականացվել է ARMWGS84 կոորդինատային համակարգով և աշխատանքների ընդհանուր ծավալն ընդգրկել է 19 հա: Քարտեզագրումն իրականացվել է ֆոտոգրամետրական և ԱՏՀ մեթոդաբանությաննհիման վրա, իսկ հսկիչ կետերն օգտագործվել են ավելի ճշգրիտ թվային օրթոֆոտո խճանկար ստանալու համար: Նույնականացման նշանները դրվել են ամբողջ տարածքում, որպեսզի անօդաչու թռչող սարքի կողմից նկարահանված նկարներում նկատելի լինեն (կոորդինատները տես Աղյուսակ Գ-2)։

**Աղյուսակ Ե-8. Տարածքի տեղադիրքի տեղագրագեոդեզիական կոորդինատները**


| N | X              | Y              | Z          |
|---|----------------|----------------|------------|
| 1 | 8455588.612498 | 4444392.187465 | 908.836056 |
| 2 | 8455550.003457 | 4444431.53576  | 908.554013 |
| 3 | 8455550.003218 | 4444431.500074 | 908.543257 |
| 4 | 8455494.332433 | 4444595.559908 | 905.81965  |
| 5 | 8455568.238765 | 4444702.35077  | 908.931489 |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|    |                |                |            |
|----|----------------|----------------|------------|
| 6  | 8455632.182862 | 4444659.278799 | 908.977711 |
| 7  | 8455653.962643 | 4444693.332306 | 909.103547 |
| 8  | 8455811.763915 | 4444665.854981 | 911.355669 |
| 9  | 8455956.014628 | 4444639.177025 | 912.662349 |
| 10 | 8455883.865212 | 4444488.672062 | 912.091712 |
| 11 | 8455840.431921 | 4444446.913618 | 911.540192 |
| 12 | 8455769.265472 | 4444401.123105 | 910.56079  |
| 13 | 8455680.863735 | 4444519.801056 | 909.128872 |
| 14 | 8455640.402735 | 4444436.064107 | 908.711616 |
| 15 | 8455571.020632 | 4444451.660731 | 908.595687 |
| 16 | 8455547.045743 | 4444497.29669  | 913.932305 |
| 17 | 8455535.866894 | 4444528.818256 | 910.591552 |
| 18 | 8455552.156959 | 4444661.382866 | 908.872754 |
| 19 | 8455512.194632 | 4444702.062599 | 906.219028 |
| 20 | 8455507.116466 | 4444582.177165 | 907.379907 |
| 21 | 8455482.874326 | 4444533.193128 | 907.479077 |

133. Բոլոր աշխատանքներն իրականացվել են անվտանգության կանոնների պահպանմամբ: Հավաքագրված տեղեկատվությունը մշակելուց հետո ստեղծվել է օրթոֆոտո խճանկար՝ 2,5 սմ/պիքսելից պակաս թույլտվությամբ: Խճանկարի հիման վրա իրականացվել են քարտեզագրման աշխատանքներ: Բոլոր օբյեկտները ներառված են մեկ .dwg ֆորմատի ֆայլում՝ որպես կետ, տող և բազմանկյուն շերտեր: Քարտեզագրման աշխատանքներն ավարտելուց հետո ստեղծվել է տարածքի տեղագրական քարտեզը (Նկար Ե-11): Արդյունքները տրամադրվում են թվային ձևաչափերով՝ .dwg՝ CAD համակարգերի համար և .shp՝ GIS համակարգերի համար: Թվային օրթոֆոտո խճանկարի ձևաչափը .tiff է: Աշխատանքներն իրականացվել են DJI Matrice 210 RTK V2 GNSS դրոնով:

Նկար Ե-11. Տեղադրագեոդեզիական քարտեզ





## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

134. Գեոմորֆոլոգիական տեսանկյունից տեղամասը գտնվում է Արարատյան լճակուտակումային հարթավայրի սահմաններում՝ հյուսիս-արևելյան եզրամասում: Ռելիեֆը հարթավայրային է, մակերևույթը հարթ է, աննշան թեքությամբ դեպի արևմուտք: Տարածքը հիմնականում կառուցապատված չէ: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 908.0-915.0 մետրի սահմաններում:

## Երկրաբանություն

135. Տեղանքի երկրաբանական կառուցվածքը և հետազոտված հատվածները բնութագրվում են նեոգեն-չորրորդական հասակի հրաբխային առաջացումներով (բազալտ, անդեզիտ-բազալտ, հրաբխային խարամ, ավազ): Նշված կազմավորումները ծածկված են չորրորդական դելյուվիալ, էյուվիալ-պրոյուվիալ և էյուվիալ կազմավորումների եզրածածկված շերտերով՝ կավավազ, խոշորա-բեկորային գրունտներ, տեխնոգեն հող և այլն: Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 10.0 մետր խորությունը հորերում նկատվել են միայն նստվածքային գրունտներ:
136. Տեղամասի ինժեներաերկրաբանական կառուցվածքում՝ 15.0 մ խորության վրա առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները.
- Շերտ 1. լիցքային գրունտ՝ չպառկապնդված, ավազակավային կազմի, հազվադեպ ճալաքարով և կոպիճով, տարածումը՝ շինարարական և կենցաղային թափոնների հետ միասին, հզորությունը՝ 0.5-2.0 մետր:  
Տեխնածին առաջացումներ.
  - Շերտ 2. բուսահողի ծածկույթ՝ կավավազային կազմի, ավազային գրունտների, հազվադեպ կոպճի պարունակությամբ, մինչև 10%, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.1-0.3 մետր:
  - Շերտ 3. դարչնագույն կավ՝ մասամբ դեղնավուն երանգներով, պինդ և ձիգ պլաստիկ թանձրության, փոշենման և տարահատիկ ավազային նյութի նրբաշերտերով և ոսպնյակներով, կոպիճի, հազվադեպ՝ ճալաքարի պարունակությամբ մինչև 10%, գրունտը միջին խտության է, սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 1.0-4.0 մետր:  
Չորրորդականի հասակի պյուվիա-պրոյուվիալ առաջացումներ.
  - Շերտ 4. ավազակավ, կավավազ մուգ շագանակագույն, ստորին մասում բաց դարչնագույն երանգով, ձիգ պլաստիկ և պլաստիկ թանձրության, տարահատիկ և փոշենման ավազային նյութի խառնուրդով, փոշենման ավազների նրբաշերտերով և ոսպնյակներով, կոպիճի, հազվադեպ՝ ճալաքարի պարունակությամբ մինչև 10%, գրունտը միջին խտության է, սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 1.0-3.0 մետր:
  - Շերտ 5. ճալաքարա-գլաքարային գրունտ՝ կոպիճով, հրաբխային ապարներից, կոպտահղկված, ավազային, մասամբ կավավազային լցանյութով մինչև 35%, տարահատիկ ավազների և կավային գրունտների նրբաշերտերով, ոսպնյակներով, բներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 5.0 մետր:
137. Ինժեներաերկրաբանական հետազոտությունը ցույց տվեց, որ այնպիսի վտանգավոր ֆիզիկաերկրաբանական գործընթացներ և երևույթներ, ինչպիսիք են կարստը, սողանքը, փլուզումը և այլն, ծրագրային տարածքում առկա չեն:

## Սեյսմոլոգիա

138. Սեյսմատեկտոնական տեսակետից տարածքը տեղակայված է վաղ ալպիական ծալքավորման տարածաշրջանի Երևանի միջլեռնային վերադրված ձկվածքի սահմաններում,

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Հրազդան գետի կիրճի ձախակողմյան հարթ տափարակի վրա: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ տարածաշրջաններից մեկը:

139. Արշակունյաց պողոտայի հարևանությամբ նախատեսված ավտոբուսների նոր հավաքակայանի տարածքի գրունտների գերակայող պարբերությունների գնահատման համար հետազոտություններ են կատարվել երկրաֆիզիկական մեթոդներով, որոնց համար հիմք է ընդունվել սեյսմիկ գոտևորման քարտեզը<sup>21</sup>, որի համաձայն՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է **երկրորդ** սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը: Գրանցումները կատարվել են 8 կետերում: Կետերի գտնվելու վայրը ներկայացված է Նկար Ե-12- ում:


140. Միկրոսեյսմերով գրանցված տվյալներով ստացված արդյունքներից երևում է, որ տարածքի գրունտերի տատանումների գերակայող պարբերությունները գտնվում են 0.414-0.462 վրկ. տիրույթում: Տարածքի գրունտները համապատասխանում են սեյսմիկ **3-րդ կարգի**<sup>22</sup> գրունտներին:

## Նկար Ե-12. Սեյսմիկ գոնդավորման կետերի տեղադիրքը և քանակը

<sup>21</sup> ՀՀԵՆ 20.04 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ»

<sup>22</sup> ՀՀԵՆ 20.04 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ», Աղյուսակ 3.

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ



### Գրունտներ

141. Առաջարկվող Ծրագրի տարածքը գտնվում է Երևան քաղաքում՝ կառուցապատված վայրում, որը ՀՀ հողային ֆոնդում դասակարգված է որպես կատեգորիա 2՝ բնակավայրի հողեր, իսկ գործառնական նշանակությամբ՝ 1) բնակելի կառուցապատման և 2) այլ նշանակության հողեր:
142. Հողի մի մասը զբաղեցված է բնակելի տներով և այլ կառույցներով, որոնք ներառված են ՀՕՏԾ-ի շրջանակում: Մյուս մասը կանաչ տարածք է, որտեղ տարիներ շարունակ մշակվում են պտղատու այգիներ հարևանությամբ բնակվող բնակիչների կողմից: Այս հատվածը ծածկված է բուսահողով:
143. Ինժեներաերկրաբանական հետազոտությունը ցույց է տվել, որ բուսահողը տարածված է չպառկապնդված լիցքային գրունտի տակ՝ ավազակավային կազմով, հազվադեպ ճալաքարով և կոպիճով, տարածումը՝ շինարարական և կենցաղային թափոնների հետ միասին, հզորությունը տեղամասի տարբեր մասերում 0.5-2.0 մետր է:
144. Բուսահողի ծածկույթը (Շերտ 2) չոր տափաստանային շագանակագույն հողերի տեսակ է, կավավազային կազմով՝ 2-4% օրգանական պարունակությամբ, ավազային գրունտներով,



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

հազվադեպ կոպճի պարունակությամբ մինչև 10%, հզորությունը՝ 0.1-0.3 մետր, իսկ բուսահողի հնարավոր ծավալը գնահատվում է մոտ 24875 մ3:

145. Շերտ 3-ը և Շերտ 4-ը կավային գրունտներ են: Կավային գրունտները երկու տեսակի են՝ ավազակավ և կավ: Կավային գրունտները ներկայացված են մուգ շագանակագույն, ստորին մասում դարչնագույն երանգով, ձիգ պլաստիկ և պլաստիկ թանձրության կավերով և դարչնագույն, գորշավուն, մասամբ դեղնավուն երանգներով, պինդ և ձիգ պլաստիկ թանձրության ավազակավերով:
146. Լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ տեղանքի երկրաբանալիթոլոգիական կտրվածքում գոյություն ունեցող կավային գրունտները բնութագրվում են գերուշման առանձնահատկություններով: Կավային գրունտների ֆիզիկամեխանիկական և քիմիական հատկությունների ցուցանիշների բացահայտման, ինչպես նաև դրանցում վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսների և երևույթների բացահայտման և բնութագրման նպատակով իրականացվել են հորատանցքերից նմուշառման և լաբորատոր փորձարկման աշխատանքներ:
147. Շրջակա գրունտների որոշակի աղտոտվածություն նշվում է Երևանի գլխավոր հատակագծում, որտեղ նշվում է, որ գրունտները պարունակում են ծանր մետաղների (այդ թվում՝ քրոմ, նիկել, ցինկ, պղինձ, կոբալտ, մոլիբդեն և արծաթ) կոնցենտրացիաներ, որոնք բարձր են՝ համեմատած ֆոնային կոնցենտրացիաների հետ: Մյուս կողմից, ընդգծվում է, որ արդյունաբերական նշանակությամբ օգտագործվող հողերի տարածքներում գրանցվել են մետաղների զգալի կոնցենտրացիաներ, և ըստ Երևանի գլխավոր հատակագծի տվյալների՝ նման աղտոտվածությունը տեղայնացված է այդ արդյունաբերական տարածքներում, այնպես որ նախատեսվող գործունեության տարածքում վերը նշված վայրերից ծանր մետաղների ներթափանցման ռիսկը ռիսկը համարվում է շատ ցածր՝ մեծ հեռավորության պատճառով:
148. Այնուամենայնիվ, Ծրագրի տարածքի մերձակայքում հողի աղտոտման հնարավոր որոշ աղբյուրներ բացահայտված են և առնչվում են հետևյալին.
- Շիրակի փողոցի ծրագիծը հատող երկաթուղային գիծը,
  - կուտակված թափոններ (հիմնականում շինարարական թափոններ, օրինակ՝ ապամոնտաժված շինությունների մնացորդները՝ քար, մետաղ, պլաստիկ և այլն)
  - Ծրագրի տեղանքում առկա են փոքր այգիներ և պարտեզներ, որոնք մշակվում են հարևան բնակիչների կողմից և որտեղ կարող են օգտագործված լինել թունաքիմիկատներ:
149. Շինարարական աշխատանքների փուլում վառելիքի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) քսայուղերի և այլ հեղուկ նյութերի թափոններով հողի աղտոտման որոշակի վտանգի և մեղմացնող միջոցառումների համար տե՛ս Գլուխ Զ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և Գլուխ Ը. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ):

## Ե7. Էկոլոգիական ռեսուրսներ

150. Բույսերի և կենդանիների, այդ թվում՝ հազվագյուտ և անհետացող տեսակների և դրանց բնական միջավայրի, պոպուլյացիաների օգտագործումը, վերարտադրությունը, պաշտպանությունը, պահպանումը և կառավարումը կարգավորվում են «Բուսական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 23.11.1999 թ.), «Կենդանական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 03.04.2000 թ.), Հայաստանի Կարմիր գրքով, ինչպես նաև Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր գրքով և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցուցակով, որտեղ նշված են բույսերի և կենդանիների այն տեսակները, որոնք կանգնած են գլոբալ ոչնչացման առավել մեծ ռիսկի առաջ և, այդ իսկ պատճառով առանձնացված են որպես խիստ վտանգված կամ խոցելի տեսակներ:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

151. Ծրագրի ուսումնասիրության տարածքը գտնվում է կիսաանապատային լանդշաֆտային գոտում՝ համալրված բուսական և կենդանական աշխարհի անապատային տեսակներով, որոնք բնորոշ են Երևանի ողջ տարածքին: Ինչպես արդեն նշվեց, Ծրագրի տեղանքը գտնվում է կառուցապատված տարածքում, որտեղ հողերը հիմնականում մշակված են և առկա են շինություններ/կառույցներ: Այնուամենայնիվ, տարածքները հետազոտվել են «Կենդանական և բուսական աշխարհի հետազոտության» միջոցով՝ հաշվի առնելով, որ նախատեսվող տարածքում վայրի բուսականությունը մասնակիորեն վերականգնվել է, ռոռզման պակասի, բուսականության խնամքի դադարեցման պատճառով կամ ուղղակի ազատ տարածքներում:
152. Կենսաբազմազանության հետազոտության իրականացման, ինչպես նաև շինարարության գործընթացին խոչընդոտող ծառերի տեսակներն ու քանակը որոշելու համար պայմանագիր է կնքվել մասնագիտացված «Բիո Գամա» ՍՊԸ- ի հետ: Բուսական և կենդանական աշխարհի կարևոր տեսակների հավանական առկայության վերաբերյալ կենսաբանական ելակետային պայմանները նկարագրելու համար կատարվել է տվյալների և գրականության ուսումնասիրություն և մի քանի տեղամասային այցելություն՝ Ծրագրի տարածքում Կարմիր ցուցակում ընդգրկված, վտանգված և/ կամ էնդեմիկ տեսակների առկայությունը որոշելու համար: Հաշվետվության եզրակացությունները տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1-ում, ամբողջական հաշվետվությունը կներկայացվի ՇՄԱԳ հիմնական փուլում:
153. Կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.
- ✓ գոյություն ունեցող գրականության և այլ հասանելի աղբյուրների ուսումնասիրություն,
  - ✓ տեղամասային այցելություններ,
  - ✓ տվյալների վերլուծություն և ֆոնային կենսաբանական վիճակի նկարագրություն
  - ✓ Կարմիր ցուցակում գրանցված և/կամ էնդեմիկ/վտանգված տեսակների ցանկի կազմում, որոնք հատուկ պաշտպանական միջոցների կարիք ունեն,
  - ✓ Ծրագրի շրջանակում հեռացվող ծառերի և թփերի տեսակների և քանակի որոշում,
  - ✓ ՇՄԱԳ/ԲԿԳ-ում ներառվող պաշտպանական միջոցառումների վերաբերյալ առաջարկներ.

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ (ՖԼՈՐԱՅԻ) ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

154. Ուսումնասիրվող տարածքների դաշտային աշխատանքների ընթացքում հավաքվել է ծառերի, թփերի և խոտաբույսերի մոտ 50 նմուշ, դրանք չորացվել են, կազմվել են հերբարիումներ, այնուհետև կատարվել են տեսակների որոշման աշխատանքներ: Լաբորատոր ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտում: Համակարգչային «Excel» ծրագրով ստեղծվել է տվյալների բազա, որում ընդգրկվել են բույսերի տեսակային կազմը, ուսումնասիրվող տարածքում դրանց տարածվածությունը, կենսաձևերը, տնտեսական և այլ նշանակություն ունեցող՝ սննդային, համեմունքային, դեղատու, մեղրատու, կերային, դեկորատիվ, տեխնիկական տեսակները: Տեսակների վերաբերյալ տվյալների աղբյուր են հանդիսացել Հայաստանի ֆլորայի 11 հատորները (Флора Армении, 1954-2011), Հայաստանի բույսերի Կարմիր գիրքը (2010), Հայաստանի ջրաճահճային բուսականությունը (Բարսեղյան, 1990), «Կանաչ Հայաստան» ատլասը (2016) և այլն: Ծառաթփատեսակների որոշումների համար օգտագործվել են մի շարք հրատարակություններ (Հարությունյան, 1987; Деревья и кустарники СССР, 1951): Բույսերի գիտական անվանումները ձշտվել են՝ ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (Չերեպանով, 1995): Տեսակների վերաբերյալ տվյալների վերլուծության համար օգտագործվել

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

է Լ.Բ. Մալիշևի ֆլորայի քանակական վերլուծության մեթոդը (Մալիշև, 1975). Բուսատեսակների գիտական անվանումները պարզաբանվել են Ն. Չերեպանովի մեթոդական ձեռնարկով (Չերեպանով, 1995 թ.):

155. Ուսումնասիրությունների ընթացքում հետազոտվել է ինչպես վայրաճ, այնպես էլ մասնավոր այգիների բուսականությունը՝ հիմնականում ծառերը: Ծրագրի համար առաջարկվող տարածքում իրականացված բուսաբանական հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ ուսումնասիրված տարածքը ներկայացված է հիմնականում կիսաանապատային բուսականությամբ, որոնք պատկանում են Երևանի ֆլորիստիկ շրջանին, որը գտնվում է Հին Միջերկրածովյան ֆլորիստիկ ենթաթագավորության Իրանա-Թուրանական գավառի Արմենա-Իրանական ենթագավառում (Թախտաջյան, 1978 թ.):
156. Ուսումնասիրվող տարածքը գրեթե ամբողջությամբ փոփոխություն է կրել քաղաքային զարգացման արդյունքում՝ մշակվել են հողեր, հիմնվել են այգիներ, հարակից հողակտորներում կառուցվել են շենքեր և շինություններ: Ուսումնասիրվող տարածքի գրեթե կեսը զբաղեցնում են այգիները և բանջարանոցները: Պտղատու ծառերից բավականին հաճախ են հանդիպում ծիրանենին, թթենին, ընկուզենին, բալենին, խնձորենին և այլն: Բնակիչների կողմից խնամվող դեկորատիվ ծառերից հանդիպում են թխկի հացենիատերևը (*Acer negundo*), ուռենիներ, թեղի, բարդի և այլն:
157. Ռոտզան պակասի և բուսականության խնամքի դադարեցման պատճառով անմշակ և լքված տարածքներում (ուսումնասիրվող տարածքի գրեթե կեսը) բուսականությունը տեղ-տեղ վերականգնել է իր սկզբնական բնույթը: Ուսումնասիրվող տարածքի բնական բուսականությունը հիմնականում քսերոֆիլ կիսաանապատային է, օշինդրի (*Artemisia fragrans*) առանձին բուսուտներով, որից սակայն բավականին քիչ տարածքներ են պահպանվել: Տարածված են նաև ինվազիվ ու էքսպանսիվ տեսակների մոլախոտեր՝ հազարատերևուկ սովորականը (*Achillea millefolium*), շնախոտ սուրը (*Cynanchum acutum*), խիժաճարճատուկ կնյունանմանը (*Chondrilla juncea*), տատաշ փովողը (*Tribulus terrestris*) և այլն: Հանդիպում են թելուկազգիների (Թալ թուրքմենական - *Atriplex turcomanica*, Թելուկ սպիտակ - *Chenopodium album*), լոբազգիների (Դառը բիան - *Goebelia alopecuroides*), խաչածաղկավորների (Նվարդակ լայնատերև - *Lepidum latifolium*), բարդածաղկավորների (Գեղավեր կամ Տատասկ սովորական - *Cirsium vulgare*), հացազգիների (Արվանտակ մատնաձև - *Cynodon dactylon*) և այլ ընտանիքների ներկայացուցիչներից կազմված մոլախոտային համակեցություններ: Ներկայումս այստեղ առկա են դեգրադացված էկոհամակարգեր՝ շուրջ 40-60% հողի ծածկույթով և աղբավայրեր:
158. Տեղ-տեղ՝ առուների ափերին կամ լճացած հատվածներում զարգացած է ջրաճահճային և ջրամերձ բուսականությունը՝ եղեգի և կեռոնի գերակայությամբ:
159. Ավտոբուսների հավաքակայանի կառուցման համար նախատեսվող տարածքում հայտնաբերվել են բարձրակարգ անոթավոր բույսերի 109 տեսակ, որոնք պատկանում են 97 ցեղի, 37 ընտանիքի, որտեղ տեսակային բազմազանության առումով առաջատար դիրք են զբաղում Բարդածաղկավորների, Հացազգիների, Թելուկազգիների, Լոբազգիների, Հովանոցազգիների և այլ ընտանիքները կենսաձևերի հետևյալ համամասնությամբ՝ ծառեր՝ 26 տեսակ, թփեր՝ 7 տեսակ, խոտաբույսեր՝ 76 տեսակ: Ուսումնասիրվող տարածքի բարձրակարգ բույսերի հիմնական կենսաձևը հանդիսանում են խոտաբույսերը՝ կազմելով ֆլորայի կազմի 69.7%-ը:
160. Ուսումնասիրվող տարածքում աճում են օգտակար բուսատեսակներ, որոնցից շատերը լայնորեն և վաղուց օգտագործվում են մարդու կողմից: Տարածքում ուտելի (համեմունքային, հատիկալընդեղային, բանջարաբոստանային) տեսակներին են պատկանում, աստղազգազար արևելյանը (*Astrodaucus orientalis*), սիբեի սովորականը (*Falcaria vulgaris*), ավելուկ գանգուրը (*Rumex crispus*), դանդուռ սովորականը (*Portulaca oleracea*) և այլն: Տարածքում բավական

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

հարուստ ներկայացված են մեղրատու՝ գազար վայրի (*Daucus carota*), կոծոծ կամ կռատուկ երեսնակ (*Arctium lappa*), փշատ նեղատերև (*Elaeagnus angustifolia*) և դեղատու՝ ճարճատուկ սովորական (*Cichorium intybus*), իշառվույտ դեղատու (*Melilotus officinalis*), մոլոշ կամ փիփերթ արհամարհված (*Malva neglecta*), ջղախոտ կամ եզան լեզու մեծ (*Plantago major*) բուսատեսակները: Հետազոտված տարածքում ներկայացված են որոշ գեղազարդային՝ ուռենի բարեխնայան (*Salix babylonica*), որձախոտ կամ կեռոն լայնատերև (*Typha latifolia*), կերային՝ եղեգ հարավային (*Phragmites australis*), հավակոբեկ սովորական (*Echinochloa crusgalli*), գարի մկնային (*Hordeum murinum*), սիզախոտ անապատային (*Agropyron desertorum*), դաշտավունկ սոխուկավոր (*Poa bulbosa*), խոզանուկ կանաչ (*Setaria viridis*), տեխնիկական ուռենի էլբուրսի (*Salix elbursensis*), ուռենի բարձր (*Salix excelsa*), եղինջ երկտուն (*Urtica dioica*) և այլ բույսեր:

161. Տարածքում աճող տեսակներից շատերը հանդիսանում են մշակովի բույսերի վայրի ցեղակիցներ՝ կաթնուկ կողմնացույց (*Lactuca serriola*), գարի մկնային (*Hordeum murinum*), այծակն սյունաձև (*Aegilops columnaris*), գազար վայրի (*Daucus carota*) և այլն: Ուսումնասիրվող տարածքներում աճում են նաև մակաբույժ՝ գայլխոտ կամ գաղձ ցեղատի (*Cuscuta cesattiana*) և բազմաթիվ մոլախոտային բուսատեսակներ՝ դառը բիան (*Goebelia alopecuroides*), սեզախոտ անապատային (*Agropyron desertorum*), արջընկույզ սովորական (*Datura stramonium*), քանգի սև (*Hyoscyamus niger*), տատաշ փոփոզ (*Tribulus terrestris*), դառնափուշ կամ դառնուկ իտալական (*Xanthium italicum*) և այլն:
162. Հետազոտությունը ցույց տվեց, որ ուսումնասիրված տարածքի 109 տեսակների մեջ առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, **վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Բույսերի Կարմիր գրքում կամ ԲՊՄՄ (Բնության Պահպանության Միջազգային Միություն) Կարմիր ցուցակում գրանցված տեսակները բացակայում են:** Ուսումնասիրված տարածքում հատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող տեսակներ չեն հայտնաբերվել: Տարածքում հայտնաբերվել են մի շարք սննդային, դեղագործական, համեմունքային, կերային և այլ օգտակար բույսեր, սակայն քանակով և կենսազանգվածով դրանք բավականին փոքր են և բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:
163. Ծրագրի տարածքում առկա ողջ բուսականությունը կտրվելու և մաքրվելու է: Այդ ծառերի և թփերի քանակը, ինչպես նաև հակակշռող և մեղմացնող միջոցառումները ներկայացված են սույն հաշվետվության հետագա գլուխներում (Գլուխ Զ-ում և Գլուխ Ը-ում): Կտրվող տեսակները, անհատների թիվը և կոճղերի տրամագիծը ներկայացված են Կենսաբազմազանության հետազոտության հաշվետվության 4-րդ և 5-րդ աղյուսակներում, որոնք ներառված են ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2-ում:
164. Ծառերի քանակը նշվել է՝ ըստ նախնական գնահատման, որը կարող է կրճատվել շինարարական աշխատանքների ընթացքում, քանի որ դրանցից շատերը կարող են պահպանվել և չհատվել: Դա կախված է ավտոբուսային հավաքակայանի ցանկապատի ճշգրիտ դիրքից: Այսպիսով, բուսականության մաքրման աշխատանքները սկսելուց առաջ կապալառուն պետք է վերահաշվի ծառերն ու թփերը և համապատասխանաբար թարմացնի Ծառերի կառավարման պլանը:

ԿԵՆՏՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ (ՖԱՈՒՆԱՅԻ) ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

165. Կենդանական աշխարհի (Ֆաունայի) հետազոտությունն իրականացվել է 2021 թ. հունիսին՝ դաշտային տեղամասային այցելության եղանակով (հունիսի 21, 26 և 30-ին) միջոցով: Ուսումնասիրվել է հազվագյուտ, վտանգված, էնդեմիկ տեսակների առկայությունը, ցամաքային անողնաշարավոր կենդանիների, երկկենցաղների, սողունների, թռչունների և

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

կաթնասունների տեսակների նշանակությունը: Ամբողջական հաշվետվությունը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է1-ում:

166. Կիրառվել են միջատաբանական հետազոտությունների ավանդական մեթոդները (Голуб и др., 2012), որոնց թվում՝ հավաք միջատաբանական ցանցով, հնձում խոտերի և թփերի վրայով, ճյուղերի թոթափում, հավաք քարերի տակից, ձեռքով հավաք, կենդանի ծառերի հին կոճղերի և քայքայման տարբեր փուլերում մահացած կոճղերի ստուգումներ և այլն: Նյութերը հավաքվել են Ծրագրի տարածքից, այդ թվում՝ ջրային առուների ափերի, տափաստանային դաշտերի հողերի և այլ տարածքներից: Ստուգվել են նաև միջատներով պոտենցիալ վարակված ծառերի և խոտերի որոշ չորացած հատվածներ (ճյուղեր, ցողուններ, արմատներ): Քանի որ այցելություններն իրականացվել են համեմատաբար ուշ ժամանակաշրջանում և որոշ տեսակների հասուն առանձնականներն այլևս չէին հանդիպում, հավաքվել են նաև դրանց որոշման ենթակա մնացորդները:
167. Հավաքված փորձանմուշները որոշվել են՝ օգտագործելով համապատասխան կարգաբանական խմբերի վերաբերյալ առկա մենագրություններն ու որոշիչները (Тер-Минасян, 1947; Яблоков-Хнзорян, 1967, 1976; Акрамовский, 1976; Данилевский, Мирошников, 1985; Марджанян, 1986; Аракелян, 1994; Tuzov (ed), 1997, 2000; Абдурахманов, Набоженко, 2011.), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի ԳԿ-ի Կենդանաբանության ինստիտուտի գիտական կոլեկցիոն նյութերի հետ համեմատության միջոցով: Հաշվի են առնվել նաև այլ ծրագրերի ուսումնասիրության տարածքների մերձակայքից և գիտական հավաքածուներից ձեռք բերված տվյալները:

## Ցամաքային անողնաշար կենդանիներ

168. Ընդհանուր առմամբ, ուսումնասիրված տարածքի կենսավայրերը (բիոտոպերը) կրում են ռուդերալ բնույթ՝ գտնվելով մարդածին խիստ ճնշման ներքո. կիսաանապատային և չորային տափաստանային բուսականության որոշ մնացորդային բաղադրիչներ փոխարինվել են արհեստականներով՝ պարտեզներով և այգիներով: Ուստի ցամաքային անողնաշար կենդանիների ֆաունան ևս ունի մնացորդային բնույթ և կարող է բնութագրվել որպես հիմնականում կիսաանապատային՝ ընդգրկելով նաև որոշ ծառաթփային բուսականության հետ կապված տարրեր:
169. Ուսումնասիրության տարածքում հայտնաբերվել են երկու տեսակի անողնաշար կենդանիների ներկայացուցիչներ՝ հողվածոտանիներ (Arthropoda) և փափկամարմիններ (Mollusca): Հողվածոտանիներն ընդգրկում են 18 ընտանիքի պատկանող 54 տեսակի բզեզ (Coleoptera), 1 տեսակի մորեխ (Orthoptera), 5 ընտանիքի պատկանող 9 տեսակի թիթեռ (Lepidoptera) և 3 ընտանիքի պատկանող 7 տեսակի թռչանթաթև (Hymenoptera), իսկ փափկամարմինների տիպից (Mollusca)՝ 2 ընտանիքի պատկանող 3 տեսակ:
170. Այս բոլոր տեսակները լայն տարածում ունեցող տեսակներ են: Վերոհիշյալ տարածքից չի հայտնաբերվել ՀՀ Կարմիր գրքում (Հայաստանի..., 2010) և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (IUCN Red List) գրանցված անողնաշար կենդանիներից որևէ տեսակ: Չեն գրանցվել նաև նեղ տարածված տեսակներ՝ Անդրկովկասի, Կովկասյան էկոտարածաշրջանի էնդեմիկներ: Վերոհիշյալ տարածքից չի հայտնաբերվել ՀՀ Կարմիր գրքում (Հայաստանի..., 2010) և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (IUCN Red List) գրանցված անողնաշար կենդանիներից որևէ տեսակ: Չեն գրանցվել նաև նեղ տարածված տեսակներ՝ Անդրկովկասի, Կովկասյան էկոտարածաշրջանի էնդեմիկներ: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ առաջարկվող Ծրագիրը նկատելի ազդեցություն չի ունենա Հայաստանում նմանատիպ բիոտոպերի ցամաքային անողնաշարավոր կենդանիների կենսաբազմազանության վրա:

Երկկենցաղներ, սողուններ

171. Երկկենցաղների և սողունների հետազոտությունների համար օգտագործվել է ստանդարտ մեթոդաբանություն: Հետազոտությունները կատարվել են 6 օրվա ընթացքում: Սողունները դիտարկվել են և՛ ցերեկային, և՛ երեկոյան ժամերին: Սողունների և երկկենցաղների հաշվարկն իրականացվել է երթուղային դիտարկումների միջոցով՝ համաձայն ընդունված մեթոդների (Формозов, 1951, 1976; Новиков, 1953; Priedniex, 1990; Heiger, 2003 և այլն): Երթուղային դիտարկումները կատարվել են, երբ սողուններն արևոտ ժամանակ տաքանում են: Կենդանիներն անմիջականորեն հանդիպել են ուսումնասիրվող տարածքում, ինչպես նաև դրանց առկայությունը որոշվել է՝ էլնելով դրանց հետքերից, բներից, թաքստոցներից և կենսագործունեության այլ արգասիքներից: Ստացված տվյալները համեմատվել են այլ հետազոտությունների և առկա գրականության տվյալների հետ: Երթուղու ամբողջ ընթացքը գրանցվել է GPS տեղորոշման սարքի օգնությամբ, այդ թվում՝ կենդանիների հանդիպելու վայրը, նրանց բները և մշտական թաքստոցները: Հնարավորության դեպքում կենդանին լուսանկարվել է:
172. Հետազոտությունների ընթացքում մեր կողմից դիտարկվել է երկկենցաղների երկու տեսակ (Կենսաբազմազանության հետազոտություն, Աղյուսակ 3)՝ կանաչ դոդոշը (*Bufo variabilis*) և լճագորտը (*Pelophylax ridibundus*): Այս տեսակները լայնորեն տարածված են հանրապետության գրեթե ողջ տարածքում, ենթարկվում են մարդածին կենսացենոզների, և նրանց քանակությունը կայուն է անգամ Երևան քաղաքում:
173. Ուսումնասիրությունների ընթացքում սողուններից դիտարկվել են՝  
✓ մողեսների չորս տեսակ՝ կովկասյան ազաման (*Paralaudakia caucasia*), Ռադդեի ժայռային մողեսը (*Darevskia raddei nairensis*), շերտավոր մողեսը (*Lacerta strigata*) և դեղնափորիկը (*Pseudopus apodus*) և  
✓ օձերի երեք տեսակ՝ կապարագույն սահնօձ (*Hemorrhois nummifer*), կարմրափոր սահնօձ (*Dolichophis schmidti*) և ջրային լորտու (*Natrix tessellata*):
174. Տեսականորեն կարող են լինել սողունների տեսակներ՝ փոքր թվով անհատներով, որոնք չեն դիտվել դաշտում, բայց իրականում կան և կարող են լինել հետազոտված տարածքում: Երկկենցաղների և սողունների նման տեսակներ հայտնաբերվել են հարևան տարածքներում նախորդ հետազոտությունների ընթացքում (Ասլանյան և այլք, 2003 թ.), ինչպես նաև ծառագորտ (*Hyla savignyi*), կասպիական կրիա (*Mauremys caspica*), կույր օձ (*Typhlops vermicularis*) և գյուրգա (*Macrovipera lebetina*):
175. Դիտարկվող տարածքում գրանցված սողուններից միայն գյուրգան, որը հետազոտության ընթացքում չի նկատվել, կարող է որոշակի վտանգ ներկայացնել աշխատող անձնակազմի համար: Այնուամենայնիվ, չբացառելով հնարավորությունը, այս տեսակների առկայությունը դիտարկվող տարածքում ներկայումս քիչ հավանական է, քանի որ այդ տարածքը խստորեն ենթարկվել է մարդածին ազդեցության:
176. Ուսումնասիրության տարածքում դիտարկված բոլոր տեսակներից (ինչպես ներկա հետազոտության ընթացքում, այնպես էլ նախկինում) բոլորը երկրում բնութագրվում են կայուն թվով և ոչ մեկը ներառված չէ ՀՀ Կարմիր գրքում: Երկկենցաղների 3 տեսակ և սողունների 7 տեսակ ներառված են ԲՊՄՄ Կարմիր ցուցակում՝ LC կարգավիճակով:<sup>23</sup>

Թռչուններ

177. Թռչունների հետազոտությունն իրականացվել է 2021 թ. հունիսի 16-ից 20-ը: Այս ընթացքում Ծրագրի համար նախատեսված ամբողջ տարածքը (12 հա) ուսումնասիրվել է 6 անգամ՝ հետևյալ մեթոդաբանությամբ. ակնադիտական գննությամբ փնտրվել է յուրաքանչյուր

<sup>23</sup> Least Concern – քիչ վտանգված

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

տեսակի նախընտրած բնակավայրը («Celestron» 12X56 հեռադիտակի օգտագործմամբ) և կատարվել է ձայնային ազդանշանների որոշում՝ դրանց առկայությունը որոշելու համար: Դիտարկումները կատարվել են օրական երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան: Դիտարկման տարածքը որոշվում է՝ օգտագործելով բարձր շարժունակության օբյեկտների դիտարկման ստանդարտ տեխնիկան. այն ընդգրկում է շինարարական աշխատանքների իրականացման՝ ողջ տարածքը և դրան հարակից աջ և ձախ կողմերի բուֆերային գոտիները (յուրաքանչյուրը՝ 100 մ) (ուսումնասիրված տարածքի ճշգրիտ տեղանքի նկարագրությունը և ամբողջական գեկույցը տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2-ում):

178. Թռչունների հաշվարկը կատարվել է՝ ըստ ստանդարտ մեթոդների (Vinokurov, 1963; Formozov, 1951; Novikov, 1953; Priednieks, 1990): Երթուղու երկայնքով նշվել են թռչունների ուղղակիորեն հանդիպող բոլոր տեսակները, և, հնարավորության դեպքում, հաշվարկն իրականացվել է նաև ձայների վերծանման միջոցով: Երթուղու երկայնքով անցումն ու թռչունների հաշվառումը իրականացվում էր հաշվարկի ընթացքի միջին արագությամբ 0,8-ից 2,5 կմ/ժամ, որոշ տեղերում դիտակետեր էին նախատեսվում՝ ավելի երկար ժամանակահատվածում դիտարկելու համար (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Զ, Նկար 1):

179. Ուսումնասիրվող տարածքում հնարավոր է համարվել 7 կարգի և 18 ընտանիքի պատկանող 23 թռչունների տեսակների առկայությունը, որից հետազոտության ընթացքում գրանցվել է թռչունների 18 տեսակ, 1 տեսակ գրանցվել է հատուկ ձայնային ազդանշանների վերծանման միջոցով: Դիտարկման ժամանակահատվածում ուսումնասիրվող տարածքում չորս (4) տեսակ չի հայտնաբերվել, սակայն այդ տեսակները ներառված են ցուցակում, քանի որ բնորոշ են քաղաքային՝ կիսաանապատային տափաստանային և այգիների տարածքներով լանդշաֆտին:

180. Սովորաբար բնակելի տների տարածքում գերակշռում են քաղաքային տեսակները՝ տնային ճնճղուկ, սովորական կաչաղակ և մոխրագույն ագռավ: Մեծ երաշտահավը, կարմրակատարը, սև կեռնեխը, հարավային սոխակը, դալուկ մորեհավը հիմնականում գրանցվել են այգիների տարածքներում՝ պտղատու ծառերի և թփերի մեջ: Խոտապատ բաց տարածքներում դիտվում են մեծ քանակությամբ սև մանգաղաթևը, գյուղական ծիծեռնակը, ինչպես նաև հոպոպը և սովորական ճայր: Հետազոտված տարածքը իդեալական է ոսկեգույն մեղվակերի և արտոյտների համար: Ռոռզման ջրացքների և տարբեր հողակտորների սահմանների երկայնքով դիտվել են սպիտակ խախտոնիկ և ժուլան: Թռչնաֆաունայի առատ բազմազանությունը, որը ներկայացված է մանր սերմնակերներով, միջատակերներով, ինչպես նաև մանր կրծողներով, գրավում է գիշատիչ թռչունների որոշ տեսակներին, օրինակ՝ սովորական հողմավար բազեին:

181. Վերը թվարկված տեսակներից որևէ մեկը գրանցված չէ ՀՀ Կարմիր գրքում: Բոլոր տեսակները կարելի է համարել սինանտրոպային և բավականին հաջողությամբ հարմարեցված քաղաքային և մերձքաղաքային միջավայրին:

## Կաթնասուններ

182. Կաթնասունների դաշտային հետազոտությունն իրականացվել է գծային երթուղու մեթոդի կիրառմամբ՝ թիրախային տարածքում դրանց առկայությունը և տարածվածությունը գնահատելու համար: Ողջ ծրագրային և դրան շրջապատող տարածքը ուսումնասիրման նպատակով բաժանվել է երկու երթուղու: Յուրաքանչյուր տեսակի համար դիտարկվել են համապատասխան կամ նախընտրելի բնակավայրերը, կենդանիները հաշվվել և բաց են թողնվել: Երթուղիների վրա բոլոր կենդանիների դիտարկումն ու գրանցումը կատարվել է քայլելով: Հավաքագրված տվյալները գրանցվել են տվյալների բազայում: Հնարավորության դեպքում կենդանիները լուսանկարվել են: Գրանցվել են նաև կաթնասունների բների, ոտնահետքերի և կենսագործունեության արգասիքների հետքերը:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Չղջիկների հայտնաբերման նպատակով կիրառվել է ձայնային (ակուստիկ) հայտնաբերման մեթոդը: Միաժամանակ կիրառվել են ուլտրաձայնային Echo Meter Touch 2 Pro դետեկտորը՝ չղջիկների արձակած ուլտրաձայները որոշելու համար: Ձայնագրությունների վերլուծությունը կատարվել է Kaliedoscope softwares համակարգչային ծրագրերի միջոցով: Խոշոր կաթնասունների հետազոտությունների ժամանակ ուսումնասիրվել են կենդանիների կենսագործունեության հետքերը (կղանքը, ոտնահետքերի առկայությունը և լքված բները):

183. Հայաստանում տարածված կաթնասունների 95 տեսակից ուսումնասիրվող տարածքում կարելի է հանդիպել 12 տեսակին: Դրանք դասակարգված են 5 խմբում՝
- 1) ոզնիներ - Erinaceomorpha - 1 տեսակ
  - 2) միջատակերներ - Insectivora - 1 տեսակ
  - 3) ձեռքաթևավորներ - Chiroptera - 6 տեսակ
  - 4) կրծողներ - Rodentia - 3 տեսակ
  - 5) գիշատիչներ - Carnivora - 1 տեսակ
184. Ուսումնասիրության տարածքում դաշտային հետազոտության ընթացքում գրունտային առուների մոտակայքում նկատվել են մոխրագույն առնետները (*Rattus norvegicus*): Տափաստանային դաշտամկները (*Apodemus witherbyi*), արևելաեվրոպական դաշտամուկը (*Microtus levis*) և երկգույն ոզնի: Ուսումնասիրվող տարածքում հայտնաբերվել են սասկած հարավային սպիտակակուրծք ոզնի (*Erinaceus concolor*), աղվեսի (*Vulpes vulpes*) կղանքներ:
185. Ձայնագրող սարքերի օգնությամբ ձայնագրվել է 4158 ձայն, որոնց վերլուծությունները ցույց են տվել, որ հիմնականում այդ տարածքում հանդիպում են միջերկրածովային փոքրաչղջիկը (*Pipistrellus kuhli*), թզուկ փոքրաչղջիկը (*Pipistrellus pipistrellus*): Ձայնագրված չղջիկների մեջ գրանցվել են նաև բեղավոր չղջիկների (*Myotis mystacinus*), տափաստանային չղջիկների (*Myotis aurascens*) ձայները:
186. Բոլոր կենդանիները տարածված են տարածաշրջանում: Ոչ մի տեսակ գրանցված չէ ՀՀ Կարմիր ցուցակում: Միայն մեկ տեսակ՝ արևելաեվրոպական դաշտամուկը (*Southern vole*) գրանցվում է որպես *հազվագյուտ*:

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ և ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

187. Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նախատեսվող գործունեությունը չի իրականացվելու ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում, ինչպես նաև Ծրագրի անմիջական տարածքում՝ ՀՀ Կառավարության 2008 թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշմամբ հաստատված բնության հուշարձանները բացակայում են: Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքը՝ 7 կմ-ից ավելին Արարատի մարզի Արագածի գյուղի մոտ գտնվող Որդան Կարմիր արգելավայրն է:
188. ՀՀ Կառավարության 2008 թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկից առավել հավանական կարող են համարվել Հրազդանի կիրճի ձախափնյա մասում գտնվող «Անանուն» սյունաձև բազալտներ երկրաբանական հուշարձանները, որոնք գտնվում են շիրանարական աշխատանքների հրապարակից և տրանսպորտային ուղիներից առնվազն համապատասխանաբար 5.8 և 6,3 կմ հեռավորության վրա:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ և ՊԱՏՄԱ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

189. Հնագետի խորհրդատվության համաձայն՝ նախատեսվող ծրագրի տարածքում Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված հնագիտական վայրեր չկան (տես ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3): Առավել մոտ գտնվող հնագիտական հուշարձանը՝



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ


Կարմիր Բլուր համալիրն է, որի հեռավորությունը նախատեսվող գործունեության տարածքից կազմում է մոտ 800մ:

### Ե8. Մոցիալ- տնտեսական պայմանները

190. Արշակունյաց պողոտայի հարևանությամբ ավտոբուսային հավաքակայանը կկառուցվի Երևան քաղաքի վարչական տարածքում, որը Հայաստանի Հանրապետության ամենամեծ վարչական, տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է և տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային տարանցիկ հանգույցը: Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիսարևելյան մասում՝ Հրազդան գետի երկու ափերին, ծովի մակարդակից 900-1200 մ բարձրության վրա և սահմանակից է ՀՀ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին: Երևանի տարածքը 233 քառ. կմ է, բնակչությունը՝ 1087,9 հազար մարդ, որը կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 35% -ը:
191. Երևանի տնտեսությունը բազմաճյուղ է՝ գյուղմթերքի վերամշակումից մինչև տեղեկատվական տեխնոլոգիաներ: Երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կապիտալի տեսակարար կշիռը կազմում է 42,1%: Երևանին են բաժին ընկնում հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալի 42.1%-ը, շինարարության՝ 53.9%-ը, մանրածախ առևտրի՝ 82.6%-ը, ծառայությունների՝ 85.5%-ը, շահագործման հանձնված բնակելի շենքերի՝ 77.6%-ը, հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ 33.2%-ը: Հաշվի առնելով Երևան քաղաքի վարչական, տնտեսական, ինչպես նաև գիտական և մշակութային ներուժը՝ քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների զարգացման և ենթակառուցվածքների բարելավման և զարգացման ծրագրերի իրականացման համար թիրախ են հանդիսանում այս ոլորտները: Այս գործընթացում կարևորվում է միջազգային համագործակցության ընդլայնումը, համայնք-մասնավոր հատվածների արդյունավետ համագործակցությունը:
192. Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանի: Ծրագիրը կիրականացվի Շենգավիթ վարչական շրջանում:

### Շենգավիթ վարչական շրջան

193. Ավտոբուսային նոր հավաքակայանը կկառուցվի Շենգավիթ վարչական շրջանի տարածքում (տե՛ս նկար Ե-13):



194. Շենգավիթը Երևանի ամենախոշոր արդյունաբերական վարչական շրջանն է: Խոշոր գործարանները և արտադրական ձեռնարկությունները կառուցվել են խորհրդային տարիներին, սակայն Հայաստանի անկախացումից հետո ծանր արդյունաբերության գործարանների մեծ մասը լքվեց, այդ թվում նաև Երևանի կաշվի գործարանը, որի տարածքի


Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

վրա մասնակի ազդեցություն կունենա ճանապարհի կառուցումը: Շենգավիթ վարչական շրջանի տարածքում՝ Արշակունյաց պողոտայում տեղակայված են բազմաթիվ առևտրի խանութներ, պատկերասրահներ և առևտրային գրասենյակներ, այդ թվում՝ «Մինոփսիս Արմենիա»-ի գլխամասը և «Երևան Մոլը»՝ Հայաստանի ամենամեծ առևտրի կենտրոններից մեկը: Երևանի հանրակրթական դպրոցների գրեթե 15%-ը գտնվում է Շենգավիթում: Վարչական շրջանն ունի 29 հանրակրթական դպրոց, 2 մասնավոր դպրոց, ինչպես նաև 1 արհեստագործական ուսումնարան, որոնցից միայն Փանոս Թերլեմեզյանի անվան Երևանի գեղարվեստի պետական քոլեջն է գտնվում առաջարկվող ճանապարհի ծրագծին մոտ և գնահատվում է որպես արժեքավոր ընկալիչ:

195. Վարչական շրջանը գտնվում է Երևանի հարավում և զբաղեցնում է 4090 հա տարածք՝ 141.700 բնակչությամբ:
196. Երևանի քաղաքապետարանի կողմից Ծրագրի համար հատկացված հողակտորը զբաղեցնում է 11.7 հա և գտնվում է Արշակունյաց պողոտա և Շիրակի փողոց փոխհատման հարևանությամբ:
197. Ծրագրի ազդեցության տարածքում սոցիալական համակարգերի առկայության վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, որոնք կարող են կրել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն ավտոբուսների նոր հավաքակայանի կառուցման և շահագործման հետևանքով, հավաքագրվել է տեղամասային այցելությունների ընթացքում (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Զ):
198. Ծրագրի սոցիալական համակարգերը ներկայացված են այնպիսի արժեքավոր ընկալիչներով, ինչպիսիք են՝
- ✓ տեղի բնակչությունը՝ հատկապես Արշակունյացի և Շիրակի փողոցների խիտ բնակեցված տարածքում և հարևան փողոցներում՝ ներառյալ խոցելի խմբերը,
  - ✓ պետական գույքը՝ դպրոցը և ընդհանուր օգտագործման պետական ճանապարհները,
  - ✓ համայնքային և մասնավոր սեփականությունը, ինչպիսիք են՝ բնակելի տները, ձեռնարկատիրական օբյեկտները, մշակվող այգիները և գյուղատնտեսական նշանակության հողերը,
  - ✓ հաղորդողները, ինչպիսիք են՝ հեռահաղորդակցության ուղիները, ջրատար և գազատար խողովակները, էլեկտրականության սյուները և գծերը, ջրահեռացման համակարգերը, ոռոգման գրունտային առուները:
199. Նախագծային աշխատանքների ընթացքում, ինչպես նաև առաջին հանրային լսումների ժամանակ պարզվեց, որ ծրագրի տարածքին անմիջականորեն հարող բնակելի թաղամասի կոյուղատար համակարգը բացակայում է: Տեղի բնակչությունն ապօրենի կերպով կեղտաջրերը թափում է ոռոգման ջրանցք, ինչը հանգեցրել է ջրանցքի ջրի որակի վատթարացմանը և դարձել է զարշահոտի աղբյուր (տե՛ս Հավելված Թ, Ենթահավելված Թ-3): Տեղի բնակչության համար կոյուղատար համակարգի հնարավորության (կառուցվող հավաքակայանի հարմարություններին միացնելու միջոցով) հարցը դիտարկվել և քննարկվել է ԵԲ-ի հետ: ԵԲ-ն տեղեկացրեց տեղի բնակչության համար կոյուղատար համակարգ ստեղծելու մտադրության մասին և հանձնարարեց կատարել անհրաժեշտ հաշվարկները և նախագծել ավտոբուսների հավաքակայանի կոյուղատար խողովակը՝ հաշվի առնելով նոր ստեղծված տեղական կոյուղու համակարգին հետագա միացման հեռանկարը:
200. Վերոնշյալ սոցիալական համակարգերի վրա հնարավոր ազդեցության տեսակը և համապատասխան մեղմացնող միջոցառումները ներկայացված են Գլուխ Զ-ում: Նախքան Ծրագրի մեկնարկը ՄՆԽ-ի կողմից կատարվելու է Մանրամասն չափագրման հետազոտություն և մշակվելու է ՀՕՏՕ, որն իրականացվելու է Պատվիրատուի կողմից: ՀՕՏՕ ընթացակարգի շրջանակներում օտարվող գույքի վերաբերյալ մանրամասն տվյալները ներկայացվում են առանձին հաշվետվությունում:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

**Նկար Ե-13. Ծրագրի տեղադիրքը Շենգավիթ վարչական շրջանում**



**2. ԲՆԱՊԱՀՂԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

201. Այս բաժինը բացահայտում է ծրագրի ազդեցության տարածքում շրջակա միջավայրի վրա՝ այդ թվում՝ բնակչության կենսամակարդակի վրա Ծրագրի հնարավոր դրական և բացասական, ուղղակի և անուղղակի ազդեցությունների շրջանակը ֆիզիկական, կենսաբանական, սոցիալ-տնտեսական (ներառյալ՝ աշխատանքի անվտանգության և առողջության, համայնքների առողջության և անվտանգության, խոցելի խմբերի և զենդեքային խնդիրների), ինչպես նաև ուսումնասիրվել են գլոբալ և գումարային ազդեցությունները: Այն ազդեցությունները, որոնք Ծրագրի գործողությունների ուղղակի արդյունք չեն հանդիսանում, սակայն կարող են առաջանալ Ծրագրի առկայության պատճառով, հատկապես սոցիալական բնույթի ազդեցությունները, նույնպես ուսումնասիրվել են ՇՄԱԳ փուլում:

**2.1. Դրական ազդեցությունները**

**ա) Նախագծին առնչվող դրական ազդեցությունները**

202. Ծրագրի նպատակը՝ Շենգավիթ վարչական շրջանում սեղմված բնական գազի լիցքավորման կայանով ավտոբուսների նոր հավաքակայանի կառուցումն է, որը կնպաստի Երևանի խիստ խաթարված հասարակական տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավմանը: Նշված հավաքակայանի կառուցման շնորհիվ էապես կբարելավվեն և՛ գործող, և՛ նոր ձեռք բերված քաղաքային ավտոբուսային շարժակազմի շահագործման պայմանները, ինչպես նաև էապես կբարելավվի ոլորտի աշխատակիցների բարեկեցությունը:

203. Վերջին երկու տասնամյակների ընթացքում ներդրումների բացակայության պատճառով Երևանում գոյություն ունեցող ավտոբուսների հավաքակայանների պայմանները խիստ վատթարացել են: Պայմանները վնասակար են ինչպես քաղաքային ավտոբուսային շարժակազմի շահագործման, այնպես էլ ավտոբուսների ոլորտի աշխատակիցների բարեկեցության համար: Ծրագիրը միտված է զգալիորեն բարելավելու ավտոբուսների

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

շարժակազմի շահագործումը, քանի որ հավաքակայանի բոլոր բաղադրիչները՝ կայանատեղիի տարածքը, հավաքակայանի տարածքում տրանսպորտային միջոցների շարժը, էրթնեկության հոսքին համապատասխան մուտքերն ու ելքերը, վարչական շենքը և այլ կառույցները նախագծվել են՝ համաձայն միջազգային և տեղական կանոնակարգերի՝ հավաքակայանի չափերի և հատակագծի բարելավմամբ, ինչպես նաև հաշվի առնելով աշխատանքի անվտանգության և աշխատողների առողջության պահանջները: Ծրագրի կառուցվածքային տարրերը, հատկապես վարչական շենքը կառուցվելու է հաշվի առնելով տարածաշրջանի սեյսմիկ ակտիվության ռիսկայնությունը:

204. Հավաքակայանի տարածքը նախագծված է այնպես, որ չի սահմանափակվում հաշմանդամություն ունեցող աշխատողների անարգել տեղաշարժը ամբողջ համալիրի ներսում: Մուտքի դարբասների և շենքերի մուտքերի մոտ նախատեսվում են թեքահարթակներ՝ անվասայլակ օգտագործողների տեղաշարժը հարմարավետ լինելու համար: Բազմահարկ շենքերում կտեղադրվեն վերելակներ: Սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարդկանց համար նախատեսված են նաև գետնի ուղորդող սալիկաձածակեր և ձայնային նախագոյշական ազդանշաններ:

205. Կայունության և էկոլոգիապես մաքուր լինելու սկզբունքը կիրառվել է նաև շինարարական նյութերի ընտրության հարցում: Նյութերի ընտրության և վերջնամշակման աշխատանքների հիմնական նկատառումները հետևյալն են՝

- I. նախագծում պահպանում է տարածաշրջանային և տեղական ճարտարապետական ոճը,
- II. համալիրն ամբողջությամբ նախագծված է միասնական ճարտարապետական ոճով,
- III. առաջարկվել է օգտագործել մոդուլային կահույք՝ աշխատանքային առավել զգոն մթնոլորտ ստեղծելու համար;
- IV. կիրառվելու են սենդվիչ պանելները, որոնք առավել էներգաարդյունավետ են,
- V. նախատեսվում է բնական լուսավորություն և օդափոխություն ապահովել բոլոր այն սենքերում, որտեղ դա հնարավոր է, մասնավորապես մուտքի միջանցքը, հանգստի սենյակները, վարչական օբյեկտները, զուգարանները և վերանորոգումների սրահը: Էներգաարդյունավետ լուսադիոդային լամպեր կօգտագործվեն այն տարածքներում, որտեղ անհրաժեշտ է ապահովել արհեստական լուսավորություն:
- VI. Տանիքները կառուցված են՝ ապագայում ֆոտովոլտային վահանակներ տեղադրելու հարմարությամբ:
- VII. Հնարավորության դեպքում օգտագործվում է երկրորդային օգտագործման ջուր:
- VIII. Կոշտ թափոնների հետագա վերամշակման նպատակով կուտակման համար տեղադրվելու են առանձնացված աղբամաններ՝ վարչական շենքի տարբեր հատվածներում և այլ տարածքներում:

## բ) Էկոլոգիական օգուտները

206. Ի տարբերություն դիզելային ավտոբուսների՝ ԲՍԳ-ով աշխատող ավտոբուսներն ավելի անաղմուկ են և դրանց ածխաթթու գազի և ազոտի օքսիդի արտանետումները ավելի նվազ են: ԲՍԳ-ավտոբուսները կարող են զգալիորեն նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը՝ ածխաթթու գազի արտանետումները կրճատվում են 10-30 %-ով, ազոտի օքսիդի արտանետումները՝ 90%-ով, գրեթե ամբողջությամբ վերանում է PM2.5 մանր մասնիկներով փոշին, ինչպես նաև զգալիորեն նվազում է աղմուկի աղտոտումը, քանի որ ԲՍԳ շարժիչներն առավել անաղմուկ են: Ներկա իրավիճակում, երբ ավտոբուսների հավաքակայանը տեղակայվելու է մի տարածքում, որտեղ օդի որակը որոշ աղտոտող նյութերի

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

գծով արդեն իսկ վատթարացած է (հիմնականում NO<sub>2</sub>, PM<sub>10</sub> և PM<sub>2.5</sub>), ավտոբուսային հավաքակայանի նախագիծը փաստորեն հանդիսանում է էկոլոգիապես մաքուր ծրագիր և , քանի որ ենթադրվում է, որ Ծրագրի շնորհիվ Երևանում ներկա անմխիթար տրանսպորտային միջոցների թիվը կրճատվելու է, ապա հնարավոր է քաղաքի ֆոնային աղտոտվածության նվազեցումը:

207. Ինչպես նշվել է նախորդ գլխում, տարածքի արևելյան եզրով անցնող ջրանցքի հին և վնասված հունը ջրամեկուսացում չի ապահովում: Հեղեղումներից և տեղանքի լիթոլոգիական հատվածում հողերի ողողաքայքայումից խուսափելու համար անհրաժեշտ է նախաձեռնել և իրականացնել ջրանցքների բեկորներից և բուսականությունից մաքրման, հատակի խորացման և հոսքի կարգավորման գործողություններ, կանխել ջրանցքներից ջրի ներթափանցումը հողի շերտեր: Խնդրի լուծման համար առաջարկվել է իրականացնել բետոնե և մետաղական կառուցվածքով ջրանցքների ամրացման աշխատանքներ:
208. Ավտոբուսային հավաքակայանի ջրահեռացման համակարգի նախագծում հաշվի են առնված նաև տեղի տարածքի ջրային հոսքերը վերահսկելու, հողերի ողողաքայքայումը և տեղանքում հեղեղումները նվազագույնի հասցնելու նկատառումները:
209. Նախագծային լուծումները սերտորեն փոխկապակցված են էկոլոգիական օգուտների հետ. հաշվի է առնված բնական ռեսուրսների (ջրի, նյութի և էներգիայի) խնայողության սկզբունքը: Այդպիսի լուծումներից են. ջրի վերաշրջապատույտը և երկրորդային ջրի վերօգտագործումը, էներգաարդյունավետ վահանակները և այլն:
210. Կանաչապատման նախագիծը նույնպես որոշակի էկոլոգիական օգուտներ է խոստանում, այն է՝ տեղանքի գեղագիտական գրավչության բարելավում և էկոլոգիական արժեքի բարձրացում, հողի բաղադրակառուցվածքի կայունացում, անձրևաջրերի հոսքերի ներթափանցման բարելավում, և աղմուկի որոշակի նվազում (մասնավորապես Աղմուկի հետազոտության և մոդելավորման միջոցով որոշված հատվածների համար):

## զ) Սոցիալ-տնտեսական օգուտները

211. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգը ներառում է միկրոավտոբուսների, ավտոբուսների, տրոլեյբուսների և մետրոպոլիտենի երթուղիները: Հասարակական տրանսպորտի ենթակառուցվածքը վատթարացել է, իսկ մեքենաների շարժակազմը հին է և վատ պահպանված, դրանց միջին արագությունը կազմում է ժամում 16 կիլոմետր: Ավելին, 2013 թվականից ի վեր մի քանի ավտոբուսային երթուղիներ փակվել են՝ երթևեկությունը տեղափոխելով այլ ավտոբուսային գծեր: Մա վկայում է Երևանի տրանսպորտային համակարգում օրվա գրեթե բոլոր ժամերին տրանսպորտային միջոցների պակասի (դեֆիցիտի) առկայություն մասին, այսինքն՝ պահանջարկը գերազանցում է առաջարկին:
212. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի հիմնական մասն են կազմում մասնավոր օպերատորների կողմից շահագործվող միկրոավտոբուսները: Ցանցի այս հատվածը ապահովում է ուղևորափոխադրումների մոտ 53%-ը: Գրանցված են մոտավորապես 1400-ից ավելի միկրոավտոբուսներ, սակայն իրականում օրական շահագործման մեջ գտնվող մեքենաների թիվը ավելի փոքր է, գերբեռնվածության և խցանումների պատճառով միկրոավտոբուսները մատուցում են ցածր որակի ծառայություններ:
213. Ներկայիս տրանսպորտային միջոցների շուրջ 75%-ը շահագործվում են ավելի քան 10 տարի (նշենք, որ նման ինտենսիվ շահագործման պարագայում այս տրանսպորտային միջոցների օգտակար ծառայության ժամկետը 5 տարուց քիչ է): ՄՆԽ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ շարժակազմի մեծ մասը գտնվում է անբավարար վիճակում, ինչը կարող է հանգեցնել անվտանգության խնդիրների: Հասարակության, ինչպես

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

նաև շահագործող անձնակազմի անվտանգության մակարդակի բարձրացումը համարվում է ծրագրի գլխավոր և ամենակարևոր սոցիալ-տնտեսական ձեռքբերումներից մեկը:

214. Ավտոբուսային շարժակազմը բացառապես բաղկացած է 18-ից մինչև 22 նստատեղով և կանգնած երթևեկելու սահմանափակ հնարավորությամբ միջին չափի ավտոբուսներից (միդի): Այս փոխադրամիջոցներով սպասարկվում է 39 երթուղի: Միջին չափի ավտոբուսներից, միայն «ՀԻԳԵՐ» մակնիշի ավտոբուսների արտադրողի կողմից սահմանված անվտանգ ծառայության ժամկետը չի սպառվել: «ՀՅՈՒՆԴԱԲ» և «ՋԻՋԻԱՆԳ» ավտոբուսների տարիքը չի գերազանցում 10 տարին, սակայն դրանք նախատեսված չեն քաղաքային ավտոբուսային ցանցում ինտենսիվ շահագործման համար:
215. Հայաստանի Հանրապետության կառավարությունն աշխատում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ՝ դեֆիցիտը հաղթահարելու և գոյություն ունեցող հնացած շարժակազմը փոխարինելու, ավտոբուսների նոր շարժակազմ ապահովելու ուղղությամբ: Այսպիսով, ուղևորները մեծապես կշահեն առաջարկվող Ծրագրից, որը հնարավորություն է ընձեռում ձեռք բերել շատ ավելի հարմարավետ և անվտանգ ավտոբուսների նոր շարժակազմ:
216. Ավտոբուսների հավաքակալանի շինարարության ավարտից հետո բարելավված հասարակական տրանսպորտային համակարգը կնպաստի Երևանի տարբեր հատվածների միջև փոխկապակցվածության ընդլայնմանը և դրանով իսկ՝ տարածաշրջանի տնտեսական աճին: Ակնկալվում է, որ նոր ավտոբուսային շարժակազմը դրական դերակատարություն կունենա Երևանի և երկրի տնտեսական աճի խթանման գործում:
217. ԲՄԳ-ով աշխատող ավտոբուսների նոր շարժակազմի համար ավտոբուսների հավաքակալանի կառուցման շնորհիվ էապես կկրճատվի ուղևորափոխադրումների ժամանակը և կբարձրանա երթևեկության անվտանգության մակարդակը: Ծրագրերի քանակական օգուտներն ու առավելություններն են՝
- (i) փոխադրամիջոցների շահագործման արժեքների խնայողություններ,
  - (ii) խնայողություններ ուղևորության ժամանակի առումով փոխադրամիջոցների միջին արագության աճի շնորհիվ՝ առկա ճանապարհային ցանցի հետ համեմատած
  - (iii) պատահարների նվազում,
  - (iv) բարելավված տրանսպորտային ծառայություններ՝ ընդլայնված ավտոբուսային շարժակազմի և առավել հարմարավետ տրանսպորտային միջոցների շնորհիվ:
218. Մի շարք լրացուցիչ ծախսեր, որոնք կարող են կրճատվել առկա ճանապարհացանցի գերբեռնվածության նվազման արդյունքում առայժմ քանակապես որոշված չեն, բայց դրանց դրական արդյունքները նույնպես ակնկալվում են:
219. Կանխատեսվում են որոշ սոցիալ-տնտեսական ազդեցություններ. շինարարական աշխատանքների ընթացքում ժամանակավոր աշխատատեղերի ստեղծումը կարող է ապահովել լրացուցիչ եկամուտ տեղի բնակչության համար՝ կարճաժամկետ աշխատատեղեր ստեղծելու միջոցով: Սոցիալական խնդիրները, որոնք պայմանավորված են ոչ տեղացի աշխատողներով, կհասցվեն նվազագույնի:
220. Ավտոբուսային հավաքակալանի կառուցման նախագծում հաշվի են առնված մարդկանց սոցիալապես զգայուն խմբերի կարիքները, մասնավորապես նախագծային լուծումները տրվել են հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող կամ այլ հատուկ կարիքներով անձանց համար ազատ տեղաշարժի ապահովումը: Մասնավորապես, շենքերում նախատեսված են հատուկ վերելակներ և հաշմանդամների հարմարավետության համար անհրաժեշտ համարվող հատվածներում կկառուցվեն 2.0x1.2 թեքահարթակներ:
221. Ծրագիրը կբարձրացնի բոլորի, և հատկապես կանանց, կենսամակարդակը, քանի որ երթևեկության ժամանակահատվածի կրճատման շնորհիվ տեղի կունենա ժամանակի

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

խնայողություն, ինչպես նաև գերբեռնվածության զգալի կրճատման շնորհիվ՝ երթևեկության ծառայության որակի բարձրացում:

222. Հարկ է նշել, որ սոցիալ-տնտեսական օգուտներ առկա են նաև տեղական մակարդակում: Ներկայումս տեղի բնակչության կենցաղային կեղտաջրերը ապօրենի կերպով թափվում են ոռոգման ջրանցքի մեջ, ինչը հանգեցնում է ջրի որակի վատթարացմանը և դառնում է զարշահոտի աղբյուր: ԵՔ-ի հետ դիտարկվել և քննարկվել է տեղի բնակչության համար կոյուղու համակարգի ստեղծման հնարավորությունը՝ այն միացնելով կառուցվող ավտոբուսային հավաքակայանի կոյուղատարին: Ավտոբուսային հավաքակայանի համար նախատեսված կոյուղու խողովակաշարը նախագծվելու է հաշվի առնելով վերոնշյալը:
223. Հաշվի առնելով 1-ին հանրային լուսմների ժամանակ ազդակիր անձանց կողմից բարձրացված խնդրանքը, իրականացվել է նախագծային փոփոխություն և տարածք է հատկացվել երեխաների խաղահրապարակի համար:

## Ձ-2. Բացասական ազդեցություններ

224. Ծրագրի իրականացման ընթացքում շինարարական աշխատանքների հետևանքով, իսկ հետագայում՝ կառուցված ավտոբուսների հավաքակայանի շահագործման ընթացքում աշխատանքային տեղամասը և մերձակա տարածքի բնական և սոցիալական միջավայրը կարող է ազդեցության ենթարկվել: Աշխատանքային տեղամասից դուրս ազդեցություններն առաջանում են շինհրապարակից դուրս իրականացվող գործողությունների արդյունքում, ինչպիսիք են շինարարական տեխնիկայի երթևեկությունը, ճամբարների տեղակայումը, ջարդիչի, այլ սարքավորումների առկայությունը և այլն, որոնք, այնուամենայնիվ, ուղղակիորեն կապված են ծրագրի հետ:
225. ԵՔ ԾԻԳ-ի կողմից 2020 թվականի սեպտեմբերին՝ Ծրագրի ամենավաղ փուլում, հնարավոր բնապահպանական ազդեցություններից և ռիսկերից խուսափելու նպատակով իրականացվել է ծրագրի ազդեցության շրջանակի որոշում և Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության հաշվետվության նախագիծը ներկայացվել է ԱԶԲ-ին (Տարբերակ 1):
226. Այնուհետև, Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման գործընթացը շարունակվել է Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության հաշվետվության (Տարբերակ 2) շրջանակներում: Ազդեցության գնահատումն իրականացվել է նախագծող թիմի հետ սերտ համագործակցությամբ. նախագծողները ժամանակին տեղեկացվել են ազդեցությունների մասին և հնարավորություն են ունեցել դրանք հաշվի առնելու: Մասնավորապես, առաջին հանրային լուսմից հետո սկզբնական նախագիծը ենթարկվել է փոփոխության և ավտոբուսային հավաքակայանի բաժանարար ցանկապատը տեղափոխվել է 1-15 մ դեպի ներս՝ հնարավորություն ընձեռնելով պահպանել մեծ թվով ծառեր և 1600 մ<sup>2</sup> տարածք տրամադրել տեղի երեխաների խաղահրապարակի համար:

## Ազդեցությունների ժամանակային շրջանակը

227. ՇՄԱԳ ընթացքում Ծրագրի ազդեցություններն ուսումնասիրվել են և համապատասխան մեղմացնող միջոցառումները և մոնիթորինգի պահանջները նախատեսվել են ԲԿՊ-ում՝ ըստ ծրագրի զարգացման փուլերի՝
- Նախագծման փուլ,
  - Նախաշինարարական փուլ – նախապատրաստական աշխատանքներ,
  - Շինարարության փուլ,
  - Հետշինարարական փուլ,
  - Շահագործման փուլ



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

228. Ծրագրի կողմից առաջացած բոլոր ազդեցությունները կարելի է խմբավորել երկու հիմնական մասերի՝
- Շինարարական աշխատանքների ազդեցություններ
  - Ավտոբուսների հավաքակայանի շահագործման ազդեցություններ:

**Ձ 2-1 Ծրագրի շինարարական գործողությունների ազդեցություններ**

229. Սույն հաշվետվության Գլուխ Գ-ում ներկայացված գործողությունները կարող են որոշակիորեն ազդել շրջակա միջավայրի վրա: Շինարարական աշխատանքները շրջակա միջավայրի վրա կունենան ոչ մեծ և միջին չափի շինարարությանը բնորոշ բացասական ազդեցություններ: Մյուս կողմից, ակնկալվում է, որ շինարարական աշխատանքների բացասական ազդեցությունները լինելու են ժամանակավոր, այսինքն՝ սահմանափակվելու են շինարարական աշխատանքների ժամանակահատվածով, և հիմնականում սահմանափակվելու են շինհրապարակի տարածքով:

**Արժեքավոր բնապահպանական ընկալիչներ (ԱԲԸ)**

230. Ծրագրի գործողությունները կարող են ազդել օրենսդրության և հասարակության կողմից արժևորվող բնական միջավայրի բաղադրիչների և սոցիալական համակարգերի վրա: Ազդեցությանների տեսակը և տարածման չափը պայմանավորված է ծրագրի տարածքի տեղադիրքով՝ ինչը և սահմանեց, թե շրջակա միջավայրի ո՞ր ասպեկտներն են դիտվելու որպես ԲԱԸ:

231. Ծրագրի բնապահպանական արժեքավոր ընկալիչների շրջանակը, ինչպես նաև հավանական ռիսկերը և դրանց կարևորությունը որոշվել և ամբողջացվել են շահագրգիռ կողմերի և ազդակիր անձանց հետ, ինչպիսիք են՝ Շենգավիթի թաղապետարանի ներկայացուցիչը, համայնքի անդամները, տեղի բնակիչները, ՀԿ-ները և այլն, հանդիպումների, քննարկումների և հաղորդակցության միջոցով: Շրջակա միջավայրի համար հնարավոր վտանգ ներկայացնող գործողությունների բացասական ազդեցությունները և ռիսկերը որոշելուց հետո այսօրինակ քննարկումների, նախագծային աշխատանքների և ելակետային տվյալների առավել մանրամասն ուսումնասիրության շնորհիվ ազդեցությունների և ԲԱԸ-րի շրջանակը հստակեցվել է:

**Ազդեցությունների խստությունը**

232. Արժեքավոր բնապահպանական ընկալիչների (ԱԲԸ) վրա ծրագրի ազդեցությունների խստությունը վերլուծության է ենթարկվել, որի արդյունքները ներկայացվել են ՀԱՎԵԼՎԱԾ Ը-ում: Ազդեցության խստությունը որոշելու նպատակով կիրառվել է Աղյուսակ Զ-1-ում ներկայացված գնահատման համակարգը և հաշվի են առնվել հետևյալ ասպեկտները.

**Աղյուսակ Զ-1. Ազդեցությունների խստության սահմանման չափանիշներ**

| Չափանիշներ  | Դասակարգում/ Գնահատական |      |       |       |
|---|-------------------------|------|-------|-------|
|   | 1                       | 2    | 3     | 4     |
| Ազդեցության մակարդակը (փոփոխության նկատմամբ զգայունություն) | Աննշան                  | Ցածր | Միջին | Բարձր |



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|                               |                   |                    |                  |                        |
|-------------------------------|-------------------|--------------------|------------------|------------------------|
| Ազդեցության նշանակությունը    | Տեղային           | Մարզային           | Ազգային          | Միջազգային             |
| Ազդեցության տևողությունը      | Անցողիկ           | Կարճաժամկետ        | Միջին տևողության | Երկարաժամկետ (մշտական) |
| Ազդեցության հաճախականությունը | Մեկանգամյա        | Հազվադեպ           | Հաճախակի         | Շարունակական           |
| Ազդեցության հավանականությունը | Շատ քիչ հավանական | Հնարավոր           | Հավանական        | Հաստատ                 |
| Ազդեցության շրջելիությունը    | Լիովին շրջելի     | Հիմնականում շրջելի | Մասամբ շրջելի    | Անշրջելի               |

*Ազդեցության տեսակը*

233. Ծրագրի գործողությունները ԱԲԸ-ի վրա կարող են ազդել ուղղակի կամ անուղղակի կերպով, ինչն առաջարկվող ծրագրի համար ամփոփ ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Ը, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ը-1-ում:

*Ազդեցության կարևորությունը*

234. Ազդեցության կարևորությունը՝ դա համապատասխան մեղմացնող միջոցառման կիրառման կարևորությունն է: Ծրագրի ազդեցությունների խստության մակարդակի վերլուծությունը ցույց է տալիս, որ կենսաֆիզիկական միջավայրի վրա ակնկալվող ազդեցությունները հիմնականում կլինեն ժամանակավոր և տեղի կունենան միայն շինարարության ընթացքում: Հավելված Ը, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ը-3-ում ներկայացված է ազդեցության կարևորությունը՝ մեղմացնող միջոցառումների կիրառման դեպքում և դրանց չկիրառման դեպքում՝ «ազդեցության կարևորությունը առանց մեղմացնող միջոցառումների»: Ազդեցություններից խուսափելու և համապատասխան մեղմացնող միջոցառումների պլանավորման, մնացորդային բացասական ազդեցությունների որոշման և դրանք հաղթահարելու համար, հիմք են ընդունվում ազդեցության հետևանքները «մեղմացնող միջոցառումների չկիրառման դեպքում»: Ռիսկերի և ազդեցությունների գնահատման համար կիրառվել են ԱԶԲ ԿԱԱԲ ուղեցույցով առաջարկվող չափանիշները, որոնք ներկայացված են Աղյուսակ Զ-2-ում:

235. Ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական և մշակութային միջավայրի վրա ազդեցությունները բոլոր ասպեկտները ուսումնասիրելուց հետո որոշվել է, որ դրանք կառավարելի են և կարող են նվազագույնի հասցվել, նույնիսկ վերացվել ժամանակին և պատշաճ իրականացվող մեղմացնող միջոցառումների միջոցով: Առաջարկվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ՝ հիմք ընդունելով դրանց նշանակությունը և առաջացումը Ծրագրի բոլոր փուլերում (մանրամասն նախագիծ, նախաշինարարություն, շինարարություն, շահագործում և տեխնիկական սպասարկում): Մեղմացնող միջոցառումները ներկայացված են ԲԿՊ-ում (տե՛ս Գլուխ Ը. Բնապահպանական կառավարման պլանը և սույն ՇՄԱԳ հաշվետվությանը կից ՀԱՎԵԼՎԱԾ Ժ-ն):

Աղյուսակ Զ-2. Բնապահպանական ազդեցությունների կարևորության գնահատում<sup>24</sup>

| ԲԱԸ⇒<br>Խստություն↓ | Միջազգային/<br>Չափազանց<br>մեծ | Ազգային/<br>Բարձր | Մարզային/ Միջին   | Տեղական/Ցածր  |
|---------------------|--------------------------------|-------------------|---|---|
| Բարձր               | -                              | -                 |   | Սոցիալական<br>համակարգեր<br><br>Աղմուկ և թրթռում  |
| Միջին               | -                              | -                 | Երթևեկություն և<br>տրանսպորտ<br><br>Հաղորդուղիներ           | Օդի որակ<br><br>Հողեր, այդ թվում՝<br>բուսահող<br><br>Լանդշաֆտ և<br>գեղագիտական<br>արժեք<br><br>Բուսական և<br>կենդանական<br>աշխարհ |
| Ցածր                | -                              | -                 | Զրի որակ<br>(ոռոգման ջրանցք)<br><br>Նյութական<br>ոեւուրսներ |   |
| Աննշան              |                                |                   |   | Հնագիտական<br>գտածոների<br>հայտնաբերում<br><br>Ստորգետնյա ջրեր  |

Առաջարկվող Նախագծի բնապահպանական արժեքավոր ընկալիչներն են՝

*Մթնոլորտային օդի որակ (այդ թվում՝ աղմուկ և թրթռումներ)*

236. Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը հավանական է հետևյալ փուլերում՝
- ✓ շինարարության փուլում՝ հողային աշխատանքների պատճառով առաջացած փոշի և գործող շինարարական մեքենաների ու տեխնիկայի գազային արտանետումների տեսքով: Շինարարական աշխատանքների ընթացքում վնասակար նյութերի

<sup>24</sup>

|           |           |          |                   |
|-----------|-----------|----------|-------------------|
| Բարձր (Բ) | Միջին (Մ) | Ցածր (Ց) | Ոչ նշանակալի (ՈՆ) |
|-----------|-----------|----------|-------------------|

**Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ**

արտանետումներն առաջանալու են հանույթի աշխատանքների, բեռնման աշխատանքների, ծածկի իրականացման, գծանշումների և սարքավորումների շահագործման հետևանքով: Շինարարական տեխնիկան նույնպես աղմուկի և թրթռումների առաջացման հիմնական աղբյուր է հանդիսանում, և

- ✓ ավտոբուսների հավաքակայանի շահագործման փուլում՝ ավտոբուսային շարժակազմի շահագործման ընթացքում գազային արտանետումների տեսքով:

237. Շինարարական աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը գնահատելու համար իրականացվելու է կանխատեսվող արտանետումների ցրման և գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկներ, որի արդյունքները կկկցվեն հիմնական փուլի ՇՄԱԳ հաշվետվությանը: Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկները կատարվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված 25 համակարգչային ծրագրի միջոցով: Հաշվարկների արդյունքում կորոշվեն ստորև նշված տվյալները, ինչպես նաև աղտոտվածության մակարդակը և կհամեմատվի առավելագույն թույլատրելի նորմերի հետ.

- ✓ անվանական հաշվարկային կետի կոորդինատները,
- ✓ վնասակար նյութերի կոնցենտրացիան,
- ✓ ջահի առանցքի ուղղությունը. քամու այն արագությունը (մ/վ), որի դեպքում հաշվարկային կետում գետնամերձ կոնցենտրացիաները հասնում են առավելագույն արժեքի:

238. Ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածում ԲԿՊ-ում նախատեսված է փոշու արտանետումների գործիքային կանոնավոր չափագրումների պահանջները (տե՛ս Գլուխ Ը): Կապալառուից պահանջվելու է իրականացնել էլակետային վիճակի չափագրումներ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 21 օր առաջ: Այնուհետև, Կապալառուն պարտավորվելու է իրականացնել փոշու՝ 2,5 PM և 10 PM մասնիկների գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, ինչպես նաև ԱԵԱ-ներից բողոքներ ստանալու դեպքում) և արդյունքների ու դրանց վերլուծությունների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ՝ համեմատելով ազգային և ՄՖԿ (IFC) ստանդարտների հետ՝ ըստ հետևյալ առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների:

**Աղյուսակ Զ-3. PM2.5 և PM10-ի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները**

| № | Նյութի անվանումը | ՄԹԿ (մգ/մ3)   |               | ՄՖԿ ստանդարտ (մգ/մ3) |
|---|------------------|---------------|---------------|----------------------|
|   | Փոշու մասնիկները | Առավելագույնը | Օրական միջինը | Օրական միջինը        |
| 1 | PM2.5            | 0.15          | 0.035         | 0.025                |
| 2 | PM10             | 0.3           | 0.06          | 0.05                 |

239. Փոշու մասնիկների չափագրումները կատարվելու են նախապես ընտրված 5 կետերում (վայրը տե՛ս Նկար Ե-4)՝ յուրաքանչյուր կետում առնվազն 3 անգամ, աշխատանքային ժամերի ընթացքում, որի հիման վրա որոշվելու է միջին ցուցանիշը: Կետերն ընտրվել են խիտ բնակեցված տարածքներում՝ մոտ գտնվող զգայուն ընկալիչների սկզբունքի հիման վրա: Չափիչ սարքը տեղադրվելու է մոնիթորինգի պլանում որոշված զգայուն ընկալիչների մոտ (բնակելի տների, ձեռնարկատիրական գործունեության օբյեկտների)՝ դրանց վրա ազդեցությունը որոշելու համար:

<sup>25</sup> ՀՀ ԷՆ Հրաման թիվ 64-Լ «Անշարժ օբյեկտներից վտանգավոր գազերի արտանետումների ցրումը հաշվարկելու համար համակարգչային ծրագրերի որոշման մասին» (18.02.2020)

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

240. Ծծմբի երկօքսիդի (SO<sub>2</sub>) և ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>) չափագրումները պետք է իրականացվեն կապալառուի կողմից երկու անգամ՝ առաջին անգամ նախքան շինարարական աշխատանքները սկսելը, երկրորդ անգամ՝ մինչև թերությունների վերացման ժամանակահատվածի ավարտը: Լրացուցիչ միջանկյալ չափագրումներ կիրականացվեն տեղի բնակիչների կողմից գրանցված բողոքների դեպքում:
241. Կանոնավոր չափագրումների համար օգտագործվող սարքավորումը չի կարող ներկայացվել Նախնական Գնահատման հայտի հաշվետվության այս փուլում, սակայն գործիքային չափագրումների համար ենթակապալառու ընկերությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ՇՄԱԳ/ԲԿՊ- ում.
- ✓ ենթակապալառու կազմակերպությունը կներկայացնի սարքավորումների տրամաչափերի և ստանդարտացման վկայագրեր,
  - ✓ կազմակերպությունը նախքան ընտրվելը պետք է ներկայացնի չափագրումների մեթոդաբանությունը,
  - ✓ առկա է և կօգտագործվի սարքավորում, որի արդյունքները հնարավոր կլինի համեմատել էլակետային տվյալների հետ:
242. Հետշինարարական փուլում փոշու, ածխաթթու գազի, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի մակարդակի ավելացումը տե՛ս ստորև Զ-2-2-ում:

## Աղմուկ

243. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով անշուշտ տեղի կունենա աղմուկի որոշակի ավելացում: Աղմուկը վերահսկելու և թույլատրելի սահմանային չափանիշները պահպանելու համար ԲԿՊ-ում նախատեսվում է իրականացնել կանոնավոր մոնիթորինգ՝ գործիքային չափագրումների միջոցով: Ծրագրի տարածքի աղմուկի մակարդակի ֆոնային տվյալները հավաքագրվել են Ակուստիկ հետազոտության շրջանակներում (Ակուստիկ հետազոտության հաշվետվությունը կներկայացվի ՇՄԱԳ հիմնական փուլում):
244. Ելակետային չափագրումներ իրականացվել են 3 կետերում, որոնց գտնվելու վայրը ներկայացված է Նկար Ե-2-ում: Կիրառվել է 3D ձայնային մոդելը և ստացվել է ուսումնասիրվող տարածքի 35 ընդունիչների համար աղմուկի մակարդակի ֆոնային պատկերը (ցույց է տրված նկարներ Ե-8 և Ե-9-ում): Այդ տվյալները կօգտագործվեն Կապալառուի կողմից շինարարության և թերությունների վերացման շրջանում գործիքային չափագրումների կանոնավոր մոնիթորինգի համար:
245. Ելակետային տվյալները համեմատվել են Աղյուսակ Ե-6-ում ներկայացված ՄՖԿ ուղեցույցների և ՀՀ ստանդարտների հետ: Ակուստիկ ուսումնասիրության հաշվետվության համաձայն՝ չափված բոլոր կետերում աղմուկի մակարդակը արդեն իսկ գերազանցում է ստանդարտները (տե՛ս Աղյուսակ Ե-7): Սա նշանակում է, որ շինարարության ընթացքում կկիրառվի ՄՖԿ «+3դԲ կանոնը»:
246. Ակուստիկ ուսումնասիրության շրջանակներում կատարված չափագրումները տեղեկատվություն են տրամադրում ավտոբուսների հավաքակայանի հետագա շահագործման հնարավոր ակուստիկ ազդեցությունը գնահատելու համար: Այս ազդեցությունը և սանիտարական գոտու խնդիրները քննարկված են Գլուխ Զ 2-2-ում:

## Թրթռումներ

247. Ծրագրի շրջանակում կտարբերակվի թրթռումների ազդեցության 2 տեսակ՝
- ազդեցությունը շինությունների և գույքի վրա,

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- ազդեցությունը տեղի բնակչության առողջության վրա:

*Թրթռումների ազդեցությունը շինությունների և գույքի վրա*

248. Թրթռումների ազդեցությունը որոշվել է Նախագծի խորհրդատուի կողմից իրականացրած Թրթռումների ազդեցության ուսումնասիրության միջոցով՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ: Թրթռումների նախնական մակարդակի չափագրումները կատարվել են 2021 թվականի հունվարի 15-ից 19 -ը: Ըստ փորձագետի եզրակացության՝ թրթռումների աճ կարող է տեղի ունենալ բացառապես շինարարական աշխատանքների ընթացքում, ուստի ուսումնասիրության նպատակն էր՝

- ✓ որոշել՝ ստանդարտ շինարարական տեխնիկայի կիրառումը կարող է արդյո՞ք հանգեցնել հարակից շինություններում ճաքերի առաջացմանը,
- ✓ ճաքերի առաջացումը կանխելու կամ սահմանափակելու համար կապալառուին պարտադրել իրականացնել համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

249. Ելակետային չափագրումների և գրականության տվյալների, ինչպես նաև շինարարական տեխնիկայի և մեքենաների ցանկի հիման վրա հաշվարկվել է փոխանցման ֆունկցիան, որոշվել է թրթռումների նկատմամբ շենքի զգայունությունը և առաջարկություններ են արվել առավել մեծ ազդեցությունն ունեցող փուլերի համար: Թրթռումների չափումների և մոդելավորման հաշվետվությունը առկա է:

250. Թրթռումների հետազոտությամբ որոշված ազդեցությանը ենթարկվող շինությունների շրջանակի հիման վրա Կապալառուին պարտավոր է իրականացնել այդ շինությունների նախաշինարարական հետազոտություն՝ ելակետային վիճակը գրանցելու նպատակով: Այս պահանջը ներառված է ՇՄԱԳ/ԲԿՊ-ում:

251. Թրթռումների ազդեցությունը պայմանավորված է մի շարք գործոններով՝

- թրթռումների աղբյուրի մագնիտուտը,
- աղբյուրի և ընկալիչի միջև գրունտների տեսակը,
- հիմքից-հենարան կառույցների պարամետրերը (չափերը, նյութերը, շինության տեսակը և շինարարության որակը, հիմքի պայմանները),
- Թրթռումների ինտենսիվությունը, տևողությունը, հաճախականությունը և քանակը անմիջականորեն ազդում են ինչպես կառույցների, այնպես էլ մարդկանց առողջության վրա:

252. Թրթռումների ազդեցությունները կարող են հանգեցնել բազմաթիվ խնդիրների՝

- Ազդեցություններ կառույցների վրա. շենքերի և կառույցների ամբողջականությունը կարող է խաթարվել,
- Ազդեցություն մարդկանց առողջության վրա. թրթռումները կարող են դառնալ բնակիչների կամ օգտագործողների համար անհարմարության կամ անհանգստության զգացողության պատճառ;
- Ազդեցություններ զգայուն սարքավորումների վրա. լաբորատորիաներում, հիվանդանոցներում կամ գիտական հետազոտությունների համար օգտագործվող (լազերային, ՄՌՏ և այլն) զգայուն սարքավորումները կարող են խախտվել:

253. Թրթռումների մակարդակի և տարածվող աղմուկի վերաբերյալ եզրակացությունը հիմնված է Ծրագրի հարակից տարածքում իրականացված փորձարկման թեստային չափագրումների վրա: Փոխանցման ուժը չափելու թեստը կայանում է նրանում, որ ծանր բեռը նետվում է գետնին և չափվում է հարվածային ուժը և ներգործության տարածումը հարակից մի քանի հատվածներում: Փորձարկումների նպատակն է ստեղծել թրթռումների այնպիսի իմպուլսներ, որոնք կրկնում են հետագա աշխատանքների թրթռումների հնարավոր ուղին

**Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ**

սկզբնաղբյուրից մինչև ընդունիչ: Ներգործության տարածման մեծությունը արտահայտում է հարվածային ուժի և գետնի մակերևույթի թրթռումների միջև եղած կապը: Ուժի և թրթռումների նկատմամբ փոխանցիչների արձագանքները գրանցվում են բազմալիք մագնիտոֆոնի վրա՝ հետագայում լաբորատորիայում վերլուծելու համար:

254. Կատարված չափագրումները տեղեկատվություն են տրամադրում ծրագրի հնարավոր վնասները գնահատելու համար: Արդյունքները համեմատվել են շեմային մեծությունների հետ:
255. ՄՖԿ ուղեցույցը (Շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության վերաբերյալ ուղեցույցներ) շեմային մեծություններ չի տրամադրում, այդ իսկ պատճառով կիրառվել են բրիտանական երկու գործող ստանդարտներ՝ ԲՍ 7385. Մաս 2 (ԲՍՀ, 1993) և ԲՍ 5228. Մաս 4 (ԲՍՀ, 1992), որոնք տալիս են թրթռումներից շենքի վնասման շեմային մեծություններ: Երկու ստանդարտներն էլ վնասը դասակարգում են հետևյալ կերպ.
- Կոսմետիկ – պատերի սվաղի մակերեսի վրա մագային ճաքերի առաջացում,
  - Միջին – պատերի վրա մեծ ճաքերի առաջացում, կամ թուլացած և թափված ծեփեր, կամ աղյուսների ու բլոկների արանքում ճաքերի առաջացում,
  - Խոշոր – վնասվում է շինության կառուցվածքային կայունությունը:
256. Երկու ստանդարտներն էլ երեք օրթոգոնալ բաղադրիչների տեսանկյունից կարող են ուղեցույց լինել թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակի համար՝ այսինքն՝ թրթռումների այն մակարդակը, որից բարձր լինելու դեպքում շենք/շինությունները կարող են վնասվել: Երկու բրիտանական ստանդարտներն էլ քննարկվել են նախորդ ՔԿՁՆԾ ծրագրերում և նախապատվությունը տրվել է ԲՍ 5228, Մաս 4 (ԲՍՀ, 1992) -ին, որն առաջարկվել է նաև սույն ծրագրի համար: Դրանք ներկայացված են ստորև բերված Աղյուսակ Զ-4-ում:
257. Ինչպես սահմանված է ԲՍ 5228 մաս 2-ում, շինհրապարակից տարածվող թրթռումների բնույթով պայմանավորված, դրանք կարող են դասակարգվել.
- շարունակական թրթռումներ, երբ ամպլիտուդի ցիկլային փոփոխությունը բազմիցս կրկնվում է,
  - անցողիկ թրթռումներ, երբ ամպլիտուդի ցիկլային փոփոխությունը հասնում է գազաթնակետին, այնուհետև համեմատաբար արագ իջնում է մինչև զրոյական մակարդակը,
  - ընդհատվող թրթռումներ, երբ անցողիկ թրթռումները հաջորդում են միմյանց (երբեմն կանոնավոր, երբեմն անկանոն), և այդ հաջորդական իրադարձությունների միջև ընդմիջումները բավականաչափ մեծ են, որպեսզի միջանկյալ ժամանակահատվածում ամպլիտուդան նվազի մինչև աննշան մակարդակ:
258. Շինարարական տեխնիկական համարվում է «շարունակական թրթռումների» գեներատոր: Կառուցվածքային թերություններով շինությունների համար սահմանային արժեքներ են համարվում 1,25/2,5/5 մմ/վ մակարդակները:
259. Պայթուցիկները համարվում են «անցողիկ թրթռումների» գեներատոր: 2,5/5/10 մմ/վ մակարդակները համարվում են սահմանային արժեքներ կառուցվածքային թերություններով շինությունների համար:

**Աղյուսակ Զ-4. Անցողիկ և շարունակական թրթռման սահմանները՝ ըստ շինության տեսակի**

| Շինության տեսակը      | Անցողիկ թրթռումների սահմանային արժեքները |          |         | Շարունակական թրթռումների սահմանային արժեքները |          |         |
|-----------------------|--|----------|---------|---|----------|---------|
|                       | <10 Հց                                   | 10-50 Հց | > 50 Հց | <10 Հց  | 10-50 Հց | > 50 Հց |
| Բնակելի, լավ վիճակում | 5  | 10       | 20      | 2,5   | 5        | 10      |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|  |     |    |    |      |     |    |
|--|-----|----|----|------|-----|----|
| Բնակելի, զգալի կառուցվածքային թերություններով  | 2,5 | 5  | 10 | 1,25 | 2,5 | 5  |
| Արտադրական/առևտրային (թեթև և ճկուն կառույցներ) | 10  | 20 | 40 | 5    | 10  | 20 |
| Արտադրական/առևտրային (ծանր և ամուր կառույցներ) | 15  | 30 | 60 | 7,5  | 15  | 30 |

260. Ուսումնասիրության նպատակն էր որոշել տների հիմքերի վրա շինարարական աշխատանքների արդյունքում առաջացած թրթռումների հնարավոր մակարդակը և կանխատեսվող մակարդակները համեմատել սահմանային շեմային արժեքների հետ:

261. Կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.

- Առաջին հերթին կատարվել է որոշ շինարարական մեքենաների առաջացրած թրթռումների չափագրումներ՝ մեխանիկական էքսկավատոր, գլղոն, փոքր անվավոր բարձիչ, անվավոր բարձիչ: Պարզվել է, որ թրթռումների առավելագույն մակարդակ է առաջացնում գլղոնը: Գլղոնի կողմից գրունտին հաղորդվող էներգիան չափվել է և համեմատվել է գրականության արժեքների հետ:
- Երկրորդ՝ որոշվել են գրունտի և շենքերի արձագանքը թրթռումների նկատմամբ: Որոշվել է շինարարության տարածքի և տների հիմքերի միջև փոխանցման ֆունկցիան:
- Երրորդ՝ գնահատվել է թրթռումների մակարդակը՝ տարբեր շինարարական մեքենաների համար 1-ին և 2-րդ փուլերում կատարված չափագրումների արդյունքների համադրմամբ և արդյունքները համեմատվել են BS 5228-ով նախատեսված սահմանային արժեքների հետ: Գրունտի/շենքերի արձագանքները և գլղոնի թրթռումների բնութագրիչները համադրվել են՝ շինարարական աշխատանքների կանխատեսվող մակարդակները որոշելու համար:

262. Բացի գրունտի առանձնահատկություններից՝ գլղոնով առաջացած թրթռումների մակարդակները կախված են.

- ✓ Մեքենայի պարամետրերից (լայնություն, զանգված, թմբուկների քանակ),
- ✓ Տոփանման մեթոդից (թրթռացող կամ տատանողական, թրթռման ամպլիտուդ, արագություն):

263. Չափագրումների վիճակագրական վերլուծությունը և ռիսկայնության շրջանակները ամփոփ ներկայացված են թրթռումների զգայունության քարտեզում (տե՛ս Նկար Զ-1):

**Նկար Զ-1. Թրթռումների տարածման քարտեզ**





- ծրագրային տարածքի սահման, աշխատանքների իրականացման վայրից 0-ից 15մ հեռավորության վրա գտնվող շենքեր՝ զգալի անհանգստության զգացողության և աննշան ճաքերի առաջացման վտանգ,
- աշխատանքների իրականացման վայրից 15-ից 30 մ հեռավորության վրա գտնվող շենքեր՝ թեթև անհանգստության և աննշան ճաքերի առաջացման հավանական վտանգ,
- աշխատանքների իրականացման վայրից ավելի քան 30 մ հեռավորության վրա գտնվող շենքեր՝ անհարմարության զգացողության վտանգ:

264. Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ շինարարական աշխատանքներին հարակից շինություններին լուրջ կառուցվածքային վնասների վտանգը շատ ցածր է, շինություններից 15 մետր հեռավորության սահմաններում շինարարական աշխատանքներ իրականացնելիս հնարավոր է անհանգստություն պատճառելու և ճաքերի առաջացման վտանգ: Համաձայն «Բրիտանական ստանդարտների»՝ աննշան ճաքերի առաջացման ռիսկային շեմը 1,25/2,5/5 մմ/վ է «վնասվածքներ ունեցող» շինությունների և 2,5/5/10 մմ/վրկ լավ վերանորոգված շինությունների համար: Համաձայն արդյունքների՝ ինչպես լավ վերանորոգված, այնպես էլ արդեն իսկ վնասվածքներ ունեցող շինություններում թրթռումների կանխատեսվող մակարդակները ցածր են աննշան ճաքերի ռիսկային շեմից («Բրիտանական ստանդարտներ»): Այնուամենայնիվ, սպասվում է, որ թրթռումների մակարդակը կբարձրանա, քանի որ գրունտը տոփանվելու է: Այդ իսկ պատճառով, անվտանգությունից ելնելով՝ 0-15 մետր բուֆերը առաջարկվել է դիտարկել որպես թրթռումների ռիսկային հատված: Ապահովության համար հավաքակայանի ցանկապատից մինչև մոտակա բնակելի շենք 15մ շեմը ընդլայնվել է մինչև 18մ նվազագույն հեռավորություն:

265. Այն դեպքերում, երբ շինարարական աշխատանքներն իրականացվում են շենքերից 15-30 մետր հեռավորության վրա, առաջարկվում է աշխատանքային տեղամասում իրականացնել մշտադիտարկում: Անհրաժեշտության դեպքում ձեռնարկվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ (մեքենաների շահագործման ռեժիմի



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

հարմարեցում, հաղորդակցություն): Մեղմացնող միջոցառումները մանրամասն նկարագրված են Գլուխ Ը՝ Բնապահպանական կառավարման պլանում:

266. Ծրագրի և անմիջապես հարակից տարածքներում թրթռումները հնարավոր են շինարարության, բայց ոչ շահագործման փուլում: Ավտոբուսների հավաքակայանի շահագործման ընթացքում թրթռումների մակարդակի ոչ էական ավելացումը գնահատվում է միայն աղբյուրից մինչև 7մ հեռավորության վրա՝ անհարմարություն զգացողություն պատճառելու առումով: Շինարարության ընթացքում ազդեցության խստությունը գնահատվում է 21 (Բարձր), սակայն աղմուկի և թրթռումների ազդեցությունը՝ ըստ Աղյուսակ Զ-2-ի (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ը, Աղյուսակներ Ը-2 և Ը-3) գնահատվում է «ՄԻՋԻՆ», քանի որ այս ազդեցությունն ունի տեղային բնույթ և սահմանափակվում է ազդեցության հարաբերականորեն փոքր գոտիով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղային ազդեցությունը գնահատվել է «Բարձր» և ՇՄԱԳ փուլում աղմուկի և թրթռումների մոդելավորման ժամանակ այն հաստատվել է, ապա Բնապահպանական կառավարման պլանում նախատեսվում են արդյունավետ մեղմացնող միջոցառումներ, մասնավորապես՝ կառուցվելու են աղմկապաշտպան պատեր, իրականացվելու է շենքերի վիճակի նախաշինարարական ուսումնասիրություն, նախատեսված են նաև մեղմացնող միջոցառումներ շահագործման փուլի համար:

### *Թրթռումների ազդեցությունն առողջության վրա*

267. Թրթռումների հետ կապված առողջապահական ստանդարտներին Կապալառուի համապատասխանությունն ապահովելու համար ԲԿՊ-ում պլանավորված է թրթռումների գործիքային չափագրումների պահանջը՝ ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածի համար: Այս միջոցառումները իրականացվելու են Կապալառուի կողմից: Կապալառուն չափումներն իրականացնելու է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 21 օր առաջ: Կապալառուն պատասխանատու կլինի իրականացնելու գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, նաև ԱԵԱ-ներից բողոքներ ստանալու դեպքում) և արդյունքների ու դրանց վերլուծությունների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ՝ համեմատելով ազգային օրենսդրական կարգավորումների հետ.

- GOCT 31319-2006 (EH 14253:2003) Մեխանիկական թրթռում. Ընդհանուր թրթռման չափումները և մարդու առողջության վրա ազդեցության գնահատումը. Աշխատավայրերում չափումների իրականացման վերաբերյալ պահանջները,
- GOCT 12.1.012-90 Աշխատանքային անվտանգության ստանդարտների համակարգը, ընդհանուր պահանջները,
- GOCT 12.1.012-2004 Թրթռման անվտանգություն. Ընդհանուր պահանջներ. Սանիտարական նորմ №2-III-11.3 «Թրթռումը աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում»

268. Թրթռումը կդասակարգվի հետևյալ կերպ՝

- Տրանսպորտից առաջացող թրթռում (աստիճան 1)
- Տրանսպորտային-տեխնոլոգիական միջոցներից առաջացող թրթռում (աստիճան 2)
- Տեխնոլոգիական միջոցներից առաջացող թրթռում (աստիճան 3, տեսակ Ա)
- Տեխնոլոգիական միջոցներից առաջացող թրթռում (աստիճան 3, տեսակ Բ)
- Տեխնոլոգիական միջոցներից առաջացող թրթռում (աստիճան 3, տեսակ Գ)

269. Չափագրումները կիրականացվեն 3 ընտրված կետերում (վայրերը տե՛ս Նկար Ե-2-ում)՝ յուրաքանչյուրում առնվազն 3 անգամ, աշխատանքային ժամերի ընթացքում, և կորոշվի միջին

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

արժեքը: Չափիչ սարքը կտեղադրվի Մոնիթորինգի պլանում որոշված զգայուն ընկալիչների մոտ (բնակարաններից, ձեռնարկատիրական գործունեության օբյեկտից դուրս կամ ներս կամ այլն)՝ դրանց վրա ազդեցությունը որոշելու համար:

270. Գործիքային չափագրումներ կատարելու նպատակով ընտրված ենթակապալառու ընկերությունը ներկայացվում են հետևյալ պահանջները՝
- ✓ ենթակապալառու կազմակերպությունը կներկայացնի սարքավորումների տրամաշափերի և ստանդարտացման վկայագրեր,
  - ✓ նախքան կազմակերպությանը ընտրելը, կներկայացվի չափագրումների առաջարկվող մեթոդաբանությունը
  - ✓ պետք է օգտագործվի էլակետային տվյալների հետ համադրելի տեխնիկական բնութագրերով սարքավորում ըստ՝ արագացման (մ/վ<sup>2</sup>), արագության (մ/վ), տեղաշարժի (մմ) և ճշգրտության (նիշերի)

## *Ջրային մարմիններ և հիդրոերկրաբանություն*

### *Ոռոգման համակարգ*

271. Ծրագրի ազդեցության գոտին ձգվում է մինչև արհեստական ջրային մարմիններ՝ ոռոգման համակարգ, որը տվյալ դեպքում ներառում է բետոնե ջրանցքը և հողային ջրատարները:
272. Ջրային մարմինները կարող են ազդեցության ենթարկվել աղտոտման և նստվածքազոյացման առումով. շինարարության ընթացքում շինարարական տեղամասից անձրևաջրերի հոսքի հետևանքով: Գոյություն ունի նաև ջրառի վտանգ, որը սակայն քիչ հավանական է՝ ոռոգման ջրի ցածր որակի պատճառով և ԲԿՊ-ով նախատեսվող արգելվող միջոցառումների խստագույն վերահսկողությամբ պայմանավորված:
273. Ազդեցությունը հավանական է գլխավորապես շինարարության փուլում: Ջրանցքի մոտակայքում հողային աշխատանքների պատճառով հնարավոր է տեղի ունենա նստվածքազոյացում, ինչպես նաև հնարավոր է ջրի աղտոտում անձրևաջրերի հոսքի, կեղտաջրերի, կամրջի շինարարության ընթացքում բետոնաջրերի, հեղուկ և պինդ թափոնների արտանետման և այլնի պատճառով: Ջրանցքի հունի որևէ փոփոխություն կամ ջրի մակարդակի նվազեցում թի ենթադրվում: Առկա ջրային ռեսուրսները հավանական աղտոտումից և նստվածքազոյացումից զերծ պահելու նպատակով ԲԿՊ-ում նախատեսվում են հատուկ միջոցառումներ, որոնք հատկապես կարևորվելու են ոռոգման սեզոնին:

### *Հիդրոերկրաբանություն (ստորգետնյա ջրեր)*

274. Շինարարական աշխատանքների ընթացքում չի բացառվում վառելանյութի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) քսանյութերի և այլ հեղուկ նյութերի և թափոնների արտահոսք կամ հոսակորուստ ոչ պատշաճ կերպով պահեստավորված նյութերից, լիցքավորման ընթացքում կամ այլ պատճառներով ոչ սարքին սարքավորումներից և տեխնիկայից: Սակայն, դրանք չեն հանգեցնի ստորգետնյա ջրերի մեջ ներթափանցմանը և դրանց աղտոտմանը: Ըստ ինժեներաերկրաբանական հետազոտության՝ մինչև 10 մ խորությամբ հորատման աշխատանքների արդյունքում ստորգետնյա ջուր չի նկատվել: Ավտոբուսային հավաքակայանի շահագործման փուլում այդպիսի ազդեցության հավանականությունն էլ ավելի պակասելու է, քանի որ ամբողջ մակերեսը ասֆալտապատ է լինելու: Վառելիքի և այլ նյութերի ճիշտ պահեստավորման պարագայում աղտոտումը բացառվելու է: Ազդեցությունը քիչ հավանական է և գնահատվում է «Ոչ նշանակալի»:
275. Թեև ազդեցությունը հավանական չէ, այնուամենայնիվ, ԲԿՊ-ում շինարարության ընթացքում աղտոտումը նվազեցնելու համար մեղմացնող որոշ համապատասխան ընթացակարգեր են նախատեսվում (Գլուխ Ը, Հավելված Ժ):

*Բուսական և կենդանական աշխարհ*

276. Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության սահմանման համար, բույսերի և կենդանիների, այդ թվում՝ հազվագյուտ և անհետացող տեսակների և դրանց բնական միջավայրի, պոպուլյացիաների օգտագործումը, վերարտադրությունը, պաշտպանությունը, պահպանումը և կառավարումը կարգավորվում են «Բուսական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 23.11.1999թ.), «Կենդանական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 03.04.2000 թ.), Հայաստանի Կարմիր գրքով, ինչպես նաև Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր գրքով և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցուցակով, որտեղ նշված են այն բույսերն ու կենդանիները, որոնք գոյքալ ոչնչացման ավելի մեծ ռիսկի առջև են կանգնած և, հետևաբար, առանձնացված են որպես խիստ վտանգված կամ խոցելի տեսակներ:

277. Բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրությունն իրականացվել է 2021 թվականին «Բիո Գամա» ՄՊԸ-ի փորձագետների կողմից (տե՛ս ուսումնասիրության վերաբերյալ ամբողջական հաշվետվությունը ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2): Ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ Երևան քաղաքում գտնվող ուսումնասիրության ենթարկված տարածքը քաղաքային ձևափոխված տարածք է և հիմնականում մշակվում է տեղի բնակչության կողմից, ուստի այն չի կարող լուրջ էկոլոգիական վտանգ ներկայացնող տարածք համարվել: Նոր չմշակված հողեր Ծրագրում ընդգրկված չեն:

278. Բուսական աշխարհի ուսումնասիրության ազդեցության տեսակետից հետաքրքրական արդյունքները ամփոփ ներկայացված են ստորև՝

- ✓ Ծրագրի տարածքում չկան Հայաստանի Կարմիր գրքում, Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր գրքում և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցուցակում գրանցված տեսակներ,
- ✓ Ծրագրի տարածքում չկան հազվագյուտ էկոհամակարգեր,
- ✓ Հիշյալ տարածքում չկան Հայաստանի էնդեմիկ բույսեր,
- ✓ Տարածքում ուտելի, բուժիչ և այլ օգտակար բույսերը, համեմունքները, անասնակերը և՛ թվաքանակով, և՛ կենսազանգվածով բավական քիչ են և բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:

279. Նախագծի սկզբնական տարբերակում նախատեսվում էր, որ ծրագրային տարածքի ամբողջ բուսականությունը կտրվելու և հեռացվելու է: Սակայն, ազդեցության ենթակա անձանց հետ առաջին հանրային քննարկումներից հետո որոշում կայացվեց, որ հետագոտված տարածքի ծառերի, թփերի և այլ բուսականության որոշակի մաս՝ հատկապես 6-րդ փողոցում հավաքակայանի ցանկապատին կից գտնվող ծառերը կարող են պահպանվել: Այնուամենայնիվ, անմիջապես ծրագրային տարածքում գտնվող ծառերի և թփերի մյուս մասը կտրվելու և հեռացվելու է: Դրանք ներառում են այգիներում բնակչության կողմից աճեցրած պտղատու ծառերն ու թփերը, ինչպես նաև այգիներից դուրս աճող դեկորատիվ ծառերը: Ուսումնասիրված տարածքում բազմաթիվ կան ինչպես չորացած հասունացած, այնպես էլ նոր տնկված երիտասարդ ծառեր: Շինարարությանը խոչընդոտող կտրված ծառերի և թփերի ցանկը, ըստ տեսակների և բների տրամագծերի, ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2, Կենսաբազմազանության վերաբերյալ հաշվետվության Աղյուսակ 4 և Աղյուսակ 5-ում:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

280. Ըստ նախնական գնահատման՝ ավտոբուսային հավաքակայանի կառուցման նպատակով տարածքի մաքրման համար ընդհանուր առմամբ 554 ծառ և թուփ ենթակա է հեռացման, որից 516 միավորը տեղի բնակչության կողմից աճեցված են այգիներում (459 ծառ և 57 թուփ) և կարգավորվելու են ՀՕՏ-ով, իսկ 38 միավորը (36 ծառ և 2 թուփ) աճում են այգիներից դուրս, համարվում են համայնքային և կառավարվելու են Բուսական և կենդանական աշխարհի պլանով:
281. ԲԿՊ-ում հակակշռող և մեղմացնող միջոցառումներ են նախատեսվում հատման ենթակա ծառերի և այն ծառերի համար, որոնք շինարարության ընթացքում հատուկ պաշտպանության կարիք կունենան (տե՛ս Գլուխ Ը՝ Բուսական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլանը և ՀԱՎԵԼՎԱՏ Ժ՝ ԲԿՊ-ի Աղյուսակը): Ծառերի և այլ բուսականության պահպանության նպատակով ԲԿՊ-ում պլանավորվել են հնարավոր ազդեցություններն ընդունելի մակարդակների հասցնելուն ուղղված հատուկ մեղմացնող միջոցառումներ: Յուրաքանչյուր հատված ծառի կամ թփի դիմաց տնկվելու է 6 ծառ/ թուփ:
282. 6-րդ փողոցի բնակելի տարածքին կից ծառերը հնարավորինս պահպանելու վերաբերյալ ազդեցության ենթակա անձանց պահանջը բավարարելու համար ավտոբուսային հավաքակայանի ցանկապատը վերանախագծվել է: Ցանկապատը՝ մոտ 1–15 մ հետ տեղափոխելուց հետո, մեծաքանակ ծառեր, որոնք նախկինում պետք է կտրվեին, այժմ պահպանվելու են: Ծառերի պահպանության վերաբերյալ օրենսդրական պահանջները բավարարելու համար<sup>26</sup> նախքան շինարարական աշխատանքներն սկսելը կապալառուն պատասխանատվություն է կրում իրականացնել հատման ենթակա ծառերի/ թփերի վերահաշվարկ և ՇԲԿՊ-ի կազմում մշակել Ծառերի կառավարման պլան:
283. Կենդանական աշխարհի հետազոտության համաձայն՝ ցամաքային անողնաշարավորների մեջ չեն հայտնաբերվել Հայաստանի Կարմիր գրքում (2010) և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցանկում ներառված, ինչպես նաև պահպանության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող սակավաթիվ տեսակներ, ինչպիսիք են՝ Հայաստանի, Անդրկովկասի, Կովկասի էկոհամակարգի էնդեմիկ տեսակները, որոնք կարող են հատուկ պահպանության կարիք ունենալ: Ներկայիս բնական միջավայրն արդեն իսկ մեծապես փոփոխության է ենթարկվել, ուստի ավտոբուսային հավաքակայանի շինարարությունը դրանց քանակի և ապրելավայրերի էական ոչնչացման չի հանգեցնի:
284. Եզրակացվել է, որ ծրագրային տարածքում և անմիջական մոտակայքում խիստ վտանգված բույսերի կամ կենդանիների տեսակներ չկան, չկան խիստ կարևոր բնական միջավայրեր, որտեղ շինարարական աշխատանքներ չպետք է իրականացվեն:
285. Չնայած այն հանգամանքի, որ երեք տեսակի երկկենցաղներ և 7 տեսակի սողուններ ընդգրկված են ԲՊՄՄ Կարմիր ցուցակում՝ LC կարգավիճակով (քիչ վտանգված) և չնայած նրան, որ նրանց բնական միջավայրը գրեթե ամենուրեք փոփոխության է ենթարկվել, երկկենցաղների և սողունների մասին ելակետային տվյալները բավական կայուն են: Աշխատանքների առաջին փուլում՝ հողային աշխատանքների իրականացման ժամանակ, խորհուրդ է տրվում ներգրավել սողունների մասնագետ (հերպետոլոգ), ով աշխատանքների

<sup>26</sup> Երևան քաղաքի ավագանու No 405-Ն որոշումը և Երևան քաղաքի ավագանու No 337-Ն որոշումը «Երևան քաղաքի ավագանու No 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (12.02.2021 թ.).

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

ընթացքում կհավաքի հանդիպած սողուններին: Այսպես կարելի է ապահովել և՛ սողունների տեսակների պահպանումը, և՛ անձնակազմի անվտանգությունը:

286. Թվարկված թռչունների ոչ մի տեսակ գրանցված չէ Հայաստանի Կարմիր գրքում: Բոլոր տեսակները կարող են համարվել որպես սինանթրոպիկ և բավականին հեշտությամբ քաղաքային և մերձքաղաքային միջավայրին հարմարվող: Հիմնական առաջարկությունն այստեղ թռչունների բնադրման սեզոնը հարգելն է: Շինարարական աշխատանքների սկիզբը կարող է առաջացնել անհանգստություն և սթրես, այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում աշխատանքները չսկսել ապրիլից հունիս ընկած ժամանակահատվածում:

287. Հանդիպած և գրականությունից և տեղամասի նախկին ուսումնասիրություններից հայտնի գրեթե բոլոր հետազոտված կաթնասունները բնորոշ են տարածաշրջանին: Նրանց թիվը և բնական միջավայրը վտանգված չէ: Ի լրումն, կրծողներից և միջատակերներից շատերը սինանթրոպիկ են, հեշտությամբ բազմանում են շրջակա միջավայր նետված թափոնների և աղբի մեջ: Հետազոտված կաթնասունների մեջ չկան ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ: Միայն *Microtus levis* (հարավային դաշտամկան) մեկ տեսակ համարվում է «Հազվագյուտ»: Շինարարական աշխատանքների ընթացքում կարող են քանդվել կրծողների բները, անհրաժեշտ է իրականացնել մեղմացնող միջոցառումներ շինարարական աշխատանքների ընթացքում կենդանիների առկայությունը վերահսկելու և վերջիններիս ավելի անվտանգ միջավայր տեղափոխելու համար:

288. Կենսաբազմազանության հետազոտության արդյունքների ամփոփումը, հնարավոր ազդեցությունները և փորձագետների առաջարկությունները ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2՝ ԱՍՓՈՓՈՒՄ աղյուսակում: Ծրագրի համար իրականացված կենսաբազմազանության բոլոր հետազոտությունների եզրակացություններն անհապաղ գրանցվել են ծրագրի ընդգրկման տարածքը սահմանող հաշվետվության մեջ: Հիմք ընդունելով կենսաբազմազանության հետազոտությունը՝ կարելի է եզրակացնել, որ ավտոբուսային հավաքակայանի շինարարությունը էականորեն չի ձևափոխի և չի հանգեցնի խիստ կարևոր էկոհամակարգերի ոչնչացմանը, վտանգված կամ հազվագյուտ տեսակների անհետացմանը: Բայց և այնպես, ծրագրի իրականացման ընթացքում կենսաբազմազանությունը, այնուամենայնիվ, կարող է կրել որոշակի բացասական ազդեցություններ՝

- ✓ բնահողի հանույթի, տոփանման և տեղափոխման աշխատանքների հետևանքով բնական միջավայրին պատճառված որոշակի անհանգստություն կամ մասնատում,
- ✓ բուսականության, նորմալ սննդային շղթայի ոչնչացման պատճառով ծառերի և թփերի, ինչպես նաև կենդանիների կորուստ,
- ✓ անհանգստության պատճառում, օրինակ՝ աղմուկի մակարդակի ավելացման հետևանքով տեսակների միգրացիա,
- ✓ շինարարական աղմուկի, երթևեկության կամ մարդկանց ինտենսիվ ներկայության արդյունքում պատճառված անհանգստություն:

289. Կենսաբազմազանության վերաբերյալ հաշվետվությունը առաջարկություններ է տրամադրում այն մասին, թե ինչպես խուսափել և նվազագույնի հասցնել բուսական և կենդանական աշխարհին պատճառվող անհանգստությունը:

290. Հաշվետվությունն իր մեջ ներառում է հրահանգներ, որոնք կարող են օգտագործվել շինարարների կողմից: Դրանք վերաբերվում են հատկապես զգայուն

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

հատվածներին և դրանց առանձնահատկություններին, նշվում են այն գործողությունները, որոնցից պետք է խուսափել, ինչպես նաև որոշ միջոցառումներ աշխատանքային հրապարակից դուրս գտնվող տարածքների համար: Մասնավորապես, նշվում է, որ, հետագուոված տարածքում առկա է մեծ քանակությամբ թափոն և աղբ, ուստի այն արդեն բավականին աղտոտված է կենցաղային և շինարարական աղբով: Ավտոբուսային հավաքակայանի շինարարության ընթացքում այս տարածքի էլ ավելի անվերահսկելի աղտոտումը կարող է հանգեցնել տեղի էկոհամակարգերի վրա եղած ազդեցությունների մեծացմանը: Այսպիսով, տարածքի հետագա աղտոտման առավելագույն վերահսկողությունը, անհիմն ծառահատումներից և բուսականության մաքրումից խուսափելը, ինչպես նաև բնական միջավայրի առավելագույն պահպանումը խիստ ցանկալի է: Բացի այդ, ազդեցությունը մեղմելու համար խորհուրդ է տրվում մերձակայքում տնկել ծառեր և թփեր՝ դրանով իսկ ստեղծելով կանաչ բուֆերային գոտի ցամաքային անողնաշարավոր կենդանիների համար: Այս առաջարկությունները հաշվի են առնվել մեղմացնող միջոցառումների պլանավորման ընթացքում:

291. Հողային աշխատանքների իրականացման ընթացքում Կապալառուն կներգրավի կենսաբազմազանության գծով մասնագետի՝ մտահոգության տեղիք տվող տարածքների և բնական միջավայրերի մասին խորհրդատվություն ստանալու նպատակով:
292. Եթե շինարարական աշխատանքների տարածքին մոտ հայտնաբերվում են պահպանության տեսանկյունից զգալուն տեսակներ կամ նրանց գտնվելու վայրի մասին նշաններ և, եթե շինարարությունը կարող է իրենց կյանքի էական շրջափուլում անհանգստություն պատճառել, ապա Խորհրդատուն կմշակի և շինարարներին կներկայացնի ուղեցույցներ մտահոգիչ տարածքների միջև անհրաժեշտ նվազագույն հեռավորության մասին, ինչպես նաև շինարարական աշխատանքների ճիշտ ժամանակացույցի մասին:
293. Բուսական և կենդանական աշխարհի պահպանության մասին բոլոր առաջարկությունները հաշվի են առնվել և ներառվել Գլուխ Ը՝ Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլանում և Հավելված Ժ՝ ԲԿՊ-ի Աղյուսակում: Կենսաբազմազանության պահպանության նպատակով ԲԿՊ-ում պլանավորվել են հնարավոր ազդեցությունները ընդունելի մակարդակների հասցնելուն ուղղված հատուկ մեղմացնող միջոցառումներ:

### *Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ*

294. Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Նախատեսվող գործունեությունը չի իրականացվելու ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում, ինչպես նաև Ծրագրի անմիջական տարածքում՝ ՀՀ Կառավարության 2008 թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշմամբ հաստատված բնության հուշարձանները բացակայում են:
295. Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքը՝ 7 կմ-ից ավելին Արարատի մարզի Արագածի գյուղի մոտ գտնվող Որդան Կարմիր արգելավայրն է:
296. ՀՀ Կառավարության 2008 թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկից առավել հավանական կարող են համարվել Հրազդանի կիրճի ձախափնյա մասում գտնվող

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

«Անանուն» սյունաձև բազալտներ երկրաբանական հուշարձանները, որոնք գտնվում են շիրանարական աշխատանքների հրապարակից և տրանսպորտային ուղիներից առնվազն համապատասխանաբար 5.8 և 6,3 կմ հեռավորության վրա:

### *Գրունտներ և բուսահող*

297. Նախատեսվող գործունեությունը քաղաքաշինության արդյունքում առայժմ չվերափոխված նոր հողատարածքներ չի ներգրավելու: Թեև, ըստ նշանակության, ծրագրի հողերը դասակարգվում են որպես «բնակելի», սակայն տարածքի կեսից ավելին մշակվում է տեղի բնակչության կողմից որպես պտղատու այգիներ: Սա առաջ է բերում բուսահողի գրունտի վերին, հումուսով հարուստ շերտի հանման և պահեստավորման հարցը՝ վերջինիս պահպանության նպատակով: Հնարավոր բուսահողի ծավալը գնահատվում է մոտավոր 24875 մ3, որը պահպանվելու է ծրագրային տարածքի շրջանակներում հատկացված կամ տեղական իշխանությունների հետ համաձայնեցված տարածքներում: Պահպանված բուսահողի մի մասը կօգտագործվի կանաչապատման նպատակով, մնացած մասը կհանձնվի Երևանի քաղաքապետարանին:
298. Պլանավորվում է իրականացնել ընդհանուր 193700 մ3 հանույթ, որը զգալի է և շինարարության ընթացքում կարող է հանգեցնել որոշակի էրոզիայի և նստվածքազոյացման հետ կապված խնդիրների: Կապալառուն Ինժեների հաստատմանն է ներկայացնում տարատեսակ հողային աշխատանքների համար շինարարության մանրամասն մեթոդաբանություն, որտեղ հատուկ ուշադրություն պետք է դարձվի ուղղահայաց պլանավորմանը՝ տրամադրելով անվտանգության և ջրահեռացման համապատասխան լուծումներ:
299. Շինարարության փուլում հողի՝ վառելանյութով, յուղով (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն), քսանյութերով և այլ հեղուկ նյութերով ու թափոններով աղտոտման վտանգ կա: Այնուամենայնիվ, ազդեցության չափը և խստությունը բարձր չի լինի: Ինչպես նաև ծրագրի իրականացման տարածքում չկան օդն աղտոտող սարքավորումներ: ԲԿՊ-ում ներառված միջին մասշտաբի շինարարական ծրագրերին հատուկ կանոնավոր մեղմացնող միջոցառումները համարվում են բավարար, որոնցում հատուկ ուշադրություն է դարձվել վառելանյութի, յուղի, քսանյութերի և այլ հեղուկ նյութերի ու թափոնների տեղափոխմանը, պահեստավորմանը և տեղավորմանը, ինչպես նաև աղտոտված գրունտի անվտանգ տեղավորմանն ուղղված մեղմացնող միջոցառումներին:
300. Ներկայումս անմիջապես ծրագրային տարածքի մոտակայքում մեծ քանակությամբ բուսահող է պահպանվում: Նշված բուսահողը պատկանում է մասնավոր անձի: ԲԿՊ-ով նախատեսվում են կանխարգելիչ գործողություններ՝ նյութը չվնասելու կամ ինչ-որ կերպ դրա կորստին չնպաստելու նպատակով:
301. Կանաչապատման տարածքներն ըստ նախագծի կազմվելու են 10540մ2, որի համար պահանջվելու է ընդհանուր առմամբ 1212,4 մ3 բուսահող, ինչը նշված է նաև Կանաչապատման ամփոփագրում: Բուսահողաշերտի պահանջվող քանակը կբավարարվի ծրագրի աշխատանքների ընթացքում առաջացած և պահպանված հողի բերրի շերտով: Բուսահողի լրացուցիչ քանակ չի պահանջվի, այնուամենայնիվ, անհրաժեշտության դեպքում, կլրացվի

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

պայմանագրային հիմունքներով մատակարարից գնման միջոցով օրենքով սահմանված կարգով:

*Բնական և նյութերի ստացման աղբյուրներ (ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարում, հանքեր/բացահանքեր)*

302. Ըստ նախագծի՝ անհրաժեշտ է 61 415 մ<sup>3</sup> խիճ և 100501 մ<sup>3</sup> կոպճավազային խառնուրդ: Լիցքի համար անհրաժեշտ քարերը, կոպիճը, ավազը և այլ նյութեր (լիցքի աշխատանքների ընդհանուր ծավալը գնահատվում է 276375.7 մ3), ինչպես նաև ասֆալտը և բետոնը գնվելու են գրանցված հանքերից և գործարաններից:
303. Լիցքի համար շրջակա միջավայրից, օրինակ՝ մոտակա գյուղատնտեսական վայրերից որևէ տեսակի հանույթ չի նախատեսվում, բայց և այնպես, նմանատիպ գործողությունների ռիսկը գնահատվել է, և այդ նպատակով պլանավորվել են մեղմացնող միջոցառումներ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում: Անհրաժեշտության դեպքում, Կապալուն հետևելու է ՀՀ Կառավարության թիվ N 572-Ն «Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» որոշման և ոլորտը կարգավորող այլ օրենսդրական պահանջներին:
304. Տեխնոլոգիական նպատակներով ջրամատակարարումը և՛ ավտոբուսների հավաքակայանատեղիի շինարարության, և՛ շահագործման ընթացքում իրականացվելու է համապատասխան մարմնի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով: Գոյություն ունեցող հզորություններին/միջոցներին միացման տեխնոլոգիական հնարավորությունները ուսումնասիրվում են նախագծման փուլում և ձեռք է բերվել նախնական հաստատում (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ե. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ Ե-5 և Ե-6):
305. Տեխնոլոգիական նպատակներով էլեկտրաէներգիայի մատակարարումը և՛ ավտոբուսների հավաքակայանատեղիի շինարարության, և՛ շահագործման ընթացքում իրականացվելու է համապատասխան մարմնի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով:
306. Գործնական նպատակներով բնական գազի մատակարարումը իրականացվելու է համապատասխան մարմնի՝ «Գազպրոմ Արմենիա» ՍՊԸ-ի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով:

*Թափոնների գոյացում*

307. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններից է թափոնների առաջացումը, որը, պատշաճ կերպով չկառավարվելու դեպքում, դառնում է աղտոտման և լանդշաֆտի գեղագիտական տեսքի վատթարացման աղբյուր: Սույն հաշվետվությունը դիտարկում է թափոնների երկու հիմնական խումբ՝ շինարարության ընթացքում առաջացած թափոններ (ժամանակավոր ազդեցություն) և ավտոբուսային հավաքակայանի հետագա շահագործման ընթացքում առաջացող թափոններ (մշտական ազդեցություն) (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1.Մեղմացնող միջոցառումներ): Այս խմբերից յուրաքանչյուրն իր հերթին դիտարկվում է՝ ըստ թափոնների տեսակի (պինդ և հեղուկ) և վտանգի աստիճանի (վտանգավոր/ ոչ վտանգավոր):



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

308. Շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող թափոնները բաժանվում են երկու խմբի՝

Անվտանգ թափոններ

- ✓ Թափոններ, որոնք առաջացել են շենքերի, շինությունների քանդման աշխատանքների ընթացքում և շինարարության հետ կապված այլ թափոնների,
- ✓ Ոչ պիտանի հանույթ, որն առաջացել է հողային աշխատանքների արդյունքում, օրինակ՝ հող, ավազ, ապարներ և քարեր,
- ✓ Շինարարության հետ կապված կոշտ թափոններ՝ մետաղի, փայտի, պլաստմասայի մասերի, դատարկ պարկերի, տարաների (և այլն) և աղբի (կեղտ) տեսքով:

Վտանգավոր թափոններ

- ✓ Վտանգավոր հեղուկ նյութեր և դրանց թափոններ՝ ներառյալ վառելանյութ, յուղ, քսանյութեր, բետոնաջուր
- ✓ Ասբեստ պարունակող թափոններ, որոնք կարող են առաջանալ հին բնակելի տների տանիքների քանդման ընթացքում.

309. Թափոնների տեսակները և դրանց կառավարման եղանակները մանրամասն նկարագրված են Գլուխ Ը-ում՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ: Մեղմացնող առաջարկվող միջոցառումները թվարկված են ԲԿՊ-ում (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Բնապահպանական կառավարման պլան. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-2.Մեղմացնող միջոցառումներ)

*Սոցիալական համակարգեր*

310. Սոցիալական համակարգերի վրա ազդեցությունները համարվում է ծրագրի ամենագլխառից բաղադրիչը: Դրանք ներառում են շինարարական աշխատանքների, իսկ հետագայում կառուցված ավտոբուսային հավաքակայանի շահագործման արդյունքում՝ համայնքին, տեղի բնակիչներին, ձեռնարկություններին և այլ ազդակիրներին պատճառած անհարմարությունը և/կամ անհանգստությունը:

311. Ազդակիրների սեփականությանը պատճառված մշտական ազդեցության անդրադարձ է կատարվել ՀՕՏՕ-ում: Նախքան շինարարության մեկնարկը, ծրագրային տարածքի օտարման գոտու բնակիչները կվերաբնակեցվեն, և շենքերը կքանդվեն: Վերաբնակեցումը կիրականացվի ՀՕՏԵ-ի և ՀՕՏՕ -ի համաձայն: Սեփականության վրա ամբողջական ազդեցությունը գնահատվել է և սոցիալական վերլուծությունը ներկայացվել է առանձին հաշվետվությամբ:

312. Մարդկանց կենսակերպի վրա ազդեցությունները համարժեք գնահատելու համար ծրագրի տարածքում կամ անմիջապես դրան հարակից տարածքում հայտնաբերված և ազդակիրների թերթիկում ներկայացված զգայուն արժեքավոր ընկալիչները տեղ են գտել ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ում: Տեղի բնակչությանը և այլոց պատճառվող բացասական ազդեցություններից խուսափելուն, կանխելուն և/կամ դրանք մեղմելուն ուղղված միջոցառումները և դրանց պատասխանատուները ինչպես հավաքակայանի շինարարության, այնպես էլ դրա ավարտից հետո, ներկայացված են ԲԿՊ-ում (Գլուխ Ը՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ և ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ):

313. Արտակարգ իրավիճակները, ներառյալ հիվանդությունների վերահսկողությունը, ինչպիսին է COVID-19-ը, կառավարելի են: ԲԿՊ-ում նշված են նաև Ծրագրի բոլոր կողմերի՝ ԾԻԳ-ի, Վերահսկողության Խորհրդատուի և Կապալառուի դերերը COVID-19 համաճարակի պայմաններում, որոնք պատասխանատվություն են կրում ԱԱԿՊ-ի, այդ թվում COVID -19- ի

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

կանխարգելման, վերահսկման և մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացման համար:

314. Դերերն ու պարտականությունները բաշխվում են հետևյալ կերպ՝

**Կապալառու**

- ✓ Ներառել ՇԲԿՊ-ում COVID-19-ի կանխարգելմանը, վերահսկմանը և մեղմացնողն ուղղված մանրամասն ԱԱԿՊ,
- ✓ Ապահովել, որպեսզի ԱԱԿՊ-ը պարբերաբար թարմացվի՝ հիմնվելով երկրի առողջապահության ոլորտը կարգավորող գործակալությունների և ԱՀԿ առողջության վերաբերյալ խորհրդատվություններ վրա,
- ✓ Իրականացնել ԱԱԿՊ-ում նախատեսված COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող միջոցառումներ,
- ✓ Տրամադրել աշխատակիցներին նախաաշխատանքային կողմնորոշում և կանոնավոր դասընթացներ COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող, ինչպես նաև ԱՊՄ-ների ճիշտ օգտագործման վերաբերյալ,
- ✓ Տրամադրել բոլոր աշխատողներին համապատասխան ԱՊՄ-ներ և ապահովել, որպեսզի յուրաքանչյուր հերթափոխի համար առկա լինի բավարար մատակարարում կամ ինչպես նշված է առողջության վերաբերյալ խորհրդատվություններում,
- ✓ Ստանձնել COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող միջոցառումների հետ կապված բոլոր ծախսերը, աշխատակիցներից որևէ գումար չպետք է գանձվի,
- ✓ Աշխատակիցներին բժշկական օգնություն ցուցաբերել աշխատանքային տեղամասում COVID-19-ի ցանկացած դեպք արձանագրելիս,
- ✓ Տրամադրել COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող վերաբերյալ պաստառներ և այլ նյութեր՝ աշխատակիցներին հասկանալի լեզվով և ձևաչափով,
- ✓ Աշխատանքային ճամբարներում ապահովել աաշխատողների միջև նվազագույնը 1 մետր հեռավորություն,
- ✓ Դադարեցնել գործունեությունը, եթե աշխատանքային տեղամասերը և/կամ հարակից տարածքները բարձր ռիսկերի են ենթարկվում COVID-19-ի պատճառով,
- ✓ Համապատասխանել աշխատակիցների բարեկեցությանը և աշխատանքային առողջությանն ու անվտանգությանը վերաբերող բոլոր ազգային և տեղական պահանջներին,
- ✓ Համակարգել ԾԻԳ/Խորհրդատուի հետ փաստաթղթերին, մոնիթորինգին և հաշվետվությանն առնչվող պահանջները, ներառել ձևանմուշները ՇԲԿՊ-ում,
- ✓ Թարմացնել արտակարգ իրավիճակների պլանը տեղական առողջապահական հաստատությունների կամ բժշկական անձնակազմի ցանկով, որոնք հասանելի են՝ տեղում կամ համայնքում COVID-19-ի հնարավոր դեպքերն ընդունելու համար,
- ✓ Պատրաստել երկշաբաթյա մոնիթորինգային հաշվետվություն COVID-19-ի վերաբերյալ և ներկայացնել ԾԻԳ-ին:

**ԵՔՄԻԳ**

- ✓ Վերանայել կապալառուների նոր/թարմացված/վերանայված ԱԱԿՊ-ը և բացթողումներ հայտնաբերելու դեպքում՝ հիմնվելով առողջապահական ոլորտը կարգավորող

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

գործակալությունների և ԱՀԿ կողմից տրված առողջապահական խորհրդատվությունների վրա, աջակցել կապալառուներին բացթողումները վերացնելու գործընթացում,

- ✓ Վերահսկել կապալառուների ԱԱԿՊ-ի ամենօրյա իրականացումը, մոնիթորինգը և հաշվետվությունը,
- ✓ Ստուգել աշխատանքային շինարարական տեղամասերը՝ կապալառուների պատրաստակամությունն ու COVID-19 կանխարգելման, վերահսկման և մեղմացնող միջոցառումների համապատասխան իրականացումը ապահովելու համար,
- ✓ Վերահսկել կապալառուների ԱԱԿՊ-ի իրականացումը,
- ✓ Համագործակցել տեղական առողջապահական մարմինների և բժշկական հաստատությունների հետ՝ շտապ օգնության դեպքերի և բուժման անհրաժեշտության համար,
- ✓ Վերահսկել բողոքների լուծման մեխանիզմի (ԲԼՄ) միջոցով բարձրացված բողոքները կամ առաջարկությունները,
- ✓ Տրամադրել հասանելի տեղական առողջապահական հաստատությունների կամ բժշկական անձնակազմի ցանկը՝ COVID-19-ի հավանական դեպքերը աշխատանքային տեղամասում կամ համայնքում հաստատելու համար,
- ✓ Վերանայել կապալառուների կողմից ներկայացվող COVID-19-ի վերաբերյալ երկշաբաթյա մոնիթորինգային հաշվետվությունները և ամսական կտրվածքով ներկայացնել ԾԻԳ:

***Վերահսկողության խորհրդատու***

- ✓ Աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ կապալառուներին COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող վերաբերյալ անվտանգության հրահանգներ և ուղեցույցներ տրվելիս,
- ✓ Աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ աշխատանքային տեղամասի ռիսկերի գնահատում, ստուգումներ, քննարկումներ և պլանավորում իրականացնելիս,
- ✓ Աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ կապալառուների ՇԲԿՊ-ը ներառյալ ԱԱԿՊ-ը վերանայելիս,
- ✓ Աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ COVID-19-ի վերաբերյալ մոնիթորինգային հաշվետվությունները վերանայելիս, և
- ✓ Վերլուծել կապալառուների կողմից ներկայացված հաշվետվությունները և աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ բնապահպանական մոնիթորինգային կիսամյակային և կանոնավոր հաշվետվությունները (ԲՄՀ) նախապատրաստելիս:

315. Որոշ սոցիալ-տնտեսական խնդիրներ բարձրացվել են ազդեցության ենթակա անձանց կողմից 1-ին հանրային լսումների ժամանակ, սակայն դրանք չէին վերաբերում շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած ազդեցություններին: Մարդկանց մտահոգությունները հիմնականում կապված էին ծրագրի հետևանքով առաջացած մշտական բացասական ազդեցությունների հետ: Այս հարցերը քննարկվում են Հավելված Թ. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ -2-ում:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

*Հաղորդողիների վրա ազդեցությունը*

316. Հաղորդողիների վրա ազդեցությունը գնահատվում է գոյություն ունեցող համակարգերի լրացուցիչ ծանրաբեռնվածության և վնասման տեսանկյունից: Պատճառվող վնասի ռիսկը հնարավոր է շինարարության ժամանակահատվածում և գործնականում զրոյական է շահագործման փուլում, մինչդեռ հաղորդողիների վրա հիմնական ծանրաբեռնվածությունը բնորոշ է ավտոբուսային հավաքակայանի շահագործման փուլին և աննշան է շինարարական աշխատանքների ժամանակահատվածում: Հաղորդողիների զգայուն ընկալիչները և ազդեցությունները որոշված և ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ում՝ Շիրակի ավտոբուսային հավաքակայանի ծրագծի թերթիկում:

317. Հնարավոր վիարներից խուսափելու համար նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող վերգետնյա հաղորդողիների տեղափոխություն: Դա վերաբերվում է գազամատակարարման խողովակաշարին, էլեկտրալարերին, հեռահաղորդակցության մալուխներին, ինչպես նաև հողային ռոտզման ջրատարերին: Մյուս կողմից, ստորգետնյա հաղորդողիների հետազոտություն չի իրականացվել, և շինարարության ընթացքում դրանց վթարի, աշխատանքի խափանման և պատճառված վնասների որոշակի ռիսկն առկա է, թեպետ նախագծողները այսօրինակ ազդեցության հավանականությունը ցածր են գնահատում: Մրցույթն հաղթող կապալառուից պահանջվում է նախքան աշխատանքները մեկնարկելը իրականացնել հաղորդողիների հետազոտություն և կառավարել հաղորդողիների տեղափոխումը՝ պահպանելով հաղորդողիների տեղափոխման ենթապլանով նախատեսված մեղմացնող միջոցառումները: Մասնավորապես, հաղորդողիների ծառայությունը դադարեցնելուց առաջ, ազդակիր անձինք պետք է նախապես ծանուցվեն: Պատահարի դեպքում կապալառու կազմակերպությունը պարտավորվում է արագ վերացնել խափանումը և վերականգնել ծառայությունների մատուցումը, այնպես որ խափանումները կլինեն կարճաժամկետ և տեղայնացված, հաշվի կառնվեն օրվա ժամը և սեզոնային ժամանակը:

318. Անմիջապես ծրագրային տարածքի հատվածում տեղակայված հաղորդողիներին պատճառված վնասի հետևանքով առաջացած ազդեցությունը կարող է տարածվել ծրագրի իրականացման տարածքից դուրս: Օրինակ՝ ջրատար խողովակներին կամ ռոտզման առուներին հասցված վնասը կխաթարի շրջակայքում ապրող բնակչությանը մատուցվող համապատասխան ծառայությունների իրականացումը: Աշխատանքների արդյունքում առաջացած ցանկացած ազդեցություն ամբողջությամբ վերացվելու է Կապալառուի կողմից՝ վնասված հաղորդողիների տեղափոխմամբ, նորոգմամբ կամ փոխարինմամբ:

319. Տեղի ջրային համակարգերին միանալու տեխնիկական պայման ստանալու նպատակով Խորհրդատուն դիմել է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը: Համապատասխան տեխնիկական պայմանը տրամադրվել է (ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-5 և Ե-6)։

*Երթևեկություն և տրանսպորտ*

320. Արշակունյաց պողոտայի և Շիրակի փողոցների ճանապարհային երթևեկությունը, ինչպես նաև հարակից տեղական ճանապարհային ցանցի երթևեկությունը կմեծանա՝ շինարարության ընթացքում բեռնատարների ու այլ մեքենաների դեպի շինհրապարակ և այնտեղից դուրս երթևեկի պատճառով: Գոյություն ունեցող ճանապարհների ու հետիոտնային անցումների որևէ երկարաժամկետ զբաղեցում և/կամ արգելափակում չի ենթադրվում:

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Այնուամենայնիվ, հասարակական տրանսպորտի և հետիոտների անվտանգությունը որոշ չափով կարող է վտանգվել, ինչպես նաև մուտքերը դեպի բնակելի տներ, ձեռնարկություններ և դպրոցներ կարող են փակվել և դժվարանցանելի դառնալ:

321. Շինարարության ընթացքում հանրության անվտանգության ապահովման, խցանումների և քաղաքի երթևեկությանը պատճառվող այլ անհանգստությունների նվազեցմանն ուղղված ամենօրյա մեղմացնող միջոցառումները նկարագրված են ԲԿՊ-ում, նախ և առաջ՝ Երթևեկության կառավարման պլանում:
322. Հետշինարարական շահագործման փուլում վերոնշյալ փողոցները կենթարկվեն ծրագրի շահագործման ազդեցությանը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 400 ավտոբուսներ կկայանվեն ավտոբուսների հավաքակայանում: Այս ազդեցությունը քննարկվում է ստորև:

### *Լանդշաֆտների գեղագիտական գրավչություն*

323. Շինարարական տարածքի մաքրումը ծառերից, ժամանակավոր ցանկապատումը, ճամբարների և շարժական տնակների հիմնումը, շինարարական մեքենաների կայանումը և շինանյութի և թափոնների կուտակումը լանդշաֆտի գեղագիտական տեսքի ձևափոխություն կառաջացնեն: Սակայն այս ազդեցությունը լինելու է ժամանակավոր և տևելու է մինչև աշխատանքների ավարտը: Շինարարության փուլում ազդեցության մեղմացումն ապահովվելու է Թափոնների և նյութերի կառավարման և Շրջակա միջավայրի պահպանության պլաններով, իսկ ծրագրի տարածքից դուրս գտնվող տարածքն օգտագործելու դեպքում՝ Աշխատանքային տեղամասի կառավարման պլանով: Շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ Կանաչապատման նախագծի (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ծ) և Տեղամասի վերականգնման պլանի համաձայն՝ կիրականացվի տեղամասի և գեղագիտական տեսքի վերականգնում:

### *Հնագիտական և մշակութային ժառանգություն/Ֆիզիկական և մշակութային ռեսուրսներ*

324. Ազդեցությունը հնագիտական հուշարձանների և պատմամշակութային արժեքների վրա հավանական չէ, քանի որ հնագետի խորհրդատվության համաձայն՝ նախատեսվող ծրագրի տարածքում Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված հնագիտական վայրեր չկան (տես ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3): Առավել մոտ գտնվող հնագիտական հուշարձանը՝ Կարմիր Բլուր համալիրն է, որի հեռավորությունը նախատեսվող գործունեության տարածքից կազմում է մոտ 800մ: What is the base grounds for the use of the second one?
325. Այնուամենայնիվ, ԲԿՊ-ի Մշակութային ժառանգության կառավարման ենթապլանով նախատեսվում են մեղմացնող միջոցառումների իրականացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով շինարարական աշխատանքների ընթացքում պատահական հնագիտական գտածոների հայտնաբերման մասին ՀՀ օրենսդրական պահանջների բավարարմանը:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

## Զ 2-2 Ավտոբուսային հավաքակայանի շահագործման հետևանքով առաջացած ազդեցությունը

### *Մթնոլորտային օդի որակ*

326. Ենթադրվել է, որ ավտոբուսային հավաքակայանի շահագործման փուլում հնարավոր է մթնոլորտային օդի վրա ազդեցություն՝ ավտոբուսային շարժակազմի կողմից արտանետվող գազերի տեսքով՝ CO, SO<sub>2</sub>, NO<sub>2</sub> փոշի: Հավաքակայանի շահագործման փուլում այսօրինակ ազդեցության մեծությունը որոշելու համար իրականացվել է մթնոլորտային օդի որակի հետազոտություն, այդ թվում՝ օդի որակի մոդելավորում և գնահատվել է նախատեսվող ավտոբուսային հավաքակայանի շահագործման ազդեցությունը օդի որակի վրա:
327. Գնահատումն իրականացվել է օդի որակի վերաբերյալ ՄՖԿ-ի և ԱՀԿ-ի ուղեցույցների համաձայն և հիմնված է 2021 թվականի հունվարին տեղամասային այցելության ընթացքում հավաքագրված էլակետային տվյալների վրա: Օդի որակի և աղտոտման կանխատեսումները հիմնված են աղտոտիչների արտանետումների գնահատման և մթնոլորտում ցրման մոդելի վրա: Արդյունքները ներկայացված են «Երևանում՝ Արշակունյաց պողոտայի հարևանությամբ նախատեսվող ԲՄԳ ավտոբուսային հավաքակայանի ծրագրի՝ օդի որակի վրա ունեցած ազդեցության գնահատումը» հաշվետվության մեջ, որը կներկայացվի ՇՄԱՓ հիմնական փուլում:
328. Օդի որակի վրա ծրագրի ազդեցության գնահատումը կատարվել է հետևյալ փուլերով՝
- Ավտոբուսային հավաքակայանով պայմանավորված արտանետումների՝ մթնոլորտային օդում ցրման մոդելավորում,
  - Ուսումնասիրվող տարածքի օդի աղտոտիչների մակարդակի համեմատությունը օդի որակի գործող չափանիշների հետ:
329. Կիրառվել է ADMS 5-ը ցրման առաջադեմ մոդելը, որը լայնորեն օգտագործվում է արդեն գործող և նախատեսվող արդյունաբերական ձեռնարկությունների օդի որակի վրա ազդեցությունը մոդելավորելու համար: Վերջինս, ի թիվս իր բազմաթիվ առանձնահատկությունների, հաշվի է առնում շենքերի, բարդ տեղանքների, մակերեսային անհարթության տատանումների ազդեցությունը, չոր և թաց նստվածքները, NO<sub>x</sub> քիմիական սխեմաները, կարճաժամկետ արտանետումներ (փչումներ); կարճ ժամանակահատվածում կոնցենտրացիաների տատանումների հաշվարկ, հոտեր և խտացած ծխի տեսանելիություն. ռադիոակտիվ քայքայումը՝ ներառյալ  $\gamma$ -ճառագայթման դոզան:
330. Օդի որակի մոդելավորման վերջնական նպատակն է՝ որոշել արտանետումներից առաջացած աղտոտիչների կոնցենտրացիաները գերազանցելու են արդյոք օդի որակի համապատասխան շեմերը. ազգային նորմերին՝ առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաներին (MPC)<sup>27</sup> և միջազգայնորեն ճանաչված ստանդարտներին՝ ՄՖԿ-ի<sup>28</sup>,

<sup>27</sup> ՀՀ կառավարության թիվ 160-Ն առ 02.02.2006 թ. որոշումը

<sup>28</sup> «Շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության ուղեցույցներ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՄԱՍ ուղեցույցներ, Շրջակա միջավայրի մթնոլորտային արտանետումներ և օդի որակ»

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

ընդ որում հաշվի է առնվել, որ որպես կանոն՝ այս ուղեցույցն առաջարկում է թույլ տալ օդի որակի կիրառելի չափորոշիչների 25 տոկոսը<sup>29</sup>։

331. Օդի որակի և աղտոտման կանխատեսումների համար ապագա ավտոբուսային հավաքակայանը բաժանված է 3 հատվածների, որոնցից յուրաքանչյուրի արտանետումների և ազդեցությունների տեսակը տարբերվում է։

- ավտոբուսային հավաքակայան. 400 ավտոբուս կայանելու հնարավորությամբ տարածք,
- վերալիցքավորման կայան. ԲՄԳ ավտոբուսների լիցքավորման հնարավորությամբ,
- ավտոլվացման կայան. ավտոբուսների լվացում օգտագործումից հետո։

332. Ծրագրի յուրաքանչյուր մասի համար ներկայացված են հետաքրքրություն ներկայացնող տարբեր աղտոտիչները և դրանց արտանետումների գործակիցը։ Ավտոբուսային հավաքակայանի համար արտանետումների գործակիցները որոշելու համար օգտագործվել է «Copert» մոդելը, որը տրանսպորտային միջոցների արտանետումների ստանդարտ հաշվիչն է ԵՄ-ում։ Այս մոդելը հաշվի է առնում այնպիսի տվյալներ, ինչպիսիք են. փոխադրամիջոցների քանակը, վազքը, արագությունը, ինչպես նաև և կլիմայական պարամետրերը, օրինակ, օդի ջերմաստիճանը։

333. Ավտոբուսային հավաքակայանի արտանետումների համար որոշվել են ԲՄԳ ավտոբուսների՝ վառելիքի սպառման և աղտոտող նյութերի արտանետումների գործակիցները։ Հաշվարկվել է, որ ավտոբուսային հավաքակայանում օրական կտրվածքով 400 ավտոբուսների գումարային երթևեկը կազմելու է 80 կմ վազք։ Այնուհետև «Copert» մոդելի տվյալներով գնահատվել է ԲՄԳ ավտոբուսի աղտոտող նյութերի արտանետումների գործակիցները, որոնք համեմատվել են դիզելային ավտոբուսի արտանետումների հետ և ներկայացված են ստորև բերված աղյուսակներում։

**Աղյուսակ Զ-5. ԲՄԳ ավտոբուսի արտանետումների գնահատումը**

|  | ԲՄԳ<br>քաղաքային<br>ավտոբուսներ | PM10   | PM2,5  | NO2  | CO  |
|--|---------------------------------|--------|--------|------|-----|
|  | կմ                              | գ      | գ      | գ    | գ   |
| ԲՄԳ ավտոբուսների արտանետումների գործակիցը՝ ըստ «Copert» մոդելի | 1                               | 0,1124 | 0,0671 | 0,66 | 8,4 |
| Ծրագրի շրջանակում ընդհանուր արտանետումները                     | 80                              | 8,992  | 5,368  | 52,8 | 672 |

<sup>29</sup> ԱՄՆ ՇՄՊԳ-ի՝ զգալի վատթարացման աճի կանխարգելումը, չդեգրադացված օդային տարածքների համար կիրառելի սահմանափակումները (US EPA Prevention of Significant Deterioration Increments Limits applicable to non-degraded airsheds)

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|   |  |      |      |      |      |
|---|--|------|------|------|------|
| Քաղաքային<br>դիզելային<br>ավտոբուսային<br>հավաքակայանի<br>արտանետման<br>գործակիցը՝ ըստ<br>«Copert» մոդելի |  | 0,75 | 0,7  | 0,97 | 4,1  |
| % (ԲՄԳ-<br>դիզել)/դիզել   |  | -85% | -90% | -32% | 105% |

334. Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ PM10-ը, PM2.5-ը և NO2-ը ԲՄԳ ավտոբուսների դեպքում զգալիորեն նվազելու են՝ դիզելային հավաքակայանի համեմատությամբ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ներկա պայմաններում, հաշվի առնելով մթնոլորտային օդի այսօրվա աղտոտվածությունը, Ծրագիրը նպաստելու է աղտոտիչների նվազեցմանը և մթնոլորտային օդի որակի բարելավմանը:
335. Հաջորդ բաղադրիչը ԲՄԳ-ի լիցքավորման կայանն է: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ԲՄԳ-ին բնորոշ բաղադրությունը, որտեղ հիմնական բաղադրիչը մեթանն է (94,2%):

**Աղյուսակ Զ-6. ԲՄԳ-ի բաղադրությունը**

| ԲՄԳ տիպային<br>բաղադրությունը | Պայմանական նշանակումը | %      |
|-------------------------------|-----------------------|--------|
| Մեթան                         | CH4                   | 94,2   |
| Էթան                          | C2H                   | 0,6229 |
| Ածխաթթու գազ                  | CO                    | 0,2057 |
| Պրոպան                        | C3H                   | 0,8003 |
| Բութան                        | C4H                   | 1,0025 |
| Նիտրոգեն                      | N2                    | 0,44   |
| Այլ                           | H2, O2, S, etc        | 2,0    |

336. Ինչպես ցույց է տրված Աղյուսակ Զ-6-ում, բաղադրիչներից որ մեկի վերաբերյալ սանիտարահիգիենիկ կարգավորումներ չկան, Փաստորեն, սանիտարական առումով և բնակչության ազդեցության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող աղտոտիչները չեն արտանետվում լիցքավորման կայանի կողմից, ուստի այն չի մոդելավորվել:
337. Նույնը վերաբերում է նաև ավտովազման կետին: Վերոնշյալ հետաքրքրություն ներկայացնող աղտոտիչներից ոչ մեկը նշված չէ ավտովազման կետի համար, ուստի ենթադրվում է, որ ավտովազման կետը որևէ աղտոտիչ չի արտանետելու:



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

338. Բացի այդ, հաշվի են առնվել, որ նախատեսվող գործունեությունը տեղի է ունենալու մի տարածքում, որտեղ արդեն իսկ առկա են աղտոտման այլ աղբյուրներ.

- վառելիքի այրում (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումներ. լուծիչների, մասնավորապես՝ քիմիական նյութերի օգտագործումով,
- գյուղատնտեսական գործունեություն,
- թափոնների կուտակում և այրում,
- բնական աղբյուրները, ներառյալ հրաբխային ժայթքումները, լեռնային փոշու տարածումը, օրգանական միացությունների արտանետումները:

339. Այդ արտանետումները չեն կարող ճշգրիտ որոշվել, այդ իսկ պատճառով օդի որակի հետազոտությունը և մոդելավորումը սահմանափակվել է ծրագրային տարածքի շրջակայքում ճանապարհային երթևեկի ազդեցության գնահատմամբ՝ ավտոբուսային հավաքակալայանի կառուցման պարագայում և առանց դրա: Երթևեկության մոդելում կիրառվել են հաշվարկային տվյալներ, որոնք վերցված են որոշակի կետերից, որոնք ներկայացուցչական են ճանապարհային ցանցի համար: Այս հաշվարկների վերլուծությունը հնարավորություն է տվել որոշելու երթևեկության կարևոր բնութագրիչները՝ երթևեկության արագությունը, տարբեր տեսակի տրանսպորտային միջոցների (մեքենաներ, բեռնատարներ, ծանր բեռնատարներ և այլն) մոդալային մասնաբաժինը և ծանրաբեռնվածության մակարդակը գործիքային հետազոտության իրականացման տեղամասերում՝ շաբաթվա օրերի և օրվա ժամերի կտրվածքով:

340. Երթևեկության արտանետումները և օդի որակի վրա ազդեցությունը գնահատելու համար իրականացվել է երթևեկի գնահատման հետազոտություն, և տվյալները ամփոփվել են Աղյուսակ Զ-7-ում: Աղյուսակ Զ-7-ից երևում է, որ ավտոբուսային հավաքակալայանի ծրագրի արդյունքում հարակից փողոցների երթևեկն աճելու է: Սակայն, այդ աճը չի գերազանցելու ընդհանուր երթևեկի 1%-ը: Բացի այդ, արդեն նշվեց, որ ԲՄԳ ավտոբուսներն արտանետելու են շատ ավելի քիչ աղտոտիչներ, քան մնացած շարժակազմը որտեղ հիմնականում գերակշռում են դիզելային վառելիքով աշխատող մեքենաներն ու բեռնատարները:

341. Արտանետումների գործակիցները՝ գ/կմ/վ -ով հաշվարկվել են այն ենթադրության հիման վրա, որ ավտոբուսային հավաքակալայանը օգտագործվում է հավասարապես ամբողջ օրվա ընթացքում՝ յուրաքանչյուր ավտոբուսը կատարում է օրական մեկ շրջապտույտ: Յուրաքանչյուր ավտոբուսի համար օրական մեկ շրջապտույտի հաշվարկով՝ յուրաքանչյուր ավտոբուս հավաքակալայանի տարածքում ամեն առավոտ և ամեն երեկո երթևեկելու է 100 մ:

342. Օգտագործելով ավտոբուսային հավաքակալայանի ծրագրի հետևանքով առաջացած արտանետումների վերոնշյալ տվյալները՝ մոդելավորվել է Ծրագրի տեղանքում միայն ԲՄԳ ավտոբուսներից արտանետվող աղտոտիչների ցրումը: Մոդելավորման արդյունքները ցույց են տալիս, որ NO<sub>2</sub>-ի և PM<sub>10</sub>-ի կոնցենտրացիաների աղտոտվածության արժեքները տեղանքում՝ առանց ֆոնային աղտոտման, բավականին ցածր են՝ ֆոնային արժեքների չափումների տվյալների (տե՛ս Գլուխ Ե) և օդի որակի չափանիշների (40  $\mu\text{g}/\text{մ}^3$  NO<sub>2</sub>-ի համար և 20  $\mu\text{g}/\text{մ}^3$  PM<sub>10</sub>-ի համար) համեմատ: Գնահատումները ցույց են տալիս, որ աղտոտիչների կոնցենտրացիաները շատ ցածր են Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական չափանիշների (ՄՆ 245-71) արժեքներից: Այսպիսով, ավտոբուսային

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

հավաքակայանը չի հանգեցնի ֆոնային աղտոտման աճի այնպիսի միջավայրում, որտեղ աղտոտիչների կոնցենտրացիան արդեն իսկ շատ ավելի բարձր է:


343. Սա թույլ է տալիս եզրակացնել, որ Ծրագրի ազդեցությունը օդի որակի վրա չի հանգեցնի զգալի վատթարացման: Ավտոբուսային հավաքակայանի կողմից առաջացող աղտոտումների կոնցենտրացիաները՝ օդում առկա աղտոտիչների կոնցենտրացիաների համեմատ, ցույց են տալիս, որ ավտոբուսային հավաքակայանի ազդեցությունը միջինում ցածր է ընդհանուր կոնցենտրացիաների 1% -ից:

## Աղմուկ


344. Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերի համաձայն (ՄՆ 245-71, պարբ. 8.4, Կատ. IV)՝ ավտոբուսային հավաքակայանի և մոտակա բնակելի տարածքի միջև սանիտարական գոտին պետք է լինի 100 մ-ից ոչ պակաս: Մակայն, ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացված պատասխանի, այս գոտու նվազեցումը հնարավոր է, եթե աղմուկի ազդեցությունը լինի օրենսդրական թույլատրելի չափանիշների սահմաններում (տես ՀԱՎԵԼՎԱԾ Ե. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-2):
345. Որոշելու համար, թե թույլատրելի է արդյոք տվյալ դեպքում սանիտարական գոտու կրճատումը անհրաժեշտ էր որոշել աղմուկի մակարդակի հնարավոր ազդեցությունն, այսինքն նախատեսվող հավաքակայանը կունենա արդյոք օրենսդրական չափանիշները գերազանցող ազդեցություն:
346. Այդ նպատակով նախագծման խորհրդատուի կողմից վարձվել է ակուստիկ ինժեներ՝ Ծրագրի տարածքի ակուստիկ հետազոտություն իրականացնելու նպատակով՝ աղմուկի վերաբերյալ ֆոնային (ելակետային) տվյալների հավաքագրում և ծրագրի ակուստիկ ազդեցության մոդելավորում (տե՛ս աղմուկի ուսումնասիրության հաշվետվությունը կներկայացվի ՇՄԱԳ հիմնական փուլում): Կիրառվել է 3D ակուստիկ մոդելը, որը մի կողմից դիտարկում է աղմուկի հնարավոր աղբյուրները, իսկ մյուս կողմից՝ հաշվի է առնում ազդեցությունը մեղմացնելու համար կառուցվելիք աղմկապաշտպան պատնեշը: Քանի որ ծրագրի տարածքում աղմուկի հիմնական աղբյուրը՝ քաղաքային տրանսպորտն է, Արշակունյաց և Շիրակի փողոցների երթևեկության իրական վիճակը նույնպես վերլուծվել է, ինչպես նաև հաշվի է առնվել հավաքակայանի կոմպրեսորների հետագա շահագործման հանգամանքը:
347. Մոդելավորման արդյունքները համեմատվել են Աղյուսակ Ե-6- ում ներկայացված Ծրագրի՝ սահմանային շեմերի արժեքների հետ: Մոդելավորման հիման վրա եզրակացվել է, որ Ծրագրի ազդեցությունը կգերազանցի ինչպես Հայաստանի օրենսդրական, այնպես էլ ՄՖԿ-ի ստանդարտները, եթե մեղմացնող միջոցառումներ չիրականացվեն (Նկար Զ-2 և Նկար Զ-3):

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Նկար 2. Ծրագրի պարագայում ակուստիկ իրավիճակը ցերեկային ժամերին՝ առանց մեղմացնող միջոցառումների



Նկար 2 -3. Ծրագրի պարագայում ակուստիկ իրավիճակը գիշերային ժամերին՝ առանց մեղմացնող միջոցառումների




348. Արժեքները թույլատրված նորմերի սահմաններում պահելու համար որոշում կայացվեց ավտոբուսային հավաքակայանի տարածքի ողջ պարագծով կառուցել 20 սմ


## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

հաստությամբ պարիսպ՝ որպես աղմկապաշտպան միջոց: Մոդելավորման հիման վրա եզրակացվեց, որ ավտոբուսային հավաքակայանի շահագործման հետևանքով առաջացած աղմուկը արդյունավետորեն կճնշվի (Նկար Զ-4 և Զ-5), և թվերը կլինեն Հայաստանի օրենսդրական և ՄՖԿ ստանդարտների սահմաններում:

Նկար Զ-4. Ծրագրի պարագայում ակուստիկ իրավիճակը ցերեկային ժամերին՝ աղմկապաշտպան պատնեշի առկայությամբ



Նկար Զ-5. Ծրագրի պարագայում ակուստիկ իրավիճակը գիշերային ժամերին՝ աղմկապաշտպան պատնեշի առկայությամբ



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

349. Աղմկապաշտպան պատնեշի արդյունավետությունը էլ ավելի կուժեղացվի կանաչապատման լուծումներով, որոնց համաձայն 2-3 շաբթ ծառեր և թփեր կտնկվեն հավաքակայանի տարածքի այն կողմերում, որոնք հարակից են բնակելի տներին: նաև Ավտոբուսային հավաքակայանի տարածքի կանաչապատումը ևս նախագծված է: Այս բոլոր միջառումները թույլ կտան ավտոբուսային հավաքակայանի շահագործման հետևանքով առաջացած աղմուկի մակարդակը պահել թույլատրելի չափանիշների սահմաններում:

### ***Թրթռումներ***

350. Թրթռումների մակարդակի բարձրացում անշուշտ տեղի կունենա նախատեսվող հավաքակայանի անմիջական տարածքում և հարակից տարածքներում Ծրագրի շինարարության փուլում, սակայն ոչ շահագործման փուլում (ՀԱՎԵԼՎԱԾ Ը., ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ը-2): Ավտոբուսային հավաքակայանի շահագործման փուլում թրթռումների մակարդակը կլինի ընդունելի սահմաններում:

### ***Մակերևութային ջրային մարմիններ (ոռոգման ջրանցքի ջրի հոսքը և ջրի որակը)***

351. Մակերևութային ջրային մարմինների վրա հետշինարարական ազդեցությունը սահմանափակվում է 6-րդ փողոցի երկայնքով անցնող բետոնապատ ոռոգման ջրանցքով և հարակից այգիները սնուցող ոռոգման գրունտային առուններով: Ոռոգման ջրանցքի վրա ազդեցությունը հնարավոր է ավտոբուսներից վառելիքի/ յուղի արտահոսքի տեսքով: Մյուս կողմից՝ այս ազդեցությունը մեծ չի լինելու, քանի որ ավտոբուսների շարժակազմը թարմացվում է բոլորովին նոր ավտոբուսներով, որոնցից արտահոսքերը քիչ հավանական են: Ավելին, ավտոբուսային նոր հավաքակայանը կահավորված է լինելու ժամանակակից արհեստանոցներով, և մեքենաների տեխնիկական վիճակը խստորեն վերահսկվելու է շահագործող օպերատորի կողմից: Այնուամենայնիվ, նախատեսվում են մեղմացնող միջոցառումներ (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1):

352. Ներկայումս գործող ոռոգման գրունտային ջրատարներից որոշները կվերանան: Այս ազդեցությունն անշրջելի է, սակայն դրանք բացասաբար չեն անդրադառնա հողօգտագործողների վրա, քանի որ քանդված առուններից ոչ մեկը չի սնուցում այն հողակտորները, որոնք օտարված չեն և հետագայում կմշակվեն տեղի բնակիչների կողմից: Հակառակ դեպքում՝ առունները կտեղափոխվեն այնպես, որ ոչ մի հողօգտագործող չգրկվի ոռոգման ջրից:

353. Շահագործման փուլում ավտոբուսային հավաքակայանի տարածքից անձրևաջրերի արտահոսք չի ենթադրվում և չի կարող հանդիսանալ ոռոգման ջրանցքի աղտոտման և նստվածքների աղբյուր: նախատեսվում է Ավտոբուսային հավաքակայանի տարածքում նախագծված է անձրևաջրերի հեռացման համակարգ, որը միացվելու է Շիրակի փողոցի ջրահեռացման գծին: Այդ նպատակով Խորհրդատուն դիմել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ին և ստացել է տեխնիկական թույլտվություն (ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-5 և Ե-6): Հավաքակայանի ջրահեռացման համակարգը կապահովվի նավթայուղերի զատիչներով՝ կանխելու նավթայուղերով և կոշտ մասնիկներով աղտոտված թափոնաջրերի թափանցումը քաղաքային կոյուղու համակարգ:

*Հիդրոերկրաբանություն (ստորգետնյա ջրի որակ)*

354. Այս ազդեցությունն հավանական չէ և գնահատվում է որպես «ոչ նշանակալի» քանի որ ավտոբուսային հավաքակայանի ամբողջ մակերեսը ասֆալտապատվելու է: Ասֆալտե պատվածքը, հեղուկ նյութերի պատշաճ և անվտանգ պահեստավորման և շահագործման ձեռնարկը, ինչպես նաև ստորգետնյա ջրերի խորը տեղակայվածությունը կբացառեն շահագործման ընթացքում որևէ աղտոտում:

*Բուսական և կենդանական աշխարհ*

355. Ֆլորայի և ֆաունայի վրա ազդեցությունը սահմանափակվում է շինարարության՝ մաքրման աշխատանքների ժամանակաշրջանով: Շահագործման ժամանակահատվածում Օպերատորը կխնամի շինարարության ընթացքում կտրված ծառերի փոխարեն տնկված ծառերն ու թփերը: Ոռոգման համակարգը նախատեսված է Կանաչապատման նախագծում, որը թույլ է տալու ոռոգել ոչ միայն ավտոբուսային հավաքակայանի տարածքում կանաչապատման նախագծի համաձայն տնկված ծառերն ու թփերը՝, այլ նաև ավտոբուսային հավաքակայանի ծրագրի տարածքից դուրս տնկվածները:

*Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ*

356. Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունը բացառվում է, քանի որ նախատեսվող գործունեությունը չի իրականացվելու ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքը՝ 7 կմ-ից ավելին Արարատի մարզի Արագածի գյուղի մոտ գտնվող Որդան Կարմիր արգելավայրն է, որն չի գտնվում ծրագրի տարածքին մոտենալու կամ բեռնափոխադրումների ուղեգծում:

357. Բնության հուշարձանների վրա ազդեցությունը նույնպես հավանական չէ, քանի որ Ծրագրի անմիջական տարածքում՝ ՀՀ Կառավարության 2008 թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշմամբ հաստատված բնության հուշարձաններ չկան: ՀՀ Կառավարության 2008 թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկից առավել հավանական համարվող Հրազդանի կիրճի ձախափնյա մասում գտնվող «Անանուն» սյունաձև բազալտներ երկրաբանական հուշարձանները գտնվում են շիրանարական աշխատանքների հրապարակից և տրանսպորտային ուղիներից առնվազն համապատասխանաբար 5.8 և 6,3 կմ հեռավորության վրա:

*Գրունտներ և բուսահող*

358. Ազդեցությունը հողի վրա նույնպես սահմանափակված է շինարարական աշխատանքների ժամանակահատվածով: Հողի հետ կապված որևէ այլ զարգացում հավանական չէ: Որևէ տեսակի աղտոտում նույնպես հնարավոր չէ՝ ավտոբուսային հավաքակայանի ամբողջ տարածքի ասֆալտե պատվածքի շնորհիվ:



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

***Նյութերի ստացման աղբյուրներ (գազի, ջրի, էլեկտրականության մատակարարում)***

359. Ավտոբուսների շարժակազմի վերալիցքավորման համար գազի մատակարարումը կկազմակերպվի համապատասխան կազմակերպության՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված մատակարարման պայմանագրի հիման վրա:
360. Ավտոբուսային հավաքակայանի շինարարության և շահագործման ընթացքում տեխնոլոգիական նպատակներով ջրամատակարարումը կկազմակերպվի համապատասխան կազմակերպության հետ մատակարարման պայմանագիր կնքելու միջոցով: Ջրամատակարարման պայմանագիր կնքելու հեռանկարով ամենամոտ ջրային համակարգերին միանալու հնարավորությունը ուսումնասիրվել է նախագծման փուլում: (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-5 և Ե-6): Սանիտարական և հրդեհաշիջման նպատակների համար գործող Փ- 250 մմ ջրատարին միացումը թույլատրվում է:
361. Ավտոբուսային հավաքակայանի կառուցման և շահագործման ընթացքում տեխնոլոգիական նպատակներով էլեկտրաէներգիայի մատակարարումը կկազմակերպվի համապատասխան կազմակերպության՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ մատակարարման պայմանագիր կնքելու միջոցով:
362. Ավտոբուսային հավաքակայանի կառուցման և շահագործման ընթացքում տեխնոլոգիական նպատակներով հեռահաղորդակցությունը կկազմակերպվի համապատասխան մատակարարների հետ մատակարարման պայմանագիր կնքելու միջոցով:

***Թափոնների առաջացում***

363. Ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում առաջանալու են հետևյալ տեսակի կոշտ և հեղուկ թափոնները.

**ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐ**

- ✓ մուտքային բաժանարարի (գատիչի) ներսում ձևավորված մասնիկներ,
- ✓ կոմպրեսորների ներսում առաջացած մեխանիկական խառնուրդներ,
- ✓ ավտոբուսների շարժակազմի՝ շահագործման համար ոչ պիտանի պահեստամասեր,
- ✓ օգտագործված սարքավորումների՝ շահագործման համար ոչ պիտանի պահեստամասեր,
- ✓ ավտոբուսների անվադողեր - կատեգորիա III,
- ✓ կոշտ թափոններ՝ մետաղի, փայտե, պլաստմասե մասերի, դատարկ պարկերի, տարաների և այլնի տեսքով,
- ✓ կենցաղային աղբ և օրգանական սննդի թափոններ:

**ՀԵՂՈՒԿ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ / ՎՆԱՍԱԿԱՐ ԹԱՓՈՆՆԵՐ**

- ✓ գազի՝ ջրի կաթիլներից մաքրման ընթացքում մուտքի գատիչներում առաջացող հեղուկը,
- ✓ որպես չորացնող միջոց օգտագործվող սիլիցելային գելը,
- ✓ ավտոբուսների լվացման կեղտաջրերը, որոնք ուղղվում են դեպի քաղաքային կոյուղու գծին միացված հավաքակայանի ջրահեռացման համակարգ,

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- ✓ ավտոբուսների սպասարկման համար օգտագործվող յուղերի/քսանյութերի մնացորդներ,
- ✓ սանիտարահիգիենիկ սարքավորումներից դուրս եկող կեղտաջրերը,
- ✓ բենզինի և դիզելի թափոններ, որոնք առաջանում են դիզվառելիքի հազվադեպ օգտագործումից:

364. Թափոնների վերոնշյալ տեսակների կառավարումը կկազմակերպի ավտոբուսային հավաքակալանի օպերատորի կողմից՝ համաձայն Գլխում Ը-ի՝ Թափոնների և նյութերի կառավարման պլանի:

### **Սոցիալական համակարգեր**

365. Գնահատվում է նաև սոցիալական համակարգերի վրա մշտական ազդեցությունը, որը ներառում է տեղի բնակիչների առողջության և կենսապայմանների չափանիշները, նրանց բնակելի տները և այլ գույքը, դպրոցները, ձեռնարկատիրական գործունեությունները, տեղական ճանապարհների և հաղորդակցության ցանցը և այլն: «Մշտական» նշանակում է, որ ազդեցությունը չի սահմանափակվի միայն շինարարական աշխատանքների ժամանակահատվածով: Մյուս կողմից, չնայած ազդեցության աղբյուրները գոյություն կունենան նաև ավտոբուսային հավաքակալանի շահագործման ընթացքում, այնուամենայնիվ դրանք կվերացվեն կամ կմեղմացվեն նախատեսված պաշտպանական միջոցառումների շնորհիվ: Հնարավոր ազդեցությունների այս տեսակները մանրամասն ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Է -ում: Ծրագծի թերթիկը և առաջարկվող մեղմացնող միջոցառումները թվարկված են ԲԿՊ-ի տարբեր ենթապլաններում:

366. Սոցիալ-տնտեսական որոշ խնդիրներ բարձրացվել են ԱԵԱ-ների կողմից 1-ին հանրային քննարկման ժամանակ (տե՛ս Հանրային լուսմների արձանագրությունը ՀԱՎԵԼՎԱԾ Թ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-3-ում): Տեղի բնակիչներն իրենց ավելի շատ համարում են ազդեցություն կրող ընկալիչներ, քան շահառուներ: Նրանք պնդում են, որ ներկայումս իրենք արդեն իսկ ապրում են անբարենպաստ միջավայրում՝ կոյուղու և ոռոգման ջրի բացակայության պայմաններում, գարշահոտ արձակող բաց ոռոգման ջրանցքի մոտ, որը նաև վտանգավոր է իրենց երեխաների համար, աղմկոտ օդանավակալանի մոտ, ուստի նրանք պնդում են, որ իրենք պետք է փոխհատուցվեն լրացուցիչ անհարմարությունների համար և պահանջում են, որ լինեն ծրագրի շահառուներ:

### **Ազդեցությունը աշխատողների և հանրային առողջության և անվտանգության վրա**

367. Առհասարակ մարդկանց առողջության վրա ազդեցությունը կարող է լինել օդի որակի վատթարացման, աղմուկի և թրթռման մակարդակի բարձրացման, երթևեկության և արտակարգ իրավիճակների ոչ պատշաճ կառավարվող վտանգների, վտանգավոր նյութերի և թափոնների ոչ ճիշտ կառավարման հետևանքով:

368. Նախատեսվող գործունեության ազդեցությունը մթնոլորտային օդի որակի, աղմուկի և թրթռման վրա արդեն քննարկվել է: Երթևեկության ոչ պատշաճ կառավարման հետևանքային վտանգները, ինչպես նաև նյութերի և թափոնների կառավարումը նույնպես քննարկվել են: Համապատասխան մեղմացնող միջոցառումները քննարկվում են Գլխում Ը-ում և պլանավորված են ՀԱՎԵԼՎԱԾ Թ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-ում:

### **Ազդեցությունը հաղորդուղիների վրա**

369. Առկա հաղորդուղիների ցանցի վրա ազդեցությունը՝ դրանց վատթարացման կամ վնասման ռիսկերը Ծրագրի շինարարական աշխատանքների փուլում արդեն իսկ քննարկվել են: Շահագործման փուլում ազդեցությունը կարող է լինել քաղաքային ջրամատակարարման և



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

կոյուղու համակարգի, էլեկտրաէներգիայի, գազամատակարարման և հեռահաղորդակցության համակարգի վրա ծանրաբեռնվածության առումով: Խորհրդատուն ուսումնասիրել է ավտոբուսային հավաքակայանի կողմից առաջացրած հնարավոր ծանրաբեռնվածությունը քաղաքային ջրամատակարարման և կոյուղու համակարգի վրա՝ դիմելով «Վեոլիա Ջուր» ՍՊԸ-ին՝ տարածքային համակարգերին միանալու տեխնիկական պայման ստանալու համար: Համապատասխան թույլտվությունը տրամադրվել է Ծրագրին (ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-5 և Ե-6):


370. Նախագծման աշխատանքների ընթացքում, ինչպես նաև հանրային առաջին լուսմների ժամանակ պարզվեց, որ Ծրագրի տարածքին անմիջականորեն հարող բնակելի թաղամասի կոյուղատար համակարգը բացակայում է: Տեղի բնակչությունն անօրինական կերպով կեղտաջրերը թափում է ոռոգման ջրանցք, ինչը հանգեցրել է ջրանցքների ջրի որակի վատթարացմանը և դարձել է զարշահոտի աղբյուր: Ընդառաջելով բարձրաձայնված պահանջներին, որոշում կայացվեց Ծրագրի շրջանակներում տեղադրել 1230 մ երկարությամբ կոյուղատար խողովակ՝ տեղի բնակելի թաղամասի համար ստեղծելով հնարավորություն հետագայում միանալու քաղաքային կոյուղատարին:

### *Երթևեկություն և տրանսպորտ*

371. Երկարաժամկետ կտրվածքով Ծրագրին անշուշտ կխաթարի քաղաքային երթևեկությունը: Ծրագրի տարածքը մոտ է երեք տարբեր ճանապարհների (տե՛ս Նկար Զ -6):
372. Արշակունյաց պողոտա – Շիրակի փողոց փոխհատմանը մոտ կառուցվող ավտոբուսային նոր հավաքակայանը սպասարկելու է 400 ավտոբուս: Յուրաքանչյուր ավտոբուսի համար օրական մեկ շրջապտույտի հաշվարկով՝ գնահատված է, որ յուրաքանչյուր ավտոբուս ամեն առավոտ և երեկո հավաքակայանի տարածքում երթևեկելու է 100 մետր: Ավտոբուսների մուտքը հավաքակայանի տարածք ապահովվելու է 2 մուտքերով՝ երկուսն էլ՝ Շիրակի փողոցի կողմից, իսկ ելքերը կապահովվեն՝ մեկը Շիրակի փողոցից, մյուսը՝ Արշակունյաց պողոտայի: Սա անշուշտ կմեծացնի Արշակունյաց պողոտայի և Շիրակի փողոցի երթևեկության ինտենսիվությունը:
373. Երթևեկության ինտենսիվության աճը որոշելու նպատակով իրականացվել է երթևեկության գնահատման հետազոտություն, որի արդյունքներն ամփոփված են Աղյուսակ Զ-7-ում: Երթևեկության գնահատումները ցույց են տալիս երթևեկության աճ Ծրագրի հարակից տարածքում:
374. Երթևեկության հետագա ինտենսիվությունը որոշելու համար ենթադրվում է, որ Ծրագիրը չի ազդի ընդհանուր երթևեկի վրա, բացի 400 ավտոբուսի ավելացումից՝ ավտոբուսային նոր հավաքակայանի ստեղծման արդյունքում: Նույնիսկ եթե ավտոբուսային հավաքակայանը հանգեցնի երթևեկության հարաբերական աճի Ծրագրի հարակից ճանապարհներին, այս աճը չի գերազանցի ընդհանուր երթևեկի 1% -ը, որտեղ մեքենաները և բեռնատարները մնում են գերակշռող:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Նկար Զ-6. Քաղաքային ճանապարհների նկատմամբ Ծրագրի տեղադիրքը



Աղյուսակ Զ-7. Երթևեկության ինտենսիվության գնահատում

| Երթևեկության ուղղություններ | Օրական երթևեկությունը | Նոր ԲՄԳ ավտոբուսների քանակը | Ընդհանուր երթևեկությունը+ԲՄԳ | Բեռնատարների %-ը | Ավտոբուսների %-ը | ԲՄԳ ավտոբուսների և բեռնատար |
|-----------------------------|-----------------------|-----------------------------|------------------------------|------------------|------------------|-----------------------------|
|                             |                       |                             |                              |                  |                  |                             |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|                 |       |     | ավտոբուսները |    |     | արների %-ը |
|-----------------|-------|-----|--------------|----|-----|------------|
| Երթևեկություն 2 | 31500 | 133 | 31900        | 10 | 0,4 | 10,4       |
| Երթևեկություն 3 | 7000  | 133 | 7133         | 10 | 1,9 | 11,9       |
| Երթևեկություն 4 | 16200 | 133 | 16600        | 10 | 0,8 | 10,8       |

**Լանդշաֆտի գեղագիտական գրավչություն**

375. Լանդշաֆտի և շրջակա միջավայրի նախաշինարարական տեսքը մեծապես և անդառնալիորեն ձևափոխվելու է վերածվելով ավտոբուսային հավաքակալայանի: Ներկայիս պտղատու այգիների կանաչ տարածքը կփոխարինվի ասֆալտապատ և քարե պարսպապատ տարածքով՝ ավտոբուսակայանի շինություններով և կայանատեղիներով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի գեղագիտական տեսքի վերականգնումը և գրավիչ կանաչապատումը նույնպես գնահատվել է բնակիչների կողմից 2021 թվականի մայիսին տեղի ունեցած հանրային առաջին քննարկման ժամանակ:

376. Տարածքի արտաքին գեղագիտական գրավչությունն ապահովելու համար մշակվել է կանաչապատման նախագիծ, որը նախագծային փաթեթի մաս է կազմում: Այսպիսով, տարածքի վերականգնումն իրականացվելու է ըստ կանաչապատման նախագծի (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ծ) և Ծառերի կառավարման պլանի:

**Ձ 3. Գումարային ազդեցության գնահատում**

377. Առաջնորդվելով ԱԶԲ անվտանգության քաղաքականությամբ և ՀՀ օրենսդրական պահանջներով<sup>30</sup> Ծրագրի առաջացրած հավանական ազդեցությունները դիտարկելուց և առանձին վերլուծելուց հետո իրականացվում է բնապահպանական համալիր գումարային ազդեցության գնահատում և համապատասխան մեղմացնող միջոցառումների պլանավորում՝ հաշվի առնելով Ծրագրի ազդեցությունների հնարավոր կուտակային էֆեկտը:

378. Միջօրագրային ազդեցությունների շրջանակները սահմանված և ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Ը-ի Միեմա Ը-1-ում և Ը-2-ում: Միեմա Ը-1-ից պարզ է դառնում, որ բազմաթիվ գործողությունների պատճառով կարող են ազդեցություն կրել նույն ԱԲԸ-ները՝ այսպիսով ենթարկվելով կուտակային ազդեցությունների: Ազդեցությունների մեծ մասը կարճաժամկետ է, հանդիպելու է հիմնականում շինարարության ընթացքում և էականորեն մեղմացվելու ԲԿՊ-ում և ՇԲԿՊ-ում պլանավորված միջոցառումների իրականացման միջոցով (տե՛ս նաև ՀԱՎԵԼՎԱԾ Ժ-ի Միեմա Ժ-3):

379. Համապատասխան փաստաթղթերի, այդ թվում՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ուսումնասիրությունները, ինչպես նաև ԵՔ մարմինների հետ հաղորդակցության

<sup>30</sup> ԱԶԲ ԱՔՀ (2009), Հավելված 1, պարբ. 6 և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, Հոդված 18, 5)

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

ընթացքում պարզվեց, որ Ծրագրի ազդեցության տարածքում միաժամանակ չի նախատեսվում իրականացնել այլ ծրագրեր/գործողություններ, որոնք կարող են հանգեցնել բացասական բնապահպանական կամ սոցիալական ազդեցության աճին:

380. Միջծրագրային գումարային ազդեցությունների շրջանակը և դրանց խստությունը կարող է ընդլայնվել ՇՄԱԳի ընթացքում՝ հետագա հետազոտությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, Ճանապարհային ուստիկանության և Երևանի քաղաքապետարանի հետ խորհրդակցությունների, ինչպես նաև ազդեցության ենթակա անձանց և այլ շահագրգիռ կողմերի հետ հետագա հանրային քննարկումների արդյունքում: Շինարարության ընթացքում նախատեսվող գործունեության տարածքի շրջակայքում մեկ այլ գործունեության կամ ծրագրի ի հայտ գալու դեպքում՝ թարմացված ՇԲԿՊ-ում նախատեսվելու են նոր ազդեցությունների ուժգնությունը մեղմացնող լրացուցիչ միջոցառումներ, ինչպես նաև հնարավորության դեպքում կապ է հաստատվելու ծրագրերի միջև՝ նպատակ ունենալով նվազեցնել այդ ծրագրերի գումարային ազդեցությունները:

## Է. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

381. Ծրագրի բոլոր փուլերում՝ նախագծման փուլից սկսած մինչև շինարարություն և շահագործում, բոլոր շահագրգիռ կողմերի, ազդակիր անձանց, ՀԿ-ների և այլ շահագրգիռ անձանց բովանդակալից և արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար ՀՀ օրենսդրության և ԱԶԲ ԱԶՀ-ի (2009) համաձայն՝ իրականացվել են հանրային լսումներ և քննարկումներ: Հանրային լսումների և հաղորդակցության պլանը (ՀԼՀՊ) մշակվել է ՇՄԱԳ/ԲԿՊ-ի շրջանակներում՝ որպես Բնապահպանական կառավարման պլանի բաղկացուցիչ մաս (տե՛ս Գլուխ Ը): ՀԼՀՊ-ը ներառում է հետևյալը՝

- I. Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում՝ հասարակության իրազեկվածության բարձրացման նպատակով:
- II. Հանրային լսումների / քննարկումների կազմակերպում նախագծի և ՇՄԱԳ/ԲԿՊ-ի մշակման փուլերում և հանրության և ազդակիր անձանց մասնակցության ապահովում: Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը Կապալառուն իր հերթին իրականացնելու է նախաշինարարական հանրային հանդիպումներ, այնուհետև՝ հարկ եղած դեպքում՝ ընթացիկ հանրային հանդիպումներ (օր.՝ նախագծի փոփոխման և/կամ որևէ էական չնախատեսված ազդեցության դեպքում): Հետագա հանրային լսումներն իրականացվելու են Կապալառուի կողմից Ինժեների և ԵՔԾԻԳ-ի աջակցությամբ և մասնակցությամբ:
- III. Բողոքների լուծման մեխանիզմ՝ ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ-րի )և շահագրգիռ կողմերի հետ ամենօրյա մշտական հաղորդակցության միջոցով բողոքներին և առաջարկություններին արագ արձագանքելու նպատակով:

### Է1. Տեղեկատվության հրապարակում

382. Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը սկսվել է հնարավորինս վաղ՝ նախագծման փուլում: Ծրագրի մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ մանրամասն նախագիծը և վերջնական ՇՄԱԳ-ը և ԲԿՊ-ը, հասանելի են դարձվել հանրությանը, համապատասխան մարմիններին և շահագրգիռ կողմերին: Ծրագրի մասին տեղեկատվությունը հրապարակվել է՝



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

ա. Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթ վարչական շրջանի և այլ պետական մարմինների հետ խորհրդակցությունների և քննարկումների ընթացքում (տե՛ս հաշվետվությունը ՀԱՎԵԼՎԱԾ Թ-, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-1),

բ. հանրային լսումների միջոցով (Արձանագրությունը տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Թ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3),

գ. ՇՄՆՈԻ հաշվետվության առաջին տարբերակը (անգլերեն և հայերեն) հրապարակվել է ԵԲՕԻԳ-ի կայքում<sup>31</sup>

383. Հետևյալ փաստաթղթերը հրապարակվելու են ԱԶԲ-ի, ԵԲ-ի և ԵԲՕԻԳ-ի, ինչպես նաև ՇՄՆ կայքէջերում, որոնք անհրաժեշտության դեպքում պարբերաբար կթարմացվեն,

- i. ԱԶԲ-ի (անգլերեն տարբերակ) և ԵԲՕԻԳ-ի կայքէջերում (անգլերեն և հայերեն տարբերակներ) հրապարակվող ՇՄՆՈԻ հաշվետվություն (վերջնական):
- ii. ՇՄԱԳ/ ԲԿՊ հաշվետվությունը (հայերեն տարբերակ)
- iii. Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակներ (ԲԳՈԻՇ):
- iv. Վարկառուի կողմից պատրաստված ծրագրի առաջընթացի և ԲԿՊ-ի իրականացման մասին կիսամյակային հաշվետվություններ:

384. Ներածական և հետագա հանդիպումների ու հանրային քննարկումների իրականացման շրջանակները սահմանելու նպատակով որոշվում է ծրագրի առանցքային շահագրգիռ կողմերի շրջանակը, որը կարող է նշվել և ընդլայնվել ազդեցության գնահատման գործընթացի ընթացքում և ՇՄՆ-ն կողմից՝ ըստ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ թիվ 1325-Ն որոշման (19.11.2014):

- Էկոնոմիկայի նախարարություն,
- Ֆինանսների նախարարություն և Կենտրոնական բանկ,
- Բնապահպանության նախարարություն և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
- Անշարժ գույքի կադաստրի կոմիտե,
- Երևանի քաղաքապետարան,
- Ասիական զարգացման բանկ,
- Շենգավիթ վարչական շրջան, ազդակիր անձինք,
- Հասարակական կազմակերպություններ:

## Է2. Հանրության մասնակցություն և քննարկումներ

350. Ծրագրի մասին առանցքային շահագրգիռ շահագրգիռ և ազդակիր կողմերի իրազեկությունը բարձրացնելու և հաղորդակցության կապն ապահովելու նպատակով, ներածական հանդիպում է իրականացվել Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի տեղակալի հետ, ինչպես նաև վարչական շրջանի տարածքում Ծրագիրն իրականացնելու մտադրության մասին տեղեկացնող պաշտոնական գրություն է ուղարկվել (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Թ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2):

351. Ծրագրի ինժեներական և բնապահպանական թիմերի և Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի տեղակալի՝ պրն. Համլետ Գրիգորյանի հետ համատեղ ժողովը տեղի է ունեցել 2021 թվականի մայիսի 13-ին: Ներածական հանդիպման ընթացքում նախագծային թիմը ներկայացրել է Ծրագրի գծագրերը և այլ տեխնիկական ու ինժեներական մանրամասներ, բացի

<sup>31</sup><https://sudipyerevan.am/en/environmental-impact/>

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

այդ, ազդեցության ենթակա համայնքի ներկայացուցիչը տեղեկացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի առաջընթացին և մեղմացնող միջոցառումների պլանավորմանը: Ազդեցության ենթակա շրջանի ղեկավարի տեղակալը տեղեկացվել է նաև այն մասին, որ Ծրագրի նախաձեռնողները, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ԱԶԲ Անվտանգության քաղաքականության համաձայն, կազմակերպում են հանրային քննարկման միջոցառումներ, և հայցվել է օժանդակություն ցուցաբերել և նպաստել այդ միջոցառումների իրականացմանը՝ ապահովելով հանրության մասնակցությունը և նպաստելով արդյունավետ ու բովանդակալից հանրային քննարկումների իրականացմանը (ներաձևական հանդիպման մասին ամբողջական հաշվետվությունը տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Թ-ում, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-Թ-ում):

352. Հանրային քննարկումների և տեղեկատվության հրապարակման մասին ԱԶԲ-ի ԱՔՀ-ի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները, մասնավորապես՝ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության թիվ 1325-Ն որոշման (19.11.2014) պահանջները բավարարելու նպատակով իրականացվելու են մի շարք հանրային քննարկումներ/լուսումներ: Հանրային քննարկումներ/լուսումներն իրականացվելու են 4 փուլով ազդեցության ենթակա Շենգավիթ վարչական շրջանում: Հանրային քննարկումները/լուսումները կազմակերպվելու են ՄՆԽ-ի կողմից ԵՔԾԻԳ-ի հանձնարարությամբ՝ որպես Ծրագրի նախաձեռնող: Պետական իրավասու մարմինն ապահովելու են իրենց ներկայացուցիչների մասնակցությունը քննարկումներին:

353. **Առաջին փուլ.** Հանրային քննարկումը կազմակերպվել է տեղի է ունեցել 2021 թվականի մայիսի 27-ին: Քննարկումը վարում էր Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետի տեղակալ պրն. Գևորգ Նավասարդյանը: Որպես քննարկման անցկացման վայր՝ ընտրվել էր Շենգավիթ շրջանի վարչական շենքը: Քննարկմանը հրավիրվել են ազդեցության ենթակա շրջանի ներկայացուցիչները՝ բնակիչները, ձեռնարկատիրական գործիչները, ինչպես նաև այլ շահագրգիռ հանրության ներկայացուցիչները:

354. Հանրային քննարկման իրականացման նպատակն էր տեղեկացնել շահագրգիռ կողմերին և հանրությանը ծրագրի իրականացման մտադրության և ընդհանուր գաղափարի մասին, նրանց հնարավորություն տալ տեղյակ լինելու ծրագրի մասին, հնարավորինս շուտ բարձրացնելու իրենց հուզող հարցերը, նպատակ ունենալով բոլոր ողջամիտ առաջարկությունները ներառելու Ծրագրի նախագծում, մեղմացնող միջոցառումների և մոնիթորինգի պլանում: Միջոցառման ամբողջական հաշվետվությունը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Թ-ի ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-ում:

355. Յուրաքանչյուր հանրային քննարկում/լուսում իրականացնելուց առաջ ՄՆԽ-ն ապահովում է համապատասխան տեղեկատվության ժամանակին հրապարակումը, դրա հասկանալի բնույթը և հասանելիությունը ազդեցության ենթակա մարդկանց, այդ թվում՝ կանանց, աննպաստ վիճակում գտնվող և խոցելի խմբերի համար:

356. Առաջին հանրային քննարկման և նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ծանուցումը, ներառյալ՝ ՇՄՆՈՒ հաշվետվությունը, տեղադրվել են ԵՔԾԻԳ-ի պաշտոնական կայքում .

357. Ծանուցումները և վերջնական Նախնական գնահատման հայտը հանրային քննարկումներից առաջ՝ առնվազն 7 աշխատանքային օրվա ընթացքում, հրապարակվելու են իրավասու մարմնի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ԵՔԾԻԳ-ի պաշտոնական կայքէջերում, ինչպես նաև թղթային պատճենները ներկայացվելու են հիշյալ մարմիններին:

358. Հանրային քննարկման իրականացման մասին ծանուցումը 2021 թվականի մայիսի 15-ին հրապարակվել է Հայաստանի Հանրապետություն պաշտոնաթերթում, ինչպես նաև հայտարարություններ են փակցվել ազդեցության ենթակա բոլոր համայնքներում՝ հանրային

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

տեսանելի վայրերում: Երևան Օրհուս Կենտրոն ցանցի միջոցով հրավերներն ու ծրագրի մասին տեղեկատվությունն տարածվել է շահագրգիռ կողմերի շրջանակում:

359. Հանրային քննարկման մասին հայտարարությունը, օրակարգը, մասնակիցների ցանկը և արձանագրությունը մասնակիցների կողմից բարձրացված հարցերի և անհանգստությունների, ձեռք բերված պայմանավորվածությունների ու տրված լուծումների մասին ամբողջական տեղեկատվության հետ միասին պատշաճ կերպով փաստաթղթավորվում և կցվում է սույն հաշվետվությանը՝ որպես ՀԱՎԵԼՎԱԾ Թ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2: Հանրային քննարկման արձանագրությունը տեսագրության հետ միասին կցվել է ՆԳՀ-ին և նույնպես ներկայացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

360. Հանրային քննարկումը տեղի է ունեցել համավարակի տարածման պայմաններում, որի ընթացքում պահպանվել է COVID-19 համավարակին համապատասխան ձևաչափը՝ ՀՀ Պարետի գործող որոշումների համաձայն (տե՛ս նաև Գլուխ Ը՝ Աշխատանքային անվտանգության և առողջության պլան): Հետագա քննարկումների անցկացման համար ընդունելի է նաև մեկ այլ տարբերակ, ինչպես օրինակ՝ անհատական կամ փոքր խմբերով բացօթյա քննարկումներ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների և ԱԵԱ-երի միջև: Այս միջոցառումները նույնպես պատշաճ կերպով փաստաթղթավորվելու են:

361. Եթե ծրագրի մեկնարկը որևէ պատճառով երկար ժամանակով հետաձգվի, ապա հանրային քննարկումը կիրականացվի տվյալ ժամանակահատվածին համապատասխան ձևաչափի պահպանմամբ:

362. **Երկրորդ փուլ.** Ազդեցության ենթակա վարչական շրջանում իրականացվելիք հանրային լսումը ղեկավարվելու է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և կազմակերպվելու է, ենթադրաբար, 2022թ. գարնանը: Նախագիծը և ակնկալվող ազդեցությունները ներկայացվելու են մասնակիցներին, նրանց դիտողություններն ու առաջարկություններն արձանագրվելու են և ամփոփվելու նախքան ՇՄ փորձաքննության հիմնական փուլին անցնելը:

363. **Երրորդ փուլ.** Կրկին Երևանի քաղաքապետարանի կողմից ղեկավարվող հանրային քննարկումը կազմակերպվելու է համապատասխան մարմնի կողմից Ազդեցությունների գնահատման ՏԱ-ը ստանալուց և մանրամասն նախագծի պատրաստ լինելուց հետո: Վերջնական ՇՄԱԳ/ԲԿՊ-ն ներկայացվելու է հանրությանը, իսկ նրանց կողմից բարձրացված հարցերը փաստաթղթավորվելու են:

364. **Չորրորդ փուլ.** Կրկին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ղեկավարվող հանրային լսումը կազմակերպվելու է ՇՄ փորձաքննության հիմնական փուլի ամփոփիչ հատվածում՝ վերջնական նախագիծը հանրությանը ներկայացնելու, նրանց հուզող հարցերի ընդգրկման մասին տեղեկացնելու կամ վերջիններս չդիտարկելու վերաբերյալ հիմնավորում տրամադրելու համար:

## Է3. Բողոքների լուծման մեխանիզմ

385. Առաջնորդվելով ԱԶԲ ուղեցուցների և քաղաքականությունների խնդիրների լուծման գործառնությունով՝ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում մշակվել է Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼՄ)՝ նպատակ ունենալով ծրագրի իրականացման ընթացքում ազդակիր անձանց հետ շարունակաբար հաղորդակցվելու Ծրագրի կատարման մասին նրանց հուզող հարցերի շուրջ, բողոքները և առաջարկությունները ստանալու և դրանք լուծելու նպատակով: Բողոքների լուծման մեխանիզմը մշակվել է, որպեսզի Ծրագիրն իրականացնող կողմերը ստորև ներկայացված հիմնական սկզբունքների պահպանմամբ կարողանան ապահովել՝

- ազդակիր անձանց հուզող հարցերի և բողոքների արագ, ժամանակին և արդյունավետ լուծումը,

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ


- ընթացակարգի պարզությունը և գործընթացի թափանցիկությունը,
  - ազդակիր անձանց բոլոր սեզմենտներին արագ, անվճար և անհատույց հասանելիությունը:
386. Ներկայացված բողոքների լուծման գործընթացում հավանականորեն ներառված կողմերն են՝ ԱԵԱ-ները, Կապալառուն, Ինժեները, ԵՔՕԻԳ-ը, ԻՄ-ը, դատարանը և/կամ ԱԶԲ-ն: Բողոքների լուծման մեխանիզմը մանրամասնորեն ներկայացվելու է հանրությանը հանրային լուսման և նախաշինարարական հանդիպումների ժամանակ: Բացի դրանից, ԲԼՄ-ի առկայության և առաջարկությունների ու բողոքների ներկայացման համար ազդակիր անձանց կողմից ձեռնարկվելիք քայլերի մասին տեղեկատվությունը նույնպես ներկայացվելու է ԵՔՕԻԳ-ի կայքէջում:
387. ՇՄԱԳ/ԲԿՊ-ը ներառում է ծրագրի ազդակիր անձանց և այլ շահագրգիռ խմբերի հետ մշտական հաղորդակցության մասին հատուկ ենթապլան: Մրցույթն հաղթող կապալառուն պատասխանատու է լինելու ԲԼՄ-ի պահանջները բավարարելու, և Ծրագրի տեղեկատվական ցուցանակը՝ ԲԼՄ-ի շինհրապարակներում կիրառելու մասին համապատասխան տեղեկատվությամբ, տեղադրելու համար:
388. Ծրագրի Բողոքների լուծման մեխանիզմի ընթացակարգային քայլերը ներկայացված են ստորև բերված գրաֆիկական պատկեր Է-1-ում:

Նախաշինարարական փուլ

389. **Քայլ 1.** Ծրագրի ազդակիր անձը իր առաջարկությունները/ մտահոգությունները/ բողոքները, նախ և առաջ կարող է ներկայացնել ԵՔՕԻԳ-ին: ԵՔՕԻԳ-ը ստանում, արձագանքում և լուծում է բողոքը: Եթե ԱԵԱ-ին չի բավարարում պատասխանը, կամ ԾԻԳ-ի պատասխանատու աշխատակազմին հարկավոր են լրացուցիչ լծակներ ազդակիր անձի բողոքը լուծելու համար, ապա կարող է ստեղծվել Բողոքների քննման խումբ (ԲՔԽ)՝ ապահովելու համար գործի օրինական, համապարփակ, արդար և թափանցիկ քննարկումը: ԲՔԽ-ի կազմը պետք է լինի հավասարակշռված և ներառի անկախ դիտորդի՝ ապահովելու համար բողոքի ուսումնասիրման գործընթացի անկողմնակալությունը և թափանցիկությունը: Առաջարկվում է ԲՔԽ-ի հետևյալ կազմը՝
- ա. ԾԻԳ-ի ներկայացուցիչ - նախագահ,
  - բ. անվտանգության երաշխիքների թիմի ներկայացուցիչ (ԾԻԳ) - մեկ անդամ,
  - գ. հարկ եղած դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ - մեկ անդամ,
  - դ. հարկ եղած դեպքում որակավորված տեխնիկական փորձագետ - մեկ անդամ,
  - ե. հարկ եղած դեպքում Ինժեների/Կապալառուի ներկայացուցիչ - մեկ անդամ,
  - զ. ԱԵԱ ներկայացուցիչ - մեկ անդամ,
  - է. անկախ կողմ (օրինակ՝ ՀԿ) - մեկ դիտորդ:
390. **Քայլ 2.** Եթե ԱԵԱ-ին չի բավարարում ԾԻԳ-ի որոշումն անգամ բողոքը ԲՔԽ-ի կողմից ուսումնասիրվելու դեպքում, ապա վերջինս կարող է բողոքը ներկայացնել Երևանի քաղաքապետարան: Գործի գրանցման, վերանայման և լուծման համար ԵՔ-ը առաջնորդվում է հանրային կառավարման մասին ՀՀ օրենքով:



Նկար Է-1. Բողոքների լուծման մեխանիզմի քայլերը



Շինարարության փուլ

391. **Քայլ 1.** Ծրագրի ազդակիր անձն իր առաջարկությունները/հուզող հարցերը/բողոքները կարող է ներկայացնել նախ և առաջ Կապալառուի՝ բողոքների լուծմամբ զբաղվող աշխատակիցներին (աշխղեկ, ինժեներ, սոցիալական կամ բնապահպանության մասնագետ), այսինքն՝ փորձ է արվելու տեղական մակարդակով բողոքները լուծել ժամանակին և արագ: Կապալառուի կողմից հաստատված մեխանիզմը Ծրագրի ԲՔԽ-ի անխախտելի մաս է կազմում: ա. Կապալառուն ցուցապատառների և Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական վահանակների միջոցով ապահովելու է կոնտակտային տվյալների հասանելիությունը (դաշտային գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը,

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

պատասխանատու կոնտակտային անձանց անունները, հեռախոսահամարները, փոստային և պաշտոնական էլ. փոստի հասցեները և այլն):

բ. ԱԵԱ-ն կարող է մոտենալ Կապալառուի ներկայացուցչին աշխատանքային տեղամասում և/կամ առաջարկությունը/բողոքը գրանցել Կապալառուի կողմից Ծրագրի տարածքում կամ դրան մոտ գտնվող դաշտային գրասենյակում պահվող բողոքների գրանցամատյանում: Բողոքի գրանցման ձևանմուշը, դիմումի բովանդակությունը և ձևաչափը սահմանվում է Կապալառուի ԲԿՊ-ում և համաձայնեցվում է Ինժեների հետ:

գ. Կապալառուն անմիջապես դիտարկում է բողոքը, համապատասխան մեղմացնող միջոցներ ձեռնարկում ողջամիտ ժամկետում խնդիրը լուծելու համար և 15 օրվա ընթացքում գրավոր պատասխանում է ԱԵԱ-ին՝ գրության պատճենն ուղարկելով Ինժեներին և ԾԻԳ-ին: Ներկայացված բողոքների/առաջարկությունների մասին դաշտային տվյալները կապալառուի կողմից ներառվում են ամսական հաշվետվության մեջ, որն ամեն ամիս թարմացվում է արտացոլելով բողոքի կարգավիճակը:

392. **Քայլ 2.** Եթե ԱԵԱ-ին չի բավարարում իր բողոքի առնչությամբ Կապալառուի տրամադրած լուծումը, ապա գոյություն ունեն խնդրի լուծման նաև այլ հնարավորություններ: Հաջորդիվ ԱԵԱ-ն կարող է դիմել Ինժեներին Կապալառուից պատասխան ստանալուց/չստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում բողոքը ներկայացնելով: Հետագա առաջարկությունները/բողոքները դասակարգվում են ըստ բնապահպանական և սոցիալական/տարաբնակեցման կետերի: Սոցիալական/տարաբնակեցման անվտանգության հետ կապված խնդրները լուծվում են Ինժեների և ԵՔԾԻԳ-ի ՀՕՏՄ մասնագետների կողմից: Ինժեները բողոքին պատասխանում է 15 օրվա ընթացքում:

393. **Քայլ 3.** Եթե Ինժեները չի բավարարում բողոքը, ապա ԱԵԱ-ն կարող է դիմել ԵՔԾԻԳ, ԵՔ, ԻՄ և ԱԶԲ ՀՆ: Շինարարության փուլում ԾԻԳ-ի մակարդակով բողոքի լուծումն ընթանում է նույն հաջորդականությամբ, ինչ նախաշինարարական փուլում: Կապալառուն ցուցապատառների և Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական վահանակների միջոցով տրամադրում է բոլոր կոնտակտային տվյալները: Վերջինս այս փուլում ծառայում է որպես մեկնարկային կետ, տրամադրում է անհրաժեշտ բացատրություններ և հիշյալ մարմիններին դիմելիս աջակցություն ցուցաբերում՝ հարկ եղած դեպքում նաև ԱԵԱ-ի հետ անհատական շփման միջոցով:

394. Ի վերջո, ԱԵԱ-ը կարող է դիմել դատարանի միջամտությանը: Սակայն, Ծրագրի նախաձեռնողները կգործադրեն բոլոր ջանքերը Կապալառուի, Ինժեների և ԵՔԾԻԳ-ի մակարդակով խնդիրները լուծելու համար: Անհնարինության դեպքում փորձ կարվի խնդիրները լուծել ԵՔ մակարդակով՝ նպատակ ունենալով որքան հնարավոր է խուսափել/նվազագույնի հասցնել դատավեճը: Եթե ԱԵԱ-ը չի բավարարվում՝ սպառելով ԲԼՄ-ով նախատեսված բոլոր հնարավորությունները, ապա վերջինս կարող է դիմել ԱԶԲ-ին: Անկախ արդյունքներից և տրված լուծումներից՝ բոլոր բողոքները պատշաճ կերպով կփաստաթղթավորվեն և հասանելի կլինեն ուսումնասիրման/դիտարկման, մոնիթորինգի և գնահատման համար:

## Ը1. Ներածություն

395. Բնապահպանական կառավարման ծրագիրը ներառում է՝

- ԲԿՊ-ի նպատակները և կառուցվածքը,
- ԲԿՊ-ի և մոնիթորինգի գործիքակազմը՝ իրականացման գործընթացում մասնակիցների դերերը, պատասխանատվությունները և կազմակերպչական կարգավորումները,
- Չնախատեսված ազդեցությունների և նախագծային փոփոխությունների կառավարումը,
- Ծրագրի բնապահպանական կառավարման կարողությունները և բյուջեն ընդլայնելու մասին վերապատրաստման և կողմնորոշման ծրագիրը,
- Ծրագրի իրականացման փուլի հանրային լսումների և հաղորդակցության պլանը և Բողոքների լուծման մեխանիզմը,
- Շինարարության բնապահպանական կառավարման պլանը (ՇԲԿՊ): Սա ներառում է ՇԲԿՊ-ի մշակման պահանջը և ուղեցույցը,
- Արձանագրությունների և հաշվետվությունների կազմման մասին պահանջները
- Ազդեցությունների ամփոփումը (Պարտականությունների գրանցամատյանը):

396. ԱԶԲ-ի բնապահպանական անվտանգության վերաբերյալ պահանջներին<sup>32</sup> և շրջակա միջավայրի պահպանության մասին Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներին, նորմերին և ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու նպատակով Ծրագրի համար մշակվել է Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ): Այն նկարագրում է բնապահպանական և սոցիալական պաշտպանության մասով ծրագրային բոլոր պարտավորությունները: ԲԿՊ-ն իր մեջ ներառում է Ծրագրի տևողության ընթացքում ծագած ցանկացած անցանկալի ազդեցությունից խուսափելուն, իսկ անհնարինության դեպքում՝ բնապահպանական պլանավորման և կառավարման միջոցով բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն, մեղմացնելուն և/կամ հավասարակշռելուն, ինչպես նաև դրական ազդեցություններն ընդլայնելուն ուղղված միջոցառումները:

## Ը2. Իրականացման գործիքակազմը

397. Բնապահպանական կառավարման պլանը մշակվում է որպես աշխատանքային գործիք Կապալառուի և Ինժեների համար, որպեսզի ԲԿՊ-ի օգտագործողների համար հստակ լինի, թե ինչ է հարկավոր ներառել իրենց աշխատանքային մեթոդների և գործողությունների մեջ շինարարական աշխատանքների հետ կապված բնապահպանական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու համար: Ի լրումն, այն ծառայում է որպես ուղեցույց Երևանի քաղաքապետարանի և այլ համապատասխան մարմինների, այդ թվում՝ շահագործման ԲԸՏՄ-ի համար:

<sup>32</sup> ԱԶԲ ԱՔՀ (2009), էջ 16, սկզբունք No 4.

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

398. ՇՄԱԳ-ի անբաժանելի մաս կազմող ԲԿՊ-ն ներառվելու է մրցութային և պայմանագրային փաստաթղթերում և համարվելու է Կապալառուի պայմանագրային պարտավորությունների բաղկացուցիչ մաս:
399. Իրականացման միջոցառումները՝ հստակ նախանշում են ներգրավված յուրաքանչյուր կողմի դերն ու պատասխանատվությունը ԲԿՊ-ի իրականացման, մոնիթորինգի և վերահսկողության գործում, ինչպես նաև ՀԱՎԵԼՎԱԾ Ժ-ի ԲԿՊ սխեմայում ներկայացված են ժամանակացույցը և իրականացման բյուջեն:
400. ՇՄԱԳ/ԲԿՊ իրականացման ժամանակացույցը և պատասխանատու կազմակերպությունները նույնպես ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Բ-ում:

### Ը3 Ազդեցությունների կառավարում

401. Բնապահպանական կառավարման պլանը բաղկացած է երկու հիմնական մասից՝ տեքստային և աղյուսակային: Տեքստային մասը ներկայացված է ստորև, իսկ աղյուսակային ձևաչափը մշակվել և կցվել է սույն հաշվետվությանը՝ որպես ՀԱՎԵԼՎԱԾ Ժ: Երկու մասերն էլ իրենց հերթին բաղկացած են 2 մասից՝ Ա. Մեղմացնող միջոցառումներ և Բ. Սոնիթորինգ:
- Բնապահպանական մեղմացնող միջոցառումների աղյուսակ,
  - Սոնիթորինգի աղյուսակ:

#### Ը3-1 Մեղմացնող միջոցառումներ

402. Այս բաժինը մշակվել է աղյուսակային ձևաչափի կիրառմամբ, որը ներառում է հետևյալը.
- Ծրագրի գործողություններ,
  - Դրանց հնարավոր բնապահպանական ազդեցությունները,
  - Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ ամբողջ Ծրագրի ընթացքում՝ մանրամասն նախագծման փուլից մինչև նախաշինարարական, շինարարական, շահագործման փուլեր, այդ թվում՝ կարողությունների զարգացում և վերապատրաստումների անցկացում,
  - Աշխատանքների իրականացման և իրագեկման, դրանց հետ կապված ինստիտուցիոնալ և կազմակերպչական կառուցվածքի համար պատասխանատու մարմիններ,
  - Առաջարկվող մեղմացնող միջոցառման ինդիկատիվ (կանխատեսվող) ծախսերի գնահատում:
403. Այս բաժինը ներկայացնում է ընդհանուր սկզբունքներ և մեղմացնող միջոցառումներ, որոնք ընդգրկված են հետևյալ ենթապլաններում՝
- I. Շինարարության փուլ**
1. Բնապահպանական և անվտանգության կողմնորոշման ծրագիր
  2. Մասնագիտական առողջության և անվտանգության պլան
  3. Հանրային լուսման և հաղորդակցության պլան
  4. Բուսական և կենդանական աշխարհի պահպանման ու բուսականության մաքրման պլան
  5. Շրջակա միջավայրի պահպանության պլան
  6. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

7. Հաղորդուղիների պահպանության և տեղափոխման պլան
8. Շինարարական ճամբարների տեղակայման պլան
9. Աշխատանքային տեղամասի կառավարման պլան (հանք և բացահանք, լցակույտեր, բետոնի և ասֆալտի գործարաններ)
10. Երթևեկության և մուտքերի կառավարման պլան
11. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան
12. Թափոնների և նյութերի կառավարման պլան
13. Մշակութային ժառանգության կառավարման պլան
14. Աշխատանքային տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան

**II. Հետշինարարական փուլ**

15. Թերությունների վերացման ժամանակահատված
16. Շահագործման փուլ

**Բնապահպանական և անվտանգության գծով վերապատրաստման ծրագիր**

404. Ծրագրի շրջափուլերի ընթացքում մշակվելու և իրականացվելու է բնապահպանական և անվտանգության վերապատրաստման ծրագիր: Վերապատրաստման ծրագիրն իր մեջ ներառում է՝

I. Շինարարական աշխատանքների մեկնարկից հետո 1 շաբաթվա ընթացքում Կապալառուին է ներկայացվում ԱԶԲ-ի անվտանգության և ազգային օրենսդրական պահանջների մասին ԵԶ-ի, ԵԿՆ ԾԻԳ-ի և Կապալառուի ինժեներական և բնապահպանական, առողջապահական և անվտանգության գծով անձնակազմի հետ Ինժեների կողմից իրականացվելիք վերապատրաստման դասընթացների պլանը՝ հետևյալ թեմաներով՝

- ա. Շրջակա միջավայրի կառավարում
- բ. Առողջության և անվտանգության կառավարում
- գ. Սոցիալական երաշխիքներ

II. Բնապահպանության, առողջության և անվտանգության թեմայով Կապալառուի՝ բնապահպանության, առողջության և անվտանգության գծով մասնագետների կողմից ՇԲԿՊ-ում մշակված Անվտանգության կողմնորոշման պլանի համաձայն, Կապալառուների և ենթակապալառուի ամբողջ անձնակազմի համար կազմակերպված վերապատրաստման դասընթացներ: Ինժեներական անձնակազմից և աշխատակիցներից պահանջվում է աշխատանքային տեղամասում իրենց առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում մասնակցել կողմնորոշման/անվտանգության ներածական դասընթացին և նոր ընդունված աշխատակիցների համար պարբերաբար անցկացվող վերապատրաստումներին:

405. Կապալառուի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացները ներառում են՝

ա. Աշխատանքային տեղամասում առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում, այնուհետև նոր ընդունված աշխատակիցների, այդ թվում՝ ենթակապալառուների աշխատակիցների համար պարբերաբար Բնապահպանական կողմնորոշման/անվտանգության թեմայով իրականացվող ներածական դասընթաց՝

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- ✓ շրջակա միջավայրի և անվտանգության վերաբերյալ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում սահմանված ընդհանուր կանոններ և նորմեր, որոնք պետք է պահպանվեն աշխատանքային տեղամասում և ճամբարներում,
- ✓ առողջության և անվտանգության մասին ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագիր՝ շինաշխատողներին սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի մասին իրազեկելու նպատակով,
- ✓ առողջության և անվտանգության մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված հատուկ ծրագիր՝ շինաշխատողներին համավարակային իրավիճակներում, մասնավորապես՝ COVID-19-ի դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին իրազեկելու նպատակով,
- ✓ անօրինական թրաֆիքինգ. աշխատակիցները պետք է տեղյակ լինեն, որ մարդկանց, վայրի բնության, վտանգված տեսակների և անօրինական նյութերի թրաֆիքինգը ճանապարհային միջանցքով չի թույլատրվում և նմանատիպ դեպքերի գրանցման դեպքում կկիրառվեն տուգանքներ՝ ընդհուպ աշխատանքից ազատում,
- ✓ Մասնագիտական առողջության և անվտանգության պլանում, բուսական աշխարհի պահպանության պլանում թվարկված այլ թեմաներ և այլն:

բ. Տարին առնվազն երկու անգամ բոլոր աշխատակիցների, այդ թվում՝ ենթակապալառուների համար վերոհիշյալ թեմաներով իրականացվող Բնապահպանական/առողջության և անվտանգության գծով վերապատրաստման դասընթաց:

գ. Աշխատանքային տեղամասում աշխատողների տարբեր թիրախային խմբերի հետ (բարձրությունների վրա աշխատողների, հողային աշխատանք իրականացնող, էլեկտրական գործիքներով աշխատող մասնագետների, վարորդների և այլոց մասին) պարբերաբար իրականացվող Բնապահպանության/առողջության և անվտանգության թեմայով վերապատրաստումներ նախքան նոր տիպի աշխատանք սկսելը;

դ. Վերահսկող ինժեների պահանջով միջանկյալ լրացուցիչ վերապատրաստումներ.

## Աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման պլան

406. Սույն ենթապլանի նպատակն է Գլխավոր Կապալառուին (ԳԿ) ու ենթակապալառուներին (ԵԿ-ներ) ապահովել ԱԶԲ-ի և ՀՀ օրենսդրության բոլոր պահանջների մասին փաստաթղթերով՝ Ծրագրի իրականացման ընթացքում մասնագիտական անվտանգությունը և առողջությունը պահպանելու նպատակով: Սույն ենթապլանն ընդգրկում է շինհրապարակում գտնվելու իրավասություն ունեցող բոլոր անձանց առողջության, անվտանգության և բարեկեցության ապահովման մասին պահանջները, այդ թվում՝ համապատասխան կողմնորոշման ծրագիրը: Բացի այդ, այն պատասխանատվություն է դնում Գլխավոր Կապալառուի վրա՝ մշակելու և Բնժենների հաստատմանը ներկայացնելու աշխատանքային անվտանգության պլանը յուրաքանչյուր աշխատանքի համար, որը ներառում է բոլոր աշխատանքների անվտանգ և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով իրականացվող տվյալ աշխատանքին հատուկ անվտանգության միջոցառումները: Աշխատանքային անվտանգության և առողջության պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

I. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳԻՐ

407. Կապալառուն կազմակերպում և դասընթացներ է իրականացնում հետևյալ թեմաներով՝

- ✓ անվտանգության մասին ընդհանուր կանոններ և նորմեր, որոնք պետք է պահպանվեն շինհրապարակում և ճամբարներում,
- ✓ տվյալ աշխատանքի, այդ թվում՝ բարձրությունների վրա, էլեկտրական գործիքներով, հորատանցքերում և այլուր իրականացվող աշխատանքների վերաբերյալ կանոններ և նորմեր,
- ✓ առողջության և անվտանգության մասին ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագիր՝ շինաշխատողներին սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին իրազեկելու նպատակով,
- ✓ առողջության և անվտանգության մասին հատուկ իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագիր՝ շինաշխատողներին COVID-19-ի ռիսկերի, դրանց կանխարգելման և վերահսկման՝ Կապալառուի Մասնագիտական անվտանգության պլանի ներակա և անքակտելի մաս կազմող միջոցառումների մասին իրազեկելու նպատակով,
- ✓ անօրինական թրաֆիքինգ. աշխատակիցները պետք է տեղյակ լինեն, որ մարդկանց, վայրի բնության, վտանգված տեսակների և անօրինական նյութերի թրաֆիքինգը ճանապարհային միջանցքով չի թույլատրվում և նմանատիպ դեպքերի գրանցման դեպքում կկիրառվեն տուգանքներ՝ ընդհուպ և այդ թվում աշխատանքից ազատում,
- ✓ մշակութային ժառանգություն. հնագետը իրազեկում է ամբողջ աշխատակազմին արժեքավոր մշակութային ընկալիչների առկայության, պաշտպանիչ միջոցառումների իրականացման և հնագիտական գտածոների հայտնաբերման ընթացակարգերի մասին: Հարկ եղած և ԵՔՕԻԳ-ի կողմից ուղղորդվելու դեպքում Կապալառուն ապահովում է գտածոների հայտնաբերման ընթացակարգի պատշաճ իրականացումը, վարձում է հնագետ կամ ընկերություն շահագրգիռ կառավարական մարմինների հետ համագործակցությամբ համապատասխան հնագիտական պեղումներ իրականացնելու համար,
- ✓ Վերահսկողության Ինժեների կողմից պահանջվող այլ հատուկ թեմաներ:

II. ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ (ԱՊՄ)

408. Կապալառուն իր աշխատակիցներին է տրամադրում և ապահովում է, որ իր և ենթակապալառուի աշխատակիցները կրեն և օգտագործեն սեզոնին համապատասխան աշխատանքային համազգեստ և աշխատանքին հատուկ ԱՊՄ-ներ: Աշխատանքային համազգեստը ներառում է լուսանդրադարձնող ժիլետներ, բաձկոններ, տաբատներ կամ բանվորական արտահագուստ, կոշիկներ, սաղավարտներ և ձեռնոցներ: Համազգեստի վրա պետք է լինի ընկերության տարբերանշանը:

409. Տվյալ աշխատանքին հատուկ վտանգներով և ռիսկերով պայմանավորված՝ ԱՊՄ-ները կարող են ներառել հատուկ ակնոցներ, պաշտպանիչ ականջակալներ, դիմակներ կամ ռեսպիրատորներ, դիմապաշտպան վահաններ, գոտիներ, պարաններ, աշխատանքին հատուկ բանվորական, օրինակ՝ եռակցողների համար նախատեսված արտահագուստ, և այլն:

410. Կապալառուն ապահովում է, որ իր և ենթակապալառուի ամբողջ անձնակազմը, այդ թվում՝ բանվորները, ինժեներները, աշխույժները, մենեջերները և շինհրապարակի այցելուները, հարկ եղած դեպքում կրեն համազգեստ և ԱՊՄ-ներ: Կապալառուն խթանիչ միջոցառումների իրականացման և տույժերի կիրառման համապատասխան մեխանիզմ է ներկայացնում ՇԲԿՊ-ում՝ ԱՊՄ-ների օգտագործումը պարտադիր դարձնելու համար:

III. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

411. Աշխատանքները սկսելուց առաջ տվյալ աշխատանքին հատուկ վտանգներով և ռիսկերով պայմանավորված (բարձրություններ, խոր խրամուղիներ և հորեր, ընկելու վտանգ, կռունկ և այլ տեխնիկա և այլն)՝ Կապալառուն տրամադրում է անվտանգության ապահովման համար անհրաժեշտ բոլոր գործիքները և լրացուցիչ սարքավորումները (հետևի բռնաձողով փայտամածեր, աստիճանավանդակներ, կամուրջների մուտքեր, էլեկտրական պաշտպանիչ վահաններ, հրակայուն սարքեր):
412. Կապալառուն ապահովում է իր և ենթակապալառուի աշխատակիցների համար ցանկացած վտանգավոր իրավիճակների (առանց պաշտպանիչ միջոցների խրամուղիներ և հորեր, անուշադրության մատնված էլեկտրական գործիքներ, ծանր տեխնիկայի չկանոնակարգված շահագործում և այլն) բացառումը աշխատանքային տեղամասից:

IV. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

413. Կապալառուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցառումները իր և ենթակապալառուի աշխատակիցների առողջությունը, անվտանգությունը և բարեկեցությունը ապահովելու նպատակով: Առաջնորդվելով վերոգրյալով՝ վերջինս վարձում է բժշկական աշխատող, ով պատասխանատու է Կապալառուի ՇԲԿՊ-ի ԱԱՊՊ-ի անբակտերի մաս կազմող ՇՄԱԳ/ԲԿՊ-ին և Առողջապահական ծրագրին համապատասխանության ապահովման համար: Կապալառուն համագործակցում և համաձայնություն է ձեռք բերում մասնագիտացված բժշկական հաստատության հետ՝ պատահարների/միջադեպերի դեպքում անհրաժեշտ բժշկական աջակցություն ստանալու համար:
414. ՎԻ-ի կողմից հաստատված Կապալառուի բժշկական աշխատողը մշակում է վերապատրաստման ծրագիր և վերապատրաստումներ իրականացնում կապալառուի և ենթակապալառուի աշխատակիցների համար՝ ինչպես նշված է Առողջության և անվտանգության կողմնորոշման պլանում: Բժշկական աշխատողը պարբերաբար ստուգում է աշխատակիցների առողջական վիճակը, ստուգումների արդյունքում ստացված տվյալները հասանելի պահում դաշտային գրասենյակում և ամսական հիմունքներով հաշվետվություն ներկայացնում:
415. Կապալառուն ճանապարհահատվածների բոլոր աշխատանքային տեղամասերը ապահովում է առաջին օգնության համար նախատեսված բոլոր միջոցներով և գործիքներով : Դրանք են՝ հեշտ հասանելի, ամբողջական առաջին բուժօգնության պայուսակ, տեսանելի վայրերում փակցված ցուցապաստառներ պատասխանատու անձանց հասանելիության և կոնտակտային տվյալների մասին տեղեկատվությամբ: Թունավոր տեսակներին տարբերելու և առաջին բուժօգնություն ցույց տալու համար Կապալառուն պետք է հրավիրի մասնագետի, ով կիրահանի աշխատակիցներին: Խորհուրդ է տրվում աշխատանքային տեղամասում ունենալ Հայաստանի թունավոր օձերի մասին տեղեկատուն, որտեղ մանրամասն նկարագրված են թունավոր օձատեսակները, օձի խայթոցի դեպքում ձեռնարկվելիք համապատասխան գործողությունները:
416. Կապալառուն մշակում է COVID-19 համավարկի կանխարգելմանն ուղղված առողջության և անվտանգության պլանը՝ հիմնված CWRD- ի առաջարկված գործառնական ընթացակարգի վրա՝ «Վարակիչ հիվանդությունների պայմաններում անվտանգ աշխատելը



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

(օրինակ՝ Covid-19)» թեմայով և ձեռք է բերում ՎԻ-ի հավանությունը, ինչպես նաև տրամադրում ազգային նորմերով, միջազգային ուղեցույցներով, առողջության և անվտանգության պլանով նախատեսված բոլոր կանխարգելիչ միջոցները, գործիքները և սարքերը: Պլանը ունենալու է հետևյալ կառուցվածքը՝

Ա. Ներածություն

Բ. Ազգային և միջազգային COVID-19 կանոնակարգեր, անվտանգության ընդհանուր քաղաքականություն և կանոններ

Գ. Ուսուցման և իրազեկման ծրագիր

Դ. COVID-19- ով վարակման ռիսկերի գնահատում

Ե. Դերերն ու պարտականությունները՝ կառավարման, պլանավորման, իրականացման, մոնիթորինգի և հաշվետվությունների մասով

Մենեջերների և վերահսկողների պարտականությունները

ա. Գործատուի պարտականությունները

բ. աշխատողների պարտականությունները

Զ. COVID-19 –ի կանխարգելումը շինհրապարակում

ա. աշխատավայրի ստուգում

բ. մուտքի հսկողություն, ներառյալ թեստավորում և հետևում

գ. փաստացի կամ կասկածելի դեպքերին և վարակներին արձագանքելու միջոցառումներ

ա) աշխատակցի մոտ առկա են COVID-19- ի ախտանիշները

բ) աշխատակցի COVID-19- ի ախտորոշիչ թեստը դրական է

գ) աշխատակցի հետ սերտ կապ ունեցող COVID-19-ով վարակված անձի

առկայություն

դ. նշաններ և հիշեցումներ

ե. Ֆիզիկական և սոցիալական հեռավորություն

զ. պատշաճ հիգիենա

է. հարմարություններ, մաքրում և ախտահանում

ը. աշխատանքի վայրի նախազգուշական միջոցներ

թ. կացարաններ և սոցիալական հարմարություններ

ժ. առողջապահական և արտակարգ իրավիճակների հաստատություններ

ի. անձնական խնամք և առողջություն

Է. Գաղտնիություն

Ը. COVID-19 համավարակի կանխարգելում և աշխատանքային պրակտիկայի հսկողություն

Թ. աշխատողների պարտականությունները

Ճ. աշխատանքային տեղամասի/գրասենյակի ընդհանուր գործելակերպ

Ի. Ծախսեր

Լ. Բողոքների լուծման մեխանիզմ

Խ. Մոնիթորինգ և հաշվետվություն

Տեղեկատու փաստաթղթեր.

Նմուշային ստուգաթերթեր

Նմուշային ստուգաթերթ 1. COVID-19- ի հսկողության ստուգաթերթիկ աշխատողների և հյուրերի համար

Նմուշային ստուգաթերթ 2. Աշխատավայրի պատրաստման ստուգաթերթ

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Նմուշային ստուգաթերթ 3. Աշխատակիցների հիմնական ուսուցման ստուգաթերթ  
Ինֆորմացիայի նմուշ

417. Կապալառուն իր աշխատակիցներից յուրաքանչյուրին պարբերաբար տրամադրում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ/սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ) կանխարգելման, բուժման և առողջապահական այլ համապատասխան միջոցներ՝ ՄԻԱՎ/ՍՃՓՎ-ներով վարակվելու ռիսկը և դրանց նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու նպատակով: Այս աշխատանքներն ընդգրկվում են կողմնորոշման դասընթացի մեջ և ուղեկցվում են կառավարական մարմինների, միջազգային գործակալությունների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) և այլոց կողմից, այդ թվում՝ ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային կենտրոնի և ԱԶԲ-ի պայմանավորվող խորհրդատուների կողմից աշխատանքային տեղամասին հարող տարածքներում համապատասխան նախաձեռնությունների իրականացմամբ: Կապալառուն միանգամայն անվճար իր աշխատակիցներին տրամադրում է անհրաժեշտ թվով բարձրորակ պահպանակներ, քսանյութեր, ուղեցույցներ, պարբերաբար իրականացնում է ՍՃՓՎ/ՄԻԱՎ թեստեր և, հարկ եղած դեպքում, ՍՃՓՎ և ՁԻԱՀ բուժում:

V. ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

418. Կապալառուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները տեղի բնակիչների, ազդակիրների, ձեռնարկությունների, դրանց աշխատակիցների, հետիոտների և այլոց անտվտանգությունը, առողջությունը և բարեկեցությունը ապահովելու համար:

419. Կապալառուն տեղադրում է ժամանակավոր ցանկապատ և ձեռնարկում բոլոր միջոցները՝ աշխատանքային գոտին սահմանազատելու և ոչ իրավասու անձանց մուտքը սահմանափակելու համար: Հարկ եղած դեպքում նշանակվում են պահակներ, տեղադրվում են ցանկապատեր, արգելապատնեշներ և արգելափակոցներ: ՎԻ-ի կողմից ներկայացված հատվածներում Կապալառուն տեղադրում է ամուր ցանկապատ (1.5-2մ բարձրությամբ պլաստիկ ցանց կամ բետոնե բլոկներ):

420. Կապալառուն պատշաճ և տեսանելի կերպով տեղեկացնում է հանրությանը ընթացող շինարարական աշխատանքներից բխող վտանգի, շինհրապարակում գործող տեխնիկայի և/կամ սարքավորումների առկայության մասին՝ նախազգուշացնող նշաններ և մուտքն արգելող ցուցապաստառներ տեղադրելով: Հայտարարությունների թավատառ տեքստը լինելու է հայերեն:

VI. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

421. Վերահսկողության խորհրդատուի (Ինժեներ) Բնապահպանական/առողջության և անվտանգության գծով մասնագետը պատասխանատու է Ծրագրի աշխատանքների՝ ՇՄՆՈՒ/ԲԿՊ/ՇԲԿՊ-ի Մասնագիտական առողջության և անվտանգության պլանի պահանջների բավարարման վերահսկողության և մոնիտորինգի, ինչպես նաև ՄԱԱ-ն մասին ԵՔԾԻԳ-ին իրազեկման համար:

422. Կապալառուն Մասնագիտական առողջության և անվտանգության հարցերի կարգավորման պատասխանատվությունը դնում է իր Բնապահպանական/անվտանգության գծով մասնագետի վրա, ով պատասխանատու է լինելու կապալառուի և ենթակապալառուի բոլոր աշխատակիցների համար՝ վերոհիշյալ թեմաներով կողմնորոշման վերապատրաստման

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

ծրագրի իրականացման, ինչպես նաև ՄԱԱ-ն մասին, այդ թվում՝ բոլոր պատահարների/միջադեպերի, բացթողումների մասին ՀԱՎԵԼՎԱԾ խ-ում ներկայացված ձևաչափով ՎԽ-ին անհապաղ իրազեկելու համար:

423. Կապալառուն շինհրապարակի բոլոր տեղամասերում տարվող շինարարական աշխատանքների համար նշանակում է ՄԱԱ գծով պատասխանատու անձի: Այս անձը պատասխանատվություն է կրում ՇՄՆՈՒ/ԲԿՊ/ՇԲԿՊ-ում բնապահպանական, առողջության և անվտանգության մասով ներկայացված պահանջների՝ իր տեղամասում պահպանման, ինչպես նաև աշխատակիցների համար նոր աշխատանք սկսելուց առաջ և նոր ընդունված աշխատակիցների համար՝ պարբերաբար աշխատանքի վերաբերյալ ներածական վերապատրաստումների անցկացման համար: Կապալառուի շինհրապարակում ՄԱԱ հարցերով պատասխանատուն արտակարգ իրավիճակներում իրականացնում է անվտանգության միջոցառումներ և անհապաղ տեղեկացնում ԲԱԱ մասնագետին պատահարների/միջադեպերի, այդ թվում՝ բացթողումների մասին, և ղեկավարում է շտկող միջոցառումների կատարումը, նախազգուշական քայլերի ձեռնարկումը՝ նպատակ ունենալով կանխել հետագայում դրանց կրկնությունը:

424. Կապալառուն պատասխանատու է իր ենթակապալառուների կողմից Մասնագիտական առողջության և անվտանգության պլանի պահանջների բավարարման համար:

## Հանրային լուսման և հաղորդակցության պլան

425. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթերով հիմնավորել բոլոր այն միջոցառումները, որոնք ՀԿ-ն, ԵԿ-ները պետք է ձեռնարկեն ԱԶԲ ԱՔՀ 2009-ի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ծրագրի մասին տեղեկատվության հրապարակման և շահագրգիռ կողմերի, ծրագրի ազդակիր անձանց, ՀԿ-ների, այլ հետաքրքրված կողմերի հետ ծրագրի վերաբերյալ մշտական հաղորդակցությունն ապահովելու համար: Հանրային լուսման և հաղորդակցության պլանը (ՀԼՀՊ) կապ է ստեղծում Պատվիրատուի, Վերահսկողության խորհրդատուի և Կապալառուի (ինչպես նաև Ենթակապալառուների) ու ազդակիր անձանց միջև (տեղի բնակիչներ, ճանապարհից օգուտդներ և այլք)՝ նախօրոք և շինարարական աշխատանքների, ինչպես նաև հնարավոր ազդեցությունների ընթացքում քննարկումների անցկացման և խորհրդատվությունների տրամադրման հաղորդակցային կամուրջ ստեղծելով: Սույն ենթապլանի նպատակն է ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի իմաստալից ներգրավվածությունը և ծրագրի, այդ թվում՝ շինարարական աշխատանքների և դրանց հետ կապված գործողությունների ժամանակացույցի, աշխատատեղերի, ծրագրից բխող օգուտների մասին տեղեկատվության ժամանակին տարածման միջոցով բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը: Սույն պլանը մշակվել է շահագրգիռ կողմերի, ծրագրի իրականացման վայր հանդիսացող համայնքի, ծրագրի ազդակիր անձանց և հանրության հետ որպես ամբողջություն մշտական հաղորդակցությունը պահպանելու նպատակով:

426. Սույն ենթապլանը պարունակում է ընդհանուր պահանջներ այն մասին, թե ինչպես բավարարել բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղի բնակչության բողոքները և շահերը՝ արդյունավետ ԲԼՄ-ի հաստատման պատասխանատվությունը դնելով Հիմնական Կապալառուի վրա: ԲԼՄ-ի կառուցվածքը մանրամասն ներկայացված է Գլուխ Է-ում:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

427. Ելնելով վերոգրյալից՝ ՀՀՀՊ-ը ներառում է՝

- 1) Նախաշինարարական և հետագայում շարունակական քննարկումներ՝ հանրությանը ծրագրի ներկայացման, վերջիններիս հետ հաղորդակցության ապահովման, ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և քննարկումների անցկացման, ինչպես նաև հանրությանը Բողոքների լուծման մեխանիզմին և դրա հետ կապված ընթացակարգերին ծանոթացնելու համար:
- 2) Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) կազմվում է Կապալառուի կողմից և թույլ է տալիս ազդեցության ենթակա անձանց ծրագրի վերաբերյալ հարցեր բարձրացնել:
- 3) Տեղեկատվության հրապարակում:

1) ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

428. Նախաշինարարական հանրային քննարկումն անցկացվում է մրցույթի հաղթող կապալառուի կողմից մոբիլիզացման փուլում՝ տեղամասային հասանելիություն և Պատվիրատուի կողմից շինարարական աշխատանքները մեկնարկելու թույլտվություն ստանալուց հետո՝ շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 10 օր առաջ:

429. Կապալառուն կազմակերպում է նախաշինարարական խորհրդատվական հանդիպումներ ազդակիր համայնքների ղեկավարների հետ և ներկայացնում իրազեկվածության բարձրացմանն ուղղված համապատասխան միջոցառումները: Սահմանվում են իրենց տարածքում իրականացվելիք շինարարական աշխատանքների պոտենցիալ զգայուն ընկալիչները և Կապալառուի կողմից ներկայացվում քննարկման մասնակիցներին: Առավել բարձր արդյունավետություն ապահովելու նպատակով պետք է իրականացվի հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված քարոզարշավ՝ ներգրավելով ՀԿ-երին: Սա իր մեջ կարող է ներառել հանրությանը հասցեագրված հայտարարություններ տարբեր մեդիա հարթակներում: Խորհրդատվական քննարկման նպատակն է ժամանակին նախազգուշացնել համայնքին հավանական փոփոխությունների մասին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան հարմարվել ծրագրի ազդեցություններին և նախապատրաստվեն ազդեցություններին կանխարգելելու, այլ ոչ թե՛ հակազդելու: Նախազգուշացումն ուղեկցվելու է աշխատանքների մասին նշանների, ցուցատախտակների, ցանկապատերի և արգելապատնեշների տեղադրմամբ ու ճանապարհի գծանշմամբ՝ շինարարական աշխատանքների մեկնարկից և դրանից հետո:

430. Կապալառուն հանրային տեսանելի վայրերում փակցնում է նախաշինարարական հանդիպման ամսաթիվը, վայրը և նպատակը, բրոշյուրներ բաժանում ազդակիր անձանց: Դրանք իրենց մեջ պարունակում են կոնտակտային տվյալներ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու և կապ հաստատելու համար:

431. Ծրագրի մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ն, շրջակա միջավայրի պահպանության, առողջության և անվտանգության մասին իրազեկվածության բարձրացման ծրագիրը նույնպես վիզուալ շնորհանդեսների միջոցով (շնորհանդես, գրաֆիկական նկարներ և քարտեզներ) է համայնքին ներկայացվում: Նախաշինարարական քննարկումները տեղի են ունենում ծրագիրը, շինարարական աշխատանքների ծրագիրը, ակնկալվող բնապահպանական, սոցիալական ազդեցությունները և ճանապարհի հասանելիության վրա

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

ազդող ճանապարհային անվտանգության նախագծման առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ փոշու, աղմուկի բարձր մակարդակը, ճանապարհի ժամանակավոր փակումը և երթևեկության շեղումները ներկայացնելու ու քննարկելու, ինչպես նաև Բողոքների լուծման մեխանիզմը ներկայացնելու համար:

432. Կապալառուն լուծում է բարձրացված հարցերը կամ փոխանցում Վերահսկողության խորհրդատուին, եթե ԱԵԱ-ի ներկայացրած դիտողությունները/հարցերը իր պարտավորությունների սահմանից դուրս են գտնվում: Կապալառուն առաջընթացի վերաբերյալ առաջին ամսական հաշվետվության մեջ զեկուցում է խնդրի կարգավիճակի մասին (լուծված/չլուծված): Կապալառուն հաստատում է հետադարձ կապի մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի, արժեքավոր զգայուն ընկալիչների, ծրագրի ազդակիրներ ու շահագրգիռ անձանց ներգրավվածության թափանցիկության համար: Հանդիպման մասնակիցների և արված դիտողությունների վերաբերյալ մանրամասները գրանցվում են Կապալառուի կողմից և ներառվում ՇԲԿ-ի մեջ:

## 2) ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

433. Բողոքների լուծման մեխանիզմը մշակվել է ազդակիր անձանց հետ հաղորդակցվելու, ծրագրի կատարման մասին նրանց մտահոգությունները, բողոքները, գանգատները և առաջարկություններ ստանալու, դրանց լուծումը հեշտացնելու նպատակով: Մույն մեխանիզմի գործունեությունն ապահովվելու է Ծրագրի ընթացքում: Տեղական համայնքների, շահագրգիռ կողմերի և հանրության հետ շարունակական հաղորդակցությունը պահպանվելու է ՇՄՆՈՒԲ/ԲԿ-ի (առավել մարամասն տե՛ս Գլուխ Գ) համաձայն՝ Կապալառուի կողմից հաստատված ԲԼՄ-ի միջոցով: Շարունակական հաղորդակցությունը նշանակում է, որ ազդակիր բնակչությունը ցուցանակների և պաստառների միջոցով ժամանակին տեղեկացվելու է ցանկացած անհարմարության մասին, ինչպիսիք են՝ երթևեկության հասանելիության և վիճակի, ջրի, հոսանքի մատակարարման խանգարումներ և այլն:
434. ԲԼՄ-ի նպատակն է աջակցել ազդեցության ենթակա անձանց բողոք ներկայացնելիս և նկարագրել ժամանակին և արդյունավետ կերպով բողոքները լուծելու համար մշակված մեխանիզմը: Հավանական ներգրավված կողմերն են՝ ԱԵԱ-ները և այլ շահագրգիռ կողմերը, Կապալառուն, Վերահսկողության խորհրդատուն, ԵՔԾԻԳ-ը, ԵՔ-ն և դատարանը: Հանրությունը տեղյակ է պահվում ԲԼՄ-ի մասին նախաշինարարական հանրային քննարկման ընթացքում: Ի լրումն, ԲԼՄ-ի գոյությունը փաստող և ԱԵԱ-ների կողմից առաջարկություններ կամ բողոք ներկայացնելու համար ձեռնարկվելիք քայլերի մասին տեղեկատվությունը հրապարակված է ԵՔԾԻԳ-ի կայքէջում, ինչպես նաև շինհրապարակներում՝ Կապալառուի կողմից տեղադրված Ծրագրի մասին տեղեկատվական ցուցանակի վրա:
435. ԲԼՄ-ն ներառում է՝
- (i) Շինարարական հրապարակի մուտքի նոտ կտեղադրվեն համապատասխան տեղեկատվություն պարունակող պաստառներ կամ տեղեկատվական վահանակներ: Տեղեկատվությունն իր մեջ ներառում է դաշտային գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, «թեժ գծի» հեռախոսահամարները, փոստային և էլ. փոստի հասցեները և այլն:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- (ii) Ազդակիր անձանց համար դաշտային գրասենյակում կամ ցանկացած այլ հասանելի վայրում պահվող բողոքների գրանցամատյան: Հանրային բողոքների և առաջարկությունների ներկայացման համար դիմումի ձևաթուղթը կցվելու է ՇՄՆՈՒ հաշվետվությանը:
  - (iii) Կապալառուի՝ շինհրապարակում գտնվող ներկայացուցիչը (աշխղեկ, ինժեներ, սոցիալական կամ բնապահպանական հարցերով պատասխանատու անձ) պատասխանատու է ազդակիր անձանց կողմից ներկայացված բողոքների/առաջարկությունների բավարարման և Կապալառուի կողմից դաշտային գրասենյակում պահվող բողոքների գրանցամատյանում բողոքը/առաջարկությունը գրանցելու թույլտվություն տալու համար: Կապալառուի ներկայացուցիչը բողոքի/առաջարկության վրա գրանցում է նախնական տվյալները (ԱԵԱ-ի անունը, բողոքի/առաջարկության ներկայացման ամսաթիվը, խնդրի էությունը, հետագա գործողությունները և լուծման կարգավիճակը):
436. Կապալառուն գրանցամատյանում գրանցում է բոլոր բողոքները (բանավոր և գրավոր), ինչպես նաև լուծման էությունը և եղանակը, կիրառված մեղմացնող միջոցառումները: Եթե խնդիրը գտնվում է Կապալառուի իրավասությունից դուրս, ապա այն փոխանցվում է Ինժեներին: Եթե Ինժեները չի կարողանում լուծել բողոքը, ապա այն փոխանցվում է ԵՔԾԻԳ-ին:
437. Ծրագրի Բողոքների լուծման մեխանիզմի ընթացակարգային քայլերը ներկայացված են Գլուխ Է-ում:
- Պահել բողոքների գրանցամատյան (բողոքը ներկայացնող անձի անունը, խնդրի նկարագրությունը, բողոքի ներկայացման ամսաթիվը, պատասխան լուծման ամսաթիվը, հետագա գործողությունները և լուծման կարգավիճակը):
  - Համոզվել, որ գործում է բողոքների և առաջարկությունների անհապաղ Ինժեներին ներկայացման մեխանիզմ:

Կենդանական և բուսական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլան

438. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում, ինչպես նաև հարակից տարածքներում բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունների նվազեցման, Ծրագրի՝ կարմիրգրքյան և վտանգված տեսակներ ընդգրկող տարածքների պահպանության նկատմամբ: Պլանը մշակվել է բուսական (23.11.2009) ու կենդանական (03.05.2000) աշխարհի մասին Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 14.08.2014 թ.-ի N°781-Ն որոշման, ինչպես նաև բուսականության մաքրման համար քիմիական նյութերի օգտագործման մասին օրենսդրական նորմերի համաձայն:
439. Պլանի այս բաժինը մշակելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ թեև նախատեսվող գործունեության բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության մակարդակը գնահատվում է ցածր (տե՛ս Մխենա Զ-2) և դրանք հիմնականում տեղայնացված և

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

փոքրամասշտաբ բնույթ ունեն, այնուամենայնիվ, նախատեսվել են բացասական բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ: Ընդհանուր սկզբունքն է՝ պահպանել բնությունը սահմանափակելով անհարկի ծառահատումը և առավելագույնս խուսափելով տարածքի հետագա աղտոտումից: Կապալառուին արգելվել է իրականացնել որևէ գործունեություն հարակից տարածքներում, իսկ բեռնափոխադրումներն իրականացնել բացառապես քաղաքային ավտոճանապարհներով, քանի որ ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանն արգելվում է<sup>33</sup>:

440. Նախատեսվող գործունեության և հարակից տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում կենդանական աշխարհի պաշտպանությանն ուղղված միջոցառումները նպատակ ունեն կանխելու աշխատողների գիտելիքների և բնության նկատմամբ հոգածության բացակայության պատճառով շինարարության ընթացքում կենդանիների բնական միջավայրի, ձվադրման վայրերի, կենդանիների առանձնայկների և նրանց բների որևէ չհիմնավորված ոչնչացումը: Կապալառուն պատասխանատու է ՇՄԱԳ անխախտելի մաս կազմող ԲԿՊ-ի աղուսյակում ներկայացված մեղմացնող միջոցառումների իրականացման համար:

441. Ծառերի և թփերի պատշաճ կառավարումն ապահովելու նպատակով Կապալառուն իր սեփական ուսումնասիրությունն է իրականացնելու հաստատելու համար սույն հաշվետվությանը կցված (ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2) Կենսաբազմազանության հետազոտության հաշվետվության մեջ ներկայացված տվյալները, Ծրագրի տարածքում գտնվող և շինարարության ընթացքը խոչընդոտող բոլոր ծառերը և թփերը, որպեսզի խուսափի անհիմն ծառահատումներից: Բացի դրանից, որոշվելու են շինարարական հրապարակին մոտ գտնվող այն ծառերը և թփերը, որոնք կարող են վնասվել իրականացվող աշխատանքների պատճառով՝ դրանց պահպանությունն ապահովելու համար: Մոբիլիզացման փուլում Կապալառուն մշակելու է և ՎԻ-ի հաստատմանն է ներկայացնելու ՇԲԿՊ-ի Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլանի մաս կազմող Ծառերի կառավարման պլանը՝ որը կազմվելու է համաձայն ստարն բերված ձևաչափի՝

Ա. Ներածություն (փաստաթղթի նպատակը)

Բ. Թույլտվություններ և հաստատումներ

Գ. Ազդեցության գնահատում՝

ա. շինարարության ընթացքը խոչընդոտող, կտրման և կոտրման ենթակա ծառերի (թփերի) հաստատում՝ ըստ տեսակների և վարչական շրջանների

բ. աշխատանքային տարածքին մոտ գտնվող, պահպանության կարիք ունեցող ծառերի (թփերի) նույնականացում

Դ. Մեղմացնող միջոցառումներ՝

գ. ըստ կանաչապատման նախագծի և վարչական շրջանների հետ ձեռք բերված համաձայնության՝ իրականացվելիք ծառատունկի (վերատնկման) վայր և ժամանակացույց

դ. ծառահատման ընթացակարգ և փայտանյութի թափոնների կառավարում

ե. աշխատանքների պատճառով հավանական վնասման ենթակա ծառերի պահպանում

զ. նոր տնկված ծառերի (թփերի) պահպանում:

<sup>33</sup> ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին» 03.04. 2000 թ., հոդված 18; ՀՀ օրենքը « Բուսական աշխարհի մասին» 23.11. 1999 թ., հոդված 17.

Ե. Թույլտվություններ/համաձայնագրեր, քարտեզներ, աղյուսակներ, նկարներ և այլն պարունակող հավելվածներ

442. Կապալառուն թարմացնելու է Օտերի կառավարման պլանը և ներկայանցնելու է ՎԻ-հաստատմանը նախքան ծառերի ու թփերի հատման գործընթացը սկսելը: Հիմնական սկզբունքներից է լինելու՝ մաքրման ենթակա կամ այլ կերպ խաթարվող տարածքները նվազագույնի հասցնելը:
443. Կապալառուն իրականացնելու է բուսականության մաքրման աշխատանքները՝ խստագույնս հետևելով Տեխնիկական մասնագրերի Բաժինի 401. «Մաքրում և արմատահանում» և Բաժին 1003 «Օտեր և թփեր» պահանջներին: Բուսականության մաքրման նպատակով թունաքիմիկատներ չեն օգտագործվելու: Անհրաժեշտության դեպքում օգտագործվելու են միայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկը հաստատելու մասին» 2005 թվականի մարտի 17-ի թիվ 293 որոշման մեջ չգրանցված թունաքիմիկատներ և բացառելու է ԿՕՍ-ներ պարունակող քիմիական նյութերի օգտագործումը:
444. Օտերի հատման արդյունքում բնությանը հասցվող վնասի փոխհատուցման համար նախատեսված են հետևյալ միջոցառումները. այգիներում բնակչության կողմից աճեցվող թվով 459 պտղատու ծառը և 57 թփերը գնահտվելու և փոխհատուցվելու են մասնավոր անձանց ՀՕՏ շրջանակներում, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող 18 գեղազարդային ծառերի և 2 թփերի փոխարեն Կապալառուն տնկելու է նորերը: Օտերը տնկվելու են 1:6 հարաբերակցությամբ ընդհանուր սկզբունքով (6 ծառ/թուփ մեկ հատված ծառի/թփի դիմաց): Ընդհանուր առմամբ տնկվելու է 108 ծառ և 12 թուփ, որի համար ծախսերը նախատեսվում են 948000 ՀՀ դրամի չափով: Օտերը/թփերը տնկվելու են ԵՔ-ի կողմից հաստատված կանաչապատման նախագծով՝ ըստ Օտերի կառավարման պլանի: Լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտության դեպքում, փոխտատուցման ձևը կհամաձայնեցվի ԵՔ-ի հետ:
445. Աշխատանքների ընթացքում ժամանակավոր օգտագործված և խաթարված հողամասերի (եթե այդպիսիք լինեն) վերականգնմանն ուղղված միջոցառումները կիրականացվեն տվյալ տարածքի համար բնորոշ համարվող բույսերով: Բույսերի որևէ ապօրինի ներմուծում և այդ տարածքներում այլ տեսակների կլիմայավարժեցումը, ինչպես նաև անձանոթ տեսակների ներմուծումը խստորեն արգելվում է: Կապալառուն ներկայացնելու է օգտագործված տարածքների բուսականության վերականգնման մասին մեթոդաբանություն:
446. Շինարարական աշխատանքների և ավտոբուսային հավաքակայանի հետագա շահագործման ընթացքում ծրագրի իրականացման տարածքում հայտնաբերված կենդանիների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ են առաջարկվել Կենսաբազմազանության հետազոտության մեջ կենդանական աշխարհի պահպանության գծով մասնագետների կողմից, որոնք հաշվի են առնվել նախագծում: Մասնավորապես, հողային աշխատանքների ընթացքում կապալառուի կողմից կվարձվի կենդանաբանության մասնագետ, ով կվերահսկի աշխատանքները և կապահովի կենդանիների տեղափոխումը անվտանգ հեռավորության վրա՝ բարենպաստ միջավայրում: Բացի այդ, մասնագետների կարծիքով ծառատունկը և կանաչ գոտու ստեղծումը բնակչության վայր կդառնան միջատների և ցամաքային այլ անողնաշարավորների համար:
447. Այն տարածքները, որտեղ թունավոր օձերի առկայությունն առավել հավանական է, հատկապես կարևորվելու են ՇԲԿՊ-ում, մասնավորապես այս տարածքներում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում պարտադիր ԱՊՍ է լինելու երկարաճիթ կոշիկների կրումը: Աշխատողները անցնելու են պարտադիր վերապատրաստում, որի



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

ընթացքում կսովորեն լինել ուշադիր, ճանաչել թունավոր ցեղատեսակները և ճիշտ գործել օձերի հանդիպելիս (տե՛ս նաև վերևում Մասնագիտական առողջության և անվտանգության պլան):

448. Մանրամասն միջոցառումները տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-2-ում՝ ԲԿՊ սխեմայի պարբ. 4 և 14:

## Շրջակա միջավայրի պահպանության պլան

449. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ների, ԵԿ-ների և նրանց աշխատակիցների մոտեցումը շինարարական աշխատանքների հետևանքով հողը, օդը և ջրային մարմինները էրոզիայից, նստվածքազոյացումից, փոշու և այլ արտանետումներից, ինչպես նաև աղմուկից և թրթռումներից զերծ պահելու նպատակով իրականացվելիք միջոցառումների ուղղությամբ: Պլանն իր մեջ ներառում է ցանկացած ազդեցության վտանգը նվազեցնելուն ուղղված մեղմացնող միջոցառումներ՝ դրանք հասցնելով օրենսդրորեն ընդունելի մակարդակի օգտագործված բոլոր տարածքներում՝ շինհրապարակներում, ճամբարներում, շինարարական նյութերի տեղափոխման համար նախատեսված ճանապարհներին, հանքերում, բացահանքերում, լցակույտերում և այլ վայրերում: Մասնավորապես, դիտարկվել են հետևյալ ասպեկտները.

- i. Օդի աղտոտման և փոշու վերահսկում
- ii. Աղմուկի և թրթռման վերահսկում
- iii. Հողի էրոզիայի և նստվածքների վերահսկում
- iv. Ջրի որակի և նստվածքների վերահսկում

## *Օդի աղտոտում և փոշու վերահսկում*

450. Շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող փոշու և գազի արտանետումները նվազեցնելու համար մշակվել են կառավարման միջոցառումներ՝ օդի աղտոտվածությունը և տեղի բնակչության վրա հնարավոր առողջական ու անբարենպաստ ազդեցությունները վերահսկելու նպատակով: Կապալառուն օդի որակի վերահսկողությունն իրականացնելու է աշխատանքների ճիշտ կազմակերպման և ճշգրիտ ժամանակացույցի միջոցով: Հիմնական սկզբունքը՝ հողային աշխատանքների ընթացքում բաց մակերեսների տևողության հնարավորինս կրճատումն է, ինչպես նաև շինարարական նյութերի կուտակումների և դրանց մնացորդների ճիշտ ժամանակին շինհրապարակից հեռացումը:

451. Օդի որակի վերահսկողության մեկ այլ սկզբունք է՝ հնարավորության դեպքում դիզելային վառելիքի փոխարեն էլեկտրաէներգիայի կամ մարտկոցի էներգիայի կիրառումը, խուսափելով դիզելային շարժիչով կամ բենզինով աշխատող գեներատորները կիրառելուց:

452. Շինարարությանը վերաբերող հետագա միջոցառումները մանրամասն ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-2-ում՝ ԲԿՊ սխեմայի, պարբերություն 5-ում՝ Շրջակա միջավայրի պահպանության ծրագիր:

453. Շինհրապարակում օդի որակի վերահսկողությունն ապահովելու նպատակով, Կապալառուն իրականացնելու է ՇՄԱԳ/ԲԿՊ-ում ներառված միջոցառումները, որոնք մշտադիտարկվելու են ակնադիտական վերահսկողության և պարբերական գործիքային չափագրումների միջոցով: Մասնավորապես, կապալառուն իրականացնելու է փոշու պարբերական չափագրումներ, որոնց արդյունքները համատվելու են Հայաստանի օրենսդրությամբ սահմանված նորմերի (Հայաստանի Հանրապետության առողջապահության

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

նախարարություն, 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրաման) և ծրագրի համար ընդունված շեմային արժեքների հետ (տե՛ս Գլուխ Ե, Աղուսյակ Ե- 3):

454. Շինարարությունից հետո օդի որակի վերահսկման միջոցառումները սահմանափակված են Թերությունների վերացման ժամանակաշրջանով: Ավտոբուսային հավաքակայանի օդի որակի մոդելավորման հետազոտության մեջ նշվել է, որ շահագործման ժամանակահատվածում հատուկ մեղմացնող միջոցառումներ չեն պահանջվում (տե՛ս Գլուխ Ե., Ե2. Օդի որակ):

### *Աղմուկի և թրթռումների վերահսկում*

455. Աղմուկի և թրթռումների վերահսկման նպատակն է՝ աղմուկի և թրթռման մակարդակի հնարավոր բարձրացման և դրա բացասական հետևանքների կառավարումը: Բացասական հետևանքներ են համարվում աղմուկի և թրթռումների պատճառած անհանգստությունը, առողջական խնդիրները, որը կարող են առաջանալ և՛ շինարարների, և՛ հարակից տարածքում բնակվողների մոտ:
456. Աղմուկի և թրթռումների վերահսկման միջոցառումները խմբավորված են 2 բաժիններում՝
- Ծրագրի շինարարության փուլում ժամանակավորապես բարձրացած աղմուկի և թրթռման մեղմացում,
  - Կառուցված ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում մշտապես առկա աղմուկի և թրթռումների մեղմացում:
457. Միջոցառումների առաջին խումբը ներառվում է ՇՄԱԳ-ում և վերահսկվելու է ակնադիտական վերահսկողության և գործիքային չափագրումների միջոցով: Կապալառուն պահպանելու է աղմուկի և թրթռումների հետ կապված Հայաստանի օրենսդրությամբ սահմանված նորմերը (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրաման) և ծրագրի համար ընդունված շեմային արժեքները (տե՛ս Գլուխ Ե, Աղուսյակ Ե -3):
458. Ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում հնարավոր բարձրացած աղմուկը մեղմացնելու համար նախագծվել է 2.5 մ բարձրությամբ աղմկապաշտպան քարե պարիսպ, որը շրջակայքի բնակիչների և այլ զգայուն տարածքների համար կծառայի որպես ձայնային արգելապատնեշ (Գլուխ Ե, Ե 3), ինչպես նաև հավաքակայանի տարածքի պարագծով նախատեսվում է պաշտպանիչ գոտի՝ կազմված 2-3 շարք ծառերից՝ ըստ կանաչապատման նախագծի:

### *Հողի էրոզիայի և նստվածքի վերահսկում*

459. Մույն ենթապլանն իր մեջ ներառում է գրունտի և բուսահողի կառավարման հետ կապված հարցերը: Նախագծի շրջանակում մշակվել են Տեխնիկական մասնագրերի Բաժին 101. Ընդհանուր պահանջների, կետ 101.15 Շրջակա միջավայրի պաշտպանություն և Տեխնիկական մասնագրերի Բաժին 1002. Բուսահող, ինչպես նաև կիրառելի են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ բուսահողի պահպանման կանոնակարգերը:
460. Գրունտի էրոզիայի և նստվածքի վերահսկման պլանն իր մեջ ներառում է վտանգված տարածքները նվազագույնի հասցնելու, գրունտի էրոզիայից և նստվածքների արտահոսքից խուսափելու նպատակով տեղամասային աշխատանքների պատշաճ կազմակերպմանն ուղղված միջոցառումները: Կապալառուն էրոզիայի վերահսկումն իրականացնելու է ըստ Տեխնիկական մասնագրերի (հղումը պետք է հաստատվի) - էրոզիայի վերահսկում, ինչպես նաև իրականացնելու է բուսահողի հեռացում և պահեստավորում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Տեխնիկական մասնագրերի Բաժին 1002-ի (Բուսահող):

*Ջրի որակի և նստվածքների վերահսկում*

461. Ջրի որակի և նստվածքագոյացման վերահսկման միջոցառումները նախատեսված են Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլանում (տե՛ս ստորև)՝ ոռոգման ջրանցքը և այլ ջրատարերը՝ շինարարական թափոններով, նյութերի մնացորդներով, նստվածքներով և այլ աղտոտիչներով աղտոտվելուց զերծ պահելու համար, որոնք կարող են ազդել ջրի որակի վրա: (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ժ. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1 պարբերություն 6. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանման պլան):

**Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան**

462. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների՝ ոռոգման ջրանցքի և ոռոգման ջրատար առուների նկատմամբ մոտեցումները՝ ջրի հոսքի և որակի վրա ազդեցությունները նվազեցնելու համար:

463. Մի շարք արգելող, կանխարգելիչ և մեղմացնող միջոցառումներ են նախատեսվել ԲԿՊ-ում: Արգելող խումբն իր մեջ ներառում է որոշակի գործողություններ կանխող (արգելող) միջոցառումները՝ չնայած այդ գործողությունները նախագծում նախատեսված չեն: Այսպիսով, Կապալառուի համար այն ծառայում է որպես հիշեցում այդ գործողությունների արգելված լինելու մասին: Մասնավորապես՝

- ✓ ոռոգման ջրանցքից ջրատ չի նախատեսվում և արգելվում է: Այդպիսի անհրաժեշտության դեպքում՝ Կապալառուն ձեռք է բերելու «Երևան» ՋՕԸ-ի համապատասխան թույլտվությունը;
- ✓ արգելվում է ջրանցքի հունի որևէ փոփոխությանը հանգեցնող ցանկացած գործողություն;
- ✓ արգելվում է ջրի ազատ հոսքը խոչընդոտող ցանկացած գործողություն (ժամանակավոր կամ մշտական),
- ✓ արգելվում է ոռոգման ջրանցքի ջրի հոսքի ցանկացած խանգարում, եթե դրա շուրջ պայմանավորվածություն ձեռք չի բերվել համապատասխան մարմնի հետ:.

464. Թեև որևէ աշխատանք, որը կարող է անմիջական ազդեցություն ունենալ ոռոգման ջրանցքի վրա, նախատեսված չէ, այնուամենայնիվ, մշակվել է մի խումբ պարտադիր մեղմացնող միջոցառումներ, մասնավորապես՝

- ✓ կազմել ոռոգման սեզոնից դուրս ոռոգման ջրանցքին կից իրականացվելիք շինարարական աշխատանքների ժամանակացույցը,
- ✓ անհրաժեշտության դեպքում ոռոգման ջրի հոսքը խաթարելուց առաջ դիմել համապատասխան մարմիններին և ձեռք բերել «Երևան» ՋՕԸ-ից թույլտվությունը,
- ✓ ոռոգման ջրանցքի ջրի հոսքի ժամանակավոր խանգարումների հետ կապված աշխատանքերը (եթե այդպիսիք հարկ կլինի իրականացնել) կազմակերպել այնպես, որ ջրի հոսքի խաթարումները լինեն կարճատև և չհիմնավորված ձգձգումները բացառվեն:

465. Ոռոգման ջրանցքը շինարարական աղբով, շինանյութի և թափոնների մնացորդներով, նստվածքագոյացման և ջրի որակի վրա ազդող այլ աղտոտող նյութերի միջոցով աղտոտվելուց զերծ պահելու համար նախատեսվում է իրականացնել նստվածքների և աղտոտման կառավարմանն ուղղված միջոցառումներ, որոնք ներկայցված են ԲԿՊ-ի աղյուսակում՝ որպես ՀԱՎԵԼՎԱԾ Ժ: Կապալառուն հնարավորինս կանխելու է բոլոր շինարարականներից արտահոսքը դեպի մակերեսային ջրային մարմիններ, այդ թվում՝ շինարարական

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

ճամբարներից, նյութերի պահեստներից, քարջարդ և բետոնի գործարաններից (եթե այդպիսիք կլինեն), աղբանոցներից և այլ վայրերից: Ջրահեռացման էլքերում տեղադրվելու են յուղի գոտիչներ՝ շինհրապարակից դեպի Շիրակի փողոցի ջրահեռացման համակարգ աղտոտող նյութերի արտահոսքը կանխելու համար: Այս միջոցառումը նախատեսված է շահագործման փուլում ջրահեռացման համակարգը աղտոտված հեղեղաջրերից զերծ պահելու համար:

466. Քանի որ ինժեներաերկրաբանական հետազոտությունը ցույց է տվել տեղամասի արևելյան և արևմտյան եզրերով անցնող ջրային առուների վատ վիճակը, որոնք չամրացվելու և չվերանորոգվելու դեպքում կարող են հանգեցնել անցանկալի հետևանքների, հետևաբար, նախատեսվել են ոռոգման ջրանցքի ամրացման աշխատանքներ:
467. Թեև ըստ երկրաբանական հետազոտության տվյալների՝ ազդեցությունը ստորգետնյա ջրերի վրա հավանական չէ, երկրաբանի կողմից առաջարկվում են մի շարք միջոցառումներ, որոնք ներառված են նախագծում: ԲԿՊ-ում նախատեսվում է համապատասխան մեղմացնող ընթացակարգ՝ շինարարության ընթացքում աղտոտումը նվազեցնելու համար, որոնք վերաբերվում են վառելիքի ճիշտ պահեստավորմանը, վերալիցքավորման կայանների և մեքենաների տեխնիկական սպասարկման արհեստանոցների համար սահմանագծված տարածքների պատշաճ կազմակերպմանը, ցանկացած արտահոսքի պարտադիր մաքրման աշխատանքների իրականացմանը, իսկ լայնածավալ արտահոսքերի դեպքում՝ ՇՄՆ-ին տեղեկացմանը և հաշվետվությունների ներկայացմանը:

## Հաղորդուղիների պահպանության և տեղափոխման պլան

468. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի մոտեցումը հաղորդուղիների՝ էկոլոգիապես անվտանգ տեղափոխման/տեղադրման և պահպանության ուղղությամբ: Հաղորդուղիների տեղափոխումն իրականացվելու է ըստ նախագծի և դրա հետ մեկտեղ պահպանվելու են այն հաղորդուղիները, որոնք ենթակա չեն տեղափոխման: , և իրականացնելու Շինարարական աշխատանքների ընթացքում կարող են հայտնաբերվել նոր հաղորդուղիներ, որոնք նույնպես պահպանվելու կամ տեղափոխվելու են սույն պլանով:
469. Հաղորդուղիների պահպանման և տեղափոխման պլանը իրականացվում է Տեխնիկական մասնագրերի՝ «Հաղորդուղիների տեղափոխում» բաժնի պահանջների համաձայն: Յուրաքանչյուր դեպքում, Կապալառուի կողմից կազմվելու է հաղորդուղիների տեղափոխման նախագիծ,, որը համաձայնեցվելու և հաստատվելու է սեփականատիրոջ կողմից:
470. Հաղորդուղիների տեղափոխման գործընթացի պատշաճ իրականացման համար մշակված մեղմացնող միջոցառումները փոխկապակցված են Հանրային լուսմների և հաղորդակցության պլանին և ներկայացված են ԲԿՊ աղուսյակում (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1 ԲԿՊ սխեմա, պարբերություն 7):

## Շինարարական ճամբարների տեղակայման պլան

471. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը շինարարական ճամբարների հիմնման ընթացքում՝ հաշվի առնելով, որ Ծրագրի տարածքը գրեթե ամբողջությամբ գտնվում է խիտ բնակեցված և ձեռնարկատիրական գործունեությունների վայրում: Գճամբարների տեղակայման և օգտագործման հետ կապված խնդիրները մի կողմից վերաբերում են շրջակա բնական միջավայրի վրա հնարավոր ազդեցությանը, մյուս կողմից՝ շրջակա սոցիալական միջավայրը պաշտպանելու անհրաժեշտությանը՝ հարակից բնակավայրերում և ձեռնարկատիրական գործունեությունների վայրերում անհանգստություններից խուսափելու և աշխատակիցների առողջությունը, անվտանգությունը և հարմարավետությունն ապահովելու համար:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

472. Սույն ենթապլանով ԳԿ-ի համար ընդհանուր պահանջներ են սահմանվում, որոնք վերաբերվում են գլխավոր գրասենյակի և շինարարական ճամբարների պլանավորմանը և տեղակայմանը, մեքենաների կայանատեղերի կազմակերպմանը, նյութերի և սարքավորումների պահեստավորմանը և աշխատանքային անձնակազմի համար սննդի և հանգստի սանիտարական հարմարությունների կազմակերպմանը: Միջոցառումները ներառված են ՇՄԱԳ/ԲԿՊ-ի մեջ և իրականացվելու են Կապալառուի կողմից՝ տեղի բնակչությանը պատճառվող անհանգստությունը նվազագույնի հասցնելու, բնակչության և տեղի/կենտրոնական իշխանությունների հետ ընդհարումից խուսափելու, ինչպես նաև հողի և ջրի աղտոտումը նվազագույնի հասցնելու համար:
473. Կապալառուի և ենթակապալառուների գրասենյակների, անձնակազմի կացարանների, սարքավորումների պահեստավորման, կայանատեղերի և մեքենաների մաքրման արտադրամասի, նյութերի ժամանակավոր պահեստավորման տարածքների համար օբյեկտների տեղակայման հիմնական չափորոշիչները/սկզբունքը՝ Ծրագրի տարածքում դրանց գտնվելու պահանջն է: Ծրագրի համար հատկացված տարածքից դուրս ցանկացած տարածքի օգտագործումը բացառվելու է:
474. Ավտոբուսային հավաքակայանի տարածքից դուրս շինարարական ճամբարների տեղակայման համար, եթե այդպիսի անհրաժեշտություն առաջանա, Կապալառուն ձեռք է բերելու ՎԻ-ի համաձայնությունը: Թույլատրված տարածքից դուրս ցանկացած օբյեկտի տեղակայման համար Կապալառուն նախապես ստանալու է հողամասի սեփականատիրոջ գրավոր թույլտվությունը: Շինարարական ճամբարի, տեղադիրքի ընտրությունը, եթե գտնվում է ծրագրի օտարման գոտուց դուրս և մոտ է բնակելի տներին և ձեռնարակատիրական օբյեկտներին, կատարվելու է հաշվի առնելով՝ հողի տոփանման և աղտոտման, ինչպես նաև մոտակա տարածքների բնակիչներին պատճառվող անհանգստությունը: նվազագույնի հասցնելու սկզբունքը:
475. Դաշտային ճամբարները ստեղծվելու են՝ Կապալառուի մոբիլիզացման պլանի և Կապալառուի՝ ՇԲԿՊ-ում ներկայացված տեղակայման սխեմայի համաձայն: Կանխարգելիչ/մեղմացնող միջոցառումները մանրամասնորեն ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1 ԲԿՊ սխեմա, պարբերություն 8-ում:

ՋՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ

476. Ավտոբուսային հավաքակայանի շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում տեխնոլոգիական նպատակներով ջրամատակարարումն իրականացվելու է համապատասխան մարմնի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով: Ամենամոտ ջրային համակարգերին միանալու հեռանկարային և պայմանագիր կնքելու հնարավորությունն ուսումնասիրվել է նախագծման փուլում (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե -5 և Ե-6):
477. Խմելու ջուրը հասանելի կլինի շինարարական տեղամասերի բոլոր հատվածներում, ինչպես դեկավար անձնակազմի, այնպես էլ այլ աշխատակիցների համար: Կապալառուն ապահովելու է բավարար քանակությամբ շշայցված ջուր (օրական ամենաքիչը երկու լիտր շշայցված ջուր՝ մեկ անձի հաշվով):

ԷԼԵԿՏՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ

478. Շինարարական ճամբարի տեղանքը ապահովված է լինելու էլեկտրաէներգիայով՝ համապատասխան մարմնի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման միջոցով կամ կոմպակտ գեներատորների տեղադրման միջոցով: Էլեկտրաէներգիան անհրաժեշտ է լինելու ինչպես ճանապարհային անվտանգության ապահովման համար շինարարական աշխատանքների, այնպես էլ անվտանգության նկատառումներից ելնելով

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

գիշերային ժամերին շինարարության տարածքում և ճամբարում լուսավորության ապահովման համար: Կապալառուն հոգալու է, որպեսզի բավարար լուսավորություն լինի բոլոր այն վայրերում, որտեղ աշխատանքները ընթացքի մեջ են և վերջինիս աշխատակազմի համար ապահովված են անվտանգ աշխատանքային պայմաններ:

## ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

479. Բոլոր աշխատակիցների համար ծրագրի տարածքում տեղակայված ճամբարը Կապալառուն կահավորելու է ժամանակավոր սանիտարական հարմարություններով: Սանիտարական հարմարությունները (զուգարան, լվացվելու, ճաշելու, սրճելու, հանգստանալու, ձմռանը տաքանալու հարմարություններ) լինելու են բավարար քանակությամբ, պատշաճ կերպով պահպանվելու են շինարարական աշխատանքների ողջ ընթացքում, և առավելագույնս հեռու են լինելու հասարակության տեսադաշտից: Կապալառուն ապահովելու է նման սանիտարական հարմարությունների հասանելիությունը բոլոր աշխատակիցների համար: Ժամանակավոր տեղակայված հարմարությունները ճիշտ ժամանակին կհեռացվեն շինարարական աշխատանքների ավարտից հետո:

## ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

480. Ճամբարի տարածքում նյութերի ժամանակավոր պահեստավորումը և մեքենաների կայանման ու վերանորոգման արհեստանոցների տարածքները կազմակերպվելու են այնպես, որ որևէ կերպ չխանգարեն բնակիչներին, ճանապարհային երթևեկությանը և ներքին ճանապարհից օգտվողներին: Կապալառուն ապահովելու է այս օբյեկտների անվտանգությունը և մաքրությունը:

481. Նյութերի ժամանակավոր պահեստավորման տարածքները կազմակերպվելու են պատշաճ կերպով. նյութերը կանոնավոր կերպով կույտերով կուտակվելու են և պատվելու են ծածկով, պարկերն ու տարաները պիտակավորվելու են՝ նշելով նյութի անունը և վտանգավորության աստիճանը՝ վտանգավոր/ոչ վտանգավոր:

482. Ճամբարի տարածքում լինելու են մեքենաների լվացման օբյեկտներ և կեղտաջրերի հեռացման համակարգեր. առաջացած կեղտաջրերը ուղղվելու են տեղի ջրահեռացման համակարգ:

483. Կայանման և վերալիցքավորման տարածքները ունենալու են անջրաթափանց մակերեսներ: Կապալառուն խուսափելու է կայանման վայրերը առանց պատվածքի հողի վրա, կամ խոտածածկ և բուսածածկ կանաչ վայրերում տեղակայելուց:

## Տեղամասի կառավարման պլան (հանք և բացահանք, լցակույտեր, բետոնի և ասֆալտի գործարաններ)

484. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը Ծրագրի տարածքից դուրս՝ հանքերի, բացահանքերի, քարջարդ, բետոնի և ասֆալտի գործարանների, շինանյութերի և սարքավորումների տեղափոխման համար օգտագործվող ճանապարհների վրա շինարարական գործունեության հետևանքները կառավարելու միջոցառումների իրականացման գործում:

485. Ծրագրով չի նախատեսվում բացել նոր հանքեր և/ կամ հողային հանույթի վայրեր: Նախատեսված չէ նաև հիմնել բետոնի կամ ասֆալտի գործարան: Ենթադրվում է, որ մրցույթն հաղթող կապալառուն նյութը գնելու է արդեն իսկ գոյություն ունեցող հանքից և/ կամ ասֆալտի գործարաններից գնման պայմանագրի հիման վրա: Կապալառուից պահանջվելու է Վերահսկող Ինժեներին տրամադրել շինանյութի գնման պայմանագրերի պատճենները:

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

486. Նաև չի նախատեսվում բացել նոր թափոնավայրեր կամ աղբավայրեր: Բոլոր թափոնները կտեղափոխվեն գոյություն ունեցող աղբակույտեր՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագիրը: Համապատասխան թույլտվությունը Կապալառուն կտրամադրի ՎԻ-ին:
487. Եթե Կապալառուն այնուամենայնիվ բացի նոր հանքեր և/ կամ հողագրունտի հանույթ կիրականացնի, ինչպես նաև կհիմնի բետոնի կամ ասֆալտի գործարաններ, ապա վերջինից կպահանջվի խստորեն հետևել ՀՀ համապատասխան օրենսդրությանը, այդ թվում՝ ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին» 03.04. 2000 թ., հոդված 18; ՀՀ օրենքը « Բուսական աշխարհի մասին» 23.11. 1999 թ., հոդված 17, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքը» (ՀՕ-211 27.11.2006 թ), ինչպես նաև ժամանակավորապես օգտագործվող յուրաքանչյուր տարածքի համար նրանից կպահանջվի պատրաստել և հաստատման ներկայացնել Տեղամասի կառավարման պլանը: Տեղամասի կառավարման պլանի բովանդակության համառոտ նկարագիրը տրված է ՀԱՎԵԼՎԱԾ Լ-ում:

## Երթևեկության և մուտքերի կառավարման պլան

488. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների, ինչպես նաև նրանց աշխատակիցների մոտեցումը՝ շինարարական աշխատանքների ընթացքում հանրային ճանապարհային երթևեկությունը կառավարելու և շինարարական մեքենաները շինհրապարակ մուտք/ ելք գործելու համար միջոցառումների իրականացման գործում: Երթևեկության և մուտքերի կառավարման պլանը կազմվելու է Կապալառուի կողմից՝ որպես ՇԲԿՊ-ի մաս, և համաձայնեցվելու է Երևանի քաղաքապետարանի ՕԻԳ-ի և ճանապարհային ոստիկանության հետ շինարարական աշխատանքների մոբիլիզացման ժամանակահատվածում և ամեն անգամ անհրաժեշտության դեպքում թարմացվելու է: Պլանավորման հիմնական սկզբունքը լինելու է խուսափել երթևեկության խցանումներից և ապահովել անվտանգ տեղաշարժի պայմաններ հանրային երթևեկության ու հետիոտների համար:
489. ԵԿՊ-ն ներառելու է նաև Տրանսպորտային միջոցների կառավարման պահանջներ՝, ինչպիսիք են՝ կայանման կազմակերպումը, վերանորոգումը, տեխնիկական գնությունը, վերալիցքավորումը և այլն:
490. Կապալառուն պարտավորվելու է անցկացնել Նախաշինարարական ճանապարհային և գույքի վիճակի ուսումնասիրություն և արձանագրել տեղական ճանապարհային ցանցի և ճանապարհի եզրին գտնվող գույքի վիճակը, ինչպես նաև փոխհատուցելու ու վերականգնել պատճառված վնասը:
491. Երթևեկության և մուտքերի կառավարման պլանով նախատեսված միջոցառումները թվարկված են ՀԱՎԵԼՎԱԾ Ժ. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1-ի ԲԿՊ սխեմա պարբերություն 10-ում:

## Թափոնների և նյութերի կառավարման պլան

492. Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը շինարարական նյութերի պահեստավորման, ինչպես նաև շինարարության ընթացքում առաջացած թափոնների և նյութերի մնացորդների հեռացման, նաև շինարարության ընթացքում աղտոտված հողի կառավարման գործում:
493. Սույն պլանի թափոնների կառավարման հիմնական սկզբունքը հիմնված է թափոնների կառավարման մոտեցումների ներքոնշյալ առաջնահերթության վրա (ամենաբարձրից մինչև ցածր)՝
- i. հնարավորության դեպքում խուսափել թափոնների գոյացումից
  - ii. նվազեցնել թափոնների գոյացումը, ներառյալ՝ հողի աղտոտումը

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- iii. հնարավորինս վերաօգտագործել թափոնները
  - iv. հնարավորինս վերամշակել թափոնները, և
  - v. Մնացած թափոնները, գրունային հանույթը և աղտոտված հողը տեղադրել էկոլոգիապես ճիշտ եղանակով՝ քաղաքային իշխանությունների կողմից նշանակված վայրերում:
494. Նյութերի կառավարման հիմնական սկզբունքն այն է, որ Կապալառուն պատշաճ կերպով կազմակերպի շինանյութի մատակարարումը և պահեստավորումը: Շինանյութը մատակարարվելու է ամենօրյա սպառման քանակներով՝ շինարարության տարածքում երկար ժամանակ մնալուց, շինհրապարակներում տարածվելուց և աղբի, փոշու և ցեխի աղբյուր դառնալուց խուսափելու համար: Այն նյութը, որը չի մատակարարվում ամենօրյա սպառման քանակով, պահվելու է հատուկ հատկացված պահեստային տարածքում, որը նշված է Կապալառուի մոբիլիզացիոն պլանում և ՇՄԿՊ-ում. վերջինս հազեցած է լինելու անհրաժեշտ հարմարություններով՝ պահպանելու անվտանգության և աղտոտման վերահսկման կանոնները կոնտեյներներ, ծածկված պահեստներ, մնացորդների հավաքման կոնտեյներներ և այլն:
495. Հանույթի և հարթեցման աշխատանքներից կարող է առաջանալ հողագրունտի ավելցուկ: Ավելանալու դեպքում այն պետք է դասակարգվի, տեղափոխվի և տեղադրվի ԵՔ-ի կողմից հատկացված թափոնավայրում:
496. Կապալառուն դիմելու է համապատասխան մարմիններին՝ ստանալու բոլոր անհրաժեշտ օրենսդրական թույլտվությունները և լիցենզիաները թափոնների, այդ թվում՝ վտանգավոր թափոնների դասակարգման, փոխադրման, վերամշակման և հեռացման համար: Շինարարական թափոնների և նյութերի ցանկացած տեղափոխում շինարարության տարածք և տարածքից դուրս իրականացվելու է ճանապարհային ոստիկանության և ՎԻ-ի կողմից հաստատված ԵԿՊ-ի համաձայն:
497. Թափոնների, նյութերի մնացորդների և աղտոտված հողի կառավարումը վերոնշյալ սկզբունքների համաձայն՝ պատշաճ կերպով իրականացված ժամանակավոր կուտակում, սորտավորում, պահեստավորում և հեռացում, համապատասխան վերապատրաստման դասընթացների հետ մեկտեղ, թույլ կտա ապահովել թափոնների առաջացման և աղտոտված հողի կառավարման հետ կապված ռիսկի նվազեցումը ՇՄՆ-ի, Հայաստանի օրենսդրության և միջազգային լավագույն փորձով սահմանված ընթացակարգերին համապատասխան:
498. Թափոնների կառավարման առաջարկվող մեղմացնող միջոցառումները, այդ թվում՝ թափոնների հաշվառման պահանջները, նշված են ԲԿՊ աղյուսակում (ՀԱՎԵԼՎԱՕ Ժ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱՕ Ժ-1 ԲԿՊ, Թափոնների և նյութերի կառավարման պլան, պարբերություն 12): Մյուս կողմից՝ Կապալառուից պահանջվելու է իր ՇԲԿՊ-ում ներկայացնել թափոնների կառավարման և դրանց քանակի կրճատման առավել մանրամասն ծրագիր: Կապալառուի՝ թափոնների կառավարման պլանը հաստատելիս Ինժեների ուշադրության կենտրոնում են լինելու հատկապես բետոնաջրերի հավաքման եղանակները և նավթի/վառելիքի/քանյութերի մնացորդները՝ հետագայում դրանց կրկին օգտագործելու հնարավորությունները:
499. Կապալառուն մանրամասն ներկայացնելու է իր մոտեցումը բոլոր տեսակի նյութերի և թափոնների կառավարման վերաբերյալ, որոնք առաջացել են շինարարական աշխատանքների ընթացքում:

ԱՆՎՏԱՆԳ ԹԱՓՈՆՆԵՐ

500. Ապամոնտաժման գործողություններից առաջացող թափոնները և շինարարության հետ կապված այլ թափոնները ենթակա են շինհրապարակից հեռացման: Ապամոնտաժված շենքերի/ շինությունների բեկորները, բետոնե մասերը, մետաղական, պլաստմասե, փայտե մասերը և այլն՝ ոչ վտանգավոր թափոններ են: Բոլոր ոչ վտանգավոր թափոնները



## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

դասակարգվելու են ըստ դրանց հետագա օգտագործման պիտանելիության: Ապամոնտաժված պիտանի նյութերը փոխանցվելու են սեփականատիրոջը: Ոչ պիտանի նյութերը հեռացվելու են տեղամասից և տեղափոխվելու են նախապես թույլատրված աղբավայրեր: Շինարարական աղբի տեղադրման համապատասխան թույլտվություն ստանալու համար Կապալառուն դիմելու է Երևանի քաղաքապետարանին՝ և գրավոր թույլտվությունը ներկայացնելու է ՎԻ-ին:

501. Պինդ թափոններ: Վերջինս կարող է ներառել մետաղի և փայտանյութի, բետոնի, թղթի, պլաստմասի, ստվարաթղթի, շշերի և այլ շինարարական թափոնների, ինչպես նաև օրգանական սննդի թափոններ (աղբ): Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքային տարածքի և շինհրապարակի հարակից տարածքների մաքրության համար: Հարակից տարածքներում թափոններ չեն լինելու: Շինհրապարակից դուրս ցրվող և տարածվող ցանկացած թափոն հավաքվելու է Կապալառուի/ենթակապալառուի կողմից: Ամբողջ աղբը Կապալառուի կողմից տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից նշանակված աղբավայր՝ վարչական շրջանի հետ կնքված պայմանագրի կամ թույլտվության հիման վրա:

## ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ

502. Վտանգավոր նյութերն ու թափոնները ներառում են այնպիսիք, որոնք կարող են առաջանալ շինարարական աշխատանքների ժամանակ, օրինակ՝ բնակելի հին տների քանդումից առաջացած ասբեստ պարունակող նյութերը: Ապամոնտաժված տանիքների հետևանքով առաջացած ասբեստ պարունակող թափոնները կհեռացվեն և կտեղավորվեն՝ համաձայն ՇՄՆ-ի Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի կողմից մշակված ասբեստ պարունակող նյութերի հետ աշխատելու ուղեցույցի: Հայաստանի օրենսդրության պահանջներին համապատասխան Կապալառուն ձեռք է բերելու լիցենզիա վտանգավոր թափոնների մշակման համար կամ պայմանագիր է կնքելու մասնագիտացված լիցենզավորված ընկերության հետ: Անհրաժեշտության դեպքում վտանգավոր թափոնների հեռացումը Կապալառուն համաձայնեցնելու է Շրջակա միջավայրի նախարարության հետ, որի մասին տեղեկացնելու է ՎԻ-ին:

## ՀԵՂՈՒԿ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐ

503. Վտանգավոր հեղուկ նյութերը և դրանց թափոնները դյուրավատ և/ կամ կենդանի օրգանիզմների համար թունավոր նյութերն են: Դրանք պահեստավորման, մշակման և վերացման հատուկ ընթացակարգեր են պահանջում և դասակարգվում են հետևյալ կերպ՝
- ✓ վառելիանյութ, այդ թվում՝ բենզինը, դիզելային վառելիքը, բիտումը և դրանց թափոնները
  - ✓ օգտագործված տեխնիկական յուղեր
  - ✓ բետոնաջուր (բետոնատար մեքենայի բաքը լվացվելու է բետոնի գործարաններում կամ հատուկ հատկացված վայրում):
  - ✓ Մեքենաների լվացման կեղտաջրեր

## ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԿՐՃԱՏՈՒՄ

504. Հնարավորության դեպքում Կապալառուն վերօգտագործելու է առաջացած թափոնները, մասնավորապես հողագրունտի հանույթը, քարերը և ապարները, քանդված ասֆալտը, տեխնիկական յուղը և բետոնե թափոնները: ՇԲԿՊ-ի շրջանակներում Կապալառուն ներկայացնելու է թափոնների կրճատման իր ծրագիրը:

### Մշակութային ժառանգության կառավարման պլան

505. Թեև հնագետի հետ խորհրդակցության հիման վրա մշակութային և հնագիտական ժառանգության վրա ազդեցությունը գնահատվել է «ոչ նշանակալի» և աննշան, այնուամենայնիվ Մշակութային ժառանգության ենթապլանը ներառվել է ԲԿՊ-ում: Պլանը մշակվել է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (11.11.1998) և «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 438 որոշման համաձայն (20.04.2002 թ.): Այս ենթադրագրի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ի մոտեցումը՝ Ծրագրի տարածքում հայտնաբերված հնագիտական գտածոների, դրանց պահպանման և տեղափոխության ընթացակարգի և միջոցառումների վերաբերյալ:

### Աշխատանքային տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան

506. Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի, ԵԿ-ների և նրանց աշխատակիցների մոտեցումը՝ տեղամասի մաքրման և վերականգնման աշխատանքների գործում՝ որպես շինարարական աշխատանքների մի մաս: Շինարարական աշխատանքների ավարտին բոլոր խաթարված տարածքները պետք է գտնվեն մաքուր և կայուն վիճակում: Այս պլանը կիրառելի է՝

- (i) շինարարական հրապարակի բոլոր տեղամասերում,
  - (ii) բոլոր այն տարածքներում, որտեղ Կապալառուն հարմարություններ է ստեղծել (շարժական տներ, պահեստային տարածքներ, կայանատեղիներ և այլն).
- ✓ Ծրագրի ավարտից կամ շինհրապարակում աշխատանքների ավարտից հետո, վերջինս մաքրվելու է բոլոր նյութերից և թափոններից, տեղանքը կանաչապատվելու է այնպես, որ հնարավորինս վերականգնի տեղանքի նախնական վիճակը: Բուսականության վերականգնման աշխատանքների պահանջները ներկայացված են կանաչապատման նախագծում: Ենթադրվում է՝
- Կանաչապատման նախագիծը լրամշակել և Ծառերի կառավարման պլանը կազմել հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 14.08.2014 թ.-ի №781-Ն որոշման պահանջները;
  - տնկել ծառեր, թփեր՝ համաձայն կանաչապատման նախագծի և Ծառերի կառավարման պլանի: Տե՛ս նաև Տեխնիկական մասնագրերի համապատասխան բաժինները. «Բուսահողի, ծառերի, թփերի վերականգնում և ճմապատում»:
  - Ծառերի և այլ բույսերի նորմալ աճը և խնամքն ապահովելու և վերահսկելու համար վարձել կանաչապատման գծով ենթակապալառու:

507. Համաձայն կանաչապատման նախագծի, կանաչապատման ենթակա տարածքը զբաղեցնելու է մոտ 10540 մ2, որի համար անհրաժեշտ բուսահողի ծավալը գնահատվում է 1212.4 մ3:

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

508. Տեղամասի վերականգնման միջոցառումները չիրականացնելու կամ ոչ պատշաճ կերպով իրականացնելու դեպքում՝ դրանք կընդգրկվեն շտկման ենթակա թերությունների ցուցակում և աշխատանքների հանձնման- ընդունման վերջնական ակտը կստորագրվի ՎԽ-ի կողմից միայն վերականգնման միջոցառումները լիարժեք իրականացնելու և ավարտին են հասցնելու դեպքում:

## Թերությունների վերացման փուլ

509. Կապալառուն պատասխանատու է լինելու Բնապահպանական երաշխիքների՝ ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի և Հայաստանի օրենսդրությանը համապատասխանության ապահովման համար նաև Թերությունների վերացման փուլում, այսինքն այն ժամանակահատվածում, որի ընթացքում Կապալառուն տեղում իրականացնելու է թերությունների շտկման աշխատանքներ:

510. ԲԿՊ-ի այս բաժինը ներառում է շինարարության փուլի համար սահմանված մեղմացնող միջոցառումներին հետևելու բոլոր պահանջները, այն տարբերությամբ, որ որոշ միջոցառումների համար՝ օրինակ օդի որակի, աղմուկի և թրթռումների գործիքային չափագրումների համար կարող է փոփոխվել մոնիթորինգի հաճախականությունը:

511. Կապալառուի սովորական պարտավորությունների գումարվելու են Թերությունների վերացման փուլին հատուկ պահանջներով: Դրանք մանրամասն ներկայացված են ԲԿՊ աղյուսակում (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1 պարա 24):

## Ավտորուսային հավաքակայանի շահագործման փուլ

512. Թերությունների վերացման փուլին հաջորդող ժամանակահատվածում՝ շահագործման փուլում, Հայաստանի օրենսդրության պահանջներին բնապահպանական համապատասխանության ապահովումը փոխանցվում է ավտորուսային հավաքակայանի շահագործողին (օպերատորին): Օպերատորը կմշակի և կհիմնի բնապահպանական/սոցիալական կառավարման համակարգ, որը կհամապատասխանի հետևյալ պահանջներին.

- ❖ Բնապահպանական երաշխիքների անձնակազմ՝ լրիվ դրույքով աշխատող բնապահպանության մեկ մասնագետ և լրիվ դրույքով աշխատող սոցիալական հարցերի մեկ մասնագետ
  - ❖ Բնապահպանական կառավարման պլան
  - ❖ Աշխատանքային անվտանգության և առողջության ծրագիր
  - ❖ Սոցիալական պատասխանատվության ծրագիր
  - ❖ Մոնիթորինգի պլան
  - ❖ Տվյալների հավաքագրում և հաշվետվությունների ներկայացում
513. Բնապահպանական կառավարման պլանը պետք է ներառի՝

- Շրջակա միջավայրի պահպանության ծրագիր
  - Օդի որակ
  - Աղմուկի և թրթռումների հսկողություն
  - Ծառեր և կանաչապատում

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- Թափոնների կառավարում
- Նյութերի պահեստավորում
- Հաղորդողիների պաշտպանություն
- Աշխատանքային անվտանգության և առողջության ծրագիր
  - Ավտոբուսային հավաքակայանի անվտանգ շահագործման ձեռնարկ
  - Աշխատանքին բնորոշ անվտանգության ցուցումներ
  - Առողջապահության ծրագիր
- Սոցիալական պատասխանատվության ծրագիր
  - ԲԼՄ
  - Տեղեկատվության տրամադրում
  - Աշխատանքային անձնակազմի համար սոցիալական գործիքներ

514. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը (ԱԻԱՊ) մշակվել է Նախագծման ինժեների կողմից՝ որպես Անվտանգության կառավարման համակարգի մաս, որպեսզի այն ներառվի Ավտոբուսային հավաքակայանի օպերատորի ձեռնարկում: ԱԻԱՊ-ը ներառում է տեղամասի գլխավոր հատակագիծը՝ սահմանված անվտանգության գոտիներով, հարմարությունների/կառույցների և մոտակայքում երրորդ կողմին պատկանող տարածքների միջև նշված հեռավորություններով, ինչպես նաև առաջարկություններ ազդանշանային համակարգի կազմակերպման, արտակարգ իրավիճակների ընթացակարգերի, հրդեհավտանգ իրավիճակի և ռիսկի նվազեցման միջոցառումների վերաբերյալ: ԱԻԱՊ-ը կկցվի ՇՄԱԳ հաշվետվությանը:

515. Բնապահպանական երաշխիքների և համապատասխանության վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են ՇՄԱԳ/ԲԿՊ-ի այս բաժնում:

**Թափոնների և նյութերի կառավարման պլան**

516. Շինարարության փուլի ավարտից հետո Օպերատորը կկազմակերպի թափոնների կառավարումը ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում: Ավտոբուսային հավաքակայանում կմշակվի և կհիմնվի Նյութերի և թափոնների կառավարման համակարգ:

**Նյութերի կառավարում**

517. Ավտոբուսային հավաքակայանում պահպանվելու են վտանգավոր նյութերի հետևյալ տեսակները.

**Աղյուսակ Ը-1. Ավտոբուսային հավաքակայանում օգտագործվող վնասակար և վտանգավոր նյութերը**

| Անվանումը                |
|--------------------------|
| Գազ                      |
| Բնական սեղմված գազ (ԲՄԳ) |
| Շարժիչի յուղ             |
| Քսայուղեր                |
| Փոխանցման տուփի յուղ     |
| Ղեկի հիդրավլիկ յուղ      |
| Հովացնող հեղուկ          |
| Դիմապակու հեղուկ         |
| Յուղագերծող միջոց        |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|                                 |
|---------------------------------|
| Մաքրող միջոց                    |
| Ներկանյութ                      |
| Արգելակի հեղուկ                 |
| Յուղ                            |
| Աերոզոլ                         |
| Ռետին (անվաղողեր)               |
| O2 սեղմված գազի բալոն           |
| Ացետիլենային սեղմված գազի բալոն |
| Մարտկոցներ                      |

518. Այդ նյութերի պահպանումը/պահեստավորումը կիրականացվի՝ ըստ տվյալ նյութի դասակարգման՝ ըստ օգտագործման եղանակի և ըստ վտանգի դասի:

**Աղյուսակ Ը-2. Պահպանման նպատակով նյութերի խմբավորումը**

|               |  |
|---------------|--|
| Պահեստավորում | <ul style="list-style-type: none"> <li>- Դիզել՝ վերգետնյա օգտագործման համար (ավտոբուսների լիցքավորման համար)</li> <li>- Դիզել (հողային աշխատանքներ իրականացնող մեքենաների, շարժական գեներատորների, կոմպրեսորային շարժական սարքերի համար)</li> <li>- ԲՄԳ՝ վերգետնյա օգտագործման համար (ավտոբուսների լիցքավորման համար)</li> <li>- Դյուրավառ վտանգավոր նյութեր (օրինակ՝ ներկ, լուծիչ...)</li> <li>- Սեղմված գազի բալոն (արգոն, ազոտ, թթվածին, մեթան շինարարական աշխատանքներում օգտագործման համար)</li> <li>- Բարձր ջերմային արժեք ունեցող նյութեր</li> </ul> |
|---------------|--|

519. Տեղամասում վտանգավոր նյութերի մասին տեղեկատվությունը առկա կլինի Օպերատորի ԱԻԱՊ-ում: Յուրաքանչյուր տեսակի նյութի վերաբերյալ Օպերատորի կողմից կլրացվի ստորև նշված տեղեկատվությունը, որը կպահվի և հասանելի կլինի նյութերի և թափոնների կառավարման համակարգում: Օպերատորը պարտավոր կլինի լրացնել նյութի անվտանգության տվյալների թերթիկը, վերապատրաստել իր անձնակազմին տվյալ թեմայի շուրջ, իրականացնել պահեստավորումը օրենսդրական պահանջներին և ԱԻԱՊ-ի առաջարկություններին համապատասխան, ինչպես նաև փոփոխությունների դեպքում թարմացնել այն.

- քանակը
- տեսակը
- վտանգի խորհրդանիշը
- առնչվող ռիսկը
- նյութի ծածկագիրը
- վտանգի ծածկագիրը
- Տեղամասում գտնվելու վայրը
- Առաջարկվող ԱՊՄ-ն

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

*Թափոնների կառավարում*

520. Թափոնների կառավարումը ներառում է հավաքակայանի շահագործման ընթացքում առաջացած բոլոր թափոնների դասակարգումը, ժամանակավոր առանձնացված հավաքումը, մշակումը և հեռացումը մշտական տեղավորման նպատակով: Օպերատորը թափոնների կառավարումը կազմակերպում է՝ ըստ հետևյալ դասակարգման

**Աղյուսակ Ը -3. Օպերատորի թափոնների կառավարման համակարգը**

| Թափոնների տեսակը | Ոչ վտանգավոր | Վտանգավոր   | Վերամշակում/ վերաօգտագործում | Տեղավորումը  |
|------------------|--------------|---|------------------------------|--|
| Կոշտ             | -            | Մուտքային բաժանարարի (զատիչի) ներսում ձևավորված մասնիկներ, ծծմբի միացություններ պարունակող շլամ- III կարգի վտանգավոր նյութեր, ծածկագիր՝ 31604700 04 01 4 Քանակը՝ մոտ 40 կգ/ տարեկան | -                            | ԵՔ-ի կողմից հատկացված աղբավայր   |
|                  | -            | Կոմպրեսորների ներսում առաջացած մեխանիկական խառնուրդներ- III կարգի վտանգավոր նյութեր 54700300 04 013, քանակը՝ մոտ 40 կգ/ տարեկան   |                              | Տեղավորվում է՝ համաձայն ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.) |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|  |  |   |   |   |
|--|--|---|---|---|
|  | <p>Ավտոբուսների<br/>շարժակազմի՝<br/>շահագործման<br/>համար ոչ պիտանի<br/>պահեստամասեր<br/>Կուտակիչների<br/>/ակումուլյատորների/<br/>թափոններ<br/>92110000 13 00 0</p>              | - |   | <p>ԵՔ-ի կողմից<br/>հատկացված<br/>աղբավայր</p> |
|  | <p>Ավտոբուսների<br/>անվադողեր –<br/>57500000 00 00 0<br/>ռետինե<br/>թափոններ<br/>ներառյալ հին<br/>դղեր IV կարգի<br/>վտանգավոր<br/>նյութ, քանակը՝<br/>մոտ 400 հատ<br/>տարեկան</p> |   | <p>Վերաօգտագործման<br/>հնարավորություն<br/>ը<br/>կուտումնասիրվի</p> |   |
|  | <p>Շահագործման<br/>համար ոչ պիտանի<br/>օգտագործված<br/>սարքավորումների<br/>պահեստամասեր՝<br/><br/>Կուտակիչների<br/>/ակումուլյատորների/<br/>թափոններ<br/>92110000 13 00 0</p>     | - |   | <p>ԵՔ-ի կողմից<br/>հատկացված<br/>աղբավայր</p> |
|  | <p>Մետաղյա<br/>35130300 13 00 0<br/>օգտագործման<br/>համար ոչ պիտանի<br/>չադոտոված սև<br/>մետաղներից<br/>տարաներ և փաթեթ )</p>  | - |   | <p>ԵՔ-ի կողմից<br/>հատկացված<br/>աղբավայր</p> |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|        |   |  |  |   |
|--------|---|--|--|---|
|        | <p>փայտե (17201000 13 00 5 փայտե տարաներ և չաղտոտված փայտանյութի թափոններ), պլաստմասե մասեր, դատարկ պարկեր, տարաներ (57102900 0 00 0 կարծրացած պոլիէթիլենի թափոններ)</p> <p>մոտավոր քանակը՝ 3 տ տարեկան</p> |  |  |   |
|        | <p>Կենցաղային աղբ և օրգանական սննդի թափոններ</p> <p>91200000 00 00 0 արտադրությունում սպառման թափոններ կոմունալ թափոնների նման մոտավոր քանակը՝ 2 տ տարեկան</p>  | -  |  | ԵՔ-ի կողմից հատկացված աղբավայր                          |
| Հեղուկ |   | <p>Գազի մաքրման ընթացքում յուղի գատիչներում առաջացող յուղը - III կարգի վտանգավոր նյութ՝ բանեցված կոմպրեսորային յուղեր ծածկագիր՝ 54100211 02 03 3 մոտավոր</p> | Վերաօգտագործվում է շարժիչի սպասարկման նպատակով | Մնացորդները հեռացվել են՝ հիմք ընդունելով ՇՄՆ հաստատումը |



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|  |   | քանակը՝ 20 կգ/<br>տարեկան  |   |   |
|--|---|--|---|---|
|  | Գազի՝ ջրի կաթիլներից մաքրման ընթացքում մուտքի զատիչներում առաջացող հեղուկը՝ Գազամաքրման հանքային մնացորդներ՝ 31403900 01 00 0 մոտավոր քանակը՝ 20 լ/ տարեկան | -  | - | Թափվում է հավաքակայանի կոյուղատար համակարգ, որը միացված է տեղական քաղաքային կոյուղու ցանցին |
|  | Որպես չորացնող միջոց օգտագործվող սիլիցելային գել՝ օդի և գազի չորացման ընթացքում օգտագործված սիլիկագել 31470501 01 99 5                                      | -  | - | Տեղավորվում է համաձայն ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.)           |
|  | Բանեցված կուտակիչների թթուներ՝ 52100100 02 01 0   |  |   | Տեղավորվում է համաձայն ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.)           |
|  | Ավտոբուսների լվացման կետերի կեղտաջրերը 31604504 04 01 3 Ավտոտրանսպորտային կազմակերպությունն   | Շարժակազմի սարքավորումների լվացման նավթային շլամ ծածկագիր 54701600 04 01 3 | - | Տեղավորվում է համաձայն ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.)           |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|  |  |  |  |   |
|--|--|--|--|---|
|  | <p>երի կեղտաջրերի մաքրման շլամ, քանակը՝ 5 կգ/տարեկան</p> | <p>Քանակը՝ 20 կգ/տարեկան</p>   |  |   |
|  |  | <p>Ավտոբուսների սպասարկման համար օգտագործվող յուղեր/քսանյութեր-բանեցված դիզելային յուղեր III կարգի վտանգավորության, ծածկագիր՝ 54100203 02 03 3 մոտավոր քանակը՝ 10 կգ/տարեկան</p> <p>Բանեցված կոմպրեսորային յուղեր 54100211 02 03 3 III կարգի վտանգավորության, մոտավոր քանակը՝ 5 կգ տարեկան</p> <p>Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ ծածկագիր 54100303 02 03 3,</p> |  | <p>Տեղավորվում է՝ համաձայն ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.)</p> |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|  |                         |  |   |   |
|--|-------------------------|--|---|---|
|  |                         | մոտավոր քանակը՝ 30 կգ/ տարեկան   |   |   |
|  | Կենցաղային կոյուղաջրերը | -  | - | Ուղղվում են հավաքակայանի ջրահեռացման համակարգ, որը միացված է քաղաքային կոյուղատարին |
|  |                         | Բենզինի և դիզելի թափոններ, որոնք առաջանալու են դիզվառեվիքի հազվադեպ օգտագործումից Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային վառելիքի մնացորդներ 54101100 02 03 3 III կարգի վտանգավորության, աննշան քանակությամբ | - | Տեղավորվում է՝ համաձայն ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.)  |

Ը 3-2. Մոնիթորինգ

521. ԲԿՊ-ի շրջանակներում ներկայացվում է ծրագրի մոնիթորինգի համակարգը՝ ստուգելու նախատեսվող գործունեության համապատասխանությունը Հայաստանի օրենսդրությանը և ԱԶԲ-ի ստանդարտներին և կանոնակարգերին:
522. «Մոնիթորինգ» բաժնում ներկայացված պահանջները վերաբերում են՝
- Շինարարության փուլ*
- շրջակա միջավայրի որակի մոնիթորինգ՝ օդի, ջրի և աղմուկի և թրթռման գործիքային չափագրումների միջոցով (գործիքային մոնիթորինգ),

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

- բնապահպանական մոնիթորինգ՝ կանոնավոր այցելությունների միջոցով ստուգելու շինարարական աշխատանքների համապատասխանությունը ԲԿՊ-ի մեղմացնող միջոցառումներին (ակնադիտական մոնիթորինգ):

*Շահագործման փուլ*

- Օպերատորի կողմից իրականացվող ինքնամոնիթորինգ՝ ստուգելու օդի որակի, աղմուկի և թրթռման առումով ավտոբուսային հավաքակայանի շահագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրական չափանիշներին:

523. ԲԿՊ-ի այս պաժինը ներկայացված է նաև աղյուսակային ձևաչափով և պարունակում է հետևյալ տվյալները՝ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-2. Բնապահպանական կառավարման պլան. Մոնիթորինգ):

- Մոնիթորինգի են ենթարկվելու ծրագրի աշխատանքները՝ հողային աշխատանքներ, լիցք, ասֆալտապատում, կամրջի կառուցում և այլն,
- Մոնիթորինգի են ենթարկվելու պարամետրերը՝ արժեքավոր բնապահպանական ընկալիչները (հող, ջուր, օդի որակ և այլն),
- Մոնիթորինգի է ենթարկվելու վայրը (շինհրապարակ, ճամբարի տարածք, լցակայան և այլն),
- Գործիքներ և մեթոդներ (համապատասխան փաստաթղթերի առկայության ստուգում, տեղում ակնադիտական ստուգումներ, գործիքային չափագրումներ և այլն),
- Բնապահպանական առանձնահատկությունների ցուցիչ (վերաբերում է ԲԿՊ մեղմացումներ Աղյուսակ 1-ում սահմանված մեղմացնող միջոցառումների կատարմանը),
- Պատասխանատու մարմիններ (ըստ Ծրագրի բոլոր մասնակիցների՝ Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ, Ինժեներ, Կապալառու, Օպերատոր),
- Մոնիթորինգի հաճախականություն (վերաբերում է հանձնարարականներին, որոնք հիմնված են ծախսարդյունավետության սկզբունքի վրա)

524. Շրջակա միջավայրի որակի գործիքային մոնիթորինգը իրականացվելու է փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիթորինգի պլանի հիման վրա, որը ներառում է՝

- Օդի որակի, ջրի և աղմուկի և թրթռումների ելակետային տվյալների հավաքագրում՝ կիրականացվի Կապալառուի կողմից՝ աշխատանքների մեկնարկից 28 օր առաջ: Ելակետային տվյալների հետազոտության ծախսերը ներառվելու են Կապալառուի բյուջեում:
- Նույն պարամետրերի տվյալների կանոնավոր հավաքագրում (առնվազն ամիսը երկու անգամ, նաև ԱԵԱ-ի բողոքի հիման վրա)՝ ելակետային տվյալների և նախագծի համար ընդունված օրենսդրական ստանդարտների, ՄՖԿ ստանդարտների և սահմանային մեծությունների հետ համեմատելու համար:

525. Փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիթորինգի պլանը Կապալառուի կողմից մշակված և Ինժեների հետ համաձայնեցված Կապալառուի Շինարարության բնապահպանական կառավարման պլանի (ՇԲԿՊ) բաղկացուցիչ մասն է, որտեղ հստակ նշված է չափման կետերի գտնվելու վայրը և համեմատական վերլուծության համար յուրաքանչյուր չափման կետի համար անհրաժեշտ շեմերը (տե՛ս Գլուխ Ե, Աղյուսակ Ե-2).

526. Շրջակա միջավայրի ակնադիտական մոնիթորինգը իրականացվելու է տեղամասային այցելությունների միջոցով՝ ծրագրի բացասական ազդեցությունների կանխարգելման և վերահսկման մեղմացնող միջոցառումների արդյունավետությունը որոշելու նպատակով,

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

որպեսզի հնարավորինս շուտ սահմանվի համապատասխան ուղղիչ գործողությունների անհրաժեշտությունը: Մոնիթորինգի են ենթարկվելու Կապալառուի կողմից զբաղեցված և հաստատված բոլոր տեղամասերը՝ աշխատանքային գոտի, շինարարական ճամբարներ, պահեստներ, կայանատեղիներ, բուսահողի պահպանման տեղամասեր, թափոնների հեռացման վայրեր, քարջարդ, բետոնի և ասֆալտի գործարաններ (եթե այդպիսիք կլինեն):

527. Ստուգայցերը շինհրապարակ պետք է իրականացվեն՝ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում պլանավորված պաշտոնական ժամանակացույցի համաձայն՝ Կապալառուն՝ օրական, Վերահսկողության խորհրդատուն (Ինժեներ)՝ շաբաթական, ԵՔԾԻԳ՝ ամսեկան:

528. Ստուգայցերի մոնիթորինգի արդյունքների մասին Կապալառուն հայտնելու է Շտկող միջոցառումներ հաշվետվությունների միջոցով, Ինժեները՝ Մեղմացնող գործողությունների համապատասխանության և մոնիթորինգի ստուգայցերի վերաբերյալ ստուգաթերթիկի լրացման միջոցով (ձևաչափը տրամադրվելու է):

## Ը 4. Շինարարության բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ)

529. Հաշվի առնելով, որ Կապալառուն իր պայմանագրով առաջադրված պայմանների համաձայն պետք է հստակեցնի իր շինարարական պրակտիկան, աշխատանքային մեթոդները, ժամանակացույցը և շինհրապարակի մոտեցման ճանապարհները, ապա փոփոխված և ձևափոխված պայմանները լավագույնս արտացոլելու համար, վերջինիցս պահանջվում է լրացնել և թարմացնել ԲԿՊ-ն ավելի մանրամասն մեղմացնող միջոցառումներով, ոչոնք առավել արդյունավետ կերպով կհամապատասխանեն տեղանքին և աշխատանքային մեթոդներին, և պատրաստել Շինարարության բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ) աշխատանքների մեկնարկից 28 օր առաջ:

530. ՇԲԿՊ-ը ներառելու է Գլուխ Ը-ում թվարկված աշխատանքների և ենթապլանների նկարագիրը, որը կդիտարկվի նաև որպես Կապալառուի պայմանագրային պարտավորությունների բաղկացուցիչ մաս: ՇԲԿՊ-ի բովանդակության ընդհանուր նկարագիրը բերված է ՀԱՎԵԼՎԱԾ Ի-ում:

531. ՇԲԿՊ-ը ներառելու է հետևյալը՝

- 1) Յուրաքանչյուր աշխատանքային տեղամասի համար առանձնացնում է տեղանքին բնորոշ ազդեցություններն ու ռիսկերը,
- 2) Նկարագրում է յուրաքանչյուր մեղմացնող միջոցառման տեխնիկական մանրամասները, ներառյալ՝ ազդեցության տեսակը, որին վերաբերում է, և պայմանները, որոնց դեպքում պահանջվում է,
- 3) Ներկայացնում է կապը այլ մեղմացնող ենթապլանների հետ,
- 4) Սահմանում է մեղմացնող միջոցառման պատասխանատվության շրջանակը

## Ը 5. Հաշվետվողականություն

532. Ծրագրի բնապահպանական երաշխիքների համապատասխանության մասին պարբերաբար զեկուցվելու է ծրագրի իրականացման բոլոր մակարդակներում՝ Կապալառու, Ինժեներ, ԵՔԾԻԳ, Երևանի քաղաքապետարան և ԱԶԲ:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

533. Կապալառուի կողմից Ինժեներին են ներկայացվելու շրջակա միջավայրի վերաբերյալ հետևյալ հաշվետվությունները՝

(i) Շտկող միջոցառումների շաբաթական հաշվետվություն (ՇՄՀ). Շտկող միջոցառումները և դրանց կարգավիճակը փաստաթղթավորվելու է Ինժեների կողմից մշակված և Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի կողմից հաստատված ձևանմուշում: Շտկող միջոցառումների շաբաթական հաշվետվությունը ներառելու է բնապահպանական գործունեության ցուցանիշը և մեղմացնող միջոցառումների արդյունավետության գնահատումը:

(ii) Բնապահպանական պարտավորությունների կատարման ամսական հաշվետվություն: Բնապահպանական ամփոփ հաշվետվությունը ներկայացվելու է որպես Կապալառուի ամսական առաջընթացի հաշվետվության մաս: Ամսական հաշվետվությունները պետք է լինեն վերլուծական և պարունակի շեղումների բացատրություն անհամապատասխանությունների և առաջացած խնդիրների մասին:

534. Հաշվետվությունները ամփոփ ձևով ներկայացնելու են հաշվետու ժամանակահատվածում իրականացված գործողությունները, դրանց համապատասխանությունը բնապահպանական կանոնակարգերին և պահանջներին, ձեռք բերված թույլտվությունները, իրականացված դասընթացները և այլն: Ստորև ներկայացված է հաշվետվությունների առաջարկվող ձևաչափը, որը համաձայնեցվելու է Ինժեների և Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի հետ:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բ. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- 1) Ծրագրի աշխատանքները հաշվետվության ընթացիկ ժամանակաշրջանի համար
- 2) Բնապահպանական երաշխիքների անձնակազմի հաշվետու ժամանակաշրջան
- 3) Ծրագրի նախագծից ցանկացած փոփոխության նկարագրություն

Կ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- 1) Հաշվետու ամսվա ընթացքում իրականացված վերապատրաստումներ/ուսուցումներ
- 2) Հաշվետու ամսվա ընթացքում ստացված հաստատումներ/թույլտվություններ
- 3) Նյութական ռեսուրսների օգտագործում
- 4) Թափոնների կառավարում
- 5) Բուսահողի կառավարում
- 6) Ճամբարների և պահեստների կառավարում
- 7) Անկանխատեսելի բնապահպանական ազդեցություններ կամ ռիսկեր
- 8) Առողջություն և անվտանգություն

Դ. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- 1) Հաշվետու ամսվա ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագիր
- 2) Տեղամասային այցեր և նշանակալի բացահայտումներ
- 3) Անհամապատասխանության վերաբերյալ ծանուցումներ և շտկող միջոցառումներ:

Ե. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

- 1) Հանրային հաղորդակցություն և հանդիպումներ
- 2) Բողոքներ և/կամ առաջարկություններ

Ա. ՇԲԿՊ-Ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Բ. ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԵՐ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ծրագրի հաշվետու ժամանակաշրջանում արված լուսանկարներ

535. Պատահարների (անձնակազմում մահվան դեպքեր և/կամ վնասվածքներ, հրդեհ, պայթյուն, վառելիքի և/ կամ բիտումի արտահոսք և այլն) դեպքում Կապալառուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ինժեներին: Սկզբնական ծանուցումը կարող է լինել բանավոր, որին հաջորդելու է պատահարի կամ միջադեպի մասին գրավոր նախնական զեկույցը դեպքից կամ պատահարից հետո՝ 24 ժամվա ընթացքում: Այնուհետև, Կապալառուի կողմից իրականացվելու է դեպքի քննություն և Պատահարի/միջադեպի մասին միջանկյալ հաշվետվությունը ներկայացվելու է Ինժեներին սեփական քննության ավարտից հետո՝ 2 շաբաթվա ընթացքում: Այն պարունակելու է նախնական զեկույցով նախատեսված միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունը: Վերջապես, Կապալառուն ներկայացնելու է Պատահարի/միջադեպի մասին վերջնական հաշվետվությունը, որը պարունակելու է դեպքի վերաբերյալ Ոստիկանության կամ այլ ատյանի եզրակացությունը:

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

536. Ինժեները, որպես ամսական հաշվետվության մաս, Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ին է ներկայացնելու Բնապահպանական երաշխիքների ամսական հաշվետվությունը, ինչպես նաև վերջնական (ավարտական) հաշվետվությունը:
537. Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ը ԱԶԲ-ին ներկայացնելու է բնապահպանական երաշխիքների կիսամյակային հաշվետվություն: Վերջինս տեղադրվելու է ԾԻԳ-ի և ԱԶԲ-ի կայքերում:

**Ը.6 Ազդեցությունների ամփոփում. Պարտականությունների գրանցամատյանը**

538. Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել հետևյալը.  
 Բնապահպանական կառավարման պլանը հիմք է հանդիսանում հետևյալի համար.  
 (i) Ծրագրի հնարավոր ազդեցությունների կառավարում և դրանց կանխում կամ մեղմացում,  
 (ii) Նախքան նախաշինարարության և շինարարության հետ կապված գործողությունների մեկնարկը՝ Կապալառուի կողմից կազմվող ՇԲԿՊ, և  
 (iii) Բնապահպանական օրենսդրության, ստանդարտների և նորմերի հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով մոնիթորինգի ծրագրի իրականացում,  
 (iv) Ավտոբուսային հավաքակայանի օպերատորի կողմից բնապահպանական/ուցիալական կառավարման համակարգի մշակում և հիմնում:
539. Պարտականությունների գրանցամատյանը հնարավորություն է տալիս կապալառուներին և խորհրդատուներին հասկանալ հնարավոր ազդեցությունները և ռիսկերը՝ առանց ամբողջ ՇՄՆՈՒ հաշվետվությունն ուսումնասիրելու: ԲԿՊ-ի «Մեղմացնող միջացառումներ» բաժինն ամփոփում է սույն հաշվետվության՝ Գլուխ Զ-ում նշված կանխատեսվող բոլոր ազդեցությունները, ինչպես նաև աշխատանքային գործունեության հետևանքով առաջացած հատուկ ազդեցությունները, ինչպիսիք են դաշտային ճամբարների ստեղծումը, աշխատանքները և անվտանգության ռիսկերը, ավելորդ հանույթի և թափոնների առաջացումը և այլն, և առաջարկում է համապատասխան խուսափման կամ մեղմացնող միջոցառումներ յուրաքանչյուր բացահայտված ազդեցության և ռիսկի համար.

**Աղյուսակ Ը-2. Ազդեցությունների ամփոփում. Պարտականությունների գրանցամատյանը**

| Ազդեցության տեսակը  | Մեղմացնող միջոցառումները   | Աղբյուրը  |
|---|--|---|
| 1. Ազդեցության ենթակա կողմերի և շահառուների՝ պլանավորված աշխատանքների մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը կարող է հանգեցնել հիասթափության ու դժգոհության, ինչի արդյունքում կարող են տեղի ունենալ Ծրագրի ուշացումներ և խաթարումներ: | Հանրային լուսմների և հաղորդակցության պլան<br><br>Մոբիլիզացիոն պլան | ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 3, 11 |



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|   |   |   |
|---|---|---|
| <p>2. Կապալառուի անձնակազմի՝ բնապահպանության, ԱնԱ և սոցիալական պաշտպանության վերաբերյալ ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների և ազգային օրենսդրական պահանջների մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը, որը կարող է հանգեցնել պայմանագրի կետերի չկատարման:</p>                                 | <p>Բնապահպանական և անվտանգության կողմնորոշման պլան</p> <p>Մոբիլիզացիոն պլան</p>   | <p>և</p> <p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1.<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 4, 9, 10</p>  |
| <p>3. Առողջության և անվտանգության հարմարանքների պակասը կարող է հանգեցնել աշխատողների, Ծրագրի ազդեցությանը ենթակա անձանց և շինհրապարակի մերձակայքում գտնվող մարդկանց հիվանդության, վնասվածքի կամ մահվան՝ նյութերի ազդեցության պատճառով. սայթաքել, բախվել և ընկնել և ընկնող առարկաներ</p> | <p>Աշխատանքային և անվտանգության առողջության պլան</p> <p>Մոբիլիզացիոն պլան</p>   | <p>և</p> <p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1..<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 2, 11</p>    |
| <p>5. Ոռոգման ջրանցքի վրայով կամրջի կառուցման աշխատանքները կարող են հանգեցնել ջրային ռեսուրսների աղտոտման:</p>  | <p>Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանման պլան</p> <p>Շինարարական աշխատանքների ճամբարների պլան</p>  | <p>և</p> <p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1..<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 6 և 7</p>    |
| <p>6. Բնական միջավայրի նկատմամբ պատշաճ ուշադրության և հարգանքի բացակայությունը, հատկապես հողային աշխատանքների ընթացքում, անցանկալի ժամանակներում բուսականության մաքրումը կարող է հանգեցնել բուսական և կենդանական միջավայրի քայքայման,</p>   | <p>Ֆլորայի և ֆաունայի պաշտպանության և բուսականության մաքրման պլան</p> <p>Շինարարական աշխատանքների ճամբարների պլան</p> <p>Շինհրապարակի կառավարման պլան</p> | <p>և</p> <p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1..<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 4, 8 և 9</p> |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|   |   |  |
|---|---|--|
| <p>տեսակների կորստի, ինչպես նաև կենդանական աշխարհի տեսակների և նրանց բնակության վայրի խաթարման:</p>   |   |  |
| <p>7. Գործող հաղորդուղիների վնասումը և ծառայությունների ընդհատման ազդեցությունը առաջացնում է ԱԵԱ-ների դժգոհությունը:</p>  | <p>Հաղորդուղիների պահպանման և տեղափոխման պլան<br/><br/>Շինհրապարակի կառավարման պլան</p>   | <p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1.<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 7 և 9</p>                               |
| <p>8. Հողային աշխատանքների ընթացքում պատշաճ ուշադրության և հոգածության պակասը բնական ռեսուրսները (ինչպիսիք են հողը և օդը) պաշտպանելու, նյութերի և թափոնների տեղափոխման և այլ շինարարական աշխատանքների նկատմամբ, կարող են հանգեցնել հողի էրոզիայի և նստվածքների, բուսահողի կորստի, փոշուքանակի ավելացման և օդի աղտոտման, աղմուկի և թրթռման մակարդակի ավելացման</p> | <p>Շրջակա միջավայրի պահպանության պլան<br/><br/>Շինարարական աշխատանքների ճամբարների պլան<br/><br/>Շինհրապարակի կառավարման պլան<br/><br/>Թափոնների և նյութերի կառավարման պլան</p> | <p>Հավելված Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1..<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 5, ինչպես նաև պարբերություն 8 և 12</p> |
| <p>9. Աշխատանքների հետ կապված հարմարությունների ոչ ճիշտ կազմակերպում. հիմնական գրասենյակ և դաշտային ճամբարներ, այդ թվում՝ շարժական տները, սարքավորումները և նյութերի պահեստավորման տարածքը, մեքենաների կայանատեղի, աշխատողների և այլ անձնակազմի սանիտարական, ճաշի և հանգստի համար նախատեսված հարմարություններ, որոնք</p>  | <p>Շինարարական աշխատանքների ճամբարների պլան</p>   | <p>Հավելված Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1.<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 8</p>                                   |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|  |   |  |
|--|---|--|
| <p>կարող են անհարմարություն պատճառել տեղի բնակիչներին, հանգեցնել հնարավոր կոնֆլիկտային իրավիճակների բնակչության և տեղական/կենտրոնական իշխանությունների հետ, ինչպես նաև հողի և ստորերկրյա ջրերի աղտոտման</p>  |   |  |
| <p>10. Քարհանքերի, բացահանքերի, բետոնի դոզավորման, ասֆալտի, քարջարդիչ գործարանների, կուտակավայրերի հիմնման վայրերի ոչ ճիշտ ընտրությունը կարող է առաջացնել աղմուկի և փոշու հետ կապված անհարմարություններ համայնքի բնակչության համար, տեղական կենսապայմանների և հաղորդակցության միջոցների խափանում, ճնշում շրջակա միջավայրի բնական ռեսուրսների վրա, մշակութային վայրերի խաթարման՝ գեղագիտական տեսքի կորստի առումով</p> | <p>Շինհրապարակի կառավարման պլան (Օրագրի տարածքից դուրս տեղանքի համար)</p> | <p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1..<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 9</p>  |
| <p>11. Փոխադրամիջոցների շարժը՝ աշխատանքային տեղամասում և տեղամասից դուրս ոչ ճիշտ կազմակերպելը կարող է հանգեցնել հանրային երթևեկության արգելափակման, երթևեկության հետ կապված վտանգների և անվտանգության խնդիրների, շինարարական ծանր սարքավորումները և մեքենաները կարող են վնասել ճանապարհները, առաջացնել փոշի, աղմուկ և թրթռում, դեպի հանրային</p>   | <p>Երթևեկության և մուտքերի կառավարման պլան</p>                            | <p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1..<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 10</p> |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

| ճանապարհներ տանել կեղտը և ցեխը  |  |  |
|---|--|--|
| <p>12. Պատշաճ ուշադրության և հոգածության բացակայությունը վտանգավոր նյութերի հետ վարվելիս և այլ արտակարգ իրավիճակների դեպքում կարող է հանգեցնել դժբախտ պատահարների և այլն, դիզվառելիքի, նավթայուղերի և այլ թունավոր նյութերի արտահոսքի և ներթափանցման հողի, մակերևութային ջրերի և/կամ գրունտային ջրերի մեջ:</p>    | <p>Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան</p> <p>Շինարարական աշխատանքների ճամբարների պլան</p> <p>Շինհրապարակի կառավարման պլան</p> <p>Աշխատանքային անվտանգության առողջության պլան</p> | <p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1.<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 11, ինչպես նաև պարբերություն 2, 8 և 9</p> |
| <p>13. Աղբի և ավելորդ նյութերի տեղավորումն անհամապատասխան վայրերում կարող է հանգեցնել աղտոտիչների՝ ջրահեռացման համակարգ և/կամ ստորգետնյա ջրեր ներթափանցելուն, խաթարել շրջակայքի գեղագիտական տեսքը, շինարարական աշխատանքների և ճանապարհային անվտանգության խնդիրներ առաջացնել չմաքրված շինհրապարակների պատճառով</p> | <p>Թափոնների և նյութերի կառավարման պլան</p> <p>Շինհրապարակի կառավարման պլան</p> <p>Երթևեկության և մուտքերի կառավարման պլան</p>   | <p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1.<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 12, ինչպես նաև պարբերություն 9 և 10</p>   |
| <p>14. Շինհրապարակի վերկանգնման աշխատանքների նկատմամբ պատշաճ ուշադրության և հոգածության պակասը կարող է հանգեցնել ճանապարհի գեղագիտական տեսքի խաթարման՝ չհեռացված շինարարական թափոնների և նյութերի, աշխատանքային ճամբարների և սարքավորումների մնացորդների և մաքրված</p>  | <p>Շինհրապարակի վերկանգնման, կանաչապատման և բուսականության վերկանգնման պլան</p> <p>Շինհրապարակի կառավարման պլան</p> <p>Թափոնների և նյութերի կառավարման պլան</p>                      | <p>Հավելված Ժ,<br/>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1.<br/>Բնապահպանական կառավարման պլան.<br/>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 14, ինչպես նաև պարբերություն 9, 12</p>    |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

|  |  |   |
|--|--|---|
| բուսականության և ծառերի պատճառով   |  |   |
| 15. Բնապահպանական, ԱևԱ, սոցիալական երաշխիքների նկատմամբ պատշաճ ուշադրության և հոգածության բացակայությունը թերությունների շտկման ժամանակահատվածում կարող է հանգեցնել վերը նշված բոլոր ազդեցությունների առաջացմանը այդ ժամանակահատվածում իրականացվող աշխատանքների ընթացքում: | Բոլոր պլանները (1-14)                    | ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1.<br>Բնապահպանական կառավարման պլան.<br>Մեղմացնող միջոցառումներ                   |
| 4. Պատմական և մշակութային ռեսուրսների նկատմամբ պատշաճ ուշադրության և հոգածության բացակայությունը կարող է հանգեցնել դրանց վնասմանը և կորստին  | Մշակութային ժառանգության կառավարման պլան | ՀԱՎԵԼՎԱԾ Ժ,<br>ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1.<br>Բնապահպանական կառավարման պլան.<br>Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 13 |

**Թ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Թ.1. Եզրակացություններ**

540. ՀԱՎԵԼՎԱԾ Ա-ում կցված Արագ բնապահպանական գնահատման և ՇՄՆՈՒ-ի եզրակացությունների հիման վրա հաստատվում է ենթաձրագրի՝ «Բ» կատեգորիայի դասակարգումը, և ԱԶԲ-ի բնապահպանական քաղաքականությանը համապատասխանելու համար չի պահանջվելու մանրամասն ՇՄԱԳ: Միևնույն ժամանակ, ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի, այս ձրագրի համար պահանջվում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացակարգ: Առաջարկվող ձրագիրը դասակարգվում է «Բ» կատեգորիայում՝ ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի (22.07.2014 թ.) Գլուխ 3, 14-դ հոդվածի կետ 5, 3) դ. բենզալցակայաններ՝ 5 մ3 և ավելի տարողությամբ:

541. Ծրագիրն, անշուշտ, էական դրական ազդեցություն կունենա բնական և սոցիալ-տնտեսական միջավայրի վրա՝ բարելավելով Երևանի հասարակական տրանսպորտի խիստ վատթար վիճակում գտնվող ենթակառուցվածքները, քաղաքային ավտոբուսների շահագործման պայմանները և ավտոբուսային արդյունաբերության աշխատակիցների բարեկեցությունը: Ընդհանուր առմամբ՝ հավաքակայանի կառուցման ավարտից հետո հասարակական տրանսպորտի բարելավված համակարգը կխթանի տարածաշրջանային

## Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

տնտեսական աճը՝ Երևանի տարբեր հատվածների հասանելիության բարելավման շնորհիվ: Ակնկալվում է, որ ավտոբուսային նոր հավաքակայանը դրական դեր կխաղա Երևանի և հանրապետության տնտեսական աճի խթանման գործում:

542. Հավաքակայանը նախագծվել է՝ Էկոլոգիապես մաքուր և կայուն շինանյութերի ընտրությամբ: Էկոլոգիական օգուտները սերտորեն փոխկապակցված են նախագծային լուծումների հետ՝ բնական ռեսուրսների խնայողության առումով, ինչպիսիք են ջրի, նյութերի և էներգիայի խնայողության լուծումները. ջրի վերաշրջանառություն և երկրորդային ջրի օգտագործում, էներգաարդյունավետ վահանակներ և այլն: ԲՄԳ ավտոբուսները զգալի ազդեցություն կունենան շրջակա միջավայրի պահպանության առումով. դրանք շատ ավելի քիչ են աղտոտում CO<sub>2</sub>, NO<sub>2</sub> աղտոտիչներով, քան դիզելային ավտոբուսները, ինչպես նաև ավելի քիչ աղմուկ են առաջացնում: Այս բաժինը մանրամասն նկարագրված է Գլուխ Զ, Զ1-ում՝ Դրական ազդեցություններ» բաժնում:
543. Հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպիսիք են փոշու, աղմուկի, երթևեկի և մուտքի փոփոխությունների պատճառած անհարմարությունները, որոնք, ամենայն հավանականությամբ, կպատճառվեն հարակից բնակավայրերին, ազդեցությունները բուսական և կենդանական աշխարհի վրա և այլ ազդեցությունները, որոնք նշված են Գլուխ Զ, Զ2. «Բացասական ազդեցություններ» բաժնում, հիմնականում կլինեն ժամանակավոր և կարող են նվազագույնի հասցվել ԲԿՊ-ում և Շինարարության բնապահպանական կառավարման պլանում (ՇԲԿՊ) նախատեսված մեղմացնող միջոցառումների, ինչպես նաև մշտական մոնիթորինգի միջոցով, որն ապահովում է համապատասխան վերահսկողություն և նախանշված մեղմացնող միջոցառումների ժամանակին իրականացումը:
544. Աղմուկի հետազոտության արդյունքների հիման վրա կկառուցվի 2,5 մ բարձրությամբ ձայնային արգելապատնեշ՝ որպես աղմուկի մեղմացնող միջոց, և հավաքակայանի պարագծով կտնկվի 2-3 շարքից բաղկացած ծառերի գոտի՝ շահագործման փուլում աղմուկի ազդեցությունը նվազեցնելու և տեղի բնակիչներին պաշտպանելու նպատակով, որոնք համարվում են առավել զգայուն ընկալիչներ:
545. Թրթռման ելակետային հետազոտությունների արդյունքների հիման վրա որոշվել է վտանգված բնակելի տների և այլ գույքի շրջանակը և նախատեսվում են մեղմացնող միջոցառումներ: ԱԵԱ-ների գույքին հասցված վնասը կփոխհատուցվի:

## Թ.2. Առաջարկություններ

546. Սույն ՇՄԱԳ/ ԲԿՊ-ն համարվելու է շինարարական աշխատանքների կապալառուի հետ պայմանագրի անխախտելի մաս:
547. ԲԿՊ-ի (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ) հիման վրա Կապալառուն կմշակի և Ինժեների հաստատմանը կներկայացնի շինհրապարակին հատուկ Շինարարության բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ)՝ մանրամասն բնապահպանական կառավարման և մոնիթորինգի միջոցառումներով՝ մոբիլիզացիոն փուլում, նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում և թերությունների վերացման ժամանակահատվածում կիրառելու համար:
548. Շինարարական գործողությունների համապատասխանությունը ԱԶԲ երաշխիքներին և Հայաստանի օրենսդրությանը հսկվելու է Կապալառուի, Ինժեների և ԵԾԻԳ -ի կողմից

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

իրականացվող կանոնավոր մոնիթորինգի միջոցով: Ծրագրի ավարտին բնապահպանական մոնիթորինգը կփոխանցվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության բաժնին և օպերատորին՝ ինքնամոնիթորինգի համար:

549. Կապալառուն ընդունելու է սույն ՇՄԱԳ-ի հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքները (ծառերի նույնականացում և հաշվարկ, բնապահպանական ելակետային տվյալներ, հաղորդողիներ) և կատարելու է օդի որակի, ջրի որակի, աղմուկի և թրթռումների ելակետային տվյալների հավաքագրում շինարարական աշխատանքների մեկնարկի ամսաթվից 28 օր առաջ և իրականացնելու է նույն պարամետրերի կանոնավոր չափագրումներ շինարարության ընթացքում և Թերությունների վերացման ժամանակահատվածում:

550. Ինժեները իրականացնելու է Կապալառուի կողմից մեղմացնող միջոցառումների մոնիթորինգ և վերահսկողություն, ինչպես նշված է ԲԿՊ-ում, և տալու է անհամապատասխանության ծանուցում, եթե դրանք ժամանակին պատշաճ կերպով չեն կատարվել: Անհամապատասխանությունները կգնահատվեն՝ ըստ Բնապահպանական երաշխիքների տեղեկագրում նշված անհամապատասխանության մակարդակի չափանիշների: III մակարդակի անհամապատասխանության համար Կապալառուի նկատմամբ կկիրառվի տույժերի համակարգ. աշխատանքների ընթացքում Կապալառուի նկատմամբ կկիրառվի օրական 200 ԱՄՆ դոլարի չափով տույժ՝ ՇՄԱԳ-ի և ԲԿՊ-ի պահանջների շտկման համար վերջնաժամկետ սահմանված օրվանից սկսած: Ինժեները կարող է նաև դադարեցնել բոլոր առնչվող աշխատանքները (Կապալառուի ծախսերով), քանի դեռ ՇՄԱԳ-ի և ԲԿՊ-ի պահանջները չեն կատարվել և շտկվել՝ բավարարելով Ինժեների գոհունակությունը: Այդպիսի տույժերն լինելու են լրացուցիչ և անկախ ՀՀ օրենքներով սահմանված տույժերից:

551. Կապալառուի համապատասխան մասնագետը Ինժեների հետ միասին ուսումնասիրելու է ծառերի և թփերի գտնվելու վայրը, որոնք, ամենայն հավանականությամբ, կվնասվեն շինարարական աշխատանքների արդյունքում, և առաջարկելու է մեթոդներ դրանց կորուստը կանխելու համար: Բոլոր այն ծառերն ու թփերը, որոնք կարող են պահպանվել, բայց գտնվում են աշխատանքային տեղամասի մոտ, կպաշտպանվեն: Այլ ծառերի և թփերի փոխարեն, որոնք չեն կարող պահպանվել և կհեռացվեն, կտնկվեն նորերը՝ 1:6 հարաբերակցությամբ: Փոխարինվող ծառերն և թփերը կտնկվեն համապատասխան հողային պայմաններ ունեցող վայրերում: Նորատունկ ծառերը Կապալառուի կողմից կխնամվեն 1 տարի՝ թերությունների վերացման ժամանակահատվածում: Այնուհետև ավտոբուսային հավաքակայանի տարածքում տնկված բույսերի հետագա խնամքը կփոխանցվի ավտոբուսային հավաքակայանի օպերատորին, իսկ հավաքակայանի տարածքից դուրս գտնվող բույսերի համար հոգ կտանի Երևանի քաղաքապետարանը:

552. ԲԿՊ-ի (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ) և Գլուխ Ը-ի առաջարկությունների հիման վրա՝ ավտոբուսային հավաքակայանի օպերատորը կմշակի, կհիմնի և կգործարկի Բնապահպանական/սոցիալական կառավարման համակարգ՝ հաշվի առնելով սույն ՇՄԱԳ/ԲԿՊ-ում նշված պահանջները: ԵԶ-ն տարեկան մեկ անգամ կիրականացնի այս համակարգի գործառնությունի աուդիտ:

**Ցուցումներ**

(i) Ծրագրի թիմը ստուգաթերթիկը լրացնում է ծրագրի բնապահպանական դասակարգումը հիմնավորելու համար: Այն կցվելու է բնապահպանական դասակարգման ձևաթղթին և ներկայացվելու է Բնապահպանության և անվտանգության բաժին (ՇԱՄՊ)՝ տնօրենի կողմից հավանություն և Նորմատիվ վերահսկման բաժնի պետի կողմից հաստատում ստանալու համար:

(ii) Սույն ստուգաթերթիկը կենտրոնացած է բնապահպանական խնդիրների և մտահոգությունների վրա: Համոզվելու համար, որ սոցիալական առանձնահատկությունները պատշաճ կերպով հաշվի են առնվել, տե՛ս ԱԶԲ-ի (ա) հարկադիր տարաբնակեցման և բնիկ ժողովուրդների ստուգաթերթիկը, (բ) աղքատության նվազեցման ձեռնարկը, (c) խորհրդատվության և մասնակցության աշխատողների ուղեցույցը և (d) գենդերային ստուգաթերթերը:

(iii) Պատասխանի՝ ր հարցերին՝ համարելով, որ «չեն կիրառվելու մեղմացնող միջոցառումներ»: Նպատակն է որոշել հնարավոր ազդեցությունները: Ակնկալվող ցանկացած մեղմացնող միջոցառում քննարկելիս՝ օտագործի՝ ր «մեկնաբանություններ» բաժինը:

Երկիր/Ծրագրի անվանումը

Հայաստան / Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր , Տրանշ 1

Ոլորտ

CWUW

| Նախնական գնահատման հարցեր  | Այո | Ոչ | Մեկնաբանություններ  |
|--|-----|----|---|
| <p><b>Ա. Ծրագրի իրականացման վայր</b><br/>Արդյո՞ք ծրագրի տարածքը...</p> |     |    | <p>Ծրագիրը (նոր ենթաբաղադրիչ) ենթադրում է 8 հեկտար տարածքով ավտոբուսային հավաքակայանի կառուցում՝ բնական սեղմված գազով աշխատող ավտոբուսների համար: Այն ներառում է վերալիցքավորման կայան, ավտոբուսների լվացման հարմարություններ և սպասարկման սարքավորումներ</p> |



Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

| Նախնական գնահատման հարցեր   | Այո | Ոչ | Մեկնաբանություններ   |
|---|-----|----|--|
| <ul style="list-style-type: none"> <li>▪ Խիտ բնակեցված է</li> </ul>   |     | X  | <p>Այն կանաչապատ տարածք է, որը գտնվում է Երևանի արդյունաբերական թաղամասում, բնակելի թաղամասերից բավականին հեռու: Քանի որ հավաքակայանի համար հատկացված տարածքը բավականին մեծ է, դժվար է ասել, թե որքան է բնակելի տների (բնակելի տները տեղակայված են 3 վայրում) հեռավորությունը այդ հողամասի եզրից: Ընդհանուր առմամբ, բնակելի տների հեռավորությունը այդ հողատարածքի եզրամասից: Ընդհանուր առմամբ՝ բնակելի տների հեռավորությունը հողակտորի միջնամասից մոտ 300-500 մ է:</p> |
| <ul style="list-style-type: none"> <li>▪ Հարուստ է զարգացման ծրագրերով</li> </ul>                                   |     | X  | <p>Տարածքում առկա չէ գործող առևտրային կամ արդյունաբերական գործունեություն: Հարևանությամբ կան միայն խորհրդային ժամանակներից մանացած որոշ լքված կառույցներ:</p>  |
| <p>Տեղակայված է բնապահպանական տեսանկյունից զգայուն հետևյալ տարածքներին կից կամ ներսում</p>                          |     |    |  |
| <ul style="list-style-type: none"> <li>• Մշակութային ժառանգություն համարվող տարածքեր</li> </ul>                     |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>• Պահպանվող տարածք</li> </ul>  |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>• Ճահճուտ</li> </ul>   |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>• Մանգրենի</li> </ul>  |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>• Գետաբերան</li> </ul>   |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>• Պահպանվող տարածքի բուֆերային գոտի</li> </ul>                               |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>• Կենսաբազմազանության պահպանության համար նախատեսված հատուկ տարածք</li> </ul> |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>• Խորշ</li> </ul>  |     | X  |  |
| <p><b>Բ. Հնարավոր բնապահպանական ազդեցություններ</b><br/>Արդյո՞ք ծրագիրը կհանգեցնի...</p>                            |     |    |  |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

| Նախնական գնահատման հարցեր  | Այո | Ոչ | Մեկնաբանություններ   |
|--|-----|----|--|
| <ul style="list-style-type: none"> <li>Կոյուղու և պինդ թափոնների մաքրման համակարգերի և այլ քաղաքային ծառայությունների կայունության վրա ազդեցության</li> </ul>  | X   |    | <p>Գազի լիցքավորման հարմարանքներից կարող է լինել բնական գազի արտահոսք, լվացման հարմարանքներից դուրս եկող կեղտաջրեր, որոնք պետք է տեղավորվեն, նույնը՝ օգտագործված յուղերի վերաբերյալ, այլևս ոչ պիտանի պահեստամասերի տեղավորումը և այլ կոշտ թափոնները, որոնք հնարավոր է առաջանան տեխնիկական և վարչարարական օբյեկտներից</p> |
| <ul style="list-style-type: none"> <li>քաղաքային բնակչության կտրուկ աճի, առևտրային և ձեռնարկատիրական գործունեության, թափոնների ավելացման պատճառով շրջակա միջավայրի պայմանների այնպիսի վատթարացում, որ ն՝ մարդածին, և՛ բնական համակարգերը գերծանրաբեռնվում են, իսկ դրանց կառավարման կարողությունները՝ սպառվում</li> </ul> | X   |    | <p>Երթևեկության խցանումները կարող են առաջանալ ավտոբուսների համար նախատեսված մուտքի և ելքի ոչ պատշաճ տեղակայման պատճառով՝ հաշվի առնելով, որ տեղանքը շատ կենտրոնական է:</p>  |
| <ul style="list-style-type: none"> <li>հողի քայքայման և էկոհամակարգերի վատթարացման (օրինակ՝ ճահճուտների և վայրի հողերի, առափնյա գոտիների, ջրաբաժանքների և անտառների կորուստ)</li> </ul>  |     | X  | <p>Տարածքում բացակայում է բուսահողի շերտը: Դա հիմնականում ամայի հող է, որտեղ չկա բուսականություն կամ ծառեր, բացառությամբ հողատարածքի որոշ հատվածի, որը ծածկված է ծառերով:</p>  |
| <ul style="list-style-type: none"> <li>տեղահանման կամ մարդկանց ոչ կամավոր տարաբնակեցման</li> </ul>   |     | X  | <p>Հողը Երևանի քաղաքապետարանի սեփականությունն է, և առկա են որոշ շինություններ: Նրանց կարգավիճակը ենթակա է գնահատման:</p>   |
| <ul style="list-style-type: none"> <li>աղբատների, կանանց, երեխաների, տեղաբնիկների կամ այլ խոցելի խմբերի վրա անհամաչափ ազդեցությունների</li> </ul>  |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>մշակութային գույքի վնասման, մշակութային ժառանգության կորստի և զբոսաշրջային եկամուտների նվազման</li> </ul>   |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>ապօրինի բնակիչների և ցածր եկամուտ ունեցող խմբերի կողմից ցածրավայրերի, ողողադաշտերի և զառիվեր սարալանջերի օկուպացիայի, աղտոտիչ արդյունաբերությունների պատճառով վերջիններիս ավելացող առողջապահական վտանգների և ռիսկերի ենթարկման</li> </ul>   |     | X  |  |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

| Նախնական գնահատման հարցեր  | Այո | Ոչ | Մեկնաբանություններ   |
|--|-----|----|--|
| <ul style="list-style-type: none"> <li>▪ ջրային ռեսուրսների հետ կապված խնդիրների (օրինակ՝ հասանելի ջրամատակարարման ռեսուրսների սպառում/վատթարացում, մակերեսային և ստորգետնյա ջրերի որակի վատթարացում և ջրընդունիչների աղտոտում)</li> </ul> |     | X  | <p>Փաստաթղթերի (Գլխավոր հատակագիծ) ուսումնասիրությունը ստորգետնյա ջրերի առկայություն ցույց չի տալիս: Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում պահանջվող մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p>   |
| <ul style="list-style-type: none"> <li>▪ քաղաքային արտանետումների պատճառով օդի աղտոտման</li> </ul>   | X   |    | <p>Ակնկալվում է, որ օդը աղտոտող նյութերի արտանետումները նվազագույն կլինեն՝ հաշվի առնելով, որ նոր ավտոբուսները լիցքավորվելու են ԲՍԳ-ով</p> <p>Շինարարական աշխատանքների փուլ (տրանսպորտային միջոցների տեղաշարժեր հողային ճանապարհներով/ուղիներով, հողահեռացման աշխատանքներ, պայթեցումներ, հորատումներ, քամի՝ մաքրված տարածքներում և/կամ պահեստավորված նյութերի կուտակավայրերում և այլն)</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p> |
| <ul style="list-style-type: none"> <li>▪ ծրագրի իրականացման և շահագործման ընթացքում ֆիզիկական, քիմիական և կենսաբանական վտանգների պատճառով մասնագիտական առողջության և անվտանգության հետ կապված ռիսկերի և խոցելիության</li> </ul>            | X   |    | <p>Շինարարական աշխատանքների ժամանակ ֆիզիկական վտանգների պատճառով կարող են լինել մասնագիտական առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկեր (հիվանդություն, վնասվածք, աշխատողների մահ և այլն)</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p>   |
| <ul style="list-style-type: none"> <li>▪ անձրևային սեզոնին իրականացվող հանույթի պատճառով ճանապարհի փակման կամ ժամանակավոր հեղեղման</li> </ul>  | X   |    | <p>Քանի որ մոտակա Շիրակի փողոցը բավականաչափ լայն է, այնքան էլ հավանական չէ, որ կարող են տեղի ունենալ երթևեկության խցանումներ:</p> <p>Ենթակա է գնահատման, և անհրաժեշտության դեպքում շինարարական աշխատանքների ընթացքում մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p>   |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

| Նախնական գնահատման հարցեր  | Այո | Ոչ | Մեկնաբանություններ  |
|--|-----|----|---|
| <ul style="list-style-type: none"> <li>▪ շինարարական աշխատանքների պատճառով աղմուկի և փոշու առաջացման</li> </ul>                    | X   |    | <p>Շինհրապարակներում կան աղմուկի և թրթռման բազմաթիվ տարբեր աղբյուրներ, ինչպիսիք են ընդհանուր հողային աշխատանքները (հանույթի իրականացում, խտացում և այլն), հորատման աշխատանքներ, տրանսպորտային միջոցների երթևեկը, էքսկավատորները և այլ մեքենամեխանիզմները և այլն:</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում ընթացիկ մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p> <p>Հնարավոր է, որ շահագործման փուլում իրավիճակը բարելավվի, քանի որ ազատ երթևեկը նվազեցնում է աղմուկը: Այնուամենայնիվ, կիրականացվի աղմուկի մոդելավորում, և անհրաժեշտության դեպքում մեղմացնող միջոցառումները կնկարագրվեն ՇՄՆՈՒ-ում և Տեխնիկական մասնագրերում:</p> |
| <ul style="list-style-type: none"> <li>▪ շինարարական նյութերի տեղափոխման և թափոնների պատճառով երթևեկության խաթարումների</li> </ul> | X   |    | <p>Շինարարությունը կխանգարի առկա երթևեկությանը և կարող է խոչընդոտել ճանապարհի և մայրի մի մասը</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում ընթացիկ մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում (Երթևեկության կառավարման պլան)</p> <p>Կապալառուն կտրամադրի իր կողմից մշակված Երթևեկության կառավարման պլանը՝ որպես Մրցութային գործընթացի մաս, որը մշտապես թարմացվելու է շինարարության ընթացքում</p>  |
| <ul style="list-style-type: none"> <li>▪ շինարարության հետևանքով տիղմի ժամանակավոր արտահոսքի</li> </ul>                            | X   |    | <p>Առկա է փոքր ռիսկ, երբ հողային աշխատանքների հարևանությամբ տեղի է ունենում երթևեկի մուտք/ելք դեպի շինհրապարակ: Կապալառուն պարտավոր է մաքրել այդ տարածքները:</p>  |

Շրջակա միջավայրի նախնական գնահատման հայտ

| Նախնական գնահատման հարցեր  | Այո | Ոչ | Մեկնաբանություններ   |
|--|-----|----|--|
| <ul style="list-style-type: none"> <li>մոտակա, տնային տնտեսությունների, արտադրության պատճառով առաջացած աղտոտման, ջերմային կարգավիճակի և ծխագոյացման հետևանքով հանրության առողջությանը սպառնացող վտանգների</li> </ul>   |     | X  | Այն պարսպապատ դատարկ տարածություն է:   |
| <ul style="list-style-type: none"> <li>ջրի սպառման և/կամ որակի վատթարացման</li> </ul>  |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>գրունտային ջրերի գերածախսի պատճառով գրունտի նստեցման, գրունտային ջրի ցածր մակարդակի և աղակալման</li> </ul>  |     | X  |  |
| <ul style="list-style-type: none"> <li>ոչ պատշաճ աղբահեռացման պատճառով մակերեսային և գրունտային ջրերի աղտոտման</li> </ul>  | X   |    |  |
Հարցական նշանը նշանակում է, որ տվյալ տեսակը նախկին տարիների հետազոտությունների ընթացքում նկատվել է տվյալ կամ հարակից տարածքում, սակայն այս պահին այս կենդանիները չեն դիտարկվել և չկան դրանց առկայության ուղղակի ապացույցներ:

## Ե. Թոշուներ

Մասնագետ. կ.գ.թ., դոցենտ Գեորգի Պապով

[papov.george@yahoo.com](mailto:papov.george@yahoo.com)

**Հետազոտության մեթոդաբանություն. Տեսողական-ակուստիկ դիտարկում՝**

Ուսումնասիրության վայրի տարածքը գտնվում է քաղաքի հարավ-արևմտյան ծայրամասում՝ կիսաանապատային լանդշաֆտային գոտում՝ բնական, քսերոֆիտ, մշակված (այգիներ) բուսականության խառնուրդով: Տվյալների հաշվառումը իրականացվել է 2021 թվականի հունիսի 16-ից 20-ը ընկած ժամանակահատվածում: Այս ընթացքում շինարարական աշխատանքների համար նախատեսված ամբողջ տարածքը (12 հա) ուսումնասիրվել է 6 անգամ:

Տարածքը ուսումնասիրվել է ոչ միայն սահմանների երկայնքով, այլ նաև կենտրոնում տեղակայված ներքին տարածքների՝ պտղատու և այգու հողակտորներով և եղեգներով պատված ռոռգման ջրանցքների երկայնքով:

Դիտարկումը իրականացվել է ստանդարտ մեթոդիկաներով (Винокуров, 1963, Формозов, 1951; Новиков, 1953; Приедниекс, 1990): Երթուղու երկայնքով նշվել են թոշուների ուղղակիորեն հանդիպող բոլոր տեսակները, և, հնարավորության դեպքում, հաշվարկն իրականացվել է նաև

## Նախնական գնահատման հայտ

ձայների վերձանման միջոցով: Թռչունների դիտման համար օգտագործվել է «Celestron» 12X56 հեռադիտակը: Դիտարկումը իրականացվել են օրական երկու անգամ՝ առավոտյան և օրվա առաջին կեսին, ինչպես նաև երեկոյան (շոգի պատճառով շատ տեսակներ ցերեկը ակտիվ չեն):

Երթուղու երկայնքով անցումն ու թռչունների հաշվառումը իրականացվում էր հաշվարկի ընթացքի միջին արագությամբ 0,8-ից 2,5 կմ / ժամ, որոշ տեղերում դիտակետներ էին կազմակերպվում՝ ավելի երկար ժամանակ դիտարկման համար: Նման 4 կետերն են ընտրվել (նկ. Ե-1.):

Նկ.Ե - 1.



1. Երթուղու սկիզբը՝ արևելքից արևմուտք ուղղությամբ, անմիջապես առույից սկսած (նկ. Ե-2.):
2. Շիրակի մայրուղուն սահմանակից բլրի վրա, դեպի արևելք նայող հատվածում (նկ.Ե-3):
3. Պտղատու այգիներից մեկի կենտրոնում (նկ. Ե-4):
4. Ոռոգման ջրանցքի գծի երկայնքով՝ պտղատու այգու, բաց տարածքի և եղեգնուտի միջև (նկ. Ե- 5):

Օգտագործված տեխնիկան ստանդարտ է շարժական օբյեկտների ուսումնասիրության համար:

### Եզրակացություններ՝

#### Աղյուսակ Ե- 1. Ուսումնասիրվող տարածքի տեսակների կազմը

| Order         | Family     | Species   | Red Data Book of RA |
|---------------|------------|---|---------------------|
| Falconiformes | Falconidae | <i>Falco tinnunculus</i> – Սովորական հողմավար բազե <sup>1,2</sup> | –                   |
| Coraciiformes | Meropidae  | <i>Merops apiaster</i> – Ոսկեգույն մեղվակեր <sup>3</sup>          | –                   |
| –             | Upupidae   | <i>Upupa epops</i> – Հոպուպ <sup>1</sup>                          | –                   |

## Նախնական գնահատման հայտ

|                      |                     |  |   |
|----------------------|---------------------|--|---|
| <b>Piciformes</b>    | <b>Picidae</b>      | <i>Dendrocopos syriacus</i> – Միրիական փայտփոր <sup>1</sup>          | – |
| <b>Apodiformes</b>   | <b>Apodidae</b>     | <i>Apus apus</i> – Սև մանգաղաթև <sup>1</sup>                         | – |
| <b>Cuculiformes</b>  | <b>Cuculidae</b>    | <i>Cuculus canorus</i> – Կկու <sup>3</sup>                           | – |
| <b>Strigiformes</b>  | <b>Strigidae</b>    | <i>Asio otus</i> – Ականջավոր բու <sup>3</sup>                        | – |
| <b>Passeriformes</b> | <b>Motacillidae</b> | <i>Motacilla alba</i> – Սպիտակ խախտունիկ <sup>1</sup>                | – |
| –                    | <b>Laniidae</b>     | <i>Lanius collurio</i> – ժուլան <sup>1</sup>                         | – |
| –                    | <b>Alaudidae</b>    | <i>Alauda arvensis</i> – Դաշտային արտույտ <sup>3</sup>               | – |
| –                    | <b>Alaudida</b>     | <i>Melanocorypha calandra</i> – Տափաստանային արտույտ <sup>3</sup>    | – |
| –                    | <b>Hirundinidae</b> | <i>Hirundo rustica</i> – Գյուղական ծիծեռնակ <sup>1</sup>             | – |
| –                    | <b>Turdidae</b>     | <i>Turdus merula</i> – Սև կեռնեխ <sup>1,2</sup>                      | – |
| –                    | <b>Turdidae</b>     | <i>Phoenicurus phoenicurus</i> – Սովորական կարմրատուտ <sup>1,2</sup> | – |
| –                    | <b>Turdidae</b>     | <i>Luscinia megarhynchos</i> – Հարավային սոխակ <sup>1,2</sup>        | – |
| –                    | <b>Sylviidae</b>    | <i>Hippolais pallida</i> – Դալուկ մորեհավ <sup>1,2</sup>             | – |
| –                    | <b>Paridae</b>      | <i>Parus major</i> – Մեծ երաշտահավ <sup>1,2</sup>                    | – |
| –                    | <b>Ploceidae</b>    | <i>Passer domesticus</i> – Տնային ճնճուկ <sup>1,2</sup>              | – |
| –                    | <b>Sturnidae</b>    | <i>Sturnus roseus</i> – Վարդագույն սարյակ <sup>1</sup>               | – |
| –                    | <b>Fringillidae</b> | <i>Carduelis carduelis</i> – Կարմրակատար <sup>1,2</sup>              | – |
| –                    | <b>Corvidae</b>     | <i>Pica pica</i> – Սովորական կաչաղակ <sup>1,2</sup>                  | – |
| –                    | <b>Corvidae</b>     | <i>Corvus monedula</i> – Սովորական ձայ <sup>1</sup>                  | – |
| –                    | <b>Corvidae</b>     | <i>Corvus corone</i> – Մոխրագույն ագռավ <sup>1,2</sup>               | – |

<sup>1</sup> – երթուղու անցման ընթացքում նշվող դիտարկումներ <sup>2</sup> - տեսակները, որոնք նշված են դիտակետերում <sup>3</sup> - գրականության տվյալներ և ձայնային ազդանշանների հիման վրա ստացված տվյալներ:

Վերոհիշյալ տեսակներից ոչ մեկը ներառված չէ ՀՀ Կարմիր գրքում: Բոլոր տեսակները կարելի է համարել սինանթրոպային և բավականին հաջողությամբ հարմարեցված քաղաքային և մերձքաղաքային միջավայրին:

**Առաջարկություններ`** Ընդհանրապես, Երևան քաղաքի և նրա շրջակայքի թռչնաֆաունայի տեսակների կազմը, կախված սեզոնից, տատանվում է 70-80 տեսակներից, ինչը բացատրվում է նրա գտնվելու վայրով և տարբեր էկոլոգիական գոտիների առկայությամբ: Լինելով ցանկացած քաղաքի անբաժանելի էկոլոգիական և գեղագիտական բաղադրիչը` թռչունները գործում են և՛ որպես վնասակար միջատների դեմ պայքարի միջոց, և՛ որպես շատ սերմերի բնական բաշխող: Այդ պատճառով կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել, թե ինչպես է ապագայում փոխհատուցում իրականացվելու կորած տարածքը փոխարինելու համար: Հենց կանաչ տարածքների կրճատումն է՝ շինհրապարակների առատության, արտանետվող աղտոտվածություն, ինչպես նաև աղմուկի և լույսի աղտոտվածություն, որոնք քաղաքում թռչունների թվի նվազման հիմնական պատճառներն են:



## Նախնական գնահատման հայտ

Դեպոյի հարևանությամբ դեռ շատ այգիներ կան, որտեղ անհագստացրած թռչուններից շատերը կկարողանան տեղափոխվել: Նպատակահարմար կլինի նաև մասնագետների հետ համաձայնության գալուց հետո թռչունների համար բարենպաստ պայմաններ ստեղծվեն ավտոբուսային պարկի տարածքում՝ լրացուցիչ տնկելով թփեր և ծառեր, որոնք համապատասխանում են շրջակա լանդշաֆտին, որոնք նաև կքողարկեն ոչ գրավիչ վայրերը: Հաշվի առնելով կառուցվող օբյեկտի առանձնահատկությունները՝ հարկ ենք համարում ուշադրություն դարձնել աղմուկից, արտանետվող գազերից, փոշուց պաշտպանող կանաչապատմանը, քանի որ տարածքը գտնվում է բնակավայրերի մոտ և բերքի աճեցման համար նախատեսված տարածքների մոտ և այլն:

Կարևոր է հստակորեն սահմանել շինարարական աշխատանքների մեկնարկի ժամանակը, որպեսզի դրանք չհամընկնեն տարածքում բնակվող թռչունների բնադրման ժամանակի հետ: Սովորաբար դա տեղի է ունենում ապրիլից հունիս ընկած ժամանակահատվածում: Անհրաժեշտ է, որ թռչունները կարողանան ապահով բներ կառուցել և սերունդ մեծացնել: Հաճախ ոչ պատշաճ կազմակերպված աշխատանքի արդյունքում թռչունների ամբողջ պոպուլյացիան սատկում է, իսկ կենդանի մնացածները ծանր սթրես են ապրում և հետագայում հրաժարվում են նոր բներ կառուցելուց:

## Նախնական գնահատման հայտ

### Ձ. Կաթնասուններ

Մասնագետ. կ.գ.թ., դոցենտ Աստղիկ Ղազարյան

astbat@yahoo.com, astghik.ghazaryan@ysu.am

### Ներածություն

Երևան քաղաքի կաթնասունների վերաբերյալ գրականության տվյալները սակավ են: Մանր կաթնասունների (կրծողներ, միջատակերներ, ձեռքաթևավորներ) բազմազանությունը վերջին տասնամյակում ուսումնասիրվել է մի շարք գիտնականների կողմից: ՀՀ-ում շատ են նաև վտանգված տեսակերը, որոնց տարածվածության մասին, ինչպես նաև այդ տեսակների հակիրճ նկարագրությունը բերված է ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում:

Աշխատանքի նպատակն է եղել հետազոտել Երևանի քաղաքի ավտոբուսների դեպոի կառուցման տարածքում տարածված կաթնասունները:

### Արդյունքներ

Հայաստանում տարածված կաթնասունների 95 տեսակներից ուսումնասիրվող տարածքում կարելի է հանդիպել 12 տեսակների, որոնցից **ՀՀ Կարմիր գրքում տեսակներ չկան**: Հետազոտված տարածքում կաթնասունների դասը ներկայացված է 5 կարգերով (աղյուսակ Զ-5): Դրանք են՝

1. Ոզնիներ - Erinaceomorpha - 1 տեսակ
2. Միջատակերներ - Insectivora – 1 տեսակ
3. Ձեռքաթևավորներ - Chiroptera – 6 տեսակ
4. Կրծողներ - Rodentia – 3 տեսակ
5. Գիշատիչներ - Carnivora – 1 տեսակ

## Նախնական գնահատման հայտ

### Եզրակացություններ և առաջարկություններ

- Հետազոտվող տարածքում գրանցվել է 12 տեսակ կաթնասուններ, որոնք պատկանում են 5 կարգերին:
- ՀՀ Կարմիր գրքում ներառված տեսակներ չեն հայտնաբերվել:
- Միայն մեկ տեսակ՝ *Microtus levis* (Southern vole) - գրանցվում է որպես հազվագյուտ: Չկան այնպիսի տեսակներ, որոնք պաշտպանության հատուկ միջոցներ չեն պահանջում:

### Առաջարկություններ

Տարածքի շինարարությունը վնասելու է կրծողների բները: Ավտոբուսների դեպոն չի խանգարում կամ վնասում չղջիկների միգրացիոն ուղիներին և չկան տեսակներ, որոնք պաշտպանության հատուկ միջոցներ են պահանջում: Միակ առաջարկությունը հետևյալ է՝ հեռացնել բոլոր կենդանիներին, որոնք կհանդիպեն շինարարական աշխատանքների ընթացքում և տեղափոխվել անվտանգ / հարևան տարածքներ:

## Նախնական գնահատման հայտ

Աղուսակ Ե- 5. Հետազոտվող տեղամասում տարածված կաթնասունների ցանկը

| N                     | Species   | Our observations | Status (C-common, R – rare, E-endemic) |
|-----------------------|---|------------------|--|
| <b>Erinaceomorpha</b> |   |                  |  |
| 1                     | <i>Erinaceus concolor</i><br>Սպիտակափոր ոգնի<br>Southern white - breasted hedgehog  | +                | C                                      |
| <b>Insectivora</b>    |   |                  |  |
| 2                     | <i>Crocidura leucodon</i><br>Սպիտակափոր սպիտակատամ<br>Bicolord shrew  | +                | C                                      |
| <b>Chiroptera</b>     |   |                  |  |
| 3                     | <i>Pipistrellus pipistrellus</i><br>Թզուկ փոքրաչղջիկ<br>Common pipistrelle  | +                | C                                      |
| 4                     | <i>Pipistrellus pygmaeus</i><br>Գաճաճ փոքրաչղջիկ<br>Soprano pipistrelle   | +                | C                                      |
| 5                     | <i>Pipistrellus kuhlii</i><br>Կուլիի փոքրաչղջիկ<br>Kuhl's pipistrelle   | +                | C                                      |
| 6                     | <i>Myotis blythi</i><br>Սրականջ գիշերաչղջիկ<br>Lesser mouse-eared bat   | +                | C                                      |
| 7                     | <i>Myotis mystacinus</i><br>Բեղավոր գիշերաչղջիկ<br>Whiskered bat  | +                | C                                      |
| 8                     | <i>Myotis aurascens</i><br>( <i>Myotis davidii</i> )<br>Ոսկեգույն գիշերաչղջիկ<br>Stepp whiskered bat, eastern whiskered bat | +                | C                                      |
| <b>Rodentia</b>       |   |                  |  |
| 9                     | <i>Microtus levis</i><br>Արևելաեվրոպական դաշտամուկ<br>Southern vole   | +                | R                                      |
| 10                    | <i>Rattus norvegicus</i><br>Գորշ առնետ<br>Brown rat   | +                | C                                      |
| 11                    | <i>Apodemus witherbyi</i>   | +                | C                                      |

## Նախնական գնահատման հայտ

|                  |  |   |   |
|------------------|--|---|---|
|                  | Դեղնափոր տափաստանամուկ<br>Steppe field mouse       |   |   |
| <b>Carnivora</b> |  |   |   |
| <b>12</b>        | <i>Vulpes vulpes</i><br>Սովորական աղվես<br>Red fox | + | C |

✦ Հնարավոր է լինի ըստ գրականության

\* դաշտային աշխատանքների ժամանակ հանդիպել ենք

# Այս տեսակը հազվադեպ է, քանի որ ձևաբանական հատկանիշներով դժվար է ճանաչել այս կենդանուն: Հնարավոր է հաստատել այս տեսակի գոյությունը և չխառնել *Microtus arvalis*- ի հետ միայն գենետիկ կամ կարիոլոգիական հետազոտությունների միջոցով: Ամբողջ Հայաստանի տարածքից այս տեսակի վերաբերյալ բավարար տվյալներ չկան, և այս կենդանու ներկայությունը հաստատված է միայն Արարատյան դաշտի մի քանի տեղանքներից:

## Նախնական գնահատման հայտ

### Ամփոփում

Հետազոտության արդյունքները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ազդեցության որոշման առումով, կարող են ամփոփվել հետևյալ կերպ

| Հետազոտություն | Եզրակացություններ   | Առաջարկություններ   |
|----------------|---|---|
| Բույսեր        | <ul style="list-style-type: none"> <li>• Ավտոբուսի նախատեսվող պարկի ուսումնասիրված տարածքում հայտնաբերվել են 97 ցեղի, 37 ընտանիքի պատկանող 109 տեսակի բարձրակարգ անոթավոր բույս:</li> <li>• Ուսումնասիրված տարածքում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Բույսերի կարմիր գրքում կամ ԲՊՄՄ (Բնության Պահպանության Միջազգային Միություն) կարմիր ցուցակում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:</li> <li>• Հայաստանի տարածքի կամ այլ կարգավիճակի էնդեմ տեսակներ ուսումնասիրված տարածքում չեն հայտնաբերվել:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>• Ավտոբուսի նախատեսվող պարկի տարածքում հատվելու են մեծ քանակի պտղատու և գեղազարդային ծառեր և թփեր (31 տեսակ՝ 495 առանձնյակ ծառ և 59 առանձնյակ թուփ), որոնց փոխարեն հարկավոր է այլ վայրերում համարժեք քանակի և որակի նոր տնկարկներ ստեղծել, ինչպես նաև կառույցի ավարտից հետո շրջակայքը ծառապատել:</li> <li>• Հետազոտվող տարածքում հնարավորության դեպքում առաջարկում ենք շինարարական աշխատանքներին չխանգարող ծառերը չհատել, այլ շինարարական</li> </ul> |

## Նախնական գնահատման հայտ

|  |  |   |
|--|--|---|
|  | <ul style="list-style-type: none"> <li>• Ուսումնասիրված տարածքում բույսերի ռելիկտային տեսակներ չեն հայտնաբերվել;</li> <li>• Ուսումնասիրված տարածքում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը:</li> <li>• Ուսումնասիրված տարածքում բնակչության կողմից մշակվող այգիներում հատման ենթակա են 459 պտղատու ծառ և 57 պտղատու թուփ:</li> <li>• Ուսումնասիրված տարածքում հատման ենթակա են 36 գեղազարդային ծառ և 2 թուփ:</li> <li>• Մանրային, դեղագործական, համեմունքային, կերային և այլ վայրի աճող օգտակար բույսերը տարածքում թե տեսակների քանակով, թե կենսազանգվածով բավականին քիչ են և բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:</li> </ul> <p>✓ Բուսաբանական առումով ավտոբուսի պարկի</p> | <p>աշխատանքները պլանավորել այնպես, որպեսզի տարածքում աճող ծառատեսակներին հասցվի մինիմալ վնաս:</p> |
|--|--|---|



## Նախնական գնահատման հայտ

|                                       |   |   |
|---------------------------------------|---|---|
|                                       | <p>շինարարության համար մեր կողմից առարկություն չկա:</p>   |   |
| <p>Ցամաքային անողնաշար կենդանիներ</p> | <p>Ընդհանուր առմամբ, ուսումնասիրված տարածքի կենսավայրերը կրում են ռուդերալ բնույթ, լինելով կիսանապատային և չորային տափաստանային բուսականության մնացորդներ: Ցամաքային անողնաշար կենդանիների ֆաունան ևս ունի մնացորդային բնույթ և կարող է բնութագրվել որպես հիմնականում կիսանապատային, ընդգրկելով նաև որոշ ծառաթփային բուսականության հետ կապված տարրեր: Վերոհիշյալ տարածքից չի հայտնաբերվել ՀՀ Կարմիր գրքում (Հայաստանի..., 2010) և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (IUCN <i>Red List</i>) գրանցված անողնաշար կենդանիներից որևէ տեսակ: Չեն գրանցվել նաև նեղ տարածված տեսակներ՝ Անդրկովկասի,</p> | <p>Շինարարության պլանավորման մեջ առաջարկվում է պլանավորել ճանապարհամերձ տնկարկի և կանաչ գոտու ստեղծում, ելնելով այն հանգամանքից, որ նախատեսվող տեղանքը ունի բավականին չորային կլիմա և հակված է անապատացման: Ծառաթփային և <i>առատ ծաղկող</i> բուսականությամբ հագեցած կանաչ գոտին, որը կգրավի կենսաբազմազանությանը, մասնավորապես կարևոր է փոշոտող միջատների գրավումը:</p> |

## Նախնական գնահատման հայտ

|                                |  |  |
|--------------------------------|--|--|
|                                | <p>Կովկասյան էկոտարածաշրջանի էնդեմիկներ:</p> <p>Հետևաբար, կարող ենք ասել, որ նախատեսվող շինարարական աշխատանքները զգալի ազդեցություն չեն ունենա Հայաստանի նմանատիպ բիոտոպերի ցամաքային անողնաշար կենդանիների կենսաբազմազանության վրա:</p>   |  |
| <p>Երկկենցաղներ, սողուններ</p> | <ul style="list-style-type: none"> <li>• Դիտարկվել է երկկենցաղների 2 տեսակ՝ դոդոշ (<i>Bufo variabilis</i>) և փոքրասիական գորտ (<i>Pelophylax ridibundus</i>):</li> <li>• Դիտարկվել է մողեսի չորս տեսակ և երեք տեսակի օձ:</li> <li>• Ուսումնասիրվող տարածքում (ինչպես հիմա և նախկինում) դիտարկված երկկենցաղների երկու տեսակները ներառված են IUCN Կարմիր ցուցակում որպես LC (քիչ վտանգված.) և ոչ մեկը ներառված չէ ՀՀ Կարմիր գրքում: Այս տեսակները բնութագրվում են երկրում կայուն քանակով: Սողունների 12 տեսակներից 7-ը ներառված են IUCN Կարմիր ցուցակում LC կարգավիճակով:</li> </ul> | <p style="text-align: center;"><b>Շինարարական</b></p> <p>աշխատանքների առաջին փուլում, հողային աշխատանքների իրականացման ժամանակ, ներգրավել մասնագետ սողունաբանի, որը կորսա հայտնաբերված անհատներին: Այս գործողությունը կարող է ապահովել աշխատակազմի անվտանգությունը, եթե դրա կարիքը լինի, ինչպես նաև հնարավորություն կտա փրկել սողունների անհատներին:</p> |
| <p>Թռչուններ</p>               | <ul style="list-style-type: none"> <li>• Ուսումնասիրվող տարածքում դիտարկման</li> </ul>   | <p>Ընդհանրապես, Երևան քաղաքի և նրա շրջակայքի</p>   |

## Նախնական գնահատման հայտ

|  |  |   |
|--|--|---|
|  | <p>Ժամանակահատվածում գրանցվել է թռչունների 23 տեսակ, որոնք պատկանում են 7 կարգի և 18 ընտանիքի:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Վիզուալ դիտարկվել է 18 տեսակ թռչուն:</li> <li>• Տեսակին բնորոշ ձայնային ազդանշաններով գրանցվել է մեկ տեսակ</li> <li>• Դիտարկման ժամանակահատվածում ուսումնասիրվող տարածքում գրականությունում ներկայացված չորս տեսակ չի հայտնաբերվել: Գրանցված տեսակներից ոչ մեկը ներառված չէ ՀՀ Կարմիր գրքում: Բոլոր տեսակները կարելի է համարել սինանթրոպային և բավականին հաջողությամբ հարմարեցված քաղաքային և մերձքաղաքային միջավայրին:</li> </ul> | <p>թռչնաֆաունայի տեսակների կազմը, կախված սեզոնից, տատանվում է 70-80 տեսակներից, ինչը բացատրվում է նրա գտնվելու վայրով և տարբեր էկոլոգիական գոտիների առկայությամբ: Լինելով ցանկացած քաղաքի անբաժանելի էկոլոգիական և գեղագիտական բաղադրիչը՝ թռչունները գործում են և՛ որպես վնասակար միջատների դեմ պայքարի միջոց, և՛ որպես շատ սերմերի բնական բաշխող: Այդ պատճառով կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել, թե ինչպես է ապագայում փոխհատուցում իրականացվելու կորած տարածքը փոխարինելու համար: Հենց կանաչ տարածքների կրճատումն է շինհրապարակների առատության, արտանետվող աղտոտվածություն, ինչպես նաև աղմուկի և լույսի աղտոտվածություն, որոնք քաղաքում թռչունների թվի նվազման հիմնական պատճառներն են:</p> |
|--|--|---|

## Նախնական գնահատման հայտ

|  |  |  |
|--|--|--|
|  |  | <p>Դեպոյի հարևանությամբ դեռ շատ այգիներ կան, որտեղ անհագստացրած թռչուններից շատերը կկարողանան տեղափոխվել:</p> <p>Նպատակահարմար կլինի նաև մասնագետների հետ համաձայնության գալուց հետո թռչունների համար բարենպաստ պայմաններ ստեղծվեն ավտոբուսային պարկի տարածքում՝ լրացուցիչ տնկելով թփեր և ծառեր, որոնք համապատասխանում են շրջակա լանդշաֆտին, որոնք նաև կքողարկեն ոչ գրավիչ վայրերը: Հաշվի առնելով կառուցվող օբյեկտի առանձնահատկությունները՝ հարկ ենք համարում ուշադրություն դարձնել աղմուկից, արտանետվող գազերից, փոշուց պաշտպանող կանաչապատմանը, քանի որ տարածքը գտնվում է բնակավայրերի մոտ և բերքի աճեցման համար նախատեսված տարածքների մոտ և այլն:</p> |
|--|--|--|

## Նախնական գնահատման հայտ

|                     |  |  |
|---------------------|--|--|
|                     |  | <p>Կարևոր է հստակորեն սահմանել շինարարական աշխատանքների մեկնարկի ժամանակը, որպեսզի դրանք չհամընկնեն տարածքում բնակվող թռչունների բնադրման ժամանակի հետ: Սովորաբար դա տեղի է ունենում ապրիլից հունիս ընկած ժամանակահատվածում:</p>   |
| <p>Կաթնասուններ</p> | <ul style="list-style-type: none"> <li>• Հետազոտվող տարածքում գրանցվել է 12 տեսակ կաթնասուններ, որոնք պատկանում են 5 կարգերին:</li> <li>• <b>ՀՀ Կարմիր գրքում ներառված տեսակներ չեն հայտնաբերվել:</b></li> <li>• Միայն մեկ տեսակ՝ <i>Microtus levis</i> (Southern vole) - գրանցվում է որպես հազվագյուտ: Չկան այնպիսի տեսակներ, որոնք պաշտպանության հատուկ միջոցներ չեն պահանջում:</li> </ul> | <p>Տարածքի շինարարությունը վնասելու է կրծողների բները: Ավտոբուսների դեպոն չի խանգարում կամ վնասում չղջիկների միգրացիոն ուղիներին և չկան տեսակներ, որոնք պաշտպանության հատուկ միջոցներ են պահանջում: Միակ առաջարկությունը հետևյալ է՝ հեռացնել բոլոր կենդանիներին, որոնք կհանդիպեն շինարարական աշխատանքների ընթացքում և տեղափոխվել անվտանգ / հարևան տարածքներ:</p> |

## Նախնական գնահատման հայտ

### ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3 Հնագիտական փորձագիտական եզրակացություն

#### Շենգավիթ համայնքում դեպոյի համար նախատեսված տարածքի հնագիտական-մշակութային իրավիճակը

Արշակունյաց և Շիրակ պողոտաների հատման կետից հյուսիս՝ Շիրակի պողոտայի աջակողմյան հատվածում գտնվող՝ դեպոյի ամար նախատեսված տարածքի քարտեզագրության ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ համաձայն Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների նախագծի հետ համադրության, ինչպես նաև ՀՀ Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակում (հաստատված ՀՀ կառավարության 7 հոկտեմբերի 2004 թվականի N 1616-Ն որոշմամբ) արտացոլված միավորների՝ այստեղ պահպանության ենթակա տարածք կամ միավոր չկա: Սահմանազատված տարածքում պատմամշակութային բնույթի խոչնդոտներ չկան:

Մինևույն ժամանակ, նախկին ծրագրերի իրականացման ընթացքում (Preparing the Yerevan Sustainable Urban Transport Investment Program. Archaeological impact of Project 2 – Shirak Street – Argavand Highway (Preliminary report), 2010) մեր անձնակազմի կողմից խնդրո առարկա տեղանքը ենթարկվել է նախնական ուսումնասիրության, որտեղից հավաքվել են հնագիտական հետաքրքրություն ներկայացնող խեցանոթների բեկորներ, սակայն շինությունների, կառույցների հետքեր, հնագիտական շերտերի առկայություն չի փաստագրվել: Ասվածից ելնելով, խնդրում ենք շինարարական աշխատանքների ընթացքում (հողահեռացում, հիմքերի փորում, միջամտություն նստվածքների) աջակցություն, որպեսզի իրականացվի տարածքի հնագիտական դիտարկում՝ մշակութային արժեք ներկայացնող որևէ միավորի հնարավոր խաթարումից խուսափելու համար:

09.12.2020



Բորիս Գասպարյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշախատող

## Նախնական գնահատման հայտ

### ՀԱՎԵԼՎԱԾ Ը. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԸ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ը-1. Ծրագրի գործողությունների հետևանքով արժեքավոր բնապահպանական ընկալիչներին (ԱԲԸ) պատճառված ուղղակի (D) և անուղղակի (I) ազդեցություններ

| Ծրագրի գործողություն                        | Մթնոլորտային օդի որակ |        |         | Գրունտներ, բուսածո | Ջրի որակ | Սոցիալական համակարգեր       |                            |              | Երթևեկություն | Բուսական և կենդանական աշխարհ | Լանդշաֆտ և գեղագիտական տեսք |
|---|-----------------------|--------|---------|--------------------|----------|-----------------------------|----------------------------|--------------|---------------|------------------------------|-----------------------------|
|   | Փոշի                  | Աղմուկ | Թրթռում |                    |          | Մակերևութային ջրային մարմին | Հանրային ենթակառուցվածքներ | Բնակելի տներ |               |                              |                             |
| Գոյություն ունեցող կառույցների ապամոնտաժում | D                     | D      | -       | -                  | -        | I                           | I                          | I            | I             | I                            | D                           |
| Հողային աշխատանքներ                         | D                     | D      | -       | D                  | I        | I                           | I                          | I            | D             | D                            | D                           |
| Լիցք  | D                     | D      | D       | -                  | I        | I                           | I                          | I            | D             | I                            | D                           |
| Բետոնի հետ կապված աշխատանքներ               | D                     | D      | D       | -                  | I        | I                           | I                          | I            | D             | I                            | I                           |
| Ոռոգման ջրանցքի վրայով կամրջի կառուցում     | D                     | D      | D       | -                  | D        | I                           | I                          | I            | D             | I                            | D                           |
| Հաղորդողիների տեղափոխում                    | D                     | D      | -       | I                  | -        | I                           | I                          | I            | I             | I                            | D                           |
| Ասֆալտապատում                               | D                     | D      | D       | -                  | I        | I                           | I                          | I            | D             | I                            | D                           |
| Ջրահեռացման համակարգի կառուցում             | D                     | D      | -       | -                  | D        | I                           | I                          | I            | D             | -                            | D                           |
| Վարչական շենքի կառուցում                    | D                     | D      | -       | -                  | -        | I                           | I                          | I            | D             | -                            | D                           |
| Լիցքավորման կայանի և պահեստների կառուցում   | D                     | D      | -       | -                  | -        | I                           | I                          | I            | D             | -                            | D                           |



## Նախնական գնահատման հայտ

### ԵՆԹԱՀԱՎԵԼ ՎԱԾ Ը-2. Ազդեցությունների ժամանակային շրջանակը

| ԱԲԸ                    | Ազդեցության չափը   | Նախագծման փուլ | Նախաշինարարական փուլ. նախապատրաստական աշխատանքներ | Շինարարության փուլ  | Գործարկման փուլ | Շահագործման փուլ  |
|------------------------|--|----------------|---|---|-----------------|---|
| Մթնոլորտային օդի որակը | Հողային աշխատանքների հետևանքով առաջացած փոշի, շահագործվող մեքենամեխանիզմների և սարքավորումների գազային արտանետումներ |                | X   | X<br>Հիմնականում<br><br>հողային աշխատանքների հետևանքով առաջացած փոշի, շահագործվող մեքենամեխանիզմների և սարքավորումների գազային արտանետումները | X               | X<br>Երթևեկության հետևանքով մասնիկների և գազի արտանետումները թույլատրելի սահմաններում են<br><br>Օդի որակի բարելավում՝ պայմանավորված ԲՄԳ-ով լիցքավորվող տրանսպորտային միջոցներով |
| Աղմուկ                 | Առաջանում է մեքենամեխանիզմների և սարքավորումների շահագործման և երթևեկության ինտենսիվության մեծացման հետևանքով        |                |   | X   | X               | X<br>Ճնշվում է աղմկապաշտպան պատի միջոցով  |
| Թրթռում                | Առաջանում է մեքենամեխանիզմների և սարքավորումների շահագործման   |                |   | X<br>Հիմնականում  | Հավանական չէ    | X   |

## Նախնական գնահատման հայտ

|  | և երփնեկության ինտենսիվության մեծացման հետևանքով  |   |              |                  |              | Թույլատրելի սահմաններում է |
|--|---|---|--------------|------------------|--------------|----------------------------|
| Մակերևութային և ջրեր<br><br>Ոռոգման ջրանցք | Ջրատ, ջրի աղտոտում և նստվածքներ, որոնք առաջանում են փակ հողային աշխատանքների և փոխադրումների հետևանքով, ինչպես նաև մեքենաներից արտահոսքի, կեղտաջրերի արտանետումների, շինարարության հետ կապված արտանետումների, ինչպիսիք են բետոնաջուրը, հեղուկ և պինդ թափոնները և այլն |   | X            | X<br>Հիմնականում | X            | X                          |
| Ստորգետնյա ջրերի որակ                      | Վառելիքի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն), քսանյութերի և այլ հեղուկ նյութերի արտահոսք, ինչպես նաև նյութերի ոչ պատշաճ պահեստավորումից առաջացած թափոններ՝ լիցքավորման ժամանակ, կամ ծանր մեքենաների շահագործման հետևանքով առաջացած այլ պատճառներով:     | - | Հավանական չէ | Հավանական չէ     | Հավանական չէ | Հավանական չէ               |
| Բուսական և կենդանական աշխարհ               | □ հանույթի, տոփանման և բնահողի տեղափոխման պատճառով բնական միջավայրի խաթարում կամ ոչնչացում,<br>□ բուսականության, նորմալ սննդային շղթայի ոչնչացման պատճառով ցեղատեսակների կորուստ,   |   | Հավանական չէ | X                | X            | Հավանական չէ               |

## Նախնական գնահատման հայտ

|  |  |  |              |   |              |              |
|--|--|--|--------------|---|--------------|--------------|
|  | <p>□ պատճառվող անհանգստության հետևանքով ցեղատեսակների միգրացիա, Թճանապարհաշինարարության, ցանկապատման և այլնի պատճառով բնական միջավայրի խաթարում կամ մասնատում, □ շինարարական աղմուկի, երթևեկության, մարդկանց ինտենսիվ ներկայությամբ պատճառվող անհանգստություն:</p> |  |              |   |              |              |
| Գրունտներ և բուսաստան                                  | <p>□ հողային և լիցքի աշխատանքների արդյունքում հեռացված գրունտ և բուսաստան, □ գրունտի ողողաքայքայում և նստվածքագոյացում, □ արտահոսքերի պատճառով գրունտի աղտոտում</p>  |  | X            | X | X            | Հավանական չէ |
| Նյութերի աղբյուրներ (քարհանքեր/բացահանքեր)             | <p>լիցքի համար նախատեսված նյութի հանույթ շրջակա միջավայրից, օրինակ՝ մոտակա գյուղատնտեսական հողերից կամ հնագիտական վայրերից</p>   |  | Հավանական չէ | X | Հավանական չէ | Հավանական չէ |
| Սոցիալական համակարգեր (տե՛ս Ծրագծի թերթիկը ՀԱՎԵԼՎԱԾ Զ) | <p>□ անհանգստություն և/կամ անհարմարություն<br/>□ գույքին հասցվող վնաս</p>  |  | X            | X | X            | X            |
| Հաղորդողիներ   | <p>հողային աշխատանքների ընթացքում վնասելու վտանգ</p>   |  | X            | X | Հավանական չէ | Հավանական չէ |
| Երթևեկություն և տրանսպորտ                              | <p>□ շինարարության և շահագործման ընթացքում բեռնատար և այլ մեքենաների տեղաշարժի</p>   |  | X            | X | X            | X            |

## Նախնական գնահատման հայտ

|  |   |  |              |              |              |  |
|--|---|--|--------------|--------------|--------------|--|
|  | <p>պատճառով երթևեկության<br/>ինտենսիվացում<br/>□ գոյություն ունեցող<br/>ճանապարհների և հետիոտնային<br/>անցումների փակում,<br/>□ վտանգված հանրային<br/>անվտանգություն</p>                          |  |              |              |              |  |
| <p>Լանդշաֆտ և<br/>գեղագիտական<br/>տեսք</p>               | <p>հողային աշխատանքների, նյութերի<br/>և թափոնների կուտակումների,<br/>ծառերի և այլ բուսականության<br/>հեռացման, ժամանակավոր<br/>հարմարությունների ստեղծման<br/>պատճառով առաջացած<br/>ձևափոխում</p> |  | X            | X            | X            | <p>Հավանական չէ<br/><br/>Կանաչապատման<br/>արդյուքնում<br/>գեղագիտական<br/>տեսքի<br/>բարելավում</p> |
| <p>Հնագիտություն<br/>և մշակութային<br/>ժառանգություն</p> | <p>□ գտածոների վնասում և կորուստ</p>  |  | Հավանական չէ | Հավանական չէ | Հավանական չէ | Հավանական չէ   |

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ը-3 Ազդեցությունների խստությունը

| ԱԲԸ  | Ազդեցության չափը (փոփոխության նկատմամբ զգայունությունը) | Ազդեցության չափը | Ազդեցության տևողությունը | Ազդեցության հաճախականությունը | Ազդեցության հավանականություն | Շրջելիություն | Ազդեցության խստությունը (գնահատական) | Ազդեցության մակարդակը նախքան դրանց մեղմացումը <sup>36</sup> | Նկարագրություն   |
|--|---|------------------|--------------------------|-------------------------------|------------------------------|---------------|--------------------------------------|---|--|
| Մթնոլորտային և օդի որակը (փոշի և արտանետվող գազեր) | 4   | 1                | 4                        | 4                             | 4                            | 2             | Զափավոր (19)                         | ՑԱԾԲ  | <p>Ծրագրի իրականացման ընթացքում փոշու և գազի պարբերաբար արտանետումներ անպայման տեղի կունենան ծրագրի իրականացման վայրում և հարակից տարածքում:</p> <p>Գործողությունների դադարեցումը զգալիորեն կնվազեցնի փոշու և աղմուկի մակարդակը, սակայն նախաշինարարական իրավիճակը չի պահպանվի կառուցված ավտոբուսային հավաքակայանի շահագործման ինտենսիվության ավելացման պատճառով:</p> |
| Աղմուկ և թրթռում                                   | 4   | 1                | 4                        | 4                             | 4                            | 4             | Բարձր (21)                           | ՄԻԶԻՆ   | <p>Ծրագրի իրականացման և շահագործման ամբողջ ընթացքում ծրագրային տարածքի և հարակից տարածքում պարբերաբար տեղի կունենա աղմուկի և թրթռման աճ:</p> <p>Անհրաժեշտ են ազդեցությունը մեղմացնող արդյունավետ միջոցներ:</p>   |
| Զրի որակ (Ոռոգման ջրանցք)                          | 1   | 2                | 4                        | 4                             | 1                            | 2             | Թույլ (14)                           | ՑԱԾԲ  | <p>Շինարարական աշխատանքների և ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում ոռոգման ջրանցքի աղտոտումը և նստվածքագոյացումը (նավթ/վառելիքային և թափոններ, շինարարական աղբի ոչ պատշաճ հեռացում):</p> <p>Ազդեցության գոտին ձգվում է ծրագրի տարածքից դուրս: Այս ազդեցությունները</p>  |

<sup>36</sup>Ազդեցության մակարդակը նախքան մեղմացումը սահմանվում է Սխեմա Զ-2-ի հիման վրա:

## Նախնական գնահատման հայտ

|  |   |   |   |   |   |   |              |          |   |
|--|---|---|---|---|---|---|--------------|----------|---|
|  |   |   |   |   |   |   |              |          | նորմալ պայմաններում/հանգամանքներում չեն կանխատեսվում, սակայն կարող են ռիսկեր ենթադրել պատահարների կամ այլ դեպքերում:  |
| Բուսական և կենդանական աշխարհ                 | 4 | 1 | 2 | 2 | 4 | 3 | Չափավոր (16) | ՑԱԾԲ     | Տեղամասի ներսում մաքրման աշխատանքների ընթացքում անշուշտ տեղի կունենա տեղական և սովորական բնական միջավայրի կորուստ: Մաքրված բուսականությունը կվերականգնվի նոր ծառերի և թփերի տնկմամբ:  |
| Գրունտ, ներառյալ բուսահող                    | 3 | 1 | 4 | 4 | 4 | 2 | Չափավոր (18) | ՑԱԾԲ     | Գրունտների և բուսահողի խաթարում և/կամ աղտոտում միայն ծրագրի տարածքում: Մա տեղի է ունենալու հողային աշխատանքների իրականացման փուլում, իսկ աղտոտումն առանց մեղմացնող միջոցառումների մշտական գործընթաց է: Ազդեցությունը հիմնականում կվերացվի հողի վերին շերտի պահպանմամբ և մակերևույթի ասֆալտապատմամբ: |
| Նյութերի ռեսուրսներ, (հանքեր/բաց ահանքեր)    | 2 | 2 | 2 | 3 | 1 | 3 | Թույլ (13)   | ՑԱԾԲ     | Ազդեցության հավանականությունը շատ ցածր է, քանի որ նոր հանքերի բացում չի նախատեսվում, իսկ հանույթն արգելվում է ԲԿՊ-ով: Մրցույթի հաղթող կապալառուն շինարարական նյութը գնելու է գրանցված աղբյուրներից:   |
| Հիդրոերկրաբանություն (գրունտային ջրերի որակ) | 1 | 1 | 4 | 4 | 1 | 1 | Աննշան (10)  | Ոչ զգալի | Ըստ երկրաբանական հետազոտության՝ ներթափանցման հավանականությունը ստորգետնյա ջրերի մեջ շատ ցածր է: Ավելին՝ հավաքակայանի մակերևույթը կասֆալտապատվի և ազդեցությունն աննշան կլինի:  |
| Մոցիալական համակարգեր                        | 4 | 3 | 3 | 4 | 4 | 4 | Բարձր (22)   | ՄԻՋԻՆ    | Մա ներառում է տեղի՝ ազդեցության ենթակա անձանց առողջությունը և կենսակերպը, մասնավոր համայնքային սեփականությունը, ձեռնարկատիրական գործունեությունները: ԲԿՊ-ով նախատեսվելու են խիստ և արդյունավետ մեղմացնող միջոցառումներ:   |
| Ազդեցություն                                 | 3 | 2 | 4 | 3 | 2 | 2 | Չափավոր (16) |          | Ծրագրի քաղաքային հատվածում տեղակայված հաղորդողիների վնասումը հավանական է,   |

## Նախնական գնահատման հայտ

|  |   |   |   |   |   |   |              |          |   |
|--|---|---|---|---|---|---|--------------|----------|---|
| հաղորդողին երի վրա                             |   |   |   |   |   |   |              | ՑԱԾԲ     | քանի որ ստորգետնյա հաղորդողիների հետազոտություն չի իրականացվել: Մյուս կողմից նմանատիպ ազդեցություն չի կանխատեսվում, թեև որոշակի հավանականություն, այնուամենայնիվ, առկա է: Ազդեցությունը կարող է ամբողջությամբ վերացվել վնասված հաղորդողիների վերանորոգմամբ կամ տեղափոխմամբ:   |
| Երթևեկություն և տրանսպորտ                      | 3 | 2 | 4 | 4 | 4 | 3 | Չափավոր (20) | ՄԻՋԻՆ    | Շինարարական աշխատանքներով պայմանավորված և ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում անշուշտ տեղի կունենան հանրային երթևեկության խաթարումներ: Ազդեցությունը կտարածվի նաև ծրագրային տարածքից դուրս, քանի որ կմեծանա քաղաքային ճանապարհների երթևեկը: Ազդեցությունը մասամբ շրջելի է, քանի որ շինարարության փուլի տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդադարեցվի, սակայն ճանապարհային երթևեկության ինտենսիվությունը մշտապես կպահպանվի՝ ավտոբուսային հավաքակայանի շահագործման հետևանքով: |
| Լանդշաֆտ և գեղագիտական տեսք                    | 1 | 1 | 4 | 4 | 4 | 2 | Չափավոր (16) | ՑԱԾԲ     | Ազդեցության գոտին սահմանափակվում է ծրագրային տարածքով: Ծրագրի իրականացման ընթացքում և դրանից հետո անշուշտ տեղի կունենա լանդշաֆտի ձևափոխում: Ազդեցությունը միայն մասամբ կվերացվի, քանի որ նախաշինարարական իրավիճակը հնարավոր չէ վերականգնել:   |
| Հնագիտական և մշակութային ժառանգություն (գտածո) | 2 | 1 | 2 | 2 | 1 | 1 | Աննշան (9)   | Ոչ զգալի | Թեև ազդեցությունը հավանական չէ, առկա է գտածոների հայտնաբերման փոքր ռիսկ: Հետևաբար, ԲԿՊ-ով կնախատեսվի համապատասխան ընթացակարգ:   |



## Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ը-4. Նախքան մեղմացնող միջոցառումների իրականացումն ու դրանից հետո հասցված ազդեցության նշանակությունը

| ԱԲԸ            | Ազդեցության խստություն (գնահատական) | Մակարդակը նախքան մեղմացնող միջոցառումների իրականացումը | Մեղմացնող միջոցառումների տեսակը  | Նստվածքային բացասական ազդեցություն | Ազդեցության նշանակությունը մեղմացնող միջոցառումներից հետո (Ն)/Ոչ նշանակալի (ՈՆ) |
|----------------|-------------------------------------|--|--|------------------------------------|---|
| Աղմուկ թրթռում | և<br>Չափավոր (17)                   | ՑԱԾԸ   | <p><u>Նվազեցում</u></p> <p>Շինարարական փուլում բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսված կանոնավոր մեղմացնող միջոցառումներ</p> <p>Քաղաքային տրանսպորտի բարելավված համակարգ՝ ԲՄԳ-ով լիցքավորվող ավտոբուսներով, ինչպես նաև ավտոբուսային հավաքակայանի կանաչապատման նախագիծը կնպաստի շահագործման փուլում ջերմոցային գազերի ավելի քիչ արտանետմանը</p> <p>Մեղմացնող միջոցառման տեսակը որոշվում է օդի որակի հետազոտությամբ</p> | արտանետվող սեղմված գազեր           | ՈՆ  |

## Նախնական գնահատման հայտ

|  |               |       |  |  |    |
|--|---------------|-------|--|--|----|
| Աղմուկ<br>և<br>թրթռում                         | Բարձր<br>(21) | ՄԻՋԻՆ | <p><u>Նվազեցում</u></p> <p>Բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսված հատուկ մեղմացնող միջոցառումներ շինարարության և հետշինարարական փուլում:</p> <p>Մեղմացնող միջոցառման տեսակը որոշվում է Ձայնային և թրթռման հետազոտության միջոցով</p>  | Որոշ ֆունային աղմուկ՝ ճնշված աղմկապաշտպան պատնեշների միջոցով՝ 2,5 մ բարձրությամբ քարե պատի և 2-3 շաբաթ ծառերի տեսքով | ՈՆ |
| Մակերևութային ջրի հոսք և որակ (ոռոգման ջրանցք) | Թույլ (14)    | ՑԱԾՐ  | <p><u>Կանխարգելիչ</u></p> <p>Ջրային մարմինների վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսված կանոնավոր մեղմացնող միջոցառումներ</p>  | ոչ մի ազդեցություն   | ՈՆ |
| Բուսական և կենդանական աշխարհ                   | Չափավոր (16)  | ՑԱԾՐ  | <p><u>Հակակշռում</u></p> <p>Հատված ծառերի և թփերի փոխարեն նորերի տնկում և</p> <p>Բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով մեղմացնող միջոցառումների տեսակի սահմանում՝ Բուսական և կենդանական աշխարհի հետազոտության եզրակացությունների հիման վրա</p> | սովորական տեսակների բնական միջավայրի կորուստ   | ՈՆ |

## Նախնական գնահատման հայտ

|   |              |                     |   |                    |    |
|---|--------------|---------------------|---|--------------------|----|
| Գրունտ, այդ թվում՝ բուսահող                     | Չափավոր (18) | ՑԱԾԲ                | <p><u>Նվազեցում</u></p> <p>Բուսահողի պահպանում և կանաչապատման նպատակով վերաօգտագործում</p> <p>ԲԿՊ-ով նախատեսված կանոնավոր մեղմացնող միջոցառումներ՝ ուղղված աղտոտման նվազեցմանը</p> <p>Ասֆալտապատ ծածկը և հեղուկ նյութերի պահպանման վերաբերյալ առաջարկությունները կբացառեն շահագործման ընթացքում աղտոտումը</p> | ոչ մի ազդեցություն | ՈՆ |
| Նյութերի ստացման աղբյուրներ (հանքեր/բացահանքեր) | Թույլ (13)   | ՑԱԾԲ                | <p><u>Կանխարգելիչ</u></p> <p>Արգելվում է չգրանցված տեղամասերից նյութի ստացումը</p>  | ոչ մի ազդեցություն | ՈՆ |
| Հիդրոերկրաբանություն (ստորգետնյա ջրի որակ)      | Աննշան (10)  | ՈՉ<br>ՆՇԱՆԱԿԱԼ<br>Ի | <p><u>Կանխարգելիչ</u></p> <p>Թեև ազդեցությունը հավանական չէ, սակայն առկա է որոշակի փոքր ռիսկ, ուստի համապատասխան ընթացակարգը նախատեսվելու է ԲԿՊ-ում:</p> <p>ԲԿՊ-ով նախատեսված աղտոտման նվազեցմանն ուղղված կանոնավոր մեղմացնող միջոցառումներ</p>   | ոչ մի ազդեցություն | ՈՆ |

## Նախնական գնահատման հայտ

|   |              |               |  |                          |    |
|---|--------------|---------------|--|--------------------------|----|
|   |              |               | Ասֆալտապատ ծածկը և հեղուկ նյութերի պահեստավորման գործառնական ձեռնարկը կբացառեն աղտոտումը շահագործման ընթացքում   |                          |    |
| Սոցիալական համակարգեր                     | Բարձր (22)   | ՄԻՋԲՆ         | <u>Հակազրում և նվազեցում</u><br><br>Հատուկ միջոցառումներ ԲԿՊ-ում՝ շինարարության և շահագործման ընթացքում ԱԵԱ-ների, համայնքային և մասնավոր սեփականության պաշտպանության համար | ոչ մի ազդեցություն       | ՈՆ |
| Հաղորդուղիների վրա ազդեցություն           | Չափավոր (16) | ՄԻՋԲՆ         | Հակակշռում   | ոչ մի ազդեցություն       | ՈՆ |
| Երթևեկություն և տրանսպորտ                 | Չափավոր (20) | ՄԻՋԲՆ         | <u>Նվազեցում</u>   | բարելավված երթևեկություն | ՈՆ |
| Լանդշաֆտ և գեղագիտական տեսք               | Չափավոր (16) | ՄԻՋԲՆ         | Հակակշռում<br><br>Ավտոբուսային հավաքակայանի տարածքը կկանաչապատվի: Կանաչապատման նախագիծը ներառված է նախագծային փաթեթում:  | բարելավված լանդշաֆտ      | ՈՆ |
| Մշակութային ժառանգություն և հնագիտություն | Աննշան (9)   | ՈՉ ՆՇԱՆԱԿԱԼ Ի | <u>Նվազեցում</u><br><br>Թեև ազդեցությունը հավանական չէ, բայց առկա է գտածոյի հայտնաբերման փոքր ռիսկ, ուստի համապատասխան ընթացակարգը նախատեսվելու է ԲԿՊ-ում:                 | ոչ մի ազդեցություն       | ՈՆ |

## Նախնական գնահատման հայտ

### ՀԱՎԵԼՎԱԾ Թ. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

#### ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-1. Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի հետ ներածական հանդիպում

1. 2021 թվականի մայիսի 13-ին, ժամը՝ 10:00-ին Շենգավիթ վարչական շրջանի վարչական շենքում տեղի ունեցավ Ծրագրի ինժեներական և բնապահպանական թիմի ներածական համատեղ հանդիպումը Շենգավիթի թաղապետի տեղակալ պարոն Համլետ Գրիգորյանի հետ: Հանդիպմանը ներկա էին՝

Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ պրն. Համլետ Գրիգորյան

«ԷԳԻՍ Ինթերնեյշնլ» ընկերության ծրագրի համակարգող պրն. Տիգրան Մամիկոնյան

«ԷԳԻՍ Ինթերնեյշնլ» ընկերության բնապահպանական հարցերով խորհրդատու տկն. Էդիտա Վարդգեսյան

«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի նախագծային ինժեներ պրն. Վարդան Եղիազարյան

«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի գեոդեզիական ինժեներ պրն. Լևոն Մխիթարյան



#### Նկար 1. 2021 թվականի մայիսի 13-ին Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարության հետ տեղի ունեցած ներածական հանդիպում

2. Ներածական հանդիպման ընթացքում նախագծային թիմը ներկայացրեց գծագրեր և Ծրագրի տեխնոլոգիական ու ինժեներական մասով այլ մանրամասներ, ազդակիր համայնքների ներկայացուցիչները տեղեկացվեցին բնապահպանական ազդեցության գնահատման գործընթացի առաջընթացի և մեղմացնող միջոցառումների պլանավորման մասին:
3. Ազդակիր շրջանների ղեկավարների տեղակալները տեղեկացվել են նաև այն մասին, որ Ծրագրի նախաձեռնողները հանրային լսումներ են կազմակերպում ՀՀ օրենսդրության և ԱԶԲ անվտանգության քաղաքականության համաձայն: Նրանց խնդրեցին աջակցել և նպաստել այս գործընթացին՝ ապահովելու հանրային մասնակցությունը և հանրային խորհրդակցությունը դարձնելով արդյունավետ և բովանդակալից: Վարչական շրջանների ներկայացուցիչները խոստացան ուսումնասիրել նախագծային գծագրերը և օժանդակել ծրագրի հետ կապված

## Նախնական գնահատման հայտ


տեղեկատվության հրապարակմանը և տարածմանը՝ իրենց կայքէջերում հանրային լուսմների վերաբերյալ գովազդների տեղադրմամբ և հանրային տեսանելի վայրերում դրանց հրապարակմամբ:


4. Գովազդի տեքստը ներկայացվել է ազդակիր համայնքների վարչական ղեկավարներին՝ ազդեցության ենթակա անձանց և այլ շահագրգիռ անձանց շրջանում դրանց հրապարակման և տարածման համար:

# Նախնական գնահատման հայտ




ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2 1-ին հանրային քննարկման մասին հաշվետվություն

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-1 Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2021թ.-ի մայիսի 15-ի համարում լույս տեսած հանրային քննարկման մասին հայտարարությունը





15 ՄԱՅԻՍ 2021, ԸՄԲԸԹ

**ՀԱՐԱՄԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**  
Երևանի քաղաքային կայուն զարգացման ծրագրի

**ԵՐԵՎԱՆ ՔԱՐԱՔՈՒՍ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱՎԱՅՄԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ**

**Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ**

ՀՀ Կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը իրականացնում են Երևան քաղաքի էրթնեկության և տրանսպորտային համակարգի բարելավման ծրագիր, որի շրջանակներում կիրականացվի Երևան քաղաքում ավտոբուսների երը հավաքակալանի կառուցումը Աջակուխաց -Շիրակ պողոտաների փոխհատման հատվածում, ինչպես նաև սեղմված բնական գազի լցակայանի կառուցումը Ջրվեժի ավտոբուսների հավաքակայանում:

Բոլոր շահագրգիռ կազմակերպություններին և անձանց հրավիրում ենք մասնակցելու հանրային քննարկմանը, որի ընթացքում ծրագրի իրականացման ինժեներատեխնիկական և բնապահպանական թիմի կողմից կներկայացվեն մանրամասն տեղեկություններ ծրագրի նախագծի, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և դրանց կանխարգելման միջոցառումների վերաբերյալ: Քննարկումների միջոցառման ընթացքում դուք հնարավորություն կունենաք ծրագիրն իրականացնող թիմի պատասխանատուների հետ քննարկել Ձեզ հուզող հարցերը, փոխանակել Ձեր կարծիքները, այդ թվում ծրագրի արդյունքում բնապահպանական, սոցիալական, անվտանգության և առողջության վրա հնարավոր ազդեցությունների հետ կապված հարցեր:

**Ժամը** 14:00-ին  
Հինգշաբթի, 27 մայիսի 2021 թ-ի  
**Վայրը** ԵՆԵԳՐՎԻՔ Վարչական շրջանի քաղապետարանի շենքում,  
3-րդ հարկ, հանդիսությունների դահլիճ

**Հասցե** ք. Երևան, Գ. Նժդեհի փ., 26  
**Հեռ** +(374 11) 518 808

**Հարցերի դեպքում դիմել**  
Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր  
Երևանի քաղաքապետարանի \* Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի \*  
(ԵՎ ՄԻԳ) կազմում ստեղծված աշխատանքային խումբ  
ք. Երևան, Փ. Բուզանդի փ., 1/3, 5-րդ հարկ, Հեռ 374 (10) 520973

---

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայտնվում է, որ մրցույթով վարձակալության է տրամադրվում ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղյուսք համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հետևյալ հողատեսքերը:

**Խոտհարք** 4-րդ կարգ, 3 լոտով՝

|  |                                  |
|--|----------------------------------|
| 1-ին լոտ՝ 6,80 հա, ծածկագիր՝ 201-253,  | 1 հեկտարի մեկնարկային գինը 2100, |
| 2-րդ լոտ՝ 7,29 հա, ծածկագիր՝ 202-997,  | 1 հեկտարի մեկնարկային գինը 2100, |
| 3-րդ լոտ՝ 15,64 հա, ծածկագիր՝ 201-275, | 1 հեկտարի մեկնարկային գինը 2100, |

\*Արևիկահող՝ 4-րդ կարգ, 1 լոտով, 19.61 հա, ծածկագիր 05-038-102-049, 1 հեկտարի մեկնարկային գինը 4 000 դրամ:

**Արոտավայր**՝ 4-րդ կարգ, 11 լոտով, 1 հեկտարի մեկնարկային գինը 1935 դրամ:


| Լոտի N | Մածկագիր | Հողամասի չափը (հա) | Հողամասի մեկնարկային գինը (դրամ) | Լոտի N | Մածկագիր | Հողամասի չափը (հա) | Հողամասի մեկնարկային գինը (դրամ) |
|--------|----------|--------------------|----------------------------------|--------|----------|--------------------|----------------------------------|
| 1      | 025-007  | 3.35               | 6490                             | 7      | 201-304  | 10.91              | 21150                            |
| 2      | 102-008  | 2.90               | 5650                             | 8      | 201-254  | 0.19               | 370                              |
| 3      | 102-013  | 2.62               | 5100                             | 9      | 202-160  | 0.54               | 1050                             |

277



# Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-2 Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին ուղղված պաշտոնական ծանուցումը



**egis**  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄՆԱԿԱՆՈՒՄ

Ճաշոճ՝ ք. Երևան, Ջեյմս Բրայս 19/1  
 Հեռախոս՝ + 374 11 584404  
 Էլ. փոստ՝ richard.thadani@egis.fr  
 Ծրագրի No՝ 130115L

---

**Ում՝** Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար պարոն Ռուզմիկ Մկրտչյանին

**Պատմանք՝** «ԵՎԼ ՍԻԳ» -ի ծրագրի ղեկավար տիկին Լորա Մարտիրոսյանին  
 «ԵՎԼ ՍԻԳ» -ի տեխնիկական մասնագետ պարոն Վարդան Պարսպետյանին

Պատրոն՝ ARM/130115L/2021/710

20-րդ մայիսի, 2021թ.

**Քիմա՝ Հանրային քննարկումների կազմակերպում**

Կոնտակտային տեժ՝  
 Հեռախոս՝  
 Էլ. փոստ՝

Նախորդող գրություններ՝

Էդիտա Վարդգեսյան  
 +374 93 606017  
 editvard@gmail.com

ստիպ չեն

**Հարգելի պարոն Մկրտչյան,**

Տեղեկացնում եմք Ձեզ, որ ՀՀ կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի տրանսպորտային համակարգը բարելավելու նպատակով պլանավորում են իրականացնել ԵՒԵՎԱԸ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈՐՈՒՄԸՆԻ ԸՆԿԱՔԱՎԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ծրագիրը:

Ծրագրի վերաբերյալ հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի (ԵՎԼ ՍԻԳ) կազմում ստեղծված աշխատանքային խմբի կազմակերպում է ՀԱՂԱՅԻՆ ՔՆՆԱՎՎՈՒՄԸՆԻ, որտեղ հանրությունը և ծրագրի ազդակիր մարտիկ կարող են առավել մանրամասն տեղեկություններ ստանալ նշված ծրագրի նախագծի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, փոփոխուիել իրենց կործիքները և քննարկել իրենց հուզող հարցերը ինժեներատեխնիկական և քննադատական թիմի հետ:

Հայրում Լեյ ՕԼԻ աշակերտությունը 2021թ. -ի մայիսի 27-ին, ժ. 14:00-ին կայանալիք հանրային քննարկումների կազմակերպման և Շենգավիթ վարչական շրջանի ազդակիր բնակիչների, գործող իրավասների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությունն ապահովելու գործում:

Site Office address: Mr. James Bryant, house 19/1, Yerevan, Armenia, Registration number: N01/19/0162

Egis International

11, avenue du Centre - CS 22526 - Guyancourt - 78196 Saint-Quentin-en-Yvelines Cedex - France

Tel. +33 1 39 41 40 00 - Fax +33 1 39 41 57 57 - @egisgroup - S.A.S au capital de 14 850 100 Euros

SIRET 582 132 511 30174 - SIREN 582 132 511 - A.C.S. Versailles - N° identification Insee/communauté FR 62 962 132 95

## Նախնական գնահատման հայտ




Սույն նպատակով խնդրում ենք.

- Ազատել միջոցառմանը Շենգենի վարչական շրջանի դեկավարի կամ թաղապետարանի ներկայացուցչի մասնակցությունը,
- միջոցառման անցկացման համար տրամադրել Շենգենի թաղապետարանի հանդիսությունների դահլիճը (ներառվող տնօրությունը 1-2 ժամ),
- հանրային քննարկումների մասին հայտարարությունը փակցնել թաղապետարանի հայտարարությունների ցուցատախտակում, ազդակիր քնակնի թաղամասում, ինչպես նաև այլ հանրային մարդաշատ վայրերում,
- տեղադրել հանրային քննարկումների մասին հայտարարությունը թաղապետարանի վեբկայքում և այլ ինտերնետային հանրային հարթակներում:

Առդիր՝ հայտարարության տեքստը, 1 (մեկ) էջ:

Հարգանքով



Ռիչարդ Տազանյան

«Էգիս Ինթերնեյշնլ» ընկերության  
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն


## Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-3. Ազդեցության ենթակա բնակչության շրջանում տեղեկատվության տարածում

1. Առաջին հանրային քննարկումն անցկացվել է 2021 թվականի մայիսի 27-ին: Քննարկման նպատակն էր ապահովել «Հանրային քննարկումների անցկացման և տեղեկատվության հրապարակման մասին» ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (2009) և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (2014) Գլուխ 6-ի Հոդված 26-ի և «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության N 1325-Ն որոշման պահանջները (19.11.2014):
2. Հանրային քննարկումների իրականացման մասին գովազդային ծանուցումը փակցվել է Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2021 թվականի մայիսի 15-ի հրատարակման մեջ (տես Ենթահավելված Թ 3-1, կցված է նաև թղթային տարբերակով):
3. Հայտարարությունները փակցվել են հանրային տեսանելի վայրերում:



4. Հրավերները տրվել են բոլոր ազդակիր համայնքների բնակիչներին և Շենգավիթ վրաչական շրջանի Արշակունյաց պողոտայի և Շիրակի փողոցի տարածքում ձեռնարկատիրական գործունեությունների ներկայացուցիչներին:



## Նախնական գնահատման հայտ



5. Հայտարարությունը և հրավերները Երևան Օրհուս կենտրոնի ցանցի միջոցով բաժանվել են անմիջապես ՀԿ-ներին:
6. Հանրային քննարկումը տեղի է ունեցել Շենգավիթ վարչական շրջանում և ղեկավարվել պրն. Գևորգ Նավասարդյանի՝ Երևանի քաղաքապետարանի բնապահպանական բաժնի ղեկավարի կողմից՝ որպես ազդակիր համայնքի ներկայացուցիչ: Հանրային քննարկման արձանագրությունը, այդ թվում՝ մասնակիցների ցուցակը և մասնակիցների կողմից բարձրացված խնդիրների և հուզող հարցերի մասին ամբողջական տեղեկատվությունը պատշաճ կերպով փաստաթղթավորվել է և տեսաձայնագրության հետ միասին կցվել որպես ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-4:

## Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-4. 2021թ.-ի մայիսի 27-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի քաղաքային կայուն զարգացման ծրագիր

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ

### Ծրագրի համար

**Ծրագրի վերնագիր** Երևանի քաղաքային կայուն զարգացման ծրագիր

### Առարկա

Երևան քաղաքում ավտոբուսների հավաքակայանի կառուցման շրջակա միջավայրի հնարավոր ազդեցությունների քննարկում

### Օրը/ ժամը`

27 մայիսի 2021 թ. / 14:00- 16:00

### Վայրը`

Շենգավիթ վարչական շրջանի թաղապետարանի շենք,  
3-րդ հարկ, հանդիսությունների դահլիճ

### Հասցե`

ք. Երևան, փ. Գ. Նժդեհի 26

### Մասնակցում էին

1. Գևորգ Նավասարդյան, Երևանի Քաղաքապետարան, աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ
2. Արմեն Բողոյան, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր Տրանշ 2, բնապահպանության մասնագետ
3. Աննա Մալիկոյան, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, հանրային կապերի և հաղորդակցման մասնագետ;
4. Արտակ Բաբայան, Նոր Նորքի վարչական շրջան, Ջրվեժի ավտոբուսների հավաքակայանի առաջատար մասնագետ
5. Տիգրան Մամիկոնյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն,

## Նախնական գնահատման հայտ

ծրագրի համակարգող,

3. Էդիտա Վարդգեսյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն,  
ծրագրի բնապահպանության խորհրդատու,
4. Վահե Զիլինգարյան, ՍՈՒՖԵՏ նախագծային կազմակերպություն, տնօրեն
5. Տիգրան Հակոբյան, ՍՈՒՖԵՏ ՍՊԸ նախագծային կազմակերպություն,  
ճարտարապետ
6. Վարդան Եղիազարյան, ՍՈՒՖԵՏ ՍՊԸ նախագծային կազմակերպություն,  
ինժեներ- նախագծող
7. Շենգավիթ և Նոր Նորք վարչական շրջանի բնակիչներ
8. այլ մասնակիցներ թվով 30 հոգի (ընդհանուր ցուցակը տես Հավելված 1)

**Օրինակներ՝** Արձանագրության բնօրինակները ներկայացված են

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն Շրջակա միջավայրի գնահատման  
փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ին

Երևանի քաղաքապետարանին

Երևանի Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի գրասենյակին

Ասիական զարգացման բանկին

EGIS International խորհրդատվական կազմակերպությանը

**Հավելվածներ՝** Մասնակիցների ցուցակը

Հայաստանի Հանրապետություն օրաթերթում հայտարարությունը

Լուսանկարներ

Տեսագրությունը և ձայնագրությունը պարունակող էլեկտրոնային կրիչը

**Օրակարգը՝** Ծրագրի ընդհանուր քննարկում, նախագծի ներկայացում

բնապահպանական և սոցիալական բաղադրիչների ներկայացում

## Նախնական գնահատման հայտ

### Բացման խոսքը

Հանրային քննարկման միջոցառումը ողջույնի խոսքով բացեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ՝ պարոն Գևորգ Նավասարդյանը, ով նշեց, որ քննարկման միջոցառումը նվիրված է ՀՀ Կառավարության և Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող Երևանի քաղաքային կայուն զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսվող Երևան քաղաքի ավտոբուսների հավաքակայանի կառուցման ծրագրին, այդ թվում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններին: Նա տեղեկացրեց, որ հանդիպումը կազմակերպված է Երևանի քաղաքապետարանի կողմից, և խոսքը փոխանցեց ծրագրի նախագծային խորհրդատու կազմակերպությունը ներկայացնող՝ բնապահպանության և սոցիալական հարցերի խորհրդատու Էդիտա Վարդգեսյանին (ԷՎ):

Էդիտա Վարդգեսյանը տեղեկացրեց, որ քաղաքապետարանը Երևան քաղաքում նախատեսում է իրականացնել ավտոբուսների հավաքակայանի կառուցման ծրագիր, որն իր մեջ այս պահի դրությամբ ունի երկու բաղադրիչ՝ առաջին բաղադրիչը նոր հավաքակայանի կառուցումն է Արշակույաց-Շիրակ պողոտաների հատման հատվածում և երկրորդ բաղադրիչը՝ Ջրվեժի ավտոբուսների հավաքակայանի սահմաններում սեղմված բնական գազի կայանի կառուցումն է: Նա ներկայացրեց ծրագիրն իրականացնող պատասխանատու կազմակերպությունները ինչպես նաև ներկայացրեց այդ կազմակերպությունների կողմից հանդիպմանը ներկա գտնվող ներկայացուցիչներին՝ Երևանի քաղաքապետարանի "Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի" կազմում ստեղծված աշխատանքային խումբը (ԵԿՆ ԾԻԳ) (Արմեն Բողոյան, Աննա Մալիկոյան ), EGIS International միջազգային խորհրդատվական կազմակերպությունը (Էդիտա Վարդգեսյան, Տիգրան Մամիկոնյան) և ՍՈւՖԵՏ տեղական նախագծային կազմակերպությունը (Վահե Զիլինգարյան, Տիգրան Հակոբյան, վարդան Եդիսգարյան),

Էդիտա Վարդգեսյանը հակիրճ ներկայացրեց հանդիպման օրակարգը նշելով, որ սկզբից կներկայացվի ծրագրի նախագիծը, որից հետո կներկայացվեն շրջակա միջավայրի վրա գնահատված հնարավոր ազդեցությունները, այնուհետև կտրվի ժամանակ հարցուպատասխանի համար, կլսվեն նախագծի և ՇՄԱԳ-ի վերաբերյալ բարձրացվող բոլոր հարցերը, որոնց կտրվեն պատասխաններ:

Նա նաև տեղեկացրեց, որ ՇՄԱԳ-ի վրա աշխատել է ծրագրի բնապահպանական թիմը՝ ի դեմս EGIS International խորհրդատվական կազմակերպության և ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետի, ինչպես նաև ներգրավվել են առանձին բնապահպանական ոլորտների մասնագետներ, ինչպիսիք են՝ բուսաբաններ, կենդանաբաններ, երկրաբաններ, հնէաբաններ և այլն:

**Մաս 1. Ծրագրի ինժինեռա-տեխնիկական նախագծային մասի ներկայացում:**



## Նախնական գնահատման հայտ

Այնուհետև խոսքը տրվեց նախագծող կազմակերպության տնօրեն Վահե Զիլինգարյանին (Վ.Զ.), ով նախ ՊՊ շնորհանդեսի միջոցով լայնամասշտաբ ֆորմատի գծագրերով ցուցադրեց նախագիծը: Նա տեղեկացրեց, որ ավտոբուսների կառուցվող հավաքակայանը նախատեսված է 400 ավտոբուսի համար, զբաղեցնելու է մոտ 11.07 հա մակերես և կառուցվելու է Շենգավիթ վարչական շրջանի՝ Արշակունյաց և Շիրակ պողոտաների հատման հատվածում: Նախատեսվում է ապահովել մեկ ելք-ու-մուտք Շիրակի փողոցի կողմից և մեկ ելք Արշակունյաց պողոտայի կողմից ավտոբուսների համար, ինչպես նաև լինելու է ևս մեկ ելք -ու- մուտք Շիրակի կողմից՝ հետիոտների և արտակարգ իրավիճակների դեպքերի համար: Արշակունյաց պողոտայի կողմից ելքն ապահովելու համար ոռոգման ջրանցքի վրայով առկա կամուրջը վերանորոգվելու է:

Ավտոբուսների լիցքավորումն իրականացվելու է ինչպես արագ, այնպես էլ դանդաղ եղանակով՝ գիշերը դրանց կայանման ընթացքում, ընդ որում նշվեց, որ դանդաղ լիցքավորման եղանակը նորություն է Հայաստանում և կիրառվելու է առաջին անգամ:

Նախատեսվում են նաև վարչական շենքեր, սպասարկման կետեր և ենթակառուցվածքներ: Տարածքն ամբողջությամբ բոլոր կողմերից պարսպապատվելու և մեկուսացվելու է 2,5 մ բարձրությամբ պատնեշով:

Այնուհետև հետագա քննարկումը վերածվեց հարցուպատասխանի.

| Ն | հարց  | պատասխան   | Լրացում |
|---|---|--|---------|
| 1 | Շենգավիթ համայնքի բնակիչ<br><i>Լցակայանն ար Ի նչ հեռավորության վրա է գտնվելու բնակչության վայրից:</i>             | Վ.Զ.<br>Լցակայանն ար մոտակա բնակչության վայրից գտնվելու են մոտ 100մ հեռավորության վրա:   | -       |
| 2 | Շենգավիթ համայնքի բնակիչ<br><i>Որքանո՞վ է անվտանգ, քանի որ այդ տարածքում ապրում են վաթսուներից ավել երեխաներ:</i> | Վ.Զ.<br>Ձեր նշած փողոցի և ավտոբուսների հավաքակայանի միջև բավականին մեծ տարածություն կա: Նախ, ջրանցքի լայնությունը, այնուհետև մոտ 8մ լայնության ճանապարհ, ինչպես նաև մոտ հիսուն մետր պաշտպանիչ գոտի Բնակելի տների հարող հատվածում գազի պահեստարաններ չկան, գազի բոլոր սարքավորումների տեղադիրքը հեռացված է դեպի Շիրակի փողոց: |         |

## Նախնական գնահատման հայտ

|   |   |   |   |
|---|---|---|---|
| 3 | <p>Շենգավիթ համայնքի բնակիչ</p> <p><i>Դուք հիշատակեցիք, որ բացի արագ լիցքավորումից լինելու է նաև դանդաղ լիցքավորում ամբողջ գիշերվա ընթացքում: Խնդրում եմ գծագրի վրա ցույց տաք լիցքավորման տեղերը և հեռավորությունը տներից</i></p> | <p>Ա.Բ.</p> <p>Դանդաղ գազալիցքավորումն իրականացվելու է հավաքակայանի մեջտեղի հատվածում, եզրերին մոտ լիցքավորման կետեր չեն նախատեսվում: Հեռավորությունը մետակա բնակելի տներից կազմելու է առնվազն 70- 80մ:</p> |   |
| 4 | <p>Շենգավիթ համայնքի բնակիչ</p> <p><i>Հնարավոր վթարի դեպքում որքանո՞վ է անվտանգությունը ապահովված բնակչության համար, պահպանված են արդյոք անվտանգության կանոնները:</i></p>   | <p>Վ.Չ.</p> <p>Նախատեսված է հակահրդեհային համակարգ բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքներով՝ փականներով, ջրի պաշարներով և մատակարարման ուղիներով,</p>  | <p>Ա.Բ.</p> <p>Նախագծող կազմակերպությունը հաշվի է առել բոլոր հնարավոր վթարային իրավիճակները և ՀՀ ստանդարտներով գազալցակայանների համար նախատեսվում է 50 մ հեռավորություն սահմանել մոտակա բնակելի տներից: Մեր դեպքում հեռավորությունը 100 մ է: Հակահրդեհային համակարգի առկայության դեպքում բնակչությունը վստահաբար չի տուժելու:</p> |
| 5 | <p>Շենգավիթ համայնքի բնակիչ</p> <p>Կարծում եմ, որ 400 ավտոբուսների համար հավաքակայանի ծրագրին առաջին հերթին խանգարում է Էրեբունի օդանավակայանի առկայությունը, որը ռազմական բազա է: Գտնում եմ, այստեղ հավաքակայան</p>              | <p>Է.Վ.</p> <p>Ծրագիրն անցնելու է մի շարք փորձաքննություններ, ինժեներա- տեխնիկական, շրջակա միջավայրի վրա ազդեցության, ինչպես նաև համալիր փորձաքննություն այդ թվում՝ արտակարգ իրավիճակների: Նախագիծը</p>     |   |

## Նախնական գնահատման հայտ

|   |   |  |  |
|---|---|--|--|
|   | <p>կառուցելը չափազանց վտանգավոր կլինի:</p>  | <p>ուսումնասիրվելու է Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից, որը անկառավարելի ռիսկերի դեպքում երբեք չի տա դրական եզրակացություն:</p> <p>Այսօր ձեր կողմից հնչեցրած ռիսկերը կարձանագրենք և կներկայացնենք ԱԻՆ-ին, ինչպես նաև հետամուտ կլինենք ԱԻՆ-ի կողմից ստանալ այդ հարցերի պատասխանները և հնարավորության դեպքում հաջորդ մեր հանդիպմանը կապահովենք այդ կառույցի ներկայացուցչի ներկայությունը:</p> <p>Հավաստիացնում եմ, որ անվտանգությունը այն հարցն է, որ հուզում է ծրագրի նախաձեռնողներին և գտնվում է Ասիական բանկի ուշադրության կենտրոնում</p> |  |
| 6 | <p>Շենգավիթ համայնքի բնակիչ</p> <p><i>Հարցը վերաբերում է անվտանգությանը:</i><br/><i>Ավտոբուսները բացի գազից, նաև դիզվառելիքով են աշխատելու, որը նույնպես վտանգավոր է մեզ համար:</i></p> | <p>Վ.Զ.</p> <p>Այո, դիզվառելիքի պաշարներ լինելու են, սակայն ավտոբուսները դիզվառելիքով չեն աշխատելու, դրանք միայն սեղմված բնական գազի համար են նախատեսված: Դիզվառելիքի պաշարները միայն պահուստային են լինելու:</p>  |  |
| 7 | <p>Շենգավիթ համայնքի բնակիչ</p> <p><i>Դուք նշեցիք, որ հավաքակայանը զբաղեցնելու է մոտ 13 հա տարածք: Իմ կարծիքով դա չափազանց մեծ</i></p>  | <p>Ա.Բ.</p> <p>Հարցը պետք է դիտարկել այն տեսանկյունից, որ հաշվի են առնվել մի շարք նախագծային պահանջներ ավտոբուսների</p>  | <p>Է.Վ.</p> <p>Ուզում եմ տեղեկացնել, որ ներկայումս առաջարկող</p> |

## Նախնական գնահատման հայտ

|   |  |  |  |
|---|--|--|--|
|   | <p><i>տարածք է 400 ավտոբուսների կայանման համար: Կարծում եմ, որ 2 հեկտարն էլ բարար կլինեն, ինչը հնարավորության կտար չներխուժել մեր այգիների մեջ: Կամ գոնե հնարավոր չէ արդյոք պարիսպը մեկ մետր ներս տանել, ինչը թույլ կտար չկտրել ծառերը և լուծել երեխաների խաղահրապարակի հարցը:</i></p> | <p>սպասարկման, ազատ կայանման, անվտանգության և այլն: Նախագծողները պրոֆեսիոնալներ են, և 13 հարի հաշվարկը պատահական չի արվել: Վստահ եմ, որ նախագծողները շատ լավ աշխատանք են կատարել:</p>                  | <p>նախագծից առաջ եղել է Ասիական Բանկի կողմից մշակված ավտոբուսների հավաքակայանի կառուցման տեխնիկական առաջարկի սխեմա, որի համաձայն հավաքակայանը մոտ 8 հեկտար էր զբաղեցնելու: Սակայն այդ տեխնիկական առաջարկը վերանայվել է Խորհրդատու կազմակերպության միջազգային մասնագետների կողմից, որոնք հավաքակայանի գործողության, այդ թվում նաև անվտանգության նկատառումներից ելնելով ընդլայնել են պահանջվող տարածքի մակերեսը:</p> |
| 8 | <p>Շենգավիթ համայնքի բնակիչ</p> <p><i>Այդ դեպքում, հնարավոր չէր արդյոք Շիրակ փողոցի երկայնքով ընդլայնվել</i></p>   | <p>Ա.Բ.</p> <p>Ծրագրի ընտրված տարածքը հանրային սեփականություն է և պատկանում է Երևանի քաղաքապետարանին: Ցավոք, ձեր կողմից մատնանշած հատվածի բոլոր տարածքները մասնավոր սեփականություն են հանդիսանում:</p> | <p>Շենգավիթ համայնքի բնակիչ</p> <p>Ժամանակին դիմել ենք քաղաքապետարանին այդ տարածքների սեփականաշնորհման համար, սակայն ստացել ենք պատասխան, որ դրանք ստրատեգիական նշանակության հողեր են: Ընթրնումով ենք մոտեցել, սակայն հիմա պարզվում է, որ դրանք</p>  |

## Նախնական գնահատման հայտ

|   |  |  |  |
|---|--|--|--|
|   |  |  | սեփականաշնորհված են:   |
| 6 | <p>Շենգավիթ համայնքի բնակիչ</p> <p><i>Արդեն վաթսուն տարի կլինի, որ մենք այստեղ ապրում ենք, երեխաները խաղահրապարակ չունեն, ամբողջ կոյուղաջրերը անցնում են ջրանցքի միջով, ոռոգման ջուրը կտրել են: Ջուրը կտրեցին ծառերը չորացան: Ընդամենը չորս մետր է առվից մինչև մեր տները, մեր երեխաների խաղատեղը այդ դաշտն է: Իսկ ինքնաթիռների, կործանիչների աղմուկը խելագարության է հասցնում, առավոտյան ութից մինչև երեկոյան ժամը վեցը: Չափագրողները եկան և չէին դիմանում, իսկ մեր երեխաները այդ աղմուկի տակ են մեծանում, խայտառակ վիճակ է: Հիմա դա մեր ֆուտբոլի դաշտն է, որ խաղում են, ուրիշ տեղ չունեն: Հիմա ի՞նչ էք տալու դրա դիմաց:</i></p> | <p>Վ.Չ.</p> <p>Տարածքի ընտրությունը կատարվել է քաղաքապետարանի մասնագետների կողմից, բազմակողմանի ուսումնասիրվել է ինժեներատեխնիկական չափանիշների տեսանկյունից</p> | <p>Ա.Բ.</p> <p>Կարծում եմ, որ ծրագիրն ունենալու է մի շարք դրական ազդեցություններ տեղի բնակչության համար: Մասնավորապես հնարավոր կլինի լուծել ոռոգման ջրի հարցը, կանաչ զանգվածը կավելանա 6 անգամ, իսկ ինչ վերաբերվում է աղմուկին, ապա ավտոբուսակայանի ազդեցությունը լինելու է թույլատրված նորմերի սահմաններում, ինչպես նաև կառուցվելու է 2.5 մ բարձրության պարիսպ և պահպանվելու է սանիտարապաշտպան գոտին:</p> |

### Մաս 2. Ծրագրի բնապահպանական և սոցիալական բաղադրիչների ներկայացում:

Արմեն Բողոյանը շնորհակալություն հայտնեց արդարացի հարցերի համար հիշեցնելով, որ այս հանրային քննարկումների նպատակը կայանում է հենց նրանում, որպեսզի հարակից բնակչությունը տեղյակ լինի ծրագրի հնարավոր ազդեցությունների մասին, ինչպես նաև նախագծողների համար իր հերթին հասկանալի լինեն բնակիչների մտահոգություններն ու պահանջները: Նա նշեց, որ ծրագրի իրականացման գրասենյակը պատասխանատվություն է կրում ծառահատման համար և հավաստիացրեց, որ

ծառատունկն ինքնանպատակ չի լինելու: Արմեն Բողոյանը մանրամասն ներկայացրեց ծառահատման և ծառատնկման գործընթացները: Նա նշեց, որ Ծառերը տնկվելու են 1:6 հարաբերակցությամբ, որը լրացնելու է ծառահատումների արդյունքում առաջացած թթվածնի

## Նախնական գնահատման հայտ

պակասը: Ծառերի մի զգալի մասը 2-3 -շերտ գոտիով տնկվելու է հենց հավաքակայանի տարածքում պարիսպից ներս ամբողջ շրջագծով որպես պաշտպանիչ գոտի, որը զբաղեցնելու է մոտ 4 հազար քմ մետր: Այդ ծառերի խնամքն իրականացնելու է ավտոբուսների հավաքակայանը: Այստեղ նախատեսվում է նաև ոռոգման համակարգ կառուցել:

Եթե հնարավոր լինի ծառերի ավելացված քանակությունը կտնկվի պարիսպից դուրս քաղաքապետարանի, թաղապետարանի, ինչպես նաև բնակիչների կողմից ընտրված տարածքում: Ծառերի տեսականու ընտրության գործում նույնպես հնարավոր է բնակիչների մասնակցությունը:

Ծառերը ծառայելու են որպես պաշտպանիչ գոտի: Նախ, ապահովելու են թթվածնի բավարար քանակություն, , և երկրորդը՝ աղմուկապաշտպան դեր են կատարելու, այնպես, որ պահպանվեն աղմուկի ստանդարտները: Նշված նպատակի համար տրվելու են համապատասխան ինժինեթական լուծումներ:

Արմեն Բողոյանը տեղեկացրեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավտոբուսների կայանման հատվածը առաջին բնակելի տներից գտնվում է մոտավորապես երեսուն-քաասուն մետրի վրա ԾԻԳ-ը դիմել է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեին մոտակա բնակելի տներից պահանջվող հեռավորության ստանդարտները ճշտելու նպատակով: Արդյունքում, որոշվել է պահանջվող սանիտարական նորմերին և ստանդարտներին համապատասխանելու նպատակով պարիսպ կառուցել և ծառերի զանգվածով օդապաշտպան և աղմուկապաշտպան գոտի ստեղծել: :

Անդրադառնալով հնչած մտահոգությանը, որ տեղի բնակչությունը փաստացի զրկված է ոռոգման ջրի հնարավորությունից՝ Արմեն Բողոյանը հավաստիացրեց, որ ԾԻԳ-ը պարտադրելու է, որ տնկված ծառերն ապահովված լինեն ոռոգման համակարգով: Ընդ որում հնարավորություն կլինի միաժամանակ նպաստել առհասարակ տեղի բնակչության, իրենց այգիների կարիքների համար ոռոգման ջրի հետ կապված խնդրի լուծմանը: Չնայած ծրագիրը չի նախատեսում ամբողջ մերձակա տարածքի համար ոռոգման համակարգ կառուցել, սակայն ծառատունկի հատվածներում ոռոգման ջրամատակարարումն ապահովելու համար ջրի հաշվարկն իրականացվելու է այնպես, որ հարակից տարածքների բնակիչները նույնպես այդ ոռոգման ջրի մատակարարման քանակներից կարողանան օգտվել և իրենց այգիները ջրել:

Այնուհետև հարց-ու- պատասխանը վերսկսվեց:

| Ն  | հարց   | պատասխան   | լրացում |
|----|--|--|---------|
| 10 | Շենգավիթ համայնքի բնակիչ<br><br><i>Հարցը վերաբերվում է օդի ախտոտմանը: Եթե ավտոբուսները լիցքավորվելու են գազով, դա նախ ազդելու է շրջակա միջավայրի վրա, ինչպես</i> | Է.Վ.<br>Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում միջազգային մասնագետների ներգրավմամբ իրականացվել է օդի որակի հետազոտություն, կատարվել են չափագրումներ ծրագրի տարածքում օդի որակի | ---     |

## Նախնական գնահատման հայտ

|                  |   |  |  |
|------------------|---|--|--|
|                  | <p><i>նաև բնակչության առողջության վրա:</i></p>  | <p>ելակետային տվյալների հավաքագրման նպատակով, այնուհետև մոդելավորման միջոցով որոշվել է, թե ինչպիսին է լինելու օդի որակը ավտոբուսների նախատեսվող քանակի դեպքում: Մասնագետներն արել են այն եզրակացությունը, որ քանի որ ընդհանուր առմամբ, համեմատած դիզելային վառելիքի հետ, պրոպան գազի դեպքում ախտոտվածությունը մի քանի անգամ նվազելու է, և հաշվի առնելով այս պահի դրությամբ գործող երթուղայինների քանակային կրճատումները, և այն փաստը, որ ավելի ժամանակակից ավտոբուսներ են կիրառվելու՝ այդ բոլորի մոդելավորումը ցույց է տալիս, որ ավտոբուսներից ախտոտվածությունը նվազելու է:</p> <p>Ընդհանուր առմամբ օդի որակի տեսանկյունից ծրագիրը դրական բնապահպանական էֆեկտ է ունենալու:</p> |  |
| <p><b>11</b></p> | <p>Շենգավիթ համայնքի բնակիչ</p> <p><i>Ինչպես հասկանում եմ, տեղի է ունենալու գլոբալ ծառահատում, այսինքն էլի անդրադառնում ենք բնապահպանության շրջակա միջավայրի պահպանման կանոններին: Որքան էլ որ դուք ասում եք,</i></p> | <p>Վ.Չ.</p> <p>Այո, իրականում ծառեր են հատվելու: Հավաքակայանի ծածկը լինելու է բետոն կամ ասֆալտ բետոն, ուրիշ ծածկ չի կարող լինել:</p> <p>Ցավոք, ավտոբուսների հավաքակայանի անհրաժեշտությունը ստիպում է գնալ գոհաբերությունների, իսկ</p>  | <p>Է.Վ.</p> <p>Ծրագիրն իրականացնելու համար կազմվելու է բնապահպանական կառավարման պլան, որը լինելու է շինարար կազմակերպության մրցութային փաթեթի մաս և իրենք պարտավոր են լինելու այն կատարել: ԲԿՊ-ի կատարումը</p> |



## Նախնական գնահատման հայտ

|   |   |   |
|---|---|---|
| <p><i>որ նորամուծություն է լինելու, ավտոբուսների քանակի և այլնի վերաբերյալ, բայց դրան զուգահեռ, փաստացի, ծառահատում է լինելու առաջնահերթ, կանաչ տարածությունն է վերացվելու, որի շնորհիվ առաջանալու է թթվածնի էական պակաս, որը զգացնել է տալու բնակիչների առողջության վրա:</i></p> | <p>տարածքը ընտրվել է մի շարք այլընտրանքներ դիտարկելուց հետո հաշվի առնելով նաև ավտոբուսների զրոյական վազքի նվազեցման սզբունքը:</p> | <p>շինարարության ընթացքում վերահսկվելու է տեխնիկական վերահսկողության թիմի կողմից:<br/>ԲԿՊ-ում լինելու է նաև ծառերին վերաբերող մաս: Համամիտ ենք ձեզ հետ, որ ծառեր կտրելը շատ բացասական հանգամանք է, ստիպված ենք գնալու այդ քայլին: Ծրագրում նախատեսված է մեղմացնող միջոցառում, այն է՝ յուրաքանչյուր կտրած ծառի դիմաց 6 ծառ է տնկվելու:<br/>Ծառերի մի մասը լինելու են հենց հավաքակայանի տարածքում ըստ կանաչապատման նախագծի: Այն մասը, որը քանակապես չի բավականացնելու տնկվելու է թաղապետարանի կողմից հատկացված վայրում: Աշխատելու ենք, որ այդ հատկացված տարածքը ինչքան հնարավոր է մերձակայքում լինի: Այստեղ առաջանում է ծառերի հետագա խնամքի և պահպանության հարցը. շինարարության ընթացքում այդ պատասխանատվությունը դրված է շինարար կազմակերպության վրա, աշխատանքները ավարտելուց հետո մեկ տարի էլի շինարար կազմակերպությունն է իրականացնելու խնամքը:</p> |
|---|---|---|

## Նախնական գնահատման հայտ

|    |   |  |  |
|----|---|--|--|
|    |   |  | և ապահովելու է 98% կաչողականություն, որից հետո հանձնելու է քաղաքապետարանին:<br>Ամբողջ ընթացքը ստուգվում է Ասիական Բանկի կողմից, որը շատ մեծ ուշադրություն է դարձնում ծառերի հատմանը, խնամքին և այլն: |
| 12 | Շենգավիթ համայնքի բնակիչ<br><br><i>Ինչպես հասկացա, ծառերը տնկվելու են հավաքակայանի տարածքում՝ պարիսպի ետևում: Բայց դուք մեր ծառերն եք կտրում և մեր երեխաները հնարավորություն չեն ունենալու դրանցից օգտվել</i> | Ա.Բ.<br><br>Հրավիրում եմ ձեր ուշադրությունը, որ մեր կողմից 6 անգամ ավելի շատ ծառ է տնկվելու, քան կտրվելու է: Այդ ծառերի միայն մոտ 10% է տնկվելու հավաքակայանի տարածքում, մնացածը՝ այն տարածքում, որը ինչու չէ՛ նաև դուք կարող եք մեզ հուշել:<br><br>Կարող ենք դիտարկել նաև այն տարբերակը, որ պարիսպը մեկ մետրի չափով տեղափոխվի դեպի ներս և այն ծառերը, որ կանաչապատման նախագծով նախատեսվում էին հավաքակայանի ներսում կտնկվեն պարիսպից դուրս: | Շենգավիթ համայնքի բնակիչ<br><br>Լավ տարբերակ է, վարորդները ծառերը կփչացնեն, իսկ Ձեր առաջարկված դեպքում՝ բնակիչներն իրենք կհոգան ծառերի խնամքը:   |
| 13 | Շենգավիթ համայնքի բնակիչ<br><br><i>Մտահոգություն կա, որ Ասիական Բանկը վերահսկողություն չի անի, և չեն հետևի, որպեսզի ծառերը տնկվեն և ջրվեն:</i><br><br><i>Պահանջում ենք, որ հաջորդ անգամ Ասիական Բանկի</i>     | Է.Վ.<br><br>Ասիական բանկը ոչ թե պարտավորվում է տարիներ շարունակ և հարատև այդ ծառերի համար պատասխանատվություն կրել, այլ իրականացնում է ծրագրի ընթացքում և ավարտի պահին ծառերի վերաբերյալ ստանձնած   | Ա.Բ.<br><br>Ցանկանում եմ հավելել, որ ծրագրի իրականացման գրասենյակը ևս պատասխանատվություն է կրում ծառերի հատման և տնկման գործընթացի համար:  |

## Նախնական գնահատման հայտ

|    |   |   |  |
|----|---|---|--|
|    | <i>ներկայացուցիչը մասնակցի հանդիպմանը</i>   | պարտավորությունների կատարման հսկողություն, որից հետո ծառերի հետագա խնամքի պարտավորությունը փոխանցվում է տեղական ինքնակառավարման մարմիններին:  | Ինչպես արդեն նշեցի, մենք հետևելու ենք, որ ընտրված տարածքն ապահովված լինի ռոռգման համակարգով:   |
| 14 | Շենգավիթ համայնքի բնակիչ<br><br><i>Մենք այդ ծառերը տնկել ու խնամել ենք տարիներ շարունակ և մեր համար ու մեր երեխաների համար հոգացել ենք կանաչապատման հարցը</i>   | Ա.Բ.<br><br>Բոլոր այն անձինք, ովքեր ծառեր են տնկել և օգտվել են դրանցից ծրագրի կողմից փոխհատուցվելու են: Ձեր կողմից կատարված ծախսերը, կրած տույժերը հաշվարկվելու են: Դա արվելու է հատուկ մասնագիտացված և լիցենզավորված կազմակերպության կողմից: Այդ օտարումների և փոխհատուցումների վերաբերյալ լինելու է մեկ այլ լրացուցիչ հանրային քննարկում հունիսի 2-ին: Ձեր առաջարկները հաշվի կառնվեն: | Շենգավիթ համայնքի բնակիչ<br><br>Այդ փոխհատուցման խայծը տալով չեմ գտնում, որ հարցը լուծվում է: Թեկույզ իմ հարևանի կողմից տնկված ծառ է, բայց ես դեմ եմ այդ ծառի հատմանը: |
| 15 | Շենգավիթ համայնքի բնակիչ<br><br><i>Խնդրում ենք, որ օտարմանը նվիրված հանդիպման ժամանակ ներկայացնեք քաղաքի զոնաների գները և փոխհատուցման սկզբունքները, որպիսի մարդկանց համար մութ տեղեր չմնան: Նաև դեմ եմ "ապօրենի օգտագործում" արտահայտությանը</i> | Ա.Բ.<br><br>Ծրագիրն իրականացվում է Ասիական Ջարգացման Բանկի միջոցներով և բանկի պահանջներով փոխհատուցվելու են բոլոր օգտագործողները անկախ սեփականատեր լինելու հանգամանքից: Ելնելով մեր նախորդ ծրագրերի փորձից հավաստիացնում եմ Ձեզ, որ դժգոհ չեք լինելու: Այնուամենայնիվ չբավարարված դեպքերի   | ----   |

## Նախնական գնահատման հայտ

|    |   |  |  |
|----|---|--|--|
|    |   | <p>համար ծրագրում բողոքարկման մեխանիզմ է ներդրված:</p> <p>Ինչ վերաբերվում է օտարման գործընթացի ներկայացմանը, ապա Ձեր պահանջը հաշվի կառնվի հունիսի 2-ին կայանալիք հանդիպման ժամանակ</p>   |  |
| 16 | <p>Շենգավիթի բնակիչ</p> <p><i>Մենք այդ տարածքում ունենք բազմաթիվ հետաքրքիր ծառատեսակներ՝ գեղեցիկ բարդիներ, ուռենի, պտղատու ծառեր: Այդ ծառերն աճում են առվից ընդամենը 50- 60 սմ հեռավորության վրա: Որքանով է ճիշտ այդ ծառերը հատելը: Հավատացե՛ք ունենք բարդու տեսակ, որը քաղաքում միակն է, եթե դրա երկրորդ նմուշը ցույց կտաք, ապա հատեք:</i></p> | <p>Է.Վ.</p> <p>Այս պահի դրությամբ վարձել ենք կենսաբազմազանության հետազոտություն հրականացնող կազմակերպություն, որը ուսումնասիրելու է նաև բուսականության տեսակները, բոլոր կարմիրգրքային, հազվագյուտ, էնդեմիկ տեսակները վեր են հանվելու և համապատասխան միջոցառումներ են նախատեսվելու: Եթե, խոսքը գնում է ընդամենը 50- 60 սմ մասին, ապա, ի հարկե, կդիտարկենք այդ հատվածում նախագծի վերանայման հնարավորությունները: Մենք շնորհակալ ենք Ձեզ այդ հարցերը բարձրացնելու համար, քանի որ դա մեր այսօրվա հանդիպման նպատակներից է՝ պարզել շահագրգիռ կողմերի կողմից կարևորվող ազդակիրները:</p> | <p>Ա.Բ.</p> <p>Եթե հնարավոր լինի ընդունել վերը նշված տարբերակը, որի դեպքում պարիսպը մեկ մետր դեպի ներս է տեղափոխվում և կանաչապատման ծառերը տնկվելու են պարիսպից դուրս, ապա կարող ենք խուսափել այդ ծառերի հատումից:</p> |
| 17 | <p>Շենգավիթի բնակիչ</p> <p><i>Ինչպե՞ս կարող եք օգնել մեզ լուծել կոյուղու հարցը, քանի որ կոյուղին բաց է և դա շատ</i></p>   | <p>Ա.Բ.</p> <p>Ինչպես հասկանում եմ, խոսքն այն մասին է, որ ազդակիր բնակելի</p>  | <p>Վ.Զ.</p> <p>Այս պահի դրությամբ Շիրակի փողոցով կույուղագիծ է անցնում:</p>  |

## Նախնական գնահատման հայտ

|           |  |   |  |
|-----------|--|---|--|
|           | <p><i>կարևոր հարց է բնակիչների և նրանց երեխաների համար: խնդրում ենք, որ գոնե փակեք</i></p>   | <p>Թաղամասը չունի կոյուղի և տարածքով անցնող բետոնե բաց ոռոգման ջրանցքը փաստացի ծառայում է, որպես կոյուղի: Բնակելի թաղամասի համար կոյուղի կառուցելու հարցը, ցավոք, մեր ծրագրի շրջանակներից և մեր իրավասությունից դուրս է, սակայն խոստանում ենք քննարկել քաղաքապետարանի և նախագծողների հետ և գտնել լուծումներ: Հնարավոր տարբերակ կարող է լինել այն, որ թաղամասի համար կառուցվի կոյուղագիծ, որը կմիացվի հավաքակայանի կոյուղագծին, որն, իր հերթին, կմիանա Շիրակի փողոցի կոյուղատարին: :</p> | <p>Մենք դիմել ենք "Վեոլիա Ջուր" ընկերությանը և ստացել ենք կոյուղուն միանալու տեխնիկական պայման: Ձեր կողմից բարձրացված հարցը մեր առաջադրանքի մեջ չի եղել, ուստի մենք պետք է ուսումնասիրենք Շիրակի փողոցի կոյուղագծին միանալու տեխնիկական հնարավորությունը, քննարկենք "Վեոլիա Ջրի" հետ և դրական ելքի դեպքում նախագծի մեջ կատարենք համապատասխան ինժեներա-տեխնիկական փոփոխություններ</p> |
| <p>18</p> | <p>Շենգավիթի մի խումբ բնակիչներ</p> <p>Պահանջում ենք, որ ոռոգման բետոնե բաց ջրանցքը փակվի: Նախ այդ գարշահոտը կվերանա, երկրորդն էլ, բաց ջրանցքը անվտանգ չի երեխաների համար:</p> <p>Հասկանում ենք, որ ջրանցքի փակման հարցը ձեր ծրագրից դուրս է գտնվում, սակայն որպես տուժող կողմ, քանի որ վերցնելու եք մեր կանաչ տարածքները, մեր երեխաների խաղահրապարակ հանդիսացող դաշտերը, ապա պահանջում ենք, որ գոնե այս հարցում մեզ</p> | <p>Վ.Չ.</p> <p>Իհարկե, մենք դեռ պետք է ուսումնասիրենք կոյուղագծին միանալու հնարավորությունը, սակայն այս հարցի դրական լուծման դեպքում կոյուղաջրերը չեն լցվի ջրանցքի մեջ և գարշահոտը կվերանա:</p> <p>Ամեն դեպքում ջրանցքը պատկանում է "Երևան" ՋՕԸ-ը, որի հետ էլ այս հարցը կքննարկենք</p>  | <p>Շենգավիթի մի խումբ բնակիչներ</p> <p>Պահանջում ենք, որ հաջորդ հանդիպմանը հրավիրեք "Երևան" ՋՕԸ-ի և "Վեոլիա Ջրի" ներկայացուցիչներին, որ նրանք տեսնեն ջրի կորուստը և որ ամբողջ խողովակները պայթած են</p>  |

## Նախնական գնահատման հայտ

|           |   |   |   |
|-----------|---|---|---|
|           | <p>ընդառաջեք և օգնեք ու նպաստեք հարցի լուծմանը</p>  |   |   |
| <p>19</p> | <p><i>Շենգավիթի մի խումբ բնակիչներ</i></p> <p>Քանի որ վերցնելու եք մեր կանաչ տարածքները, մեր երեխաների խաղահրապարակ հանդիսացող դաշտերը, ապա պահանջում ենք ապահովել խաղահրապարակ մեր երեխաների համար: Խնդրում ենք մարնամասնեք, թե երեխաների խաղահրապարակը որտեղ է գտնվելու, ինչ մակերես է ունենալու:</p> <p>Խնդրում ենք հատկացնել լրացուցիչ տարածք և, ինչպես արդեն նշեցինք, պիտի ջրանցքը փակվի, որ այդ տարածքը նույնպես երեխաները կարողանան օգտագործել որպես խաղահրապարակ:</p> | <p>Վ.Չ.</p> <p>Այս հարցը մեր առաջադրանքի մեջ չի եղել: Ճրագրի նախաձեռնողների կողմից առաջադրանք ստանալու դեպքում դա կլինի տեխնիկական հարց: Տեղանքը կուսումնասիրենք և կնախագծենք,</p>  | <p>Ա.Բ.</p> <p>Է.Վ.</p> <p>Առվի հարցով զբաղվում է Երևանջոն, մենք այնպայման կդիմենք իրենց և կփոխանցենք իրենց ձեր ասածը, որպեսզի գտնենք համապատասխան լուծում:</p> |
| <p>20</p> | <p><i>Շենգավիթի բնակիչ</i></p> <p>Ե՞րբ են սկսվում շինարարական աշխատանքները: Եվ կարծում ենք, որ անվտանգության նկատառումներով, ծրագիրը չի կարող իրականանալ:</p>   | <p>Ա.Բ.</p> <p>Շինարարությունը կարող է սկսվել միայն այն դեպքում, երբ բոլոր փորձաքննությունները կիրականացվեն և դրական եզրակացությունները կստացվեն բոլոր հողերը և այլ գույքը կփոխհատուցվի, նոր դրանից հետո մենք թույլատվություն կունենանք շինարարությունը սկսելու: Այնուհետև մրցությային պրոցես է ընթանալու</p> | <p>Է.Վ.</p>   |

## Նախնական գնահատման հայտ

|  |  |   |
|--|--|---|
|  |  | <p>շինարարին ընտրելու համար:</p> <p>մասով Լավագույն դեպքում շինարարությունը կսկսվի մյուս տարվա գարնանը: Չի բացառվում, սակայն, որ այս խնդիրների շատության պատճառով նախագիծը մերժվի Ասակիան գարգացման բանկի կողմից, և հավաքակայանը չկառուցվի:</p> |
|--|--|---|

### **Մաս 3. Ջրվեժի ավտոբուսների հավաքակայանում սեղմված բնական գազի լցակայանի նախագծի ներկայացում:**

Հանդիպման երրորդ մասում Վահե Չիլինգարյանը ներկայացրեց Ջրվեժի ավտոբուսների կայանի տարածքում սեղմված բնական գազի կայանի տեղադրման նախագիծը: Նա ընդգծեց ծրագրի բաղադրիչների կապը, այն է՝ ժամանակավորապես ապահովել նոր տիպի ավտոբուսների սպասարկումը մինչև Շենգավիթում նոր հավաքակայանի կառուցման ավարտը:

### **Ամփոփիչ խոսք**

Հանդիպման վերջում Էդիտա Վարդգեսյանը կրկին ընդգծեց Երևան քաղաքի համար ավտոբուսների նոր հավաքակայանի կառուցման գաղափարի առաջացման պատճառները: Նա հիշեցրեց, որ քաղաքապետարանի կողմից ձեռք բերված ավտոբուսների առաջին խմբաքանակը՝ թվով 100 միավոր արդեն իսկ ժամանում են Երևան և ժամանակավորապես տեղավորվելու են Ջրվեժի հավաքակայանում, որից հետո ենթադրվում է դրանց տեղափոխումը և մշտակայանումը նոր հավաքակայանում: Այնպես, որ նոր հավաքակայանի կառուցման անհրաժեշտությունն ակնհայտ է և տարակուսելի չէ:

Արմեն Բողոյանը ևս ընդգծեց ծրագրի կարևորությունը և դիմեց ներկա հանրությանը ծրագրին կողմ կամ դեմ լինելու հարցով:

Շենգավիթի բնակիչներն արտահայտվեցին, որ ըմբռնում են ծրագրի կարևոր լինելը ամբողջ քաղաքի և ազգի համար և ընդհանուր առմամբ դեմ չեն ծրագրի իրականացմանը, սակայն խնդրում են հաշվի առնել, որ իրենք առանց այն էլ ապրում են բավականին անբարենպաստ միջավայրում (օդանավակայանի ինքնաթիռների աղմուկ, ոռոգման ջրի բացակայություն, կոյուղու բացակայություն և ջրանցքից ելնող գարշահոտ) և պահանջում են որպես փոխհատուցում անդրադառնալ վերը բարձրացված հարցերին և կամ ուղղակիորեն լուծել դրանք, կամ միջնորդել և նպաստել դրանց լուծմանը:



## Նախնական գնահատման հայտ

Արմեն Բողոյանը և Էդիտա Վարդգեսյանը իրենց հերթին հավաստեցին, որ բոլոր հարցերին պարտադիր անդրադարձ է կատարվելու, անհրաժեշտության դեպքում դրանք քննարկվելու են քաղաքապետարանի և այլ իրավասու մարմինների հետ: Հնարավորության սահմաններում կտրվեն բավարարող լուծումներ:

### Որոշվեց

1. Ընդհանուր առմամբ նախնական կարգով հավանություն տալ ծրագրին կարևորելով դրա նշանակությունը Երևան քաղաքի համար:
2. Տեղադրել ՇՄԱԳ հաշվետվությունը Երևանի քաղաքապետարանի ներդրումային ծրագրերի գրասենյակի կայքում, ինչպես նաև ԱԶԲ և ՇՄՓորձաքննության ՊՈԱԿ-ի կայքերում թափանցիկությունն ու հանրության կողմից հասանելիությունն ապահովելու նպատակով:
3. Քննարկել հնչեցված առաջարկությունները նախագծում դրանք հնարավորինս հաշվի առնելու նպատակով:
4. ՇՄԱԳ գործընթացում շարունակել համագործակցությունը վարչական շրջանների հետ հետագա հանրային քննարկումների ձևաչափով:

### Քննարկումների պատասխանատու՝

Գևորգ Նավասարդյան, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Բնապահպանության վարչության պետի տեղակալ

Արմեն Բողոյան, Երևանի քաղաքապետարանի ներդրումային ծրագրերի գրասենյակ

### Վարող՝

Էդիտա Վարդգեսյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն

### Ծրագրի ձեռնարկող՝

Տիգրան Մամիկոնյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն

### Արձանագրող՝

Էդիտա Վարդգեսյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն

## Նախնական զնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-5. 27.05.2021 թ. կայացած հանրային քննարկման լուսանկարները



## Նախնական զնահատման հայտ










Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2-6. 27.05.2021 թ. կայացած հանրային քննարկման մասնակիցների ցուցակը

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈՒՄ ԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
 Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումներ  
 27 մայիսի 2021 թ. ժ. 14:00  
 Մասնակիցների ցուցակ

| Ն | անուն ազգանուն                             | վարչական շրջան        | պաշտոն/<br>կոնտակտային տվյալ | Ստորագրություն  |
|---|--|-----------------------|------------------------------|---|
| 1 | Վահագն Պապիկյան                            | Բաղրամբեյկյան<br>Թ/գ. | 093 000 812                  |    |
| 2 | Նիկոլայ Գևորգյան                           | Շիրակ                 | 461446                       |    |
| 3 | Վահագն Ասիկյան                             | Շենգավիթ              | 093 457653                   |  |
| 4 | Պարույր Բաղդասարյան<br>Խաչատրյան Նորայր    | Շենգավիթ              | 098.115-814<br>093.34-90-94  |  |
| 5 | Համբարձում Նարեկյան<br>Համբարձում Նարեկյան | Շենգավիթ              | 049-41-77-22<br>093-44-90-17 |  |

Նախնական գնահատման հայտ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈՒՄ ԱՎՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումներ

27 մայիսի 2021 թ. ժ. 14:00

Մասնակիցների ցուցակ

| Ն  | անուն ազգանուն      | վարչական շրջան | պաշտոն կոնտակտային տվյալներ   | ստերագրություն |
|----|---------------------|----------------|-------------------------------|----------------|
| 6  | Չիրթուր Զաչարյան    | Շենգավիթ       | ԲՆակիչ<br>098480900           |                |
| 7  | Ասրեն Դևոնյան       | Շենգավիթ       | Բնակիչ հիմնադրամ<br>098338033 |                |
| 8  | Ջիգանե Գևորգյան     | Շենգավիթ       | Բնակիչ<br>094490165           |                |
| 9  | Վերոնիկա Վերպոնցյան | Քննչագավիթ     | Բնակիչ<br>077734303           |                |
| 10 | Ջենե Վերպոնցյան     | Քննչագավիթ     | 094844481                     |                |
| 11 | Իսախան Իսխանյան     | Քննչագավիթ     | 093288617                     |                |



Նախնական գնահատման հայտ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈՒՄ ԱՎՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումներ

27 մայիսի 2021 թ. ժ. 14:00

Մասնակիցների ցուցակ

| Ն  | անուն ազգանուն     | վարչական շրջան | պաշտոն/<br>կոնտակտային տվյալներ | ստորագրություն |
|----|--------------------|----------------|---------------------------------|----------------|
| 12 | Վարդանիստ Բաբայան  | շենգավիկ       | 098-19-11-11                    | Վարդանիստ      |
| 13 | Դավիթ Կոնյալյան    | շենգավիկ       | 099-65-91-92                    | Դավիթ          |
| 14 | Դավիթ Կոնյալյան    | Ջերմաշեն       | 093 48 78 55                    | Դավիթ          |
| 15 | Վարդանիստ Կարամյան | շենգավիկ       | 091 70 67 55                    | Վարդանիստ      |
| 16 | Վահագնյան Դավիթ    | շենգավիկ       | 093 49 12 41                    | Վահագն         |

Նախնական գնահատման հայտ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈՒՄԵՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումներ

27 մայիսի 2021 թ. ժ. 14:00

Մասնակիցների ցուցակ

|    |                         |                       |              |       |
|----|-------------------------|-----------------------|--------------|-------|
| 17 | Իսկուտյանի Վելա<br>Խուճ | Գ. Ծեղակեր            | 077 142 573  | ԳԱՅ   |
| 18 | Խաչատրյանի Լուսինա      | Ե. Լ. Խաչատրյան       | 099 93 24 94 | ՄԱՍԻՍ |
| 19 | Մարտիրոսյանի Զարգիս     | Զ. Լ. Զեյնալով        | 094 932 499  | ԳԶԳԲ  |
| 20 | Մարտիրոսյանի Զարգիս     | Զեյնալով 29<br>25 բն. | 0096420106   | ԳԶԳԲ  |
| 21 | Զարգիսյանի Զարգիս       | Շեշումյան             | 996057-550   | ԳԶԳԲ  |
| 22 | Զարգիսյանի Զարգիս       | Զարգիս 1/2            | 04 880011    | ԳԶԳԲ  |
| 23 | Զարգիսյանի Զարգիս       | արցիպոս               | 093 355 821  | ԳԶԳԲ  |



Նախնական գնահատման հայտ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈՒՄԵՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումներ  
27 մայիսի 2021 թ. ժ. 14:00

Մասնակիցների ցուցակ

|     |                   |                       |              |  |
|-----|-------------------|-----------------------|--------------|--|
| 24  | Չեչուր Պարտիքոյազ | ՉԵՇՉԱՎԻՔ              | 098 43 04 48 |  |
| 25  | Անդրեյ Խոսկալյան  | ՇԵՇՉԱՎԻՔ              | 055 51 33 42 |  |
| 26  | Դրանդ Մախալյան    | ՇԵՇՉԱՎԻՔ              | 091-30-88-05 |  |
| 27  | Մանթիկ Վրբախյան   | ՇԵՇՉԱՎԻՔ              | 093 09 60 62 |  |
| 28  | Ջիլան Էմիլյան     | Egis International    | 099051932    |  |
| 29  | Ջուլյա Եսեֆյան    | Էրևի Բեյթ<br>ԲԷ. Բեյթ | 093 54 39 68 |  |
| 30. | Խոսրոսյան Արմեն   | ՔԵՇԻՔ                 | 094-800-766  |  |

## Նախնական գնահատման հայտ

### ՀԱՎԵԼՎԱԾ Ժ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

#### ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1. ԲԿՊ աղյուսակ. մեղմացնող միջոցառումներ

| <b>Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ</b><br><b>Շիրակի փողոցի հարևանությամբ ավտոբուսային հավաքակայանի կառուցում</b> |  |   |   |  |
|---|--|---|---|--|
| Ծրագրի գործողությունները  | Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները   | Առաջարկվող մեղմացնող միջոցառումները   | Պատասխանատու մարմինները   | Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը  |
| <b>ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՒԼ</b>  |  |   |   |  |
| <b>Նախագծային փուլ</b>  |  |   |   |  |
| 1. Մոնիթորինգի ելակետային հետազոտությունները (օդի որակի, աղմուկի և թրթռման, ինչպես նաև ֆլորայի և ֆաունայի)  | Ազդեցության գնահատման ելակետային տվյալները, հետագա գործիքային մոնիթորինգը և մեղմացնող միջոցառումները | 1. Իրականացնել մոնիթորինգի ելակետային հետազոտություններ՝ համաձայն Տվյալների հավաքագրման պլանի, և արդյունքները ներառել ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ում (տե՛ս Գլուխ Ե, Աղյուսակ Ե-1)<br><br>2. Հետագա գործիքային մոնիթորինգի հատուկ պահանջը ներառել մրցութային և պայմանագրային փաստաթղթերում: | <u>ՄՆԽ</u><br>Իրականացնել օդի որակի, աղմուկի և թրթռման, ինչպես նաև ֆլորայի և ֆաունայի, հետազոտություններ և արդյունքները ներառել մրցութային և պայմանագրային փաստաթղթերի դրույթներում<br><br><u>ԵՔՕԻԳ</u><br>Գնահատել մրցութային հայտերը և շնորհել պայմանագրային փաստաթղթերը<br><br><u>ԱԶԲ</u><br>Տեղեկանալ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում ելակետային հետազոտությունների արդյունքների մասին | Օդի որակի, աղմուկի և թրթռման, ինչպես նաև ֆլորայի և ֆաունայի հետազոտությունները ներառված են Ինժեների բյուջեում: |

## Նախնական գնահատման հայտ

|   |  |  |  |   |
|---|--|--|--|---|
| <p>2. Մրցութային պայմանագրային փաստաթղթերի պատրաստում</p>   | <p>Անվտանգության մեխանիզմներն արտացոլված մրցութային պայմանագրային փաստաթղթերում</p>  | <p>Մշակել Տեխնիկական մասնագրեր՝ հիմնվելով ԲԿՊ-ում սահմանված մեղմացնող միջոցառումների վրա և ներառել բնապահպանական կետերը մրցութային և պայմանագրային փաստաթղթերի հատուկ պայմաններում</p>   | <p><u>ՄՆԽ</u><br/>Մշակել Տեխնիկական մասնագրեր (SU) և ներառել համապատասխան բնապահպանական կետերը մրցութային և պայմանագրային փաստաթղթերում</p> <p><u>ԵՔԾԻԳ</u><br/>Դիտարկել մրցութային և պայմանագրային փաստաթղթերը</p> <p><u>ԱԶԲ</u><br/>Տեղեկանալ ԵՔԾԻԳ-ի դիտարկումների արդյունքներին</p>  | <p>Ծախսերը հաշվառված են ՄՆԽ-ի բյուջեում</p> |
| <p>3. Տեղեկատվության հրապարակում, հանրային հաղորդակցություն, հանրային լսումներ և մասնակցություն</p> | <p>Ազդեցության ենթակա կողմերի և շահառուների՝ Ծրագրի մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը կարող է հանգեցնել հիասթափության ու դժգոհության, ինչի արդյունքում կարող են տեղի ունենալ ուշացումներ:</p> | <p>1. Կազմակերպել հանդիպումներ հիմնական շահառուների հետ և Ծրագրի վերաբերյալ հանրային քննարկումներ/լսումներ՝ համաձայն Հանրային լսումների և հաղորդակցության պլանի (տե՛ս Գլուխ Է և Գլուխ Ը):</p> <p>2. Ներկայացնել ԲԼՄ-ն, որը կհիմնվի Ծրագրի համար՝ ըստ Գլուխ Է-ում նկարագրված մեխանիզմի:</p> <p>3. Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄՆՈՒԲ/ԲԿՊ-ն</p> | <p><u>ՄՆԽ</u><br/>Կազմակերպել հանրային քննարկումներ/լսումներ և պատրաստել փաստաթղթեր</p> <p><u>ԵՔԾԻԳ</u><br/>Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄՆՈՒԲ/ԲԿՊ-ն տեղադրել կայքում</p> <p>Աջակցել կազմակերպմանը և մասնակցել հանրային քննարկումներին/ լսումներին</p> <p><u>ԱԶԲ</u><br/>Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և</p> | <p>Ներառված է ՄՆԽ-ի բյուջեում</p>           |

## Նախնական գնահատման հայտ

|  |   |  |  |   |
|--|---|--|--|---|
|  |   | տեղադրել ԵՔՕԻԳ-ի և ԱԶԲ-ի կայքերում   | վերջնական ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ն տեղադրել կայքում   |   |
|  |   |  | Մասնակցել հանրային լուսմների/քննարկումներին  |   |
| <b>ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ</b>  |   |  |  |   |
| <b>Սոբիլիզացիայի փուլ</b>  |   |  |  |   |
| <p>4. Բնապահպանական, ԱևԱ (H&amp;S), սոցիալական երաշխիքների պատասխանատու անձնակազմի նշանակում</p> | <p>Բնապահպանական/ ԱևԱ և սոցիալական կառավարման բացակայությունը կարող է հանգեցնել պայմանագրային դրույթների, SU-ի և ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ի հետ անհամապատասխանության</p> | <p>Նշանակել անձնակազմ, որը պատասխանատու է Ծրագրի շինարարական աշխատանքների և պայմանագրային դրույթներին, այդ թվում՝ ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ին համապատասխանության մոնիթորինգի իրականացման համար</p> <p>Պատրաստել և ներկայացնել ԿԲԿՊ, այդ թվում՝ Գլուխ Ը-ում ներառված բնապահպանական կառավարման ենթաձրագրերը</p> | <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Նշանակել Ծրագրի բնապահպանական մասնագետ</p> <p><u>Տեխնիկոլոգիայի խորհրդատու (Ինժեներ)</u></p> <p>Նշանակել Բնապահպանության մասնագետ, ԱևԱ (H&amp;S) գծով մասնագետ և սոցիալական հարցերի մասնագետ՝ Ծրագրի դիտարկման նպատակով և հաստատել Կապալառուի ԲԿՊ-ն</p> <p><u>Կապալառու</u></p> <p>Վարձել լրիվ դրույքով աշխատող բնապահպանության/ առողջապահության և անվտանգության մեկ մասնագետ և լրիվ դրույքով աշխատող սոցիալական մասնագետ</p> <p>Պատրաստել և ներկայացնել ԿԲԿՊ</p> | <p>Ներառված է համապատասխան բյուջեներում և պայմանագրում</p> <p><u>Տեխնիկոլոգիայի խորհրդատու (Ինժեներ)</u></p> <p>Վարձատրությունը 24 ամսվա համար ներառված է բյուջեում և գնահատված է 39 000 ԱՄՆ դոլար</p> <p><u>Կապալառու</u></p> <p>Մեկ ԱևԱ մասնագետի ամբողջ դրույքով 18 ամսվա աշխատանքը գնահատված է 45 000 ԱՄՆ դոլար</p> |

## Նախնական գնահատման հայտ

|                              |   |   |                              |   |
|------------------------------|---|---|------------------------------|---|
|                              |   |   |                              | Այդ պլանների արժեքը հաշվարկվել է ստորև մանրամասնած Շինարարական աշխատանքների յուրաքանչյուր պլանի համար   |
| 5. Հանրային հաղորդակցություն | Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների վարչական տարածքների ծրագրված աշխատանքների, գործողությունների և իրականացման ժամանակացույցի մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը կարող է հանգեցնել հիասթափության ու դժգոհության, և արդյունքում տեղի ունենան ուշացումներ: | Իրականացնել միջոցառումներ՝ համաձայն Հանրային լուսմների և հաղորդակցության պլանի (Գլուխ Ը)<br><br>1. Կազմակերպել նախաշինարարական հանդիպումներ՝ պլանավորված աշխատանքների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ: Այդ նպատակով<br><ul style="list-style-type: none"> <li>✓ որոշել պոտենցիալ զգայուն ընկալիչները՝ օգտագործելով առկա ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ով տրամադրված տվյալները և կատարելով տեղամասային այցելություններ,</li> <li>✓ հաղորդակցվել վարչական շրջանների ղեկավարների հետ՝</li> </ul> | 5. Հանրային հաղորդակցություն | Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների վարչական տարածքների ծրագրված աշխատանքների, գործողությունների և իրականացման ժամանակացույցի մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը կարող է հանգեցնել հիասթափության ու դժգոհության, և արդյունքում տեղի ունենան ուշացումներ: |

## Նախնական գնահատման հայտ

|  |  |   |  |  |
|--|--|---|--|--|
|  |  | <p>իրագրելով նրանց և խնդրելով նրանց աջակցությունը,</p> <p>✓ իրագրել պոտենցիալ ԱԵԱ-ներին և հանրությանը՝ տեսանելի վայրերում տեղադրված հայտարարություններ ի և պաստառների միջոցով, որոնք պարունակում են տեղեկություններ Ծրագրի վերաբերյալ՝ հանդիպման ամսաթիվը, վայրը և օրակարգը և կոնտակտային տվյալները,</p> <p>✓ պատրաստել Ծրագրի վերաբերյալ հակիրճ վիզուալ շնորհանդեսներ (PP, գրաֆիկական պատկերներ), ներառյալ շինարարական աշխատանքների նկարագրությունը, ժամանակացույցը և բնապահպանական և ԱևԱ (H&amp;S) մեղմացնող միջազատումները,</p> <p>✓ հանրությանը ներկայացնել սույն</p> |  |  |
|--|--|---|--|--|

## Նախնական գնահատման հայտ

|   |  |   |  |  |
|---|--|---|--|--|
|   |  | <p>ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ի Գլուխ Է-ի Է3-ում նկարագրված ԲԼՄ-ն:</p> <p>2. Արձանագրել նախաշինարարական փուլի հանդիպումը (հանդիպման արձանագրությունը, օրակարգը, մասնակիցների ցանկը, բարձրացված հարցերը, լուսանկարները) և ամբողջական տեղեկությունը ներառել ԿԲԿՊ-ի մեջ:</p> <p>3. Լուծել բարձրացված խնդիրները կամ փոխանցել դրանք Վերահսկողության խորհրդատուին, այնուհետև առաջընթացի վերաբերյալ առաջին հաշվետուությունում ներկայացնել դրանց կարգավիճակի մասին (լուծված/ չլուծված)</p> |  |  |
| <p>6. Կողմնորոշում, իրագեկվածության բարձրացում և Ծրագրի կողմերի վերապատրաստում բնապահպանական/ ԱևԱ (H&amp;S), սոցիալական երաշխիքների թեմաներով</p> | <p>Ծրագրի կառավարման, ինժեներական/տեխնիկական վերահսկողության և Կապալառուի անձնակազմի՝ բնապահպանության, ԱևԱ և սոցիալական պաշտպանության վերաբերյալ ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների և ազգային օրենսդրական</p> | <p>Իրականացնել միջոցառումներ՝ Բնապահպանական և անվտանգության կողմնորոշման ծրագրի համաձայն (տե՛ս Գլուխ Ը)</p> <p>1. ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների վերաբերյալ Վերահսկողության ինժեների կողմից (Ինժեներ) վերապատրաստման</p>   | <p><u>Տեխնիկողության խորհրդատու (Ինժեներ)</u><br/>Մեկնարկից հետո՝ մոբիլիզացիայի ժամանակահատվածում կազմակերպել վերապատրաստման դասընթաց նախքան շինարարական աշխատանքներն սկսելը</p> <p><u>Կապալառու</u></p> | <p><u>Տեխնիկողության խորհրդատու (Ինժեներ)</u><br/><br/>Առողջության, անվտանգության և բնապահպանական ծրագրի 1 օրվա ուսուցման ծախսերը 50 շինարար-բանվորի համար</p> |



## Նախնական գնահատման հայտ

|  |  |   |  |  |
|--|--|---|--|--|
|  | <p>պահանջների մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը, որը կարող է հանգեցնել պայմանագրի կետերի չկատարման:</p> | <p>դասընթացների կազմակերպում ԵՔ-ի, ԵՔՕԻԳ-ի և Կապալառուի ինժեներական և բնապահպանության, առողջության և անվտանգության գծով անձնակազմի համար՝ նախքան շինարարական աշխատանքներն սկսելը:</p> <p>ii. ԿԲԿՊ-ում մշակել անվտանգության կողմնորոշման ծրագիր Կապալառուն կազմակերպում է Բնապահպանական կողմնորոշման/անվտանգության ներածական դասընթաց Կապալառուի և ենթակապալառուների անձնակազմի համար մեկնարկից հետո՝ առաջին շաբաթվա ընթացքում և նախքան շինարարական աշխատանքներն սկսելը:</p> | <p>Մշակել Անվտանգության կողմնորոշման պլան և մոբիլիզացիայի ժամանակահատվածում՝ նախքան շինարարական աշխատանքներն սկսելը կազմակերպել ուսուցողական դասընթաց ողջ անձնակազմի համար</p> <p><u>ԵՔՕԻԳ</u><br/>Մասնակցել վերապատրաստման/ուսուցողական դասընթացներին</p> <p><u>ԱԶԲ</u><br/>Մասնակցել վերապատրաստման/ուսուցողական դասընթացներին</p> | <p>գնահատված է 2 950 ԱՄՆ դոլար՝ կիրառելով հետևյալ հաշվարկը. օրական 50 ԱՄՆ դոլար՝ գումարած 3 օրվա համար ուսուցանողի վճարը՝ օրական 75 ԱՄՆ դոլարի չափով</p> <p><u>Կապալառու</u><br/>Ուսուցման ծախսերը ներառված են 1՝ լրիվ դրույքով աշխատող ԱԱԲ մասնագետի ծախսերի մեջ և ներառված են Կապալառուի բյուջեում</p> |
| <p>7. Շինհրապարակի մոբիլիզացիայի աշխատանքները. գծանշում, գլխավոր գրասենյակ և դաշտային գրասենյակներ</p> | <p>Շինարարական աշխատանքները սկսվում են նախքան անվտանգության միջոցառումների ձեռնարկումը</p>                   | <p>1. Իրականացնել տեսանելի ճանապարհային գծանշում և հստակ ուրվագծել ճանապարհի օտարման գոտին՝ տեղադրելով ամուր և ժապավենային ցանկապատեր (ինչպես պահանջվում է Ինժեների կողմից):</p>  | <p><u>Կապալառու</u><br/>Իրականացնում է Մոբիլիզացիայի պլանը</p> <p><u>Ինժեներ</u><br/>Իրականացնել Մոբիլիզացիայի պլանի մոնիթորինգ</p>  | <p>Ներառված է Կապալառուի բյուջեում</p>   |

## Նախնական գնահատման հայտ

|   |  |  |  |  |
|---|--|--|--|--|
|   |  | <p>2. Կազմակերպել դաշտային ճամբարի տարածքը, ներառյալ պահեստը, ավտոկայանատեղին, արհեստանոցները և այլն:</p> <p>3. Ապահովել սանիտարական հարմարություններ ամբողջ անձնակազմի համար:</p> <p>4. Անձնակազմին ապահովել համաձգեստով և ԱՊՄ-ներով:</p> | <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Ստուգել Մոբիլիզացիայի ծրագրի իրականացումը</p>   |  |
| <p>8. Կառույցների վրա թրթռման ազդեցության ելակետային տվյալների հետազոտություն</p> | <p>Կառույցները կարող են ազդեցության ենթարկվել պայթեցման աշխատանքների և լիցքերի խտացման համար գլղոնների աշխատանքի հետևանքով</p> | <p>Մշակել և հաստատման ներկայացնել հետազոտության և ազդեցության մեղմացնող մեթոդաբանությունը</p> <p>Նախքան շինարարական աշխատանքներն սկսելը պատրաստել և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը</p>                               | <p><u>Կապալառու</u></p> <p>Մշակել մեթոդաբանությունը, կատարել հետազոտությունը և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և հաստատել մեթոդաբանությունն ու հաշվետվությունը</p> <p>Մոնիթորինգի ենթարկել հետազոտության իրականացումը</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Վերահսկել գործընթացը</p> | <p>Ներառված է Կապալառուի բյուջեում</p> |
| <p>9. Ճանապարհի և գույքի վիճակի հետազոտություն</p>                                | <p>Ճանապարհները կարող են վնասվել մեքենամեխանիզմների և բեռնատարների շահագործման հետևանքով</p>                                   | <p>Նախքան շինարարական աշխատանքներն սկսելը պատրաստել և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը</p>   | <p><u>Կապալառու</u></p> <p>Կատարել հետազոտությունը և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և հաստատել հաշվետվությունը: Իրականացնել</p>  | <p>Ներառված է Կապալառուի բյուջեում</p> |

## Նախնական գնահատման հայտ

|   |  |   |  |  |
|---|--|---|--|--|
|   |  |   | <p>հետազոտության իրականացման մոնիթորինգ:</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Վերահսկել գործընթացը</p>   |  |
| <b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</b>   |  |   |  |  |
| <b>1. Բնապահպանական, առողջության և անվտանգության կողմնորոշման պլան</b>  |  |   |  |  |
